

Lead, Kindly Light © 2015 by Simon Dewey. Altus Fine Art-h օնլայն լույսային կենտրոն, www.altusfineart.com



Հիսուս քրիստոսը և հավիտենական ավետարանը

ուսուցչի ձեռնարկ
Կրոն 250

Հիմնական դասընթաց

Հիսուս Թրիստոսը և հավիտենական ապետարանը ուսուցչի ձեռնարկ

Կրոն 250

Հրատարակված է
Հիսուս Թրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սուրբ Լեյք Սիթի, Յուտա

Այս ձեռնարկի վերաբերյալ ձեր դիտողություններն ու ուղղումները ողջունվում են: Խնդրում ենք
ուղարկել դրանք, այդ թվում նաև՝ սխալները, հետևյալ հասցեով.

Seminaries and Institutes of Religion Curriculum Services
50 E. North Temple St., Floor 8
Salt Lake City, Utah 84150-0008
USA

Email: ces-manuals@ldschurch.org

Նշեք ձեր լրիվ անունը, հասցեն, ծովսր և ցիցը:

Չմոռանաք նշել ձեռնարկի վերնագիրը: Այնուհետև նշեք ձեր դիտողությունները:

© 2015, 2016 by Intellectual Reserve, Inc.

Բոլոր իրավունքները վերապահված են
Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Անգլերենի հաստատումը. 8/14

Թարգմանության հաստատումը. 8/14

Jesus Christ and the Everlasting Gospel Teacher Manual-ի թարգմանությունը
Armenian
12554 201

Բովանդակություն

Հիսուս Քրիստոսը և հավիտենական ավետարանը ուսուցչի

ձեռնարկի նախաբան	V
1 Հիսուսը կենդանի Քրիստոսն է	1
2 Հիսուս Քրիստոսը ողջ մարդկության պատմության առանցքն է	5
3 Եհովան և Նրա նախաերկրային ծառայությունը	10
4 Եհովան արարեց Երկիրը	14
5 Հիսուս Քրիստոսը Հին Կտակարանի Եհովան էր	19
6 Հիսուս Քրիստոսին վերաբերող տեսակները, սովերները և խորհրդանիշները	24
7 Հիսուս Քրիստոս՝ Աստծո Միածին Որդին մարմնում	29
8 Հիսուս Քրիստոսն ամեն արդարություն կատարեց	34
9 Փրկչի անսահման ազդեցությունը	38
10 Ինձ հետևիր	43
11 Հիսուս Քրիստոսը ման եկավ բարիք գործելով	48
12 Հրաշքներ Պաղեստինյան ճանապարհներին	54
13 Հիսուս Քրիստոսը կանչեց Տասներկու Առաքյալներին	60
14 Հիսուս Քրիստոսը Մեսիան է	66
15 Հիսուս Քրիստոսը հաստատեց հաղորդությունը	71
16 Փրկիչը քավեց ողջ մարդկության մեղքերը	77
17 Փրկիչը տառապեց և մահացավ Գազաթի խաչի վրա	83
18 Փրկիչը ծառայեց հոգևոր աշխարհում	88
19 Նա հարություն առավ	95
20 Փրկիչը ծառայեց Իր «ուրիշ ոչխարներին»	101
21 Հիսուս Քրիստոսը կազմակերպեց Իր Եկեղեցին	106
22 Հայրը և Որդին հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին	112
23 Փրկիչը վերականգնեց Իր Քահանայությունը, Եկեղեցին և Ավետարանը	117
24 Նա ապրում է	122
25 Հիսուս Քրիստոսը մի օր կվերադառնա	128
26 Հիսուս Քրիստոսը կկառավարի որպես թագավորների Թագավոր և աշխարհի Դատավոր	134
27 Հիսուս Քրիստոսը լույսն է, կյանքը և հույսն աշխարհի	139
28 Անձնական վկայություն Հիսուս Քրիստոսի մասին	144

թերթիկ 149

Հիսուս Քրիստոսը և հավիտենական ավետարանը ուսուցչի ձեռնարկի նախաբան (Կրոն 250)

Ի՞նչ է ակնկալվում կրոնի ուսուցչից:

Ուսուցանելուն պատրաստվելիս կարևոր է հասկանալ Մեմինարիայի և Կրոնի ինստիտուտի նպատակը:

«Մեր նպատակն է օգնել երիտասարդներին և երիտասարդ չափահասներին հասկանալ Հիսուս Քրիստոսի ուսմունքները և Քավությունը, ապավինել դրանց, արժանի լինել տաճարային օրհնություններին, պատրաստվել և պատրաստել իրենց ընտանիքները և մյուսներին իրենց Երկնային Հոր հետ հավերժական կյանքին» (*Gospel Teaching and Learning: A Handbook for Teachers and Leaders in Seminaries and Institutes of Religion* [2012], x):

Դուք կարող եք այս նպատակին հասնել ապրելով ավետարանով, ձեր ուսանողներին ավետարանն արդյունավետ ուսուցանելով և պատշաճ կերպով մատուցելով դասը կամ ծրագիրը: Այսպես պատրաստվելով և ուսուցանելով ավետարանը, դուք կարժանանաք Սուրբ Հոգու ներգործությանը:

Դուք հնարավորություն կունենաք օգնելու ուսանողներին սովորել Հոգով, որպեսզի կարողանան ամրացնել իրենց հավատքն ու խորացնել իրենց դարձը: Կարող եք օգնել ուսանողներին ձեռք բերել այդ ամենը՝ օգնելով նրանց բացահայտել, հասկանալ, զգալ ճշմարտությունը և դրա կարևորությունը, և պատրաստվել կիրառելու Հիսուս Քրիստոսի ավետարանի կարևոր վարդապետություններն ու սկզբունքները:

Ավետարանի ուսուցանում և ուսանում ձեռնարկը կարևոր աղբյուր է ուսուցանման գործընթացը հասկանալու և հաջողությամբ դասավանդելու համար: Հաճախակի անդրադարձեք այս դասագրքին:

Որո՞նք են այս դասընթացի նպատակները:

Հիսուս Քրիստոսը և հավիտենական ավետարանը (Կրոն 250) դասընթացն ուսանողներին հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել Հիսուս Քրիստոսի հավերժական ծառայությունը, կենտրոնանալով Նրա աստվածային դերերի վրա՝ Իր նախամահկանացու, մահկանացու և հետմահկանացու կյանքում: Այս դասընթացի համար որպես ոգեշնչված

աղբյուրներ են օգտագործվում՝ կանոնիկ աշխատությունները, ժամանակակից մարգարեների խոսքերը և «Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը» վերնագրով փաստաթուղթը (*Ensign* կամ *L'haishnna*, ապր. 2000, 2-3): Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Մքոթը շեշտել է Հիսուս Քրիստոսի կյանքն ու առաքելությունն ուսումնասիրելու կարևորությունը.



«Ես մեծապես խրախուսում եմ ձեզ ստեղծել անձնական ուսումնասիրության ծրագիր ավելի լավ հասկանալու և գնահատելու որպես մեր Փրկիչ և Քավիչ Հիսուս Քրիստոսի աստվածային կոչման կատարյալ իրականացման անգուգական, հավերժական, անսահման հետևանքները: Սուրբ գրությունների անձնական խորը ուսումնասիրությունը և դրանց հեն մասին խորհելը, սրտաբուխ աղոթքը կամրացնեն Նրա անգին Քավության ձեր հասկացողությունը և գնահատումը» («Ապրում է Նա, փառք Իր անվան», *Ensign* կամ *L'haishnna*, մայիս 2010, 77):

Ուսանողները, հասկանալով և գնահատելով իրենց կյանքում Փրկչի աստվածային կոչման կարևորությունը և Նրա թողած ազդեցությունը, կամրանան կյանքի դժվարությունների դեմ և ավելի լավ պատրաստված կլինեն քննարկելու Փրկչի աստվածային դերերը փրկության ծրագրում, որի անբաժան մասն է իրենց իսկ անձնական կյանքը:

Ի՞նչ է ակնկալվում ուսանողներից:

Ուսանողները պետք է կարդան յուրաքանչյուր դասի Ուսանողի ընթերցարան բաժնում տրված սուրբ գրությունների հատվածները և մարգարեների ելույթները: Ուսանողները պետք է նաև բավարարեն հաճախելիության պահանջները և բանիմացություն ցուցաբերեն ուսումնական նյութի վերաբերյալ:

Ինչպե՞ս են դասերը կառուցված այս ձեռնարկում:

Այս դասընթացը նախատեսված է մեկ կիսամյակի համար, և բաղկացած է 28 դասից՝ գրված 50-րուպեանոց դասաժամի համար: Եթե ձեր դասարանը հանդիպում է շաբաթը երկու անգամ, յուրաքանչյուր դասաժամին ուսուցանեք մեկ դաս: Եթե ձեր դասարանը հանդիպում է շաբաթը մեկ անգամ 90-100 րոպեով, յուրաքանչյուր դասաժամի համար միացրեք և ուսուցանեք երկու դաս: Յուրաքանչյուր դասը բաղկացած է չորս բաժնից.

- Նախաբան
- Ընթերցանության օժանդակ նյութեր
- Ուսուցանման առաջարկներ
- Ուսանողի ընթերցարան

Նախաբան


Այս բաժինը հակիրճ ներկայացնում է դասի թեման և նպատակը:

Ընթերցանության օժանդակ նյութեր

Այս բաժինը առաջարկում է օժանդակ նյութեր, օրինակ՝ մեր օրերի մարգարեների ուղերձները, որոնք կօգնեն ձեզ ավելի խորը հասկանալ դասի ծրագրում ընդգրկված վարդապետությունները, սկզբունքները և ավետարանի ճշմարտությունները:

Ուսուցանման առաջարկներ

Ուսուցանման առաջարկներ բաժնում տրված են նյութեր, որոնք կօգնեն ձեզ իմանալ՝ *ինչ* ուսուցանել և *ինչպես* ուսուցանել (տես նաև բաժիններ՝ 4.3.3 և 4.3.4, *Ավետարանի ուսուցանում և ուսանում* ձեռնարկ): Առաջարկվող ուսումնական վարժությունները նախատեսված են օգնելու ուսանողներին բացահայտել, հասկանալ և կիրառել սրբազան ճշմարտությունները: Կարող եք օգտագործել մի քանի կամ բոլոր առաջարկությունները՝ դրանք համապատասխանեցնելով ուսուցանման ձեր անհատական ռճին և բավարարելով ձեր ուսանողների կարիքներն ու պայմանները: Ուսումնական նյութերը հարմարեցնելու համար հետևեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթի Հ. Օուքսի հետևյալ խորհրդին:



«Նախագահ Փաքերը հաճախ է իմ ներկայությամբ ուսուցանել, որ նախ մենք ընդունում ենք, ապա հարմարեցնում: Եթե մենք խորապես ուսումնասիրում ենք տվյալ դասը, որը պետք է մատուցենք, ուրեմն կարող ենք հետևել Հոգու այն հարմարեցնելու համար: Երբ մենք խոսում ենք այս ճկունության մասին, երբեմն գայթակղվում ենք սկսել հարմարեցնելուց և ոչ թե ընդունելուց: Սա հավասարակշռություն է: Սա մշտական խնդիր է: Սակայն նախ ընդունելու և ապա հարմարեցնելու մոտեցումը լավ եղանակ է ամուր հիմքի վրա կանգնելու համար» (“A Panel Discussion with Elder Dallin H. Oaks” [Seminaries and Institutes of Religion Satellite Broadcast, Aug. 7, 2012]; si.lds.org):

Ուսուցանման առաջարկություններ մասը պարունակում է թավ տառերով տպված առնվազն մեկ վարդապետություն կամ սկզբունք: Երբ ուսանողները բացահայտում են վարդապետություններն ու սկզբունքները և կիսվում իրենց սովորածով, նրանց խոսքը միգուցե տարբերվի ձեռնարկում տրված ձևակերպումից: Նման դեպքերում, ուշադիր եղեք, որ նրանց պատասխանները սխալ չհամարեք: Սակայն, եթե արտահայտված միտքը կարող էր ավելի ճշգրիտ լինել, զգուշորեն օգնեք պարզաբանել այն:

Որպեսզի օգնեք ուսանողներին ողջ կյանքի ընթացքում մնալ սուրբ գրությունների ուսումնասիրողներ, սովորեցրեք նրանց օգտվել Վերջին Օրերի Սրբերի սուրբ գրությունների հրատարակություններում առկա ուսումնական օժանդակ նյութերից: Առիթը բաց մի թողեք դասարանում օգնելու ուսանողներին զարգացնել սուրբ գրությունների ուսումնասիրության հմտությունները և եղանակները (տես *Gospel Teaching and Learning*, 20–23): Այդպիսով, ուսանողները կխորացնեն իրենց սերը սուրբ գրությունների հանդեպ, հնարավորություն կունենան գտնել իրենց հարցերի պատասխանները և սովորել առաջնորդվել Սուրբ Հոգու զորությամբ:

Ուսանողի ընթերցարան

Այս մասում թվարկվում են սուրբ գրությունների այն հատվածները և Եկեղեցու գերագույն իշխանավորների այն ելույթները, որոնք կխորացնեն տվյալ դասի թեմայի վերաբերյալ ուսանողի հասկացողությունը: Խրախուսեք ուսանողներին, նախքան դասին ներկայանալը, ընթերցել այդ նյութերը: Այդ ոգեշնչված նյութերն ուսումնասիրելիս նրանք ոչ միայն ավելի լավ նախապատրաստված կլինեն դասարանային քննարկումներին, այլև առավել խորը պատկերացում կկազմեն ուսումնական թեմաների վերաբերյալ: Կիսամյակի սկզբում ուսանողներին տվեք «Ուսանողի ընթերցարան»-ի ողջ ցուցակը:

Ինչպե՞ս կարող եմ նախապատրաստվել ուսուցանելուն:

Ուսուցանելուն նախապատրաստվելիս Տերը ձեզ կօգնի: Պատրաստվելիս կօգնի, եթե ինքներդ ձեզ տաք հետևյալ հարցերը.

- Աղոթե՞լ եմ Սուրբ Հոգու առաջնորդությունը ստանալու համար:
- Արդյոք ուսումնասիրե՞լ եմ հանձնարարված սուրբ գրությունների հատվածները և ընթերցանության օժանդակ նյութերը:
- Կարդացե՞լ եմ ծրագիրը և գտել, թե արդյոք կան բաներ, որոնք պետք է հարմարեցնեմ կամ համապատասխանեցնեմ իմ ուսանողների կարիքներին:
- Ինչպե՞ս կարող եմ հետևել ուսանողների ընթերցումներին, հավաստիանալով, որ ուսանողներն առավելագույնն են քաղում դրանից:
- Ինչպե՞ս կարող եմ օգնել, որպեսզի իմ ուսանողները լիարժեք մասնակցություն ունենան դասին:

Կարող եմ նաև օգտակար լինել հետևյալ առաջարկությունները.

- Խրախուսեք ուսանողներին յուրաքանչյուր դասից առաջ կարդալ հանձնարարված սուրբ գրությունների հատվածները և հոդվածները:
- Ակնկալեք, որ ուսանողները կատարեն իրենց դերը որպես սովորողներ:
- Հաճախակի ուսանողներին հնարավորություն տվեք իրենց խոսքերով բացատրել վարդապետությունները և սկզբունքները, կիսվել իրենց փորձով և վկայել այն մասին, ինչ գիտեն և զգում են:
- Փոփոխեք ուսումնական վարժությունները և մոտեցումները յուրաքանչյուր դասի համար, ինչպես նաև օրեցօր:
- Ստեղծեք ուսանելու մթնոլորտ, որը կհրավիրի Հոգին և որտեղ ուսանողները միմյանց սովորեցնելու և սովորելու արտոնություն և պատասխանատվություն կունենան (տես ՎեՈւ 88.78, 122):

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ուսուցանել է.



«Հավաստիացե՛ք, որ կա բավարար մասնակցություն, որովհետև ուսանողի կողմից կիրառվող ազատ կամքը թույլ է տալիս, որ Սուրբ Հոգին ուսուցանի: ... Երբ ուսանողները կիսվում են ճշմարտություններով, այդ ճշմարտությունները հաստատվում են նրանց հոգում և ամրապնդում նրանց վկայությունը» (“To Understand and Live Truth” [evening with Elder Richard G. Scott, Feb. 4, 2005], 3; si.lds.org):

Ինչպե՞ս կարող են հարմարեցնել դասերը հաշմանդամ ուսանողների համար:

Ուսուցանելուն պատրաստվելիս հաշվի առե՛ք հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին: Հարմարեցրե՛ք վարժությունները և ակնկալիքները, օգնելով նրանց հաջողության հասնել: Օրինակ՝ որոշ ուսանողներ կարող են օգուտ քաղել, օգտվելով սուրբ գրությունների աուդիո ձայնագրություններից: Դրանք կարելի է հեշտությամբ բեռնել LDS.org կայքից:

Լրացուցիչ մտքերի և աղբյուրների համար օգտվե՛ք disabilities.lds.org կայքի Հաշմանդամության ռեսուրսներ էջից և Մեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների քաղաքականության ձեռնարկի՝ Հարմարեցված դասեր և ծրագրեր հաշմանդամ ուսանողների համար բաժնից:

Հիսուսը կենդանի Թրիստոսն է

Նախաբան

Մեր օրերի վկաները հայտարարել են. «Մենք վկայում ենք, որպես Նրա պատշաճ կարգով հաստատված Առաքյալներ, որ Հիսուսը կենդանի Թրիստոսն է» («Կենդանի Թրիստոսը՝ Առաքյալների վկայությունը», *Ensign* կամ *L'haħnna*, ապր. 2000, 3): Քանի որ աշխարհն, ասես, անտեղյակ է Հիսուս Թրիստոսի բուն էությունից և

Հայր Աստծո հետ Նրա հարաբերությունից, կարևոր է ունենալ Աստծո Սիրեցյալ Որդու հավատարիմ վկաներ: Այս դասը կօգնի ուսանողներին տեսնել դրա կարիքը և սովորել, թե ինչպես կարող են իրենք ավելի լավ վկայել Հիսուս Թրիստոսի մասին իրենց ընտանիքին, ընկերներին և հարևաններին:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- «Կենդանի Թրիստոսը՝ Առաքյալների վկայությունը», *Ensign* կամ *L'haħnna*, ապր. 2000, 2–3:
- Դիտեր Ֆ. Ուլսդորֆ, «Անձնական վկայության ուժը», *Ensign* կամ *L'haħnna*, նոյ. 2006, 37–39:

Ուսուցանման առաջարկներ

Կենդանի Թրիստոսը

Գրատախտակին գրեք հետևյալ հարցերը.

Ո՞վ է Հիսուս Թրիստոսը, և ինչո՞ւ եք դուք հավատում Նրան:

Ուսանողներին ասեք, որ շատ մարդիկ են պատասխանում այդ հարցին՝ վկայություն բերելով: Նման վկայություն է տրված «Գիտեմ ապրում է Փրկիչն իմ» օրհներգում (ՀՄԵ, էջ 136): Դասարանին տվեք օրհներգի խոսքերը և ուսանողներին բաժանեք չորս խմբի: Յուրաքանչյուր խմբին հանձնարարեք մեկ տունը և խնդրեք նրանց կարդալ խոսքերը: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, տվեք հետևյալ հարցերը.

- Այս օրհներգի ո՞ր խոսքերը կամ արտահայտություններն են ներկայացնում Հիսուս Թրիստոսի ով լինելը, և ի՞նչ է Նա անում մեզ համար: (Պատասխանները կարող են լինել՝ «սրտիս մշտական Տեր», «բարի ընկերն իմ սրտակից», «Թագավորս ու մարգարես», «Փրկիչն իմ»: Նա օրհնում է մեզ իր սիրով, բարեխոսում է մեզ համար, ուղեկցում է մեզ, մխիթարում է մեզ և շունչ է տալիս մեզ:)
- Այս օրհներգի ո՞ր բառերն են նկարագրում, թե մեզ վրա ինչպես կարող է ազդել Հիսուս Թրիստոսի մասին վկայությունը: Պատասխանները պետք է լինեն՝ «մխիթարել» և «ցնծալ»:)

Դասարանին հայտնեք, որ Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը հրապարակավ հայտարարել են Հիսուս Քրիստոսի մասին իրենց միացյալ վկայությունը «Կենդանի Քրիստոսը՝ Առաքյալների վկայությունը» հոչակագրում (տես *Ensign* կամ *Liahonua*, ապր. 2000, 2–3): Ուսանողներին բաժանեք այդ վկայության օրինակները և բացատրեք, որ այս դասընթացում ընդգրկված թեմաները վերցված են այդ ոգեշնչված հոչակագրում տեղ գտած վարդապետություններից և սկզբունքներից: Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ առաջին պարբերությունը.

«Նշելով երկու հազարամյակ առաջ տեղի ունեցած Հիսուս Քրիստոսի ծնունդը, մենք բերում ենք մեր վկայությունը Նրա անզուգական կյանքի իրականության և Նրա մեծ քավող զոհաբերության անսահման զորության մասին: Ոչ ոք չի ունեցել այդպիսի խորը ազդեցություն բոլորի վրա, ովքեր ապրել են և ովքեր դեռ կապրեն երկրի վրա» (“The Living Christ: The Testimony of the Apostles,” *Ensign* կամ *Liahonua*, ապր. 2000, 2):

- Այս կիսամյակում ձեր կյանքի վրա ի՞նչ ազդեցություն կուզենայիք թողնել Հիսուս Քրիստոսի և Նրա հավիտենական ավետարանի ձեր ուսումնասիրությունը: (Երբ ուսանողները պատասխանեն, դուք կարող եք շեշտել, որ **Հիսուս Քրիստոսի կյանքի անկեղծ ուսումնասիրությունը կօգնի մեզ գնահատել այն խորը ազդեցությունը, որ նա թողել է և կարող է թողնել մեր կյանքում:**)
- Ինչպե՞ս է Փրկչին ազդել բոլոր նրանց կյանքի վրա, ովքեր երբևէ ապրել կամ ապրելու են երկրի վրա: (Երբ ուսանողները պատասխանեն, մի մոռացեք շեշտել Փրկչի համամարդկային Քավության մասին:)

Ուսանողներին տեղեկացրեք, որ այս դասընթացը կենտրոնանալու է՝ նախաերկրային, երկրային և հետմահկանացու կյանքի ընթացքում կատարած Փրկչի հավերժական ծառայության վրա: Ուսանողների մոտ Փրկչի հանդեպ սերն ու վկայությունը կխորանա, երբ ուսումնասիրեն Նրա աստվածային բազում դերերը:

Հովհաննես 20.30–31; 1 Նեփի 6.4; 2 Նեփի 5.23, 26


Սուրբ գրքերը գրվել են, որպեսզի մարդիկ հավատան Հիսուս Քրիստոսին:

Հարցրեք ուսանողներին, իրենց կարծիքով քանի գիրք է գրվել Հիսուս Քրիստոսի մասին: Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսի կյանքի պատշաճ ուսումնասիրությունը պետք է կենտրոնանա սուրբ գրությունների վրա: Երեք ուսանողի հանձնարարեք հերթով բարձրաձայն կարդալ հետևյալ սուրբ գրությունների հատվածները. Հովհաննես 20.30–31; 1 Նեփի 6.4; և 2 Նեփի 25.23, 26: Խնդրեք դասարանին ուշադիր հետևել և փնտրել պատճառները, թե ինչու են սուրբ գրություններն արժեքավոր աղբյուր հանդիսանում Փրկչի հավերժական ծառայությունն ուսումնասիրելիս:

- Ի՞նչ սկզբունք են այս հատվածներն ուսուցանում սուրբ գրությունների նպատակի վերաբերյալ: (Թեպետ ուսանողները կարող են տարբեր բառերով պատասխանել, նրանք պետք է արտահայտեն հետևյալ

սկզբունքը. Փրկչի մասին սուրբ գրությունների հատվածներն ուսումնասիրելիս, Նրա մասին մեր վկայությունը կամրանա և մենք էլ ավելի կմոտենանք Նրան:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.




«Բոլոր սուրբ գրությունների առանցքային նպատակն է հավատքով լցնել մեր հոգիներն առ Հայր Աստվածը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը: ...
 ...Հավատքը գալիս է, երբ Սուրբ Հոգին վկայում է մեր հոգիներին, Հոգուց հոգի, երբ մենք լսում կամ կարդում ենք Աստծո խոսքը: Եվ հավատքը հասունանում է, երբ մենք շարունակում ենք ճաշակել խոսքը» («Սուրբ գրությունների օրհնությունը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2010, 34, 35):

- Ինչպե՞ս կարող են սուրբ գրություններն օգնել մեզ ամրացնել մեր հավատքն առ Հիսուս Քրիստոս կամ էլ ավելի մոտենալ Նրան:
- Ինչպե՞ս է առ Հիսուս Քրիստոս ձեր հավատքն ու վկայությունն ամրապնդվել, երբ ուսումնասիրել եք սուրբ գրությունները:

Ցուրաքանչյուր ուսանողի տվեք այս դասընթացի Ուսանողի ընթերցարան բաժնում տրված աղբյուրների ցուցակը: (Դա կարող է լինել տպված օրինակ կամ ուսանողներին կարող եք բացատրել, որտեղից կարող են վերցնել էլեկտրոնային օրինակը:) Քաջալերեք ուսանողներին այս կիսամյակի ընթացքում իրենց ամենօրյա սուրբ գրությունների ուսումնասիրության մաս դարձնել այս դասընթացում տրված ընթերցանության նյութերը կարդալը: Ուսանողներին հավաստիացրեք, որ այս խորհրդին հետևելով իրենք կուսուցանվեն Սուրբ Հոգու կողմից և էլ ավելի կմոտենան Փրկչին:

Դառնալ Հիսուս Քրիստոսի վկան

Բացատրեք ուսանողներին, որ բավարար չէ Փրկչի մասին ուսումնասիրել միայն սուրբ գրություններում: Մենք պետք է նաև Սուրբ Հոգու զորությամբ անձնական վկայություն ձեռք բերենք, որ Հիսուսը Քրիստոսն է, Օծյալը, մեր Փրկիչն ու Քավիչը: Դասարանի համար կարդացեք Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուիլյամսի հետևյալ խոսքերը.



«Մենք չենք կարող կախված լինել մյուսների վկայությունից: Մենք պետք է ինքներս իմանանք: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Ցուրաքանչյուր Վերջին Օրերի Սուրբ պատասխանատվություն է կրում ինքնուրույն իմանալու, վստահաբար, առանց կասկածի, որ Հիսուսը կենդանի Աստծո հարություն առած կենդանի Որդին է» ("Fear Not to Do Good," *Ensign*, May 1983, 80):

Այդ հաստատուն գիտելիքի և ամուր համոզմունքի աղբյուրը աստվածային հայտնությունն է, «որովհետև Հիսուսի վկայությունը մարգարեության հոգին է» (Հայտնություն 19:10):

Մենք ստանում ենք այս վկայությունը, երբ Սուրբ Հոգին խոսում է մեր մեջ գտնվող հոգու հետ: ...

Այդ վկայության առանցքը միշտ կլինի գիտելիքն ու հավատքն առ Հիսուս Քրիստոսը և Նրա աստվածային առաքելությունը» («Անձնական վկայության ուժը», *Ensign* կամ *Liahonua*, Նոյ. 2006, 38):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ պետք է Հիսուս Քրիստոսը լինի մեր վկայությունների առանցքը:
- Ձեր կարծիքով, ի՞նչ կկամենար Հիսուս Քրիստոսը, որ դուք անեիք Իր մասին ձեր վկայության հետ:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Մարդիկ պետք է մեր մեջ տեսնեն ինչ-որ բան Հիսուս Քրիստոսից: Մեր վարքը, խոսելաճոճը, արտաքին տեսքը և անգամ մտածելակերպը կարտացոլի Նրան և Նրա ուղիները: ... Թեպետ մենք Նրա հետ չենք եղել Իր ծառայության ժամանակ, քննելով սուրբ գրքերը, մենք տեսնում ենք Հիսուսին, Նրա խոսքը և Նրա գործը: Եվ ընդօրինակելով Նրան, մենք վկայում ենք Նրա մասին» (“Becoming a Witness of Christ,” *Ensign*, Mar. 2008, 60):

Շարունակեք հարցնելով ուսանողներին.

- Տեսե՞լ եք, ինչպես են ուրիշներն իրենց գործերով վկայում Հիսուս Քրիստոսի մասին:
- Մտքում ունենալով աշխարհը, որտեղ դուք ապրում եք, ի՞նչ կարող ենք անել, որպեսզի Փրկչի մասին մեր վկայությունն ազդեցություն գործի մյուսների վրա:

Վկայեք, որ Սուրբ Հոգու գործությամբ Հիսուս Քրիստոսի մասին վկայություն ձեռք բերելով՝ մենք դրանով կիսվելու պատասխանատվություն ենք կրում:

Ուսանողներին քաջալերեք կյանքում ամեն օր պատրաստ լինել՝ իրենց խոսքով և գործով վկայելու Հիսուս Քրիստոսի մասին: Նրանց խրախուսեք նախքան դասարան գալը, կարդալ տրված ընթերցանության նյութերը և պատրաստ լինել իրենց մտքերով կիսվելուն, հարցեր տալուն և դասարանի քննարկմանը մասնակցելուն:

Ուսանողի ընթերցարան

- Հովհաննես 20.30–31; 1 Նեփի 6.4; 2 Նեփի 25.23, 26:
- «Կենդանի Քրիստոսը՝ Առաքյալների վկայությունը», *Ensign* կամ *Liahonua*, ապր. 2000, 2–3:
- Դիտեր Ֆ. Ուլտորֆ, «Անձնական վկայության ուժը», *Ensign* կամ *Liahonua*, Նոյ. 2006, 37–39:

ԴԱՍ 2

Հիսուս Զրիստոսը ողջ մարդկության պատմության առանցքն է

Նախաբան

Վկայելով Երկնային Հոր ծրագրում Հիսուս Զրիստոսի կարևորագույն դերի մասին՝ մեր օրերի մարգարեները հայտարարել են. «Մենք ամենայն լրջախոհությամբ վկայում ենք, որ Նրա կյանքը, որն առանցքային է ողջ մարդկության պատմության մեջ, սկիզբ չի առել Բեթլեհեմում, ոչ էլ ավարտվել է Գազաթում» («Կենդանի Զրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Ensign* կամ

Լիաժոնա, ապր. 2000, 2): Այս դասը կօգնի ուսանողներին ավելի լավ հասկանալ, որ նախաերկրային աշխարհում Երկնային Հայրը հաստատեց փրկության Իր ծրագիրը և նախակարգեց Եհովային, նախամահկանացու Հիսուս Զրիստոսին, որ լինել այդ ծրագրի առանցքային գործիչը: Ուսանողները կխրախուսվեն Հիսուս Զրիստոսին իրենց մահկանացու կյանքի կենտրոնում պահել:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ռոբերտ Դ. Հեյլս, «Ազատ կամք՝ կարևորագույնը կյանքի ծրագրում», *Ensign* կամ *Լիաժոնա*, նոյ. 2010, 24-27:
- Dallin H. Oaks, “The Great Plan of Happiness,” *Ensign*, Nov. 1993, 72-75.

Ուսուցանման առաջարկներ

Ավան 12.22-34

Փրկիչն առանցքային դեր է խաղում Աստծո ծրագրում

Ցուցադրեք Յոթանասունից Երեց Ալեքսանդր Բ. Մորիսոնի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն: Դասարանին խնդրեք հետևել նրան և բացահայտել, թե նախամահկանացու աշխարհում ինչ է Երկնային Հայրը ներկայացրել Իր զավակներին:



«Շատ վաղուց, նախքան Երկրի արարումը, որի վրա այժմ մենք ապրում ենք, մեր Հայր Աստվածը ... մի ծրագիր հաստատեց: ... [Այդ] ծրագիրն Աստծո բոլոր զավակների համար դեպի անմահություն և հավերժական կյանք տանող կատարյալ ուղի էր բացում» (“Life—the Gift Each Is Given,” *Ensign*, Dec. 1998, 15-16):

- Ի՞նչ օրհնությունների մասին էր խոսում Երեց Մորիսոնը, որոնք մենք, ի վերջո, կարող ենք ստանալ որպես Աստծո ծրագրի մաս: (Բացատրեք, որ անմահություն նշանակում է հարություն առնել և այլևս ֆիզիկապես չմահանալ, իսկ հավերժական կյանքն այն կյանքն է, որ Աստված է ապրում:)

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 12.25 և նշել, թե ինչպես էր Ալման վերաբերվում Աստծո ծրագրին, և երբ էր այն պատրաստվել: Հանձնարարեք նրանց կիսվել իրենց մտքերով: (Ալման ուսուցանեց, որ Աստծո «փրկագնաման ծրագիրը» հաստատվել էր «աշխարհի հիմնադրումից ի վեր»: [2 Նեփի 9.6]; «փրկության ծրագիր» [Ալմա 24.14]; «Հավերժական Աստծո մեծ ծրագիր» [Ալմա 34.9]; «երջանկության մեծ ծրագիր» [Ալմա 42.8]; և «հավիտենական ուխտ» [ՎեՆու 22.1; 45.9; 66.2]:)

Այնուհետև ուսանողներին հանձնարարեք զույգ-զույգ ուսումնասիրել Ալմա 12.22–32 հատվածը և գտնել պատճառները, թե ինչու է Աստծո ծրագիրը կոչվում փրկագնաման ծրագիր: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, հրավիրեք մի քանի ուսանողների դասարանի հետ կիսվել իրենց մտքերով: Հետևյալ հարցերը տալով օգնեք ուսանողներին ավելի խորը հասկանալ այդ հատվածները.

- Ըստ Ալմայի ուսմունքների, ինչպիսի՞ն կլինե՞ր մեր հավերժական վիճակն առանց փրկագնաման ծրագրի: (Առանց փրկագնաման ծրագրի չէր լինի մահացածների հարություն կամ մեղքից փրկագնում, մարդկությունը կկորչեր, անկում կսպարեր և կհայտնվեր ֆիզիկական և հոգևոր մահվան վիճակում հավիտյանս [տես նաև 2 Նեփի 9.6–13]:)
- Ինչո՞ւ էր կարևոր, որ մեզ համար այդ պայմանները հաղթահարելու մի ուղի տրվեր:

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ալմա 12.33–34 հատվածը: Դասարանին խնդրեք հետևել նրան, և գտնել, թե ինչ տվեց Աստված՝ Իր զավակներին փրկագնելու համար: Օգնեք ուսանողներին սահմանել այս հատվածում ուսուցավող վարդապետությունը կամ սկզբունքը՝ տալով հետևյալ հարցը.

- Ինչպե՞ս կամփոփե՞իք, Աստծո ծրագրում ի՞նչն է մեզ համար հնարավոր դարձնում Հիսուսը: (Պատասխանները պետք է ընդգրկեն հետևյալը. **Եթե ապաշխարենք և չկարծրացնենք մեր սրտերը, մենք ողորմածություն և մեղքերի թողություն կստանանք՝ Աստծո Միածին Որդու շնորհիվ: Միայն Հիսուս Քրիստոսի շնորհիվ է, որ մենք կարող ենք ստանալ մեղքերի թողություն և մտնել Երկնային Հոր ներկայություն:)**

Վկայեք, որ Հիսուս Քրիստոսն առանցքն է հանդիսանում Աստծո ծրագրի և Նրա Քավության մեզ համար՝ անմահություն և հավերժական կյանք ստանալու ուղին բացվեց:

Աբրահամ 3.24–27; Ա Պետրոս 1.19–20

Հիսուս Քրիստոսը նախակարգված էր լինելու մեր Փրկիչը


Հանձնարարեք ուսանողներին քննել Աբրահամ 3.24–27 և Ա Պետրոս 1.19–20 հատվածները և գտնել, թե ինչ են այդ հատվածներն ուսուցանում Աստծո ծրագրում Փրկչի ունեցած դերի մասին: Այնուհետև տվեք հետևյալ հարցերը: (*Նշում*. Այսպիսի հարցեր տալով դուք կարող եք օգնել ուսանողներին սովորել ինչպես վերլուծել սուրբգրքյան հատվածները և բացահայտել դրանցում ուսուցանվող վարդապետությունները:)

- Ի՞նչ է նշանակում «առաջին վիճակ» և «երկրորդ վիճակ»՝ Աբրահամ 3.26-ում: («Առաջին վիճակ»-ը վերաբերում է նախաերկրային գոյությանը, իսկ «երկրորդ վիճակը» վերաբերում է մահկանացու կյանքին:)
- Ովքե՞ր են Աբրահամ 3.27-ում հիշատակված երեք անձնավորությունները, և ի՞նչ արեցին նրանցից յուրաքանչյուրը: (Երկնային Հայր, Հիսուս Քրիստոս և սատանա: Ենչտեք, որ **նախամահկանացու աշխարհում, Երկնային Հայրը նախակարգեց Իր Անդրանիկ Որդուն, Հիսուս Քրիստոսին, որ լիներ Իր ծրագրի առանցքային կերպարը:**)

Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են, որ Հիսուսը նախաերկրային կյանքում կոչվում էր Եհովա: Այնուհետև հարցրեք.

- Երբ Եհովան ասաց Հորը. «Միա ես, ինձ ուղարկիր», ի՞նչ էր Նա պարտավորվում անել մահկանացու կյանքում: (Ուսուցանել Նրա ավետարանը, հիմնել Նրա Եկեղեցին, տառապել և մահանալ մեր մեղքերի համար և հարություն առնել մահացածներից:)
- Այն փաստը, որ Երկնային Հայրը Եհովային ընտրեց որպես մեր Քավիչ, ի՞նչ օգուտ բերեց մեզ, մեր ապագա հնարավորությունների առումով:

Խնդրեք ուսանողներին մտքում ուսումնասիրել Մովսես 4.2 հատվածը, գտնելով այլ կարևոր ճշմարտություններ Երկնային Հոր կողմից Եհովային որպես մեր Փրկիչ և Քավիչ ընտրելու վերաբերյալ: Երբ ուսանողները կբացատրեն, թե ինչ են գտել, հավաստիացեք, որ նրանք ներկայացնում են հետևյալ ճշմարտությունները. **Եհովան ընտրվել էր ի սկզբանե: Եհովայի ընտրվելու պատճառն այն էր, որ Նա փնտրում էր կատարել Հոր կամքը և ողջ փառքը տալ Հորը:** Որպեսզի էլ ավելի ընդգծեք այդ ճշմարտությունները, ցուցադրեք և բարձրաձայն կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը.



«[Հիսուս Քրիստոսն], ըստ երևույթին, միակն էր, ով բավարար խոնարհություն և կամք ցուցաբերեց նախաերկրային խորհրդում, որպեսզի նախակարգվեր [իրագործելու անսահման Քավությունը]» (“The Atonement of Jesus Christ,” *Ensign*, Mar. 2008, 35):

Խնդրեք ուսանողներին պատկերացնել, թե ինչպես կզգային գտնվելով Երկնային Հոր ներկայությամբ, երբ Նա Իր բոլոր զավակներին ասաց, որ Իր Անդրանիկ Որդին Եհովան լինելու էր մեր Փրկիչը: Այնուհետև ցուցադրեք Մարգարե Ջոզեֆ Մմիթի (1805–1844) հետևյալ խոսքերը և խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Երկնքի առաջին կազմակերպության մեջ մենք բոլորս ներկա էինք և տեսանք, ինչպես Փրկիչը ընտրվեց, նշանակվեց և փրկության ծրագիրը կազմվեց, և մենք հավանություն տվեցինք դրան» (*Teachings of Presidents of the Church: Joseph Smith* [2007], 209):

- Ձեր կարծիքով, ի՞նչ գիտեիք Եհովայի մասին, որի արդյունքում դուք հաստատեցիք Նրա կանչը և նշանակումը՝ որպես մեր Փրկիչ և Քավիչ:

Յուզադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Սաքսվելի (1926–2004) հետևյալ խոսքերը: Այնուհետև ուսանողներին մի քանի ընթացիկ ժամանակ տվեք, որպեսզի գրի առնեն Փրկչի մասին իրենց մտքերն ու զգացումները, երբ խորհեն այն աստվածային ճշմարտության մասին, որ Երեց Սաքսվելն է ուսուցանում:



«Երբեք ոչ ոք այնքան շատ չի ասել այդքան քիչ խոսքերով, ինչպես Հիսուսն ասաց. «Ահա ես, ինձ ուղարկիր» (Աբր. 3.27):» (*"Jesus of Nazareth, Savior and King," Ensign, May 1976, 26*):

Կարող եք խնդրել մի քանի ուսանողի դասարանի հետ կիսվել իրենց գրածով:

Դնել Փրկչին մեր մահկանացու կյանքի կենտրոնում

Ուսանողներին ուղադրությունը կրկին հրավիրեք Աբրահամ 3.25 հատվածի վրա, որտեղ մենք սովորում ենք, որ Երկնային Հայրը նախատեսում էր, որ մահկանացու կյանքը լիներ փորձվելու ժամանակ, տեսնելու համար, արդյոք մենք կհնազանդվեինք Իր պատվիրաններին: Յուզադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ խոսքերը: Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ նրա խոսքերը, իսկ դասարանին խնդրեք գտնել, թե ինչ ընտրություն մենք պետք է կատարենք որպես մեր մահկանացու փորձության մաս:



«Մտածեք այս մասին. մեր նախամահկանացու վիճակում մենք ընտրեցինք հետևել Փրկիչ Հիսուս Թրիստոսին: Եվ քանի որ մենք դա արեցինք, մեզ թույլ տրվեց գալ երկիր: Ես վկայում եմ, որ կատարելով Փրկչին հետևելու նույն ընտրությունն այժմ, երկրի վրա, մենք ձեռք կբերենք նույնիսկ ավելի մեծ օրհնություն հավերժություններում: Բայց իմացեք. մենք պետք է ձգտենք միշտ Փրկչին հետևել: Հավերժությունը վտանգի տակ է, և հավերժական կյանք ստանալը ուղղակիորեն կախված է մեր ազատ կամքը իմաստուն կերպով գործածելուց և մեր գործերից» («Ազատ կամք՝ կարևորագույնը կյանքի ծրագրում», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2010, 25):

Որպեսզի օգնեք ուսանողներին բացահայտել և հասկանալ Երեց Հեյլսի կողմից ուսուցանված սկզբունքը կամ ճշմարտությունը, տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ էք սովորում Երեց Հեյլսի խոսքերից մեր կյանքում ընտրություններ կատարելու վերաբերյալ: (Երբ ուսանողները կպատասխանեն, վկայեք, որ **այս երկրագնդի վրա ապրելու ընթացքում մշտապես մեր կյանքի կենտրոնում պահելով Փրկչին՝ մենք առավել մեծ օրհնություններ ձեռք կբերենք հավերժությունում:**)
- Ձեր կարծիքով, ի՞նչ էր ուզում ասել Երեց Հեյլսը «հավերժությունը վտանգի տակ է» արտահայտությամբ:
- Որո՞նք են այն դիրքորոշումներն ու գործողությունները, որոնք ցույց են տալիս, որ տվյալ անձը հետևում է Հիսուս Զրիստոսին: (Ուսանողների պատասխանները գրեք գրատախտակին:)

Բացատրեք, որ շատերիս համար հեշտ է Փրկչի վրա կենտրոնանալ կիրակի օրերին: Իսկ ինչպե՞ս կարող ենք Նրան ավելի շատ մեր կյանքի մասը դարձնել շաբաթվա ընթացքում: Ուսանողներին ժամանակ տվեք մտածելու, թե ինչ են արել այսօր Փրկչի վրա կենտրոնանալու համար: Հանձնարարեք նրանց գրել, թե ինչ կարող են անել այսօր Փրկչին իրենց կյանքի կենտրոնում առավել լիարժեք պահելու համար: Խրախուսեք նրանց մտքում պարտավորվել Երկնային Հորը, որ կանեն դա:

Ավարտեք դասը՝ բերելով ձեր վկայությունը այսօր ուսուցանված ճշմարտությունների վերաբերյալ:

Ուսանողի ընթերցարան

- Ալմա 12.22–34; 34.; 42.8, 11; Վարդապետություն և Ուխտեր 22.1; 45.9; 66.2; Աբրահամ 3.24–27; Ա Պետրոս 1.19–20; Մովսես 4.2:
- Ռոբերտ Դ. Հեյլս, «Ազատ կամք՝ կարևորագույնը կյանքի ծրագրում», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2010, 24–27:

ԴԱՍ 3

Եհովան և Նրա Նախաներկրային Ժառայությունը

Նախաբան

Ըստ մեր օրերի մարգարեների, Հիսուս Քրիստոսը «սովորեցնում էր հավերժության ճշմարտությունները, մեր նախաներկրային կյանքի իրողությունը, երկրի վրա մեր կյանքի նպատակը և գալիք կյանքի համար Աստծո որդիների ու դուստրերի ներուժը» («Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը, *Ensign* կամ *L'hahtnna*, ապր. 2000, 2): Այս դասի ընթացքում ուսանողները կսովորեն, որ

նախաներկրային կյանքում, ի շնորհիվ իրենց հավատքի, որ Եհովան (Հիսուս Քրիստոսը) կիրագործի Քավությունը, իրենք կարողացան հաղթել սատանային Երկնային պատերազմում: Ուսանողները նաև կտեսնեն, որ նախամահկանացու աշխարհում Եհովան իր աստվածային հատկանիշներով գերազանցում էր Աստծո բոլոր զավակներին:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Richard G. Scott, “Jesus Christ, Our Redeemer,” *Ensign*, May 1997, 53–54, 59.
- “The Father and the Son: A Doctrinal Exposition by the First Presidency and the Quorum of the Twelve Apostles,” *Ensign*, Apr. 2002, 13–18.

Ուսուցանման առաջարկներ

Հայտնություն 12.7–11; Մովսես 4.3

Եհովայի դերը Երկնային պատերազմում

Գրատախտակին գրեք *պատերազմ* բառը, և հարցրեք ուսանողներին, թե ինչ պատկերներ են գալիս իրենց մտքում պատերազմի մասին մտածելիս: Այնուհետև խնդրեք նրանց անցնել Հայտնություն 12.7, 9 հատվածների վրայով և ներկայացնել այնտեղ նկարագրված պատերազմը (Երկնային պատերազմը): Խնդրեք ուսանողներին բացատրել, ըստ իրենց հասկացողության, ինչ տեղի ունեցավ այդ պատերազմում:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրուս Ռ. Մակքոնկլիի (1915–1985) հետևյալ խոսքերը, և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Ինչպիսի՞ պատերազմ էր [Երկնային պատերազմը]: Ինչպես երկրի վրա է. այնպիսին, որ սատանան և հոգևոր եակները կարող են մղել, այսինքն՝ խոսքերի պատերազմ, կարծիքների ընդհարում, գաղափարախոսությունների հակասություն, պատերազմ ճշմարտության և սխալի միջև» (*Doctrinal New Testament Commentary*, 3 vols. [1965–73], 3:518):

Հարցրեք ուսանողներին.

- Ըստ Երեց Մակքոնկիի, որքանո՞վ է Երկնքի պատերազմը նման այն պատերազմին, որ սատանան մղում է Աստծո զավակների դեմ մահկանացու կյանքում:

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հայտնություն 12.10 հատվածը, իսկ մեկ ուրիշին՝ Մովսես 4.3 հատվածը: Կարող եք առաջարկել ուսանողներին նշել այդ խաչաձև վկայակոչումների հատվածներն իրենց սուրբ գրություններում՝ գրելով *Մովսես 4.3* Հայտնություն 12.10 հատվածի կողքին և՛ հակառակը: Բացատրեք, որ «մեր եղբայրների չարախոսը» (Հայտնություն 12.10) սատանան էր: Այնուհետև հարցրեք.

- Համաձայն Մովսես 4.3-ի, ինչպե՞ս սատանան դուրս գցվեց նախամահկանացու աշխարհից:

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Հայտնություն 12.11 հատվածը: Օգնեք նրանց ներկայացնել այդ հատվածում ուսուցանվող սկզբունքը՝ տալով հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս կամփոփեիք, ինչ է ուսուցանվում հատված 11-ում Հիսուս Քրիստոսի Քավության ազդեցությունների մասին: (Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալ ճշմարտությունը. **Քանի որ անկասկած Հիսուս Քրիստոսը կատարելու էր Քավությունը, դրա արդյունքները արդեն ուժի մեջ էին նախամահկանացու կյանքում:** Այսպիսով, Նա է «Գառը, որ աշխարհքի սկզբիցը հետևե մորթուած է» [Հայտնություն 13.8; տես նաև Մոսիա 4.7; Մովսես 7.47]):
- Ինչպե՞ս կարող եք Հայտնություն 12.11 հատվածում գրվածն օգտագործել որպես օգնություն՝ այս կյանքում սատանայի դեմ ձեր անձնական պատերազմում: (Երբ ուսանողները պատասխանեն, գրատախտակի վրա գրեք հետևյալ սկզբունքը. **Մենք կարող ենք հաղթել սատանային՝ ապավինելով Հիսուս Քրիստոսին, ով իրագործեց Քավությունը, բերելով մեր վկայությունը և հավատարիմ մնալով դրան:**)

Աբրահամ 3.15–25; Վարդապետություն և Ուխտեր 138.55–56

Եհովան գերազանցում է մեզ ամեն ինչում

Ասացեք ուսանողներին, որ նախամահկանացու կյանքում մենք պատրաստվել ենք Երկիր գալու համար: Ցուցադրեք Մարգարե Ջոզեֆ Մֆիթի (1805–1844) հետևյալ խոսքերը և խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ այն.



«Աստված ինքը, գտնվելով հոգիների և փառքի մեջ, քանի որ նա ավելի խելացի էր, պատշաճ համարեց օրենքներ սահմանել, որով մնացածը կկարողանային արտոնություն ունենալ իր նման զարգանալու: Աստծո հետ ունեցած փոխհարաբերությունը մեզ հնարավորություն է տալիս զարգանալ գիտելիքով: Նա օրենքներ սահմանելու զորություն ունի, որպեսզի ուսուցանի

ավելի թույլ բանականություններին և նրանք իր հետ միասին վեհացում ապրեն (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 210):

Այնուհետև ուղղեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ եք սովորում Ջոզեֆ Սմիթի խոսքերից՝ մեզ համար ունեցած Երկնային Հոր ցանկությունների մասին: (Երկնային Հայրը ցանկանում է, որ մենք առաջադիմենք և հոգևոր զարգացում ապրենք, էլ ավելի Նրան նմանվելով:)

Գրատախտակին գրեք հետևյալ հարցերը, և պատասխանները գտնելու համար խնդրեք ուսանողներին ուսումնասիրել Աբրահամ 3.24–25 հատվածը.

- Ո՞վ էր «նրանց մեջ կանգնած այն մեկը, որն Աստծո նման էր» (հատված 24):
- Ի՞նչ դեր նա խաղաց:
- Ըստ նրա, ո՞րն էր մահկանացու կյանքի նպատակներից մեկը:

Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո խնդրեք ուսանողներին դասարանի հետ կիսվել իրենց պատասխաններով: Այնուհետև հրավիրեք ուսանողներին քննել Վարդապետություն և Ուխտեր 138.55–56 հատվածները, հասկանալու համար, թե ինչ էր արվել նախապատրաստելու Աստծո զավակներին, որպեսզի հաջողությամբ հաղթահարեին մահկանացու կյանքը: Որպեսզի օգնեք ուսանողներին այդ հատվածն իրենց վերագրելու համար, հարցրեք.

- Ըստ այդ հատվածների, ինչպե՞ս ենք պատրաստվել մենք Երկիր գալու համար:

Հանձնարարեք ուսանողներին մի պահ խորհել, թե ինչ հատկանիշներով էր օժտված Փրկիչը նախամահկանացու աշխարհում: Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Աբրահամ 3.19, 21 հատվածները:

Դասարանին խնդրեք հետևել նրան՝ փնտրելով այն, թե ինչ է ուսուցանվում Հիսուս Քրիստոսի մասին: Երբ ուսանողները կպատասխանեն, նրանց բաժանեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելի (1926–2004) և Երեց Բրուս Ռ. Մակքոնկլիի (1915–1985) հետևյալ խոսքերը: Խնդրեք նրանց կարդալ մեջբերումները և նշել Փրկչի մասին ուսուցանող խոսքերն ու արտահայտությունները.



«Իր *խելքով* և *գործով* [Հիսուս Քրիստոսը] գերազանցում է անհատական և հավաքական *ունակություններն* ու *նվաճումները* բոլոր նրանց, ովքեր ապրել են, ապրում են և դեռ ապրելու են: (Տես Աբր. 3.19:» (Neal A. Maxwell, "O, Divine Redeemer," *Ensign*, Nov. 1981, 8):



«Ենթակա լինելով օրենքին և ունենալով իրենց ազատ կամքը՝ մարդկանց բոլոր հոգիները, գտնվելով Հավերժական ներկայության մեջ, զարգացրեցին տարատեսակ և տարաբնույթ ընդունակություններ, տաղանդներ, կարողություններ և ունակություններ: Այն ժամանակ երկարատև կյանքի ընթացքում տաղանդների և ունակությունների ծնունդ առան: ...

Տերը մեզ շնորհեց ազատ կամք, և մեզ տվեց օրենքներ, որոնք մեզ հնարավորություն էին տալու առաջադիմել, զարգանալ և դառնալ նրա պես. և նա խորհուրդ տվեց և հորդորեց մեզ առաջ գնալ փառքի և վեհացման ճանապարհով: Նա ինքը ամեն բարի բանի մարմնացում և անձնավորում էր: Նա ուներ ամեն ըղձալի հատկանիշ և գիծ՝ իր հավերժական լրիվությամբ: Իր բոլոր հնազանդ գավակները սկսեցին ինչ-որ կերպ նմանվել իրեն: Ինչպես այստեղ, այնպես էլ այնտեղ մեր մեջ անչափ մեծ էր տաղանդների և ունակությունների բազմազանությունը և աստիճանը: Բոլորն էլ առանձնահատուկ կերպով օժտված էին: Անդրանիկ որդին մեզ բոլորիս ամեն ինչում գերազանցում էր» (Bruce R. McConkie, *The Mortal Messiah*, 4 vols. [1979–81], 1:23):

Շարունակեք, հարցնելով ուսանողներին, թե այդ մեջբերումներում ինչն է առանձնանում իրենց համար: Անհրաժեշտության դեպքում հարցրեք.

- Ի՞նչ էք սովորում այդ երկու Առաքյալներից նախամահկանացու աշխարհում Եհովայի առանձնահատուկ հատկանիշների մասին: (Ուսանողները պետք է հասկանան, որ **նախամահկանացու աշխարհում Եհովան իր ունակություններով և ձեռքբերումներով գերազանցում էր Երկնային Հոր բոլոր գավակներին:**)

Ուսանողներին մի քանի բույսեր տրամադրեք, որպեսզի խորհեն Փրկչի նախամահկանացու ծառայության մասին և գրի առնեն իրենց մտքերն ու զգացմունքները: Մի քանիսին խնդրեք դասարանի հետ կիսվել իրենց գրածով: Դասն ավարտեք՝ խրախուսելով ուսանողներին մտածել, թե Փրկչի նախամահկանացու ծառայության և առանձնահատուկ հատկանիշների մասին գիտելիքը ինչպես կօգնի նրանց ավելի մեծ սեր և հավատք ունենալ առ Նա:

Ուսանողի ընթերցարան

- Հայտնություն 12.7–11; Աբրահամ 3.15–25; Վարդապետություն և Ուխտեր 138.55–56:
- Richard G. Scott, "Jesus Christ, Our Redeemer," *Ensign*, May 1997, 53–54, 59.

ԴԱՍ 4

Եհովան արարեց Երկիրը

Նախաբան

«Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը» հայտարարում է. «Իր Հոր ղեկավարության ներքո, [Հիսուս Քրիստոսը] դարձավ Երկրի արարիչը: «Ամեն ինչ սրանով եղավ, և առանց նրան ոչինչ չեղավ, ինչ որ եղավ» (Հովհաննես 1.3)» (*Ensign* կամ *Lhahhna*, ապր. 2000, 2):

Երբ ուսանողները հասկանան Երկրի արարման հավերժական նպատակները, նրանք կարող են ապրել իրենց ստեղծման նպատակն իրականացնելու ավելի մեծ վճռականությամբ տոգորված:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Russell M. Nelson, “The Creation,” *Ensign*, May 2000, 84–86.
- Եթե առկա է ձեր լեզվով, կարող եք կարդալ Նիլ Ա. Մաքսվելի հոդվածը՝ “Our Creator’s Cosmos,” in *By Study and by Faith: Selections from the Religious Educator*, ed. Richard Neitzel Holzapfel and Kent P. Jackson (2009), 37–50:

Ուսուցանման առաջարկներ

Ծննդոց 1.1; Հովհաննես 1.1–3; Եբրայեցիս 1.1–2; Հակոբ 4.9; Վարդապետություն և Ուխտեր 38.1–3; 76.22–24; 104.14–17; Մովսես 1.30–33; 2.1

Եհովան արարեց Երկիրը

Ցուցադրեք մի իր, որը ինչ-որ մեկը պատրաստել է ձեզ համար (գուցե՝ որպես նվեր): Դասարանի հետ կիսվեք այդ իրի և այն պատրաստող անձի հանդեպ ձեր ունեցած զգացմունքներով: Այնուհետև հարցրեք.

- Ե՞րբ է ինչ-որ մեկը ինչ-որ բան պատրաստել ձեզ համար: Ինչպիսի՞ զգացմունքներ եք ունեցել այդ իրը պատրաստող անձի հանդեպ:

Հանձնարարեք ուսանողներին համեմատել և հակադրել Ծննդոց 1.1; Հովհաննես 1.1–3; Եփեսացիս 3.9; Եբրայեցիս 1.1–2; և Մովսես 2.1: Խնդրեք ուսանողներին գրատախտակի վրա թվարկել նմանություններն ու տարբերությունները, որ նկատել են այդ հատվածների միջև: (*Նշում*. Երբ ուսանողները սովորեն համեմատել և հակադրել սուրբ գրությունների հատվածները, վարդապետություններն ու սկզբունքները առավել խորը կրնկալվեն:) Այնուհետև հարցրեք.

- Ըստ այդ հատվածների, ո՞վ արարեց Երկիրը: (Շեշտեք, որ **Եհովան արարեց Երկիրը Հոր ղեկավարությամբ**, կամ ինչպես Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնն է ուսուցանել. «Ողջ Արարումը ծրագրվել էր [Երկնային Հոր] կողմից» (“The Creation,” *Ensign*, May 2000, 84):

Ուսանողներին ժամանակ տվեք մտքում կարդալու և համեմատելու Վարդապետություն և Ուխտեր 76.22–24, 104.14–17, և Մովսես 1.30–33 հատվածները, փնտրելով, թե էլ ինչ Եհովան արարեց: Անհրաժեշտության դեպքում, նշեք, որ Նա արարեց անթիվ աշխարհներ և որ «Երկիրը լի է, և

բավականաչափ կա նաև խնայելու համար» (ՎևՈւ 104.17): Օգնեք ուսանողներին վերլուծել այս սկզբունքը, հարցնելով.

- Ի՞նչ է այս արտահայտությունը վկայում այն մասին, թե ինչ պետք է Փրկիչին իմանար Երկիրն արարելիս: (Նա պետք է իմանար, թե որքան մարդ է ապրելու Երկրի վրա և ինչ կարիքներ մարդիկ կունենան պատմության տարբեր ժամանակահատվածներում:)

Բացատրեք ուսանողներին, որ մի բան է իմանալ՝ *ով* է ստեղծել Երկիրը, մեկ այլ բան՝ *ինչ գործությամբ* է այն ստեղծվել: Հանձնարարեք ուսանողներին համեմատել և խաչաձև հղումներ կատարել այս հատվածների միջև՝ Մորմոն 9.6–17; Վարդապետություն և Ուխտեր 38.1–3; և Հակոբ 4.9 և ներկայացնել, թե *ինչպես* ստեղծվեց Երկիրը: Հանձնարարեք ուսանողներին իրենց բառերով բացատրել, ինչ են այդ հատվածները նշանակում: Այնուհետև ցուցադրեք հետևյալ բացատրությունը.

«Հիսուս Քրիստոսն արարեց այս աշխարհը և այն ամենը, ինչ կա դրանում: Նա նաև արարեց բազմաթիվ այլ աշխարհներ: Նա կատարեց դա քահանայության գործությամբ՝ մեր Երկնային Հոր ղեկավարության ներքո» (Ավետարանի սկզբունքներ [2009], 23):

Շեշտեք, որ իրականում, սուրբ գրությունները մի քանի մանրամասներ են հաղորդում Երկրի արարման մասին, թեպետ մեզ խոստացվել է, որ նման մանրամասները մի օր կբացահայտվեն (տես ՎևՈւ 101.32–34): Շատ ավելի են ուսուցանվել սուրբ գրություններում Արարման նպատակի մասին:

Դասարանով քննարկեք հետևյալ հարցերը.

- Ուսումնասիրելով ձեր շրջակա աշխարհը, ի՞նչ են Աստծո ստեղծագործություններն ուսուցանում ձեզ Փրկչի, Նրա քահանայության և նախամահկանացու աշխարհում Նրա կերպարի մասին:
- Ինչպե՞ս է այս ճշմարտությունները հասկանալն ազդում Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր զգացմունքների և Նրա մասին ձեր վկայության վրա:
- Ինչպե՞ս է այս ճշմարտությունները հասկանալն ազդում այն բանի վրա, թե ինչպես եք ընկալում երկիրը:

Նախքան առաջ գնալը, ուսանողների համար շեշտեք այն դրույթը, որ թեպետ Փրկիչն արարեց Երկիրը, Երկնային Հայրը մեր հոգիների Հայրն է և ստեղծեց Ադամի և Եվայի ֆիզիկական մարմինները:

1 Նեփի 17.36; 2 Նեփի 2.23–25; Վարդապետություն և Ուխտեր 49.16–17; Մովսես 1.27–33, 39

Երկրի արարման նպատակը

Ուսանողներին բաժանեք զույգերի և խնդրեք նրանց քննել՝ Մովսես 1.27–33, 39; 1 Նեփի 17.36 և Վարդապետություն և Ուխտեր 49.16–17: Կարող եք առաջարկել, որ նրանք նշեն այն բառերն ու արտահայտությունները,

որոնք օգնում են իրենց ձևակերպել այս հարցի պատասխանը. «Ինչպե՞ս կբացատրեիք ձեր ընկերոջը, *ինչո՞ւ* արարվեց Երկիրը: Հրավիրեք մի քանի զույգերի դասարանի հետ կիսվել իրենց պատասխաններով: Ուսանողները պետք է հասկանան, որ **Եհովան արարեց Երկիրը, որպեսզի ապահովեր մի վայր, որտեղ Աստծո զավակները կարող են ապրել և զարգանալ առաջադիմելով դեպի հավերժական կյանք:** Հարցրեք.

- Վարդապետություն և Ուխտեր 49.17-ում ի՞նչ ի նկատի ունի ասելով «մարդկանց քանակը»: (Անհրաժեշտության դեպքում, Վարդապետություն և Ուխտեր 49.16–17 հատվածի մեկնաբանությունը տես *Վարդապետություն և Ուխտեր ուսանողի ձեռնարկ* [(Եկեղեցու Կրթական Համակարգի ձեռնարկ, 2001), 106]:)

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 2.18-25 հատվածը, այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս էին Եղեմի Պարտեզի պայմաններն Ադամին և Եվային կանխում առաջադիմել Երկնային Հոր փրկության ծրագրում:
- Ինչպե՞ս Ադամի Անկումն օգնեց Երկրին իրագործել իր արարման նպատակը: (Այն հնարավորություն տվեց Ադամին և Եվային երեխաններ ունենալ:)
- Ինչպե՞ս կարող են հատված 23-ում նկարագրված Անկման հետևանքներն օգնել մեզ առաջադիմել Երկնային Հոր ծրագրում:

Յուրաքանչյուր ուսանողի տվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրուս Ռ. Մակքոնկիի (1915–1985) և Սփոփող Միության նախկին գերագույն նախագահ Քույր Ջուլի Բ. Բեքի հետևյալ խոսքերը: Ուսանողներին բավականաչափ ժամանակ տվեք նրանց խոսքերը կարդալու և խորհելու՝ Իր զավակների փրկության համար Աստծո ծրագրում Արարման դերի մասին:



«Ճիշտ ինչպես փրկություն է գալիս Թավության շնորհիվ, այնպես էլ փրկություն է գալիս Անկման շնորհիվ: ...

Եվ պետք է նաև հիշել, որ Անկումը հնարավոր դարձավ, քանի որ հարատև Արարիչը ... արարեց Երկիրը, մարդուն և կյանքի բոլոր ձևերն ու տեսակներն այնպիսի մի վիճակում, որ նրանք կարողանային անկում ապրել: ... Այդ ամենն այնպես արարվեց, որ նրանք կարողանային անկում կամ փոփոխություն ապրել, և ուստի ներկայացվեց այնպիսի մի գոյավիճակ, որը անհրաժեշտ էր Հոր փրկության հավերժական ծրագրի բոլոր ժամկետներն ու պայմանները գործարկելու համար:

Այդ ամենի աշխարհիկ առաջին արարումն ... իր բնույթով դրախտային էր: Նախնական և Եղեմական օրերում կյանքի բոլոր ձևերն ապրում էին բարձրագույն և այլ կարգավիճակում, քան այժմ է գերիշխում: Գալիք անկումը նրանց պետք է տաներ դեպի վար և առաջ: Մահը և ծնունդը դեռ պետք է գային աշխարհ» (Bruce R. McConkie, "Christ and the Creation," *Ensign*, June 1982, 9):



© Busath.com

«Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում մենք ունենք ընտանիքի աստվածաբանությունը, որը հիմնված է Արարման, Ասկման և Զավության վրա: Երկրի արարումը վայր հանդիսացավ, որտեղ ընտանիքներ կարող էին ապրել: Աստված ստեղծեց տղամարդուն և կնոջը, ովքեր ընտանիքի հիմնական կենսերն էին: Երկնային Հոր ծրագրի մասն էր այն, որ Ադամն ու Եվան կնքվեին և հավերժական ընտանիք կազմեին:

Ասկումն ուղի բացեց ընտանիքի աճի համար: Ադամը և Եվան ընտանիքի ղեկավարներն էին, ովքեր ընտրեցին մահկանացու փորձառություն ունենալ: Ասկումը նրանց համար որդիներ և դուստրեր ունենալու հնարավորություն ընձեռեց:

Զավությունը թույլ տվեց, որ ընտանիքը միասին հավերժ կնքվի: Այն թույլ է տալիս, որ ընտանիքները հավերժական աճ և զարգացում ապրեն: Երջանկության ծրագիրը, որը նաև կոչվում է փրկության ծրագիր, ընտանիքների համար ստեղծված ծրագիր էր: Աճող սերունդը պետք է հասկանա, որ մեր աստվածաբանության հիմնական սյուները կենտրոնացած են ընտանիքի վրա» (Julie B. Beck, "Teaching the Doctrine of the Family," *Ensign*, Mar. 2011, 12):

- Ինչպե՞ս են այս մեկնաբանություններն օգնում ձեզ հասկանալ Իր գավակների փրկության համար Աստծո ողջ ծրագրում ունեցած Արարման կարևոր դերը:
- Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ Երկիրը արարվել է օգնելու անհատներին և ընտանիքներին վեհացում ապրել: (Երբ ուսանողները կպատասխանեն, գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը.
Հասկանալով երկրի արարման նպատակը, մենք կարող ենք ավելի մեծ ցանկություն զարգացնել մեր արարման նպատակն իրականացնելու համար:)

Ուսանողներին բացատրեք, որ քահանայության կնքման գործությունը հնարավոր է դարձնում, որ ամուսիններն ու կանայք, ծնողներն ու երեխաները միասին լինեն մահից հետո: Առանց կնքման գործության, որը վերականգնվեց Եդիայի միջոցով, Աստծո գավակները չէին կարող ստանալ վեհացման բոլոր օրհնությունները և երկրի արարման այս նպատակը չէր իրագործվի կամ, ինչպես ուսուցանվում է Վարդապետություն և Ուխտերում, «երկիրն ամբողջովին կամայանար» (Վևու 2.3; տես նաև Մադաքիա 4.6):

Ավարտեք դասը, վկայելով այս կարևոր ճշմարտությունների մասին. (1) Եհովան արարեց Երկիրը Հոր ղեկավարությամբ, (2) Նա արարեց Երկիրը, որպես մի վայր, որտեղ Աստծո գավակները կարող էին ապրել և առաջադիմել դեպի հավերժական կյանք, և (3) հասկանալով Երկրի արարման նպատակը, մենք կարող ենք ավելի մեծ ցանկություն զարգացնել մեր արարման նպատակն իրականացնելու համար:

Խրախուսեք ուսանողներին խորհել, թե ինչ կարող են անել Հիսուս Քրիստոսի ստեղծագործությունների համար իրենց երախտագիտությունը հայտնելու համար: Խրախուսեք ուսանողներին գործել ըստ Հոգու հուշումների, որ զգացել են դասի ընթացքում:

Ուսանողի ընթերցարան

- Ծննդոց 1.1; Հովհաննես 1.1–3; Եբրայեցիս 1.1–2; Մովսես 2.1; Մորմոն 9.16–17; Վարդապետություն և Ուխտեր 38.1–3; 76.22–24; 104.14–17; Հակոբ 4.9; Վարդապետություն և Ուխտեր 101.32–34; Մովսես 1.27–33, 39; 1 Նեփի 17.36; Վարդապետություն և Ուխտեր 49.16–17:
- Russell M. Nelson, “The Creation,” *Ensign*, May 2000, 84–86.

Հիսուս Զրիստոսը Հին Կտակարանի Եհովան Էր

Նախաբան

Փրկիչ Հիսուս Զրիստոսի մասին վկայելով՝ մեր օրերի մարգարեները հայտարարել են. «Նա Հին Կտակարանի Մեծ Եհովան էր» («Կենդանի Զրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Ensign* կամ *Lhahnsa*, ապր. 2000, 2): Որպես Եհովա՝ Հիսուս Զրիստոսը հիմնեց Երկնային Հոր հավիտենական ավետարանը Երկրի վրա բոլոր

ժամանակահատվածներում, որպեսզի հավաքեր Աստծո բոլոր մոլորված զավակներին: Առ Հիսուս Զրիստոս հավատքը կարող է ամրանալ, երբ հասկանանք Նրա անփոփոխ եությունը և Նրա հավիտենական ավետարանը:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ռասսել Մ. Նելսոն, «Ուխտեր», *Ensign* կամ *Lhahnsa*, նոյ. 2011, 86–89:
- “The Abrahamic Covenant,” *The Pearl of Great Price Student Manual* (Church Educational System manual, 2000), 93–98.
- “Enrichment Section A: Who Is the God of the Old Testament?” *Old Testament Student Manual: Genesis–2 Samuel*, 3rd ed. (Church Educational System manual, 2003), 45–48.

Ուսուցանման առաջարկներ

Ելից 3.11–14; 6.2–3; Հովհաննես 8.52–53, 56–59; 18.5, 8; 3 Նեփի 15.5; Աբրահամ 1.16; 2.8

Հիսուս Զրիստոսը Հին Կտակարանի Եհովան էր

Հանձնարարեք ուսանողներին նշել Փրկչի այն անուններն ու տիտղոսները, որ իրենք գիտեն: Նրանց պատասխանները գրեք գրատախտակին: Ուսանողներին ասեք, որ այսօր քննարկելու էք մի կարևոր անուն կամ տիտղոս, որով հայտնի էր Հիսուս Զրիստոսը՝ նախքան Իր մահկանացու ծառայությունը: Հանձնարարեք նրանց մտքում կարդալ Հովհաննես 8.52-53, 56-59 հատվածները: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ հարցեր էին Հրեաները տալիս Փրկչին:
- Ձեր կարծիքով, ի՞նչ ի նկատի ուներ Հիսուսն ասելով՝ «Աբրահամի լինելուց առաջ եմ ես» (հատված 58):

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ «Ես եմ» արտահայտությունը, նրանց բաժանեք զույգերի և խնդրեք կարդալ Ելից 3.11–14; 6.2–3, և գտնել ինչպես էր Հին Կտակարանի Աստվածն Իրեն կոչում: Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, տվեք հետևյալ հարցերը.

- Ըստ այդ հատվածների, ի՞նչ անուններով էր Հին Կտակարանի Աստվածը կոչում Իրեն: (Նշեք, որ Ելից 6.3 հատվածի Ջոզեֆ Մսիթ Թարգմանությունում կարդում ենք. «Ես եմ Ամենակարող Տեր

Աստվածը, Տեր Եհովան: Արդյո՞ք իմ անունը հայտնի չէր նրանց»: Տես նաև Աբրահամ 1.16:)

- Ինչպե՞ս են այդ հատվածները հստակեցնում Հիսուս Քրիստոսի խոսքերի կարևորությունը՝ «Աբրահամի լինելուց առաջ եմ ես»: (Ուսանողները պետք է հասկանան, որ **Հիսուս Քրիստոսը Եհովան էր, Հին Կտակարանի Աստվածը և մեծ Ես ԵՄ-ը**):

Ցուցադրեք հետևյալ խոսքերը.



«Սա աստվածայնության նույնքան հստակ և ուղղակի հաստատում է, որքան յուրքանջյուր ոք կարող է ձևակերպել: «Աբրահամի լինելուց առաջ եմ ես»: Այսինքն՝ «Ես եմ Ամենակարող Աստվածը, մեծ Ես ԵՄ-ը: Ես եմ ինքնագոն, Հավերժակալը: Ես եմ ձեր հայրերի Աստվածը: Իմ անունն է՝ ԵՄ ԵՄ ՈՐ ԵՄ» (Bruce R. McConkie, *Doctrinal New Testament Commentary*, 3 vols. [1965–73], 1:464):

Եհովան «Իսրայելի Աստծո նվաճող կամ հատուկ անունն է: Դա նշանակում է «Անփոփոխ» (Bible Dictionary, "Jehovah"):

- Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ Հիսուս Քրիստոսը Հին Կտակարանի Եհովան էր: (Պատասխանները պետք է ներառեն հետևյալ ճշմարտությունը. **Աստված միշտ Իր ավետարանը սպասավորել է Իր Որդի Հիսուս Քրիստոսի միջոցով**: Տես նաև 3 Նեփիի 15.5, որտեղ գրված է Փրկչի ուսմունքն այն մասին, որ Ինքն էր օրենքը տվողը):

Կարող եք հանձնարարել մի ուսանողի բարձրաձայն կարդալ Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի (1876–1972) հետևյալ խոսքերը.



«Անկումից ի վեր ողջ հայտնությունը եկել է Հիսուս Քրիստոսի միջոցով, ով Հին Կտակարանի Եհովան է: ... Անկումից ի վեր Հայրը [Էլոհիմը] երբեք մարդու հետ անմիջականորեն և անձնապես չի շփվել, և նա երբեք չի հայտնվել, բացի միայն Որդուն ներկայացնելուց և Նրա մասին վկայելուց» (*Doctrines of Salvation*, comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 1:27):

- Ինչպե՞ս է Եհովայի կամ Հիսուս Քրիստոսի անփոփոխ լինելու մասին գիտելիքն օգնում ձեզ հավատք ունենալ առ Նա: (Պատասխանները կարող են ներառել՝ **Հիսուս Քրիստոսի անփոփոխ լինելու մասին գիտելիքն օգնում է մեզ հավատալ, որ ճիշտ ինչպես Նա պահեց մարդկանց տված Իր խոստումները, որոնց մասին մենք կարդում ենք սուրբ գրություններում, Նա կպահի մեզ տված Իր խոստումները**):

Նշեք, որ հետաստվածաշնչյան վաղ ժամանակներում, Եհովա անվան եբրայերեն տարբերակը (որպես կանոն գրականության մեջ արտասանվում էր որպես *Յհվի*) համարվում էր արտասանելու համար չափազանց սուրբ: Այդ իսկ պատճառով, բացառությամբ մի քանի

դեպքերի (տես Ելից 6.3; Սաղմոս 83.18; Եսայիա 12.2; 26.4), Աստվածաշնչի Ջեյմս թագավորի տարբերակի թարգմանիչները *Եհովա* բառի փոխարեն գրել են ՏԵՐ (մեծատառերով): Ժամանակակից Հուդաիզմում այն փոխարինվել է *Ադոնի* անունով, որը նշանակում է՝ «Տեր»:

Ծանոթոց 13.14–16; 17.1–9; Մովսես 6.51–52, 64–66; Աբրահամ 1.18–19; 2.8–11

Եհովան հավիտենական ավետարանը հիմնել է վաղուց

Խնդրեք ուսանողներին կրկին զույգերով աշխատելով կարդալ Մովսես 6.51–52, 64–66 և գտնել, թե ինչ Եհովան ուսուցանեց Ադամին: Նրանց ասեք, որ հատված 51–52-ում Եհովան խոսում էր Հոր անունից: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ նկատեցիք Ադամին ուսուցանված ավետարանի վերաբերյալ: (Դա նույն ավետարանն է, որ ուսուցանվում է այսօր: [Տես 2 Նեփի 31.10–16 որպես օրինակ, որ նույն ավետարանն ուսուցանվել է Ամերիկաներում:] Շեշտեք այս ճշմարտությունը՝ գրատախտակին հետևյալ նախադասությունը գրելով. **ավետարանի յուրաքանչյուր տնտեսությունում Հիսուս Քրիստոսի ավետարանը հավիտենական է և անփոփոխ:**

Ուսանողների համար ընդգծեք, որ վերջին տնտեսությունում Եհովան նորացրեց Իր հավիտենական ավետարանն Աբրահամի հետ կապած ուխտի միջոցով, որը հայտնի է որպես Աբրահամյան ուխտ: Դասարանը բաժանեք երկու մասի: Հանձնարարեք դասարանի մի մասին ուսումնասիրել՝ Ծանոթոց 13.14–16; 17.2–8; Աբրահամ 1.18–19; 2.8–11 հատվածները և կազմել Աբրահամին տված Տիրոջ խոստումների ցուցակը: Դասարանի մյուս մասին հանձնարարեք ուսումնասիրել՝ Ծանոթոց 17.1–5, 9; Աբրահամ 1.19; 2.8–11 հատվածները և ցուցակ կազմել, թե ինչ պետք է անել Աբրահամը խոստացված օրհնությունները ստանալու համար: (*Նշում.* Երբ ուսանողները սովորեն ինչպես սուրբ գրություններում ցուցակներ կազմել, նրանք ավելի լավ կկարողանան ընկալել այն կարևոր կետերը, որ տվյալ սուրբ գրության հեղինակը ցանկացել է շեշտել:)

Մինչ ուսանողներն ուսումնասիրում են, հետևյալ աղյուսակը արտագրեք գրատախտակի վրա, տեղ թողնելով պատասխանները գրելու համար.

Աբրահամյան ուխտ	
Աբրահամին տրված խոստումներ	Աբրահամի պարտականությունները

Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, յուրաքանչյուր խմբից մի քանի ուսանող հրավիրեք գրատախտակի մոտ, որպեսզի համապատասխան խորագրի տակ գրեն իրենց զգացմունքները: Ամփոփեք Աբրահամյան ուխտը՝ ցուցադրելով և հանձնարարելով մի ուսանողի բարձրաձայն կարդալ հետևյալ խոսքերը.

«Աբրահամը ստացավ ավետարանը և կարգվեց բարձրագույն քահանայությանը (Վևու 84.14; Աբր. 2.11), և նա մտավ սելեստիալ ամուսնության մեջ, որը վեհացման ուխտն է (Վևու 131.1–4; 132.19, 29): Աբրահամը խոստում ստացավ, որ այդ ուխտի բոլոր օրհնությունները կառաջարկվեն իր մահկանացու բոլոր սերունդներին (Վևու 132.29–31; Աբր. 2.6–11): Այդ ուխտերն ու խոստումները միասին կոչվում են Աբրահամյան ուխտ: Այդ ուխտի վերականգնումն ավետարանի վերականգնում էր վերջին օրերին, քանզի դրա շնորհիվ օրհնվում են երկրագնդի վրա ապրող բոլոր ազգերը (Գաղ. 3.8–9, 29; Վևու 110.12; 124.58; Աբր. 2.10–11)» (Սուրբ գրքերի ուղեցույց, Աբրահամյան ուխտ»; scriptures.lds.org):

Շեշտեք, որ ի սկզբանե Հայրն ուխտ կապեց Իր զավակների հետ, որպեսզի հավաքի նրանց հավիտենական ավետարանի ճշմարտությունների, արարողությունների և օրհնությունների միջոցով: Ավետարանի Վերականգնումը ներառում է Աբրահամյան ուխտի վերականգնումը: Այսինքն, Աբրահամյան ուխտը կարևոր մասն է նոր և հավիտենական ուխտի, որը Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունն է: Հարցրեք ուսանողներին.

- Ինչպե՞ս է ձեր ապրելակերպի վրա ազդում գիտելիքն այն մասին, որ մենք Աբրահամի սերունդն ենք և ժառանգներն ենք այն ամենի, ինչ Աստված խոստացավ նրան:
- Ինչպե՞ս են Աբրահամին և նրա սերնդին խոստացված օրհնությունների հասանելիությունն ամրացնում ընտանիքները և ուղղորդում մեզ որոշումներ կայացնելիս:

Հանձնարարեք ուսանողներին կիսվել, ինչպես կարող են այս ուխտով խոստացված օրհնություններն ապահովել իրենց և իրենց ընտանիքներին համար՝ նախկին, ներկա և ապագա:

Հեսու 24.3–13; 1 Նեփի 17.23–32

Եհովան օրհնեց և առաջնորդեց հին Իսրայելին

Ուսանողներին ասեք, որ որպես Աբրահամի ուխտի մաս Եհովան ավետարանի օրհնությունները խոստացավ Աբրահամի սերնդին և նրանց, ովքեր հավաքվել են նրանց հետ: Հանձնարարեք դասարանի մի կեսին կարդալ՝ Հեսու 24.3–13, իսկ մյուս կեսին կարդալ՝ 1 Նեփի 17.3–32: Հանձնարարեք ուսանողներին գտնել այն խոսքերը և արտահայտությունները, որոնք ուսուցանում են, թե ինչ արեց Եհովան հին Իսրայելի համար: Կարող եք առաջարկել, որ նրանք նշեն այդ բառերը: Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք ներկայացնել իրենց սովորածը: Ուսանողների պատասխանները հակիրճ գրեք գրատախտակին: Հասկանալու համար, թե ինչու Եհովան

արեց այն ամենն, ինչ Նա արեց, խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Ելից 6.2–6 հատվածը: Հարցրեք դասարանին.

- Ի՞նչ պատճառ բերեց Եհովան անելու համար այն բազում բաները, որոնց մասին դուք կարդում եք Հեսու և 1 Նեփի գրքերում:
- Ի՞նչ է դա ձեզ ասում ձեզ տված Տիրոջ խոստումների մասին: (Երբ ուսանողները պատասխանեն, գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. **Եթե մենք հավատարմորեն ապրենք, Տերը կպահի մեզ տված Իր խոստումները:**)

Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Նախագահ Դիտեր Ֆ. Ուլստրֆի հետևյալ խոսքերը.



«Քանի որ անցյալում Աստված եղել է հավատարիմ և պահել է Իր խոստումները, մենք կարող ենք վստահաբար հուսալ, որ Աստված կպահի մեզ տված Իր խոստումները՝ այժմ և ապագայում: Վշտի ժամանակ, մենք կարող ենք ամուր կառչել հույսից, որ ամեն ինչ «միաժամանակ կգործի [մեր] բարիքի համար» [Վևու 90.24]» («Հույսի անսահման զորությունը», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2008, 23):

- Ինչպե՞ս կարող է հնում Եհովայի գործերի մասին գիտելիքն օգնել ձեզ փորձության պահերին:
- Ի՞նչ է Նա արել հնագույն Իսրայելի համար, որ նաև անելու է մեզ համար:

Վկայեք, որ բոլոր ժամանակաշրջաններում, Հիսուս Քրիստոսը հավիտենական ավետարանով օրհնել է Աստծո զավակներին: Ճիշտ ինչպես հնում ուխտյալ ժողովուրդը ստացավ Տիրոջ խոստացված օրհնությունները, այնպես էլ մենք կարող ենք ստանալ դրանք հնազանդություն դրսևորելու դեպքում:

Ուսանողի ընթերցարան

- Հովհաննես 8.51–59; 18.5, 8; Ելից 3.11–14; 6.2–3; 3 Նեփի 15.5; Մովսես 6.51–52, 64–66; Ծննդոց 17.1–9; Աբրահամ 1.18–19; 2.8–11:
- “Enrichment Section A: Who Is the God of the Old Testament?” *Old Testament Student Manual: Genesis–2 Samuel*, 3rd ed. (Church Educational System manual, 2003), 45–48.

ԴԱՍ 6

Հիսուս Զրիստոսին վերաբերող տեսակները, ստվերները և խորհրդանիշները

Նախաբան

Մեր օրերի մարգարեները հայտարարել են, որ Հիսուս Զրիստոսը «հիմնեց հաղորդության արարողությունը՝ որպես հիշեցում Իր մեծ քավող զոհաբերության» («Կենդանի Զրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Ensign* կամ *Lhahhna*, ապր. 2000, 2): Հաղորդությունից բացի, սուրբ գրությունները մեզ պատմում են բազմաթիվ իրադարձությունների, հանգամանքների, իրերի և

մարդկանց մասին, որոնք նպատակ ունեին մեզ հիշեցնել և ուսուցանել Հիսուս Զրիստոսի առաքելության և ծառայության մասին: Այս դասը կօգնի ուսանողներին խորհել այն հոգևոր տեսակների, ստվերների և խորհրդանիշների շուրջ, որոնք մեր ուշադրությունն ուղղում են դեպի Փրկիչը:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Russell M. Nelson, “In This Holy Land,” *Tambuli*, Feb. 1991, 10–19.
- “Enrichment Section C: Symbolism and Typology in the Old Testament,” *Old Testament Student Manual: Genesis–2 Samuel*, 3rd ed. (Church Educational System manual, 2003), 111–15.

Ուսուցանման առաջարկներ

2 Նեփի 11.4; Մովսես 6.63

Զրիստոսի հոգևոր խորհրդանիշները

Ցույց տվեք հայտնի նշանների կամ խորհրդանիշների մի քանի նկարներ, օրինակ՝


Երբ ուսանողները կհայտնեն յուրաքանչյուր նշանի իմաստը, նրանց խնդրեք հեշտ ճանաչվող նշանների կամ խորհրդանիշների այլ օրինակներ բերել:



Ուսանողներին բաժանեք զույգերի: Յուրաքանչյուր զույգին հանձնարարեք ուսումնասիրել և համեմատել 2 Նեփի 11.4 և Մովսես 6.63 հատվածները: Խնդրեք քննարկել, թե ինչ ընդհանրություն ունեն այդ հատվածները և ինչ են դրանք ուսուցանում Հիսուս Քրիստոսի և Աստծո

ստեղծագործությունների նպատակի մասին: Երբ զույգերը կքննարկեն իրենց բացահայտումները, դասարանին ուղղեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս կսահմանեիք այս սուրբ գրություններում գրված հիմնական ճշմարտությունը: (Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալ ճշմարտությունը. **Ամեն բան ստեղծվեց Հիսուս Քրիստոսի մասին վկայելու համար:**)
- Որո՞նք են օրինակներն այն բաների, որոնք «տրվել են Աստծո կողմից» և որոնք Հիսուս Քրիստոսի «խորհրդանշումն են» 2 Նեփի 11.4):

 Ուսանողներին ասեք, որ բոլոր սուրբ գրությունները պարունակում են Հիսուս Քրիստոսի տեսակները, ստվերները, խորհրդանիշները և կերպարները: Բացատրեք, որ այդ տեսակները, ստվերները, խորհրդանիշները և կերպարները բարձրագույն իրականությունների ներկայացումներ են: Օրինակ, Մորմոնի Գրքում Լիահոնան նկարագրվում է որպես Քրիստոսի խոսքերի ներկայացում: Դասի այս մասում մենք կկենտրոնանանք Հին Կտակարանում տրված տեսակների և կերպարների վրա: Այդ կերպարները հիմնականում մարդկանց, իրերի, իրադարձությունների և հանգամանքերի տեսքով են (կօզմի, եթե գրատախտակին գրեք այդ դասակարգումները): Արտագրեք սուրբ գրությունների հետևյալ ցուցակը գրատախտակին, կամ թռուցիկների տեսքով բաժանեք այն ուսանողներին.

Հիսուս Քրիստոսին վերաբերող տեսակները, ստվերները և խորհրդանիշները

Հին Կտակարանում Հիսուս Քրիստոսին վերաբերող տեսակները, ստվերները և խորհրդանիշները	Իրականացում Քրիստոսի կյանքում
Ծննդոց 22.1–14	Հովհաննես 3.16; 19.16–18; Հակոբ 4.4–5

Հին Կտակարանում Հիսուս Քրիստոսին վերաբերող տեսակները, սովերները և խորհրդանիշները	Իրականացում Քրիստոսի կյանքում
Ելից 3.7-8, 10-12	Մատթեոս 1.21; 2 Նեփի 6.17
Ելից 12.3, 5-7, 13-14, 46	Հովհաննես 1.29; 19.14, 31-36; Ա Պետրոս 1.18-19
Ելից 16.14-15, 18	Հովհաննես 6.14-15, 48-51
Ղևտացոց 8.15, 30; 17.11	Եբրայեցիս 9.22; 13.12
Ղևտացոց 16.2-6, 17	Եբրայեցիս 9.6-12; 10.11-12
Ղևտացոց 22.19-22	Եբրայեցիս 9.14; Վարդապետություն և Ովխտեր 20.22
Թվոց 21.4-9	Հովհաննես 3.14-15; Հելաման 8.13-15
Հովսան 1.17; 2.10	Մատթեոս 12.38-40

Հանձնարարեք մեկ կամ մի քանի ուսանողների ուսումնասիրել սուրբ գրությունների յուրաքանչյուր խումբը և պատրաստվել բացատրելու Հին Կտակարանի խորհրդանշումը և ինչպես է այն ուշադրությունը հրավիրում Հիսուս Քրիստոսի վրա: Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք ներկայացնել՝ ինչ են իրենք հայտնաբերել:

Եթե ժամանակը ներում է, կարող եք նաև քննարկել Քրիստոսի խորհրդանիշները, որոնք ներկայացվում են Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնի կողմից իր «Այդ սուրբ երկրում» հոդվածում (*Tambuli*, Feb. 1991, 10-19):

Դասարանով քննարկեք հետևյալ հարցերը.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ ամեն բան արարվեց՝ Փրկչին ներկայացնելու կամ խորհրդանշելու համար:
- Ո՞րն է մշտապես փնտրելու արժեքը, բացահայտելով, թե ինչպես է ամեն բան վկայում Հիսուս Քրիստոսի մասին: (Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են հետևյալ սկզբունքը. **Մենք կարող ենք ավելի խորհրդանշել Հիսուս Քրիստոսի մասին, երբ հասկանանք այն պատկերները, տեսակներն ու խորհրդանիշները, որոնք վկայում են Նրա մասին:**)
- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսին խորհրդանշող ինչ-որ բան գորացրել ձեր հավատքն առ Նա:
- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի տեսնեք Քրիստոսին մեզ տրված խորհրդանիշներում:


2 Նեփի 11.2-6

Քրիստոսի խորհրդանիշներն ու կերպարները ավետարանական ուխտերում և արարողություններում

Բացատրեք, որ դասի այս մասը կենտրոնանում է Հիսուս Քրիստոսի ավետարանի այն կողմերին, որոնք պարունակում են Քրիստոսի խորհրդանիշներն ու կերպարները: Հանձնարարեք ուսանողներին քննել 2 Նեփի 11.2-6, և գտնել, թե ինչով էր հրճվում Նեփին: Կարող եք առաջարկել նրանց, որ նշեն այդ տողերը:

- Ինչո՞վ էր հրճվում Նեփին:

Ուշադրությունը հրավիրեք հատված 5-ում «Տիրոջ ուխտերը» արտահայտության վրա: Բացատրեք, որ ուխտերը և արարողությունները Հիսուս Քրիստոսի հավիտենական ավետարանի կարևոր մասն են հանդիսանում: Կան ուխտերի և արարողությունների բազմաթիվ տարրեր, որոնք խորհրդանշում, ուսուցանում և առաջնորդում են դեպի Հիսուս Քրիստոսը: Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրուս Ռ. Մակքոնկիի (1915–1985) հետևյալ խոսքերը, և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Աստծո կողմից սահմանված յուրաքանչյուր աստվածային արարողություն կամ ծես, յուրաքանչյուր գոհաբերություն, խորհրդանշում և կերպար՝ այն ամենը, ինչ Աստված երբևէ տվել է իր ժողովրդին, կարգվել և հաստատվել է այնպես, որ վկայի իր Որդու մասին և հավատացյալ ժողովրդի հավատքը կենտրոնացնի նրա և այն փրկագնման վրա, որ նա նախակարգվել էր կատարելու» (*The Promised Messiah: The First Coming of Christ* [1978], 28):

- Ի՞նչ վարդապետություն կամ սկզբունք է ուսուցանվում այս հայտարարության մեջ: (Հնարավոր պատասխաններից է՝ **մենք կտեսնենք Քրիստոսի խորհրդանիշներն ավետարանի արարողություններում, եթե փնտրենք դրանք:**)
- Ինչպե՞ս կարող է այդ գիտելիքն օգնել մեզ ավետարանի արարողություններին մասնակցելիս:

Հանձնարարեք ուսանողներին մտքում ուսումնասիրել Հռովմայեցիս 6.3-6 և 3 Նեփի 18.7, 11 հատվածները, փնտրելով խորհրդանիշներ, որոնք վերաբերում են Փրկչին: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս են ավետարանի ուխտերը կամ արարողություններն ուսուցանում Փրկչի մասին և օգնում ձեզ հիշել Նրան:

Որպեսզի ուսանողներին օգնեք սովորել ընկալել Քրիստոսի տեսակներն ու խորհրդանիշներ և զգալ դրանց ճշմարտությունը և կարևորությունը, տվեք այսպիսի հարցեր.

- Փրկչի ո՞ր խորհրդանիշն է, որ մեծ նշանակություն ունի ձեզ համար:
- Ինչպե՞ս եք հավաստիանում, որ նկատում եք այդ խորհրդանիշը:
- Դա որպես Քրիստոսի խորհրդանիշ տեսնելն ինչպե՞ս է օրհնել ձեր կյանքը:

Հանձնարարեք ուսանողներին կիրառել այս դասի սկզբունքները՝ հանձնարարելով գրի առնել ինչպես կարող են ավելի լավ ընկալել Փրկչի տեսակները, սովերներն ու խորհրդանիշները սուրբ գրություններում, ավետարանական արարողություններում և իրենց ամօրյա կյանքում: Խրախուսեք նրանց մոտ ապագայում մի օր ընտրել, երբ գիտակցորեն կփնտրեն կերպարներ, առարկաներ կամ իրադարձություններ, որոնք կհիշեցնեն Փրկչին: Խրախուսեք նրանց գրի առնել իրենց բացահայտածը և կիսվել իրենց ցուցակով ընտանիքի անդամի կամ ընկերոջ հետ, կամ գուցե սոցիալական ցանցերի միջոցով:

Ուսանողի ընթերցարան

- 2 Նեփի 11.2-6, Մովսես 6.63:
- Russell M. Nelson, “In This Holy Land,” *Tambuli*, Feb. 1991, 10–19.

Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Միածին Որդին մարմնում

Նախաբան

Հնում, Փրկչի ծննդյան լուրը բարի ավետիք էր, որ հայտարարվեց շատերի կողմից. Աստված Իր Որդուն ուղարկել էր փրկագնելու աշխարհը: «Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը» հռչակագրում Հիսուսը ներկայացվում է որպես «Հոր Առաջնեկը, Միածին

Որդին մարմնում, աշխարհի Քավիչը» (*Ensign* կամ *Լիահոնա*, ապր. 2000, 2–3): Այս դասում ուսանողները կսովորեն, թե ինչու էր կարևոր, որ Հիսուսը ծնվեր մահկանացու մորից և անմահ Հորից:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Robert E. Wells, “Our Message to the World,” *Ensign*, Nov. 1995, 65–66.

Ուսուցանման առաջարկներ

Մատթեոս 1.18–24; Դուկաս 1.26–35; Մոսիա 3.7–8

«Հոր Միածինը»



Սկսեք դասը՝ ցուցադրելով “The Nativity” (2:59) տեսանյութը: (Դասից առաջ ներբեռնեք և դիտեք տեսանյութը:)

Տեսանյութի դիտումից հետո հարցրեք.


- Ձեզ համար Փրկչի ծննդյան ո՞ր կողմերն են կարևոր, և ինչո՞ւ:

Ուսանողներին հայտնեք, որ այս դասի ընթացքում նրանք կքննարկեն Հիսուս Քրիստոսի ծննդյան այն կողմը, որը որոշիչ նշանակություն ունի Հոր ծրագրում Իր դերը իրագործելու համար Փրկչի ունակությունը հասկանալու գործում:

Ուսանողներից մեկին հանձնարարեք բարձրաձայն կարդալ Մատթեոս 1.18–19, իսկ դասարանին խնդրեք պատկերացնել այդ հատվածում ներկայացված իրադրությունը: (*Նշում*. Պատկերացնելը սուրբգրքյան ուսումնասիրության հմտություն է, որի օգնությամբ սուրբգրքյան պատմությունը դառնում է ավելի վառ և իրական:): Այնուհետև հարցրեք ուսանողներին, թե ինչպես իրենց կզգային, եթե հայտնվեին Հովսեփի իրավիճակում: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Մատթեոս 1.20–24 և պարզել, թե ինչու Հովսեփը որոշեց «ծածուկ արձակել [Մարիամին]» (հատված 19), այսինքն՝ իր նշանադրությունը Մարիամի հետ գաղտնաբար ուժը կորցրած ճանաչել: (*Նշում*. Դժվար խոսքերի և արտահայտությունների բացատրությունը կօգնի ուսանողներին հասկանալ սուրբ գրությունները: Այս հատվածների համար, դուք կարող եք օգտագործել հետևյալ բացատրությունները. (1) *Հիսուս* անունը [արամեերենով *Յեշուս*] նշանակում է «Եհովան փրկություն է» կամ «Եհովան փրկում է», (2) Մատթեոս 1.22–23-ում նշված սուրբ գրությունը Եսայիա 7.14-ն է, իսկ (3) *Էմմանուել* անունը նշանակում է «Աստված մեզ հետ»):

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ղուկաս 1.26-30 հատվածը: Դասարանին խնդրեք հետևել նրան և գտնել, թե ինչ է այս հատվածն ուսուցանում Մարիամի մասին: Խնդրեք նրանց բացատրել, ինչ են գտել: Այնուհետև խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Ղուկաս 1.31-35 հատվածը, իսկ դասարանին խնդրեք հետևել նրան: Հարցրեք.


- Ինչպե՞ս են այդ հատվածները հաստատում, թե ով է Հիսուսի Հայրը: Գրատախտակին գծեք հետևյալ գծապատկերը.




Մի ուսանողի տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ ֆիզիկական հատկանիշ էս դու ժառանգել քո հայրիկից: Ի՞նչ ֆիզիկական հատկանիշ էս դու ժառանգել քո մայրիկից:

Այդ ուսանողի պատասխանը ավելացրեք գրատախտակի վրա ներկայացված գծապատկերին (տես տրված օրինակը).



Ջնջեք նախորդ գծապատկերը և գրատախտակին գծեք հետևյալը.



Յուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեյմս Ի. Թալմիջի (1862–1933) հետևյալ խոսքերը և խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Մանուկը, որ պետք է ծնվեր Մարիամից, Էլիհիմից էր, Հավերժական Հորից, ոչ թե բնության օրենքի խախտումով, այլ համաձայն դրա բարձրագույն դրսևորման, ... Նրա էության մեջ Աստվածագլխի գործությունները համակցվել էին մահկանացու մարդուն հատուկ ունակությունների և հնարավորությունների հետ, իսկ դա ժառանգականության հիմնական օրենքի գործելու շնորհիվ, հայտարարված Աստծո կողմից, ապացուցված գիտության կողմից և ընդունված փիլիսոփայության կողմից, որ կենդանի էակները պետք է բազմանան իրենց տեսակի մեջ: Մանուկ Հիսուսը պետք է ժառանգեր ֆիզիկական, մտավոր և հոգևոր գծեր, հակումներ և ուժեր, որոնք բնորոշ էին Իր ծնողներին, որոնցից մեկը անմահ և փառավորված Աստվածն էր, իսկ մյուսը մարդկային էակ՝ կին» (*Jesus the Christ*, 3rd ed. [1916], 81):

- Ի՞նչ կարևոր գծեր էր Փրկիչը ժառանգել Իր ծնողներից:

Երբ ուսանողները կպատասխանեն, գրատախտակի վրա «Մարիամ» անվան տակ թվարկեք Հիսուս Քրիստոսի այն գծերը, որոնք Նա ժառանգել էր Իր մորից (օրինակ, մահկանացություն՝ ցավ կրելու և ֆիզիկապես մահանալու ունակություն): «Երկնային Հայր» անվան տակ թվարկեք Հիսուսի այն գծերը, որոնք նա ժառանգել էր Իր Հորից (օրինակ, Աստվածագլխի գործությունները՝ անմահություն կամ հավերժ ապրելու գործություն, տես Հովհաննես 10.17-18):


Այնուհետև հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մոսիա 3.7-8 հատվածը: Հարցրեք.

- Ինչո՞ւ Փրկիչը և մահկանացու և անմահ գործությունների կարիքն ուներ Քավությունն իրագործելու համար: (Երբ ուսանողները պատասխանեն, հավաստիացեք, որ նրանք հասկանում են հետևյալ ճշմարտությունը. **Հիսուս Քրիստոսը կարողացավ կատարել Քավող զոհաբերությունը, որը Նրանից պահանջում էր դիմանալ ավելի ինն, քան մահկանացու մարդը կարող էր, այդպիսով կատարելով Իր դերը Հոր ծրագրում:** Բացի այդ, քանի որ Հիսուսը գործություն ուներ մահվան

հանդեպ, մահանալուց հետո Նա կարողացավ հարություն առնել:

Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են, որ եթե Հիսուս Քրիստոսը ծնվեր երկու մահկանացու ծնողներից, Նա չէր կարող հաղթահարել մահը կամ դիմանալ Քավության անսահման ցավին ու տառապանքին: Երկու անմահ ծնողներից ծնվելու դեպքում Նա չէր կրի ֆիզիկական տառապանք և մահ:)

Այս կարևոր վարդապետությունն էլ ավելի ընդգծելու համար, ուսանողներին բաժանեք Յոթանասունից Երեց Ռոբերտ Ի. Վելսի հետևյալ խոսքերը և նրանց ժամանակ տվեք կարդալու և դրա շուրջ խորհելու համար.



«Հիսուս Քրիստոսի աստվածային Որդի լինելը ... կարևոր դրույթ է փրկության ողջ ծրագիրը հասկանալու համար: Նա Հոր Առաջնեկ Որդին է Նախաերկրային կյանքում և Հոր Միածին Որդին՝ երկրի վրա: Հավերժական Հայր Աստվածը մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի և Իր մյուս հոգևոր զավակների ծնողն է: ...

«Աստվածային Որդի» անվանումը նաև վերաբերում է «Միածին Որդին մարմնում» կոչմանը: ... Այդ տիտղոսը նշանակում է այն, որ Հիսուսի ֆիզիկական մարմինը ժառանգն էր մահկանացու մոր և անմահ Հավերժական Հոր, որը որոշիչ նշանակություն ուներ Քավության համար, իսկ այդ գերագույն արարքը չէր կարող կատարվել սովորական մարդու կողմից: Քրիստոսը զորություն ուներ դնելու Իր կյանքը և զորություն կրկին վերցնելու այն, որովհետև Նա անմահություն էր ժառանգել Իր Երկնային Հորից: Մարիամից՝ իր մորից, Քրիստոսը ժառանգել էր մահկանացու էություն, կամ մահանալու զորություն:

Քրիստոսի այդ անսահման քավությունը և Քրիստոսի աստվածային Որդի լինելն անքակտելիորեն միահյուսված են և կազմում են ողջ Քրիստոնեության եզակի կարևորագույն վարդապետությունը» ("Our Message to the World," *Ensign*, Nov. 1995, 65):

Դասի այս մասն ավարտեք՝ տալով հետևյալ հարցերը.

- Մարիամից ժառանգած Հիսուսի հատկանիշները ճանաչելն ինչպե՞ս է օգնում ձեզ Փրկչին վստահելու և հավատալու հարցում:
- Երկնային Հորից Հիսուսի ժառանգած հատկանիշները ճանաչելն ինչպե՞ս է օգնում ձեզ Փրկչին վստահելու և հավատալու հարցում:


1 Նեփի 11.13-21

Նեփին տեսնում է Աստծո բարեհաճությունը

Ուսանողներին ասեք, որ Մորմոնի Գրքում մենք կարդում ենք, որ Նեփին տեսիլք տեսավ, որտեղ նա իմացավ Հիսուս Քրիստոսի ծնողների մասին: Նրա տեսիլքից մենք լրացուցիչ ճշմարտություններ կարող ենք սովորել: Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 1 Նեփի 11.13-21: Դասարանին խնդրեք հետևել նրան և բացահայտել այս հատվածում ուսուցանվող կարևոր վարդապետությունները: Բացատրեք, որ այս ենթատեքստում *բարեհաճել* բառը նշանակում է ավելի բարձր վիճակից իջնել ավելի ցածր վիճակի, որը ենթադրում է ավելի ցածր կարգավիճակ:


- Ըստ Նեփիի գիտելիքի, ովքե՞ր պետք է լինեին Հիսուս Քրիստոսի ծնողները: (Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալ վարդապետությունը. **Աստված՝ Հավերժական Հայրը և Մարիամը մահկանացու Հիսուս Քրիստոսի ծնողներն են:**)
- Հաշվի առնելով այս դասընթացի մինչ այժմ անցած ձեր դասերը, ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսի ծնունդը Նրա բարեհաճության մաս համարվում:

Ցուցադրեք Կիրակնօրյա դպրոցի գերագույն նախագահ Եղբայր Թեդ Ռ. Քալիսթերի հետևյալ խոսքերը և խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք.



«Աստված Որդին իր երկնային տունը ողջ սելեստիալ պերճանքով հանդերձ փոխեց մահկանացու բնակավայրով իր ողջ պարզունակությամբ: Նա՝ «երկնքի Թագավորը» (Ալմա 5.50), «Ամենակարող Տերը, որն իշխում էր զորությամբ» (Մոսիա 3.5), թողեց գահը, որպեսզի ժառանգեր մտորը: Նա աստծո տիրապետությունը փոխեց մանկան կախվածությամբ: ... Դա իր տեսակով աննախադեպ փոխանակում էր: ... Մեծ Եհովան՝ ակթիվ աշխարհների արարիչը, անսահման ուժով ուժով ու զորությամբ, եկավ այս աշխարհ խանձարուրներով պատված և մտորի մեջ պառկած» (*The Infinite Atonement* [2000], 64):

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, որ Հիսուս Քրիստոսի մահկանացու ծնունդը նաև Հայր Աստծո բարեհաճությունն էր, բարձրաձայն կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրուս Ռ. Մակքոնկիի հետևյալ խոսքերը.



«Աստծո (այսինքն՝ Հոր) բարեհաճությունը կայանում է նրանում, որ լինելով վեհացած, կատարյալ, փառավորված Անձնավորություն, նա դարձավ մահկանացու կնոջից ծնված մահկանացու ժառանգի Հայրը՝ անհատական և բառի բուն իմաստով» (*Mormon Doctrine*, 2nd ed. [1966], 155):

Ավարտեք դասը հարցնելով ուսանողներին, թե ինչ մտքեր և զգացողություններ ունեն նրանք Փրկչի հանդեպ, հաշվի առնելով Նրա բարեհաճությունը և Նրա ծննդի զարմանահրաշ բույթը: Հարցրեք, արդյոք որևէ մեկը ցանկություն կունենա կիսվել Փրկչի մասին իր վկայությամբ՝ որպես այսօրվա դասի վերջաբան:

Ուսանողի ընթերցարան

- Մատթեոս 1.18–24; Դուկաս 1.26–35; Հովհաննես 10.17–18; 1 Նեփի 11.13–21; Մոսիա 3.7–8:
- Robert E. Wells, “Our Message to the World,” *Ensign*, Nov. 1995, 65–66.

Հիսուս Թրիստոսն ամեն արդարություն կատարեց

Նախաբան

Հիսուս Թրիստոսն ապրեց կատարյալ կյանքով՝ ամեն ինչում ենթարկվելով Երկնային Հոր կամքին: Մեր օրերի մարգարեները վկայել են. «[Հիսուս Թրիստոսն] անմեղ էր, սակայն մկրտվեց, որ ամեն արդարություն կատարվի» («Կենդանի Թրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Ensign* կամ *Liahona*, ապր. 2000, 2): Փրկչի պես մենք

արդարություն ենք կատարում՝ հնազանդվելով հավիտենական ավետարանի արարողություններին և ուխտերին: Այս դասն ուսումնասիրում է, թե ինչպես է Փրկիչը հնազանդվում հավիտենական ավետարանին և ինչպես կարող ենք մենք հետևել Նրա օրինակին:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Robert D. Hales, “The Covenant of Baptism: To Be in the Kingdom and of the Kingdom,” *Ensign*, Nov. 2000, 6–9.

Ուսուցանման առաջարկներ

Մատթեոս 3.13-17, 2 Նեփի 31.4-9

Հիսուս Թրիստոսի մկրտությունը

Խնդրեք ուսանողներին դիտարկել հետևյալ իրավիճակը.

Ընկերոջ հետ կրոնի շուրջ գրուցելիս մկրտության թեման է շոշափվում: Երբ դուք բացատրում եք, թե ինչու ենք մենք մկրտվում, ձեր ընկեր հարցնում է. «Հասկանում եմ, որ մենք մկրտվում ենք մեղքից մաքրվելու համար: Բայց Հիսուսը կատարյալ էր. Նա ոչ մի մեղք չուներ: Ուրեմն, ինչո՞ւ Նա մկրտվեց»:

Թույլ տվեք ուսանողներին մի պահ խորհել այդ հարցի շուրջ, և ապա խնդրեք նրանց պատասխանել:



Քննարկումից հետո, հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մատթեոս 3.13-17 հատվածը, կամ ցուցադրեք “The Baptism of Jesus” (2:55) տեսանյութը *Հիսուս Թրիստոսի կյանքը աստվածաշնչյան տեսաշարից*: (Դասից առաջ ներբեռնեք և դիտեք այդ տեսանյութը:) Եթե ցուցադրում եք այդ տեսանյութը, խնդրեք ուսանողներին անցնել սուրբ գրությունների այդ հատվածների վրայով:

Տեսանյութի դիտումից հետո, ուղղեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ պատճառ բերեց Հիսուսը մկրտվելու համար: (Գրատախտակին գրել հետևյալ վարդապետությունը. **Հիսուս Թրիստոսը մկրտվեց, որպեսզի ամեն արդարություն կատարվի:**)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում, որ Հիսուսը մկրտվեց, «որ ամեն արդարություն կատարվի» (Մատթեոս 3.15):

Որպեսզի օգնեք ուսանողներին պատասխանել այս հարցին, նրանց ժամանակ տվեք իրենց սուրբ գրություններում փնտրելու համար: Կարող եք առաջարկել նրանց գրել 2 Նեփի 31.4-9 իրենց սուրբ գրությունների լուսանցքում՝ Մատթեոս 3.15-ի կողքին: Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 31.5-6 հատվածը՝ ուշադրություն դարձնելով հարցի վրա, որ Նեփին տվեց: Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո բացատրեք, որ Նեփին պատասխանեց այդ հարցին 2 Նեփի 31.7-9-ում: Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այդ հատվածը, իսկ դասարանին խնդրեք հետևել նրան և գտնել, ինչպես Փրկիչը ամեն արդարություն կատարել՝ մկրտվելով: Կարող եք առաջարկել, որ նրանք նշեն իրենց գտածը: Երբ ուսանողները կիսվեն այն ամենով, ինչ իրենք գտել են, գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունները.

Նա իրեն խոնարհեցրեց Հոր առաջ:

Նա վկայեց Հորը, որ կհնազանդվի Նրա պատվիրաններին:

Նա մարդկանց զավակներին ցույց տվեց դարպասը, որով կարող են մտնել սեխատիսլ արքայություն:

Նա օրինակ ծառայեց մեզ համար:

(Նշում. Սա կօգնի, որ ուսանողները սովորեն սուրբ գրություններում ցուցակներ կազմելու հմտությունը, գտնելով այն կարևոր կետերը, որ տվյալ սուրբ գրության հեղինակը ցանկացել է շեշտել:)

Ուսանողներին հիշեցրեք հարցը, որ Նեփին տվեց (տես հատված 6): Այնուհետև հարցրեք.

- Մտքում ունենալով գրատախտակի վրա նշված կետերը, ինչպե՞ս Հիսուս Քրիստոսի մկրտությունն օրինակ հանդիսացավ արդար լինելու համար:

Երբ ուսանողները պատասխանեն, հավաստիացեք, որ հետևյալ մտքերն են արտահայտվում և քննարկվում (դուք կարող եք գրատախտակին գրված կետերը փոխարինել հետևյալով).

Արդարություն նշանակում է խոնարհաբար ընդունել Հոր կամքը:

Արդարություն նշանակում է ուխտել Հոր հետ՝ Նրա պատվիրաններին հնազանդ լինելու համար:

Արդարություն նշանակում է ստանալ փրկության արարողությունները:

Արդարություն նշանակում է հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին:

Հարցրեք դասարանին.

- Ինչպե՞ս կարող ենք կիրառել Հիսուսի արդար օրինակը մեր անձնական կյանքում:

Ձեր դասարանին վկայեք, որ մեզ նման Հիսուսը ենթարկվեց Երկնային Հոր ծրագրի բոլոր պայմաններին ու դրոյթներին: Նրա կատարյալ կյանքը օրինակ է, որին մենք պետք է ձգտենք հետևել:

2 Նեփի 31.10-21

Հետևել մարգարեի օրինակին

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ 2 Նեփի 31.10-12 հատվածը: Հարցրեք դասարանին.

- Ի՞նչ է մեզ բոլորիս կոչ անում Փրկիչը հատված 10-ում:
- Ըստ այդ հատվածների, ի՞նչ պատվիրեց մեզ անել Հիսուսը՝ Իրեն հետևելու համար:

Խնդրեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 31.16-17 հատվածը: Այնուհետև հարցրեք.

- Էլ ի՞նչ պետք է անենք Փրկչի օրինակին հետևելու համար:
- Ի՞նչ է նշանակում՝ համբերել մինչև վերջ և հետևել «կենդանի Աստծո Որդու օրինակին»: (հատված 16): Կարող եք ընդգծել *արևք* բառը հատված 17-ում: Նաև շեշտեք հետևյալ սկզբունքը. **Հետևելով Հիսուս Քրիստոսի օրինակին, Նրա պես մենք կարող ենք ամեն արդարություն կատարել:**)

Ուսանողներին բացատրեք, որ 2 Նեփի 31 գլխում իրենց կարդացած սուրբ գրությունները պարունակում են բուն իմաստը հավիտենական ավետարանի, որ Երկնային Հայրը հաստատել է նախքան աշխարհի արարումը:

Հանձնարարեք ուսանողներին վերլուծել Հռովմայեցիս 6.3-6-ը, փնտրելով կարևոր բառերը կամ արտահայտությունները, որոնք հաստատում են, որ Հիսուս Քրիստոսի օրինակին հետևելը պահանջում է ավելի, քան մկրտվելը: Կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն դրանք:

Ուսանողներին բաժանեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեք Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ խոսքերի օրինակը և խնդրեք նրանց մտքում կարդալ դրանք: Խնդրեք նրանց մտածել, թե իրենց մկրտությունն ինչ ազդեցություն է թողել իրենց կյանքի վրա:



«Երբ հասկանա՞նում ենք մեր մկրտության ուխտը և Սուրբ Հոգու պարզը, դա մեր կյանքը փոխվում է և հաստատվում է մեր ողջ հավատարմությունը առ Աստծո արքայությունը: Երբ գայթակհություններ կանգնեն մեր ճանապարհին, եթե լսենք, Սուրբ Հոգին կհիշեցնի մեզ, որ խոստացել ենք հիշել մեր Փրկչին և հնազանդվել Աստծո պատվիրաններին: ...

Հետևելով Հիսուսի օրինակին, մենք նաև ցույց ենք տալիս, որ կապաշխարենք և հնազանդ կլինենք մեր Երկնային Հոր պատվիրանները պահելիս: Մենք խոնարհվում ենք կոտրված սրտով և փրշված հոգով, ընդունելով մեր մեղքերը և ներում

փնտրելով մեր զանցանքների համար (տես 3 Նե. 9.20): Մենք ուխտ ենք կապում, որ կամենում եք մեզ վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը և միշտ հիշել Նրան: ...

... Ես աղոթում եմ, որ մեզանից յուրաքանչյուրը՝ որպես Նրա արքայության անդամ հասկանա, որ մեր մկրտությունը և հաստատումը դարպաս է *դեպի* Նրա արքայություն: Ներս մտնելով մենք ուխտ ենք կապում լինել Նրա արքայության *մասը*՝ հավերժ» (“The Covenant of Baptism: To Be in the Kingdom and of the Kingdom,” *Ensign*, Nov. 2000, 7–8, 9):

Ուսանողներին ուղղեք հետևյալ հարցը.

- Ինչպե՞ս է մկրտվելն օգնել ձեզ հետևել ամեն արդարություն կատարելու Հիսուս Քրիստոսի օրինակին:

Թույլ տվեք, որ ուսանողները մի պահ մտածեն, թե ինչպես են իրենք բավարարում արդարության չափանիշները, որոնք սահմանել է Փրկիչն Իր մկրտության ժամանակ: Խնդրեք ուսանողներին մտածել, թե էլ ինչ կարող են անել առ Երկնային Հայր հնազանդություն դրսևորելու համար:

Ուսանողի ընթերցարան

- Մատթեոս 3.13-17, 2 Նեփի 31.4-21:
- Robert D. Hales, “The Covenant of Baptism: To Be in the Kingdom and of the Kingdom,” *Ensign*, Nov. 2000, 6–9.

ԴԱՍ 9

Փրկչի անսահման ազդեցությունը

Նախաբան

«Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը» հռչակագրում Եկեղեցու ղեկավարները հայտարարում են. «Նշելով երկու հազարամյակ առաջ տեղի ունեցած Հիսուս Քրիստոսի ծնունդը, մենք բերում ենք մեր վկայությունը Նրա անզուգական կյանքի իրականության և Նրա մեծ քավող զոհաբերության անսահման զորության մասին: Ոչ ոք չի ունեցել այդպիսի խորը ազդեցություն բոլորի վրա, ովքեր ապրել են և ովքեր դեռ

կապրեն երկրի վրա» (*Ensign* կամ *Lhahlnsa*, ապր. 2000, 2): Այս դասը ցույց կտա, որ Փրկիչն անզուգական է, որովհետև այլ պատճառներից բացի, Նա անմեղ է և կատարյալ հնազանդ Երկնային Հորը: Ուսումնասիրելով Նրա շփումը Սամարացի կնոջ հետ ջրհորի մոտ, ուսանողները նաև կտեսնեն այն խորը ազդեցությունը, որ Նա կարող է ունենալ յուրաքանչյուրի վրա, ով կբացի իր սիրտը Նրա առաջ:

Ուսուցանման առաջարկներ

Մատթեոս 4.1–11; Բ Կորնթացիս 5.21; Եբրայեցիս 2.17–18; 4.15–16; Վարդապետություն և Ուխտեր 20.22

Հիսուս Քրիստոսն ապրեց անմեղ կյանք

Սկսեք դասը գրատախտակի վրա գրելով *իմ կամքըն Աստծո կամքը*: Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հովհաննես 6.38 հատվածը, իսկ մյուսներին խնդրեք հետևել նրան և գտնել, թե քանի անգամ «իմ կամքը» որոշումներ կայացրեց Հիսուսը: Խնդրեք ուսանողներին մտքում հիշել, թե վերջերս որքան որոշումներ են կայացրել, որոնք կարող են դասակարգվել որպես «իմ կամքը», իսկ որքան որոշումներ կարող են դասակարգվել որպես «Աստծո կամքը»:

Ուսանողներին ասեք, որ Իր մկրտությունից հետո Հիսուսը գայթակղվեց սատանայի կողմից կատարելու այն, ինչը կարող էր դասակարգվել որպես «իմ կամքը»: Խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մատթեոս 4.1-11 հատվածը: Դասարանին խնդրեք հետևել նրանց և գտնել, թե ինչպես Հիսուսը դիմակայեց գայթակղությանը: (Գարող եք ուսանողներին ասել, որ Մատթեոս 4.1-11 հատվածի Չոզեֆ Սմիթ Թարգմանությունը հստակեցնում է այն, որ ոչ թե սատանան, այլ Հոգին Հիսուսին տարավ տաճարի աշտարակի վրա [տես հտաված 5] և սպա բարձր սարի գագաթը [տես հատված 8]: Հոգին Հիսուսին այդ վայրեր տանելուց հետո, սատանան եկավ գայթակղելու Նրան:)

- Ըստ ձեր դիտարկման, ինչպե՞ս Փրկիչը պատասխանեց սատանայի գայթակղություններին:
- Ի՞նչ եք սովորում այս հատվածներում Փրկչի օրինակից:
- Ինչպե՞ս կարող են Փրկչի դեմ ծառայած գայթակղությունները նման լինել այն գայթակղություններին, որ հանդիպում են մեր կյանքում:

Ցուցադրեք և կարդացեք Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյի (1873-1970) հետևյալ խոսքերը, որտեղ նա մեկնաբանում է այն գայթակղությունները, որոնց Հիսուսը դիմակայեց անապատում.



«Գրեթե յուրաքանչյուր գայթակղություն, որ ունենում եք դուք կամ ես, գալիս է հետևյալ կերպ: Դասակարգելով դրանք դուք կարող եք, որ ձեզ և ինձ արատավորող գրեթե յուրաքանչյուր գայթակղություն կարելի է գտնել այս երեք դասակարգումների ներքո, և որքան էլ որ փոքր լինեն դրանք, գալիս են որպես՝ 1) ախորժակի գայթակղություն, (2) Աստծո ուղիներից օտարացած մարդկանց հպարտությանը, նորաձևությանը և ունայնությանը տեղի տալու, (3) կիրքը բավարարելու, աշխարհիկ հարստությանը տենչալու կամ մարդկանց վրա իշխանության ձգտելու գայթակղություն» (“Unspotted from the World,” *Ensign*, Aug. 2009, 27):

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Եբրայեցիս 2.17-18, 4.15–16 հատվածները: Մեկ ուրիշ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 20.22 հատվածը: Դասարանին խնդրեք հետևել նրան և նմանություններ նշել երկու հատվածների միջև: Այնուհետև տվեք հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ էր անհրաժեշտ, որ Հիսուսը գայթակղությունների ենթարկվեր:
- Ինչո՞ւ է մեզ համար կարևոր հասկանալ, որ Հիսուս Քրիստոսը ենթարկվել է նմանատիպ գայթակղությունների, որոնց մենք ենք դիմակայում այսօր:

Հաղորդեք ուսանողներին, որ այսօրվա դասի նպատակներից մեկը Փրկչի անգուզական կյանքը լուսաբանելն է: Հարցրեք դասարանին, թե մինչ այժմ դասի ընթացքում ուսումնասիրած սուրբգրքյան հատվածներն ինչպես են լուսաբանում Փրկչի անգուզական կյանքի մեկ կողմը: (Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալ սկզբունքը. **Հիսուս Քրիստոսն անգուզական կյանք ապրեց, որովհետև Նա երբեք տեղի չտվեց որևէ գայթակղության և չմեղանչեց:**

Ցուցադրեք Նախագահ Հովարդ Վ. Հանթերի (1907–1995) հետևյալ խոսքերը, և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Կարևոր է հիշել, որ Հիսուսը կարող էր մեղանչել, անձնատուր լինել, որ կյանքի և փրկության ծրագիրը կարող էր խափանվել, սակայն Նա հավատարիմ մնաց: Չլինե՞ր սատանայի գայթակղություններին անձնատուր լինելու հնարավորություն, չէր լինի իրական փորձություն և արդյունքում իրական հաղթանակ: ... Նա կատարյալ և անմեղ էր, բայց Նա ոչ թե ստիպված էր լինել այդպիսին, այլ որովհետև Նա հստակորեն և վճռականորեն ուզում էր դա» (“The Temptations of Christ,” *Ensign*, Nov. 1976, 19):

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Ղուկաս 22.42, 44 և 3 Նեփի 11.11 հատվածները, գտնելով Հիսուս Քրիստոսի մի հատկանիշ, որը Նրա անգուզական կյանքի ևս մեկ օրինակ է հանդիսանում: (Ուսանողները պետք է բացահայտեն Հոր կամքին Փրկչի հնազանդությունը:)

Յուցադրեք Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի (1899–1994) հետևյալ խոսքերը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Գեթսեմանիում Նա կրեց ողջ մարդկության ցավերը, որպեսզի նրանք չտառապեին, եթե ապաշխարեին:

Իր թշնամիների կողմից Նա ենթարկվեց նվաստացման և վիրավորանքների՝ չղձգուհելով և չհակադարձելով:

Եվ վերջապես, Նա խարազանվեց և կրեց խաչի դաժան անարգանքը: Միայն այդ ժամանակ կամովին Նա իր մահկանացուն կկրեց: ...

Նա կատարյալ կերպով հնազանդվում էր մեր Երկնային Հորը» (“Jesus Christ: Our Savior and Redeemer,” *Ensign*, Nov. 1983, 7, 8):

Շարունակեք դասը՝ ուղղելով հետևյալ հարցերը.

- Երկնային Հոր փրկության ծրագրում ինչո՞ւ էր անհրաժեշտ, որ Հիսուսը լիներ կատարյալ անմեղ և կատարելապես հնազանդվեր Երկնային Հոր կամքին: (Ուսանողները կարող են տալ տարբեր պատասխաններ, սակայն դրանք պետք է արտահայտեն հետևյալ սկզբունքը.
Փրկության ծրագիրը պահանջում էր, որ Քավությունն իրագործելու համար Հիսուսը լիներ կատարյալ հնազանդ:)
- Ինչպե՞ս է դա ազդում առ Հիսուս Քրիստոս ձեր հավատքի վրա, երբ իմանում եք, որ Նա կատարյալ անմեղ էր և հնազանդվում էր Երկնային Հոր կամքին: (Երբ ուսանողները պատասխանեն, շեշտեք, որ **մենք կարող ենք գայթակղությանը դիմակայելու և հնազանդ լինելու ուժ ստանալ, եթե հետևենք Հիսուս Քրիստոսի օրինակին, այսինքն՝ փնտրել ոչ թե մեր, այլ Հոր կամքը:**)

Հովհաննես 4.1-29

Փրկչի անսահման ազդեցությունը

Գրատախտակին գրեք կամ ցուցադրեք «Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը» (*Ensign* կամ *Liahon*, ապր. 2000, 2) հռչակագրից հետևյալ նախադասությունը.

«Ոչ որ չի ունեցել այդպիսի խորը ազդեցություն բոլորի վրա, ովքեր ապրել են և ովքեր դեռ ապրելու են երկրի վրա»:

Խնդրեք ուսանողներին խորհել այդ խոսքերի շուրջ՝ տալով հետևյալ հարցը.

- Իր ո՞ր հատկանիշների շնորհիվ է Հիսուս Քրիստոսը նման ազդեցություն գործում բոլոր նրանց վրա, ովքեր ապրել են և դեռ ապրելու են այս երկրի վրա:

Ուսանողներին ասեք, որ Իր մահկանացու ծառայության ընթացքում այն մարդկանցից մեկը, ում վրա Հիսուսը խորը ազդեցություն գործեց, դա մի

Սամարացի կին էր: Օգնեք ուսանողներին իրենց սուրբ գրություններում տրված օժանդակ ուսումնական նյութերը օգտագործելով տեղեկություն գտնել Սամարացիների մասին (տես Աստվածաշնչյան բառարանը, «Սամարացիներ»); Սուրբ գրքերի ուղեցույցը, «Սամարացիներ»;
scriptures.lds.org): Ամփոփեք Հովհաննես 4.1-8 հատվածը, այնուհետև հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Հովհաննես 4.9 հատվածը: Նշեք, թե ինչպես է Հիսուսին տրված կնոջ պատասխանը բացահայտում թշնամությունը, որ այդ ժամանակ գոյություն ուներ Հրեաների և Սամարացիների միջև: Այնուհետև խնդրեք ուսանողներին մտքում կարդալ Հովհաննես 4.10-15 հատվածը: Բավարար ժամանակ հատկացնելուց հետո, տվեք հետևյալ հարցերը՝

- Ինչպե՞ս կբնութագրեիք Հիսուսի և այդ կնոջ շփումը:
- Ի՞նչ ամաչարկեց նրան Հիսուսը:

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Հովհաննես 4.16-19 հատվածը, իսկ դասարանը թող հետևի նրան և ուսանողները պատկերացնեն իրենց այդ կնոջ փոխարեն գրույցել իս: (Նշում. Պատկերացնելու շնորհիվ սուրբգրքյան պատմությունը դառնում է ավելի վառ և իրական:) Այնուհետև տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ կմտածեիք, եթե լինեիք այդ Սամարացի կնոջ փոխարեն: Ինչո՞ւ:
- Ի՞նչն է փաստում, որ Հիսուսը ազդեցություն թողեց նրա վրա: (Նշեք, ինչպես էր ամաչադիմում Նրան ուղղված այդ կնոջ դիմելվածը. «Հրեա» [հատված 9], «Տեր» [հատվածներ 11, 15], և ապա «մարգարե» [հատված 19]:)

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Հովհաննես 4.20-29 հատվածը: Դասարանին հանձնարարեք բացահայտել Փրկչի տիտղոսները 25 և 29 հատվածներում: Այնուհետև խնդրեք ուսանողներին մի փոքր մտածել նախքան հետևյալ հարցին պատասխանելը.

- Ի՞նչ արեց Փրկիչն այդ կարճ ժամանակահատվածում, որ փոխեց Իր հանդեպ այդ կնոջ վերաբերմունքը, որը սկզբում Նրան անվանեց՝ «Հրեա» (հատված 9), իսկ վերջում արդեն՝ «Քրիստոս» (հատված 29): (Հանձնարարեք ուսանողներին կիսվել այս հատվածների վերաբերյալ իրենց դիտարկումով: Պատասխանները կարող են լինել. Նա ցույց տվեց իր հարգանքը, Նա վարդապետություն ուսուցանեց նրան, Նա այնպես ուսուցանեց այդ կնոջը, որ Սուրբ Հոգին վկայեր նրան, Նա այդ կնոջ անձնական կյանքից եղելություններ հայտնեց, և Նա Իր ուշադրությունը կենտրոնացրեց նրա վրա:)
- Փրկչի և Սամարացի կնոջ պատմությունը ի՞նչ է սովորեցնում ձեզ՝ ձեր հանդեպ Փրկչի վերաբերմունքի և այն ազդեցության մասին, որ Նա կարող է ունենալ ձեզ վրա:
- Ե՞րբ եք տեսել Փրկչի ազդեցությունը ձեր կյանքում կամ ձեր ծանոթներից մեկի կյանքում: Ի՞նչ հետք է թողել Փրկչի այդ ազդեցությունը:

- Ի՞նչ կպարտավորվեք անել, որպեսզի ավելի լավ գիտակցեք Փրկչի ունեցած ազդեցությունը ձեր կյանքում և թույլ տաք, որ Նրա ազդեցությունը վերափոխի ձեզ:

Վկայեք, որ երբ մեր կյանքը դարձնենք դեպի Փրկիչը, Նա խորը ազդեցություն կթողնի մեզ վրա: Փրկչի ազդեցությունը հիմնականում գործում է, երբ մենք խնդրում ենք, որ Նրա քավող զոհաբերության ուժը մաքրագործի, բարձրացնի և փոխակերպի մեզ: Քաջալերեք ուսանողներին խորհել այն մասին, թե ինչ կարող են անել, որպեսզի ցույց տան իրենց երախտագիտությունը Փրկչի հանդեպ՝ իրենց կյանքում ունեցած Նրա ազդեցության համար: Հանձնարարեք նրանց գործել իրենց զգացողությունների համաձայն:

Ուսանողի ընթերցարան

- Բ Կորնթացիս 5.21; Եբրայեցիս 2.17–18; 4.15–16; Վարդապետություն և Ուխտեր 20.22; Մատթեոս 4.1–11; Ղուկաս 22.42, 44; Հովհաննես 6.38; 3 Նեփի 11.11; Հովհաննես 4.1–29:

ԻՆՃ հետևիր

Նախաբան

Հիսուս Քրիստոսը հայտարարեց. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը» (Հովհաննես 14.6): «[Հիսուսի] ճանապարհն այն արահետն է, որ տանում է դեպի երջանկություն այս կյանքում և հավիտենական կյանք՝ գալիք աշխարհում» («Կենդանի Քրիստոսը. Առաքյալների

վկայությունը», *Ensign* կամ *L'haishnaw*, ապր. 2000, 3): Այս դասն ուսումնասիրում է Հիսուս Քրիստոսի հրավերն ուղղված բոլորին, որպեսզի հետևեն Իրեն և Իր աշակերտները լինեն: Այս դասում նաև դիտարկվում է, թե ինչ է նշանակում աշակերտի ուղով քայլել:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Դիտեր Ֆ. Ուլտորֆ, «Աշակերտի ուղին», *Ensign* կամ *L'haishnaw*, մայիս 2009, 75-78:
- Joseph B. Wirthlin, “Follow Me,” *Ensign*, May 2002, 15–17.

Ուսուցանման առաջարկներ

Հովհաննես 1.35-47, 2 Նեփի 26.33, Ավամ 5.33-34

Հիսուս Քրիստոսը հրավիրում է բոլորին լինել Իր աշակերտները

Խնդրեք որևէ ուսանողի հակիրճ ներկայացնել այն ժամանակը, երբ նա ճամփորդելիս սխալմամբ սխալ շրջադարձ է կատարել կամ գնացել է սխալ ճանապարհով: Այնուհետև հանձնարարեք ուսանողներին կարդալ Հովհաննես 14.6 հատվածը և իրենց բառերով սահմանել վարդապետությունը, որ Հիսուսն ուսուցանում է այդ հատվածում: (Ուսանողները կարող են տարբեր բառեր օգտագործել, սակայն նրանք պետք է հասկանան, որ **միայն Հիսուս Քրիստոսին հետևելու շնորհիվ կարող ենք վերադառնալ և ապրել Երկնային Հոր հետ:**)

Ուսանողներին ասեք, որ Հիսուս Քրիստոսը մկրտվելուց և ապա անապատում գայթակղվելուց հետո, հրավիրեց մյուսներին հետևել Իրեն: Ովքեր հետևեցին Փրկչին այն ժամանակ և այժմ կոչվում են *աշակերտներ*: Հանձնարարեք ուսանողներին Հովհաննես 1.35-47 հատվածներում գտնել Փրկչի վաղեմի աշակերտներից մի քանիսի անունները և ինչը դրդեց նրանց հետևել Նրան:

Ցուցադրեք Առաջին Նախագահությունից Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստի (1920-2007) հետևյալ խոսքերը, և որևէ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ այն.



«Անգլերեն *աշակերտ* և *կարգապահություն* բառերը սերվում են նույն լատինական *դիսպոլիտա* արմատից, որը նշանակում է սովորող: Այն ներկայացնում է գործողություն: Ինքնակարգապահությունն ու ինքնավերահսկումը Հիսուսի հետևորդների հաստատուն և մշտական բնորոշիչներն են: ...

Ի՞նչ է աշակերտությունը: Այն, հիմնականում, հնազանդություն է Փրկչին»
 («Աշակերտություն», *Ensign* կամ *Liahonah*, նոյ. 2006, 20):

- Ըստ աշակերտության այդ սահմանման, ինչպիսի՞ն է եղել Հիսուս Քրիստոսի վաղեմի աշակերտների կյանքը:

Հանձնարարեք ուսանողներին կարդալ և համեմատել 2 Նեփի 26.33 և Ալմա 5.33–34 հատվածները, և պարզել, թե էլ ում Հիսուսը հրավիրեց գալ Իր մոտ: Այնուհետև քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ են այդ հատվածներն ուսուցանում Իր մոտ գալու Փրկչի հրավերի մասին: (Ուսանողների պատասխաններից հետո, գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. **Հիսուս Քրիստոսը հրավիրում է բոլոր մարդկանց գալ Իր մոտ և լինել Իր աշակերտները:**)
- Ըստ Ալմայի, ի՞նչ խոստացավ Փրկիչը նրանց, ովքեր ընդունում են Իր մոտ գալու հրավերը:
- Ի՞նչ են այդ խոստումները նշանակում ձեզ համար:


Մատթեոս 4.18–22; Ղուկաս 5.11; 9.57–62; 14.25–33

Լինել Հիսուս Քրիստոսի աշակերտը

Ուսանողներին բաժանեք զույգերի: Հանձնարարեք նրանց ուսումնասիրել Մատթեոս 4.18-22 և Ղուկաս 5.11 հատվածները և գտնել, թե ինչ զոհաբերություններ կատարեցին Հիսուս Քրիստոսի վաղեմի աշակերտները՝ ընդունելով Նրան հետևելու կանչը: Քննարկեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս կնկարագրեիք այդ վաղեմի աշակերտների արձագանքն՝ ի պատասխան Իրեն հետևելու Փրկչի կանչին: (Քննարկեք հետևյալ խոսքերի և արտահայտությունների նշանակությունը՝ «իրանց ուղկանները թողած», «շուտով» և «թողեցին»:)
- Ի՞նչ կարևոր ճշմարտություններ են այդ հատվածներն ավելացնում Հիսուս Քրիստոսի աշակերտը լինելու նկարագրին: (Երբ ուսանողները կպատասխանեն, գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. **Հիսուս Քրիստոսի աշակերտ լինելը պահանջում է հնազանդություն և զոհաբերություն:**)

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Չոզեֆ Բ. Վիրթլինի (1917-2008) հետևյալ խոսքերը, և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Ցանցերը հիմնականում գործիքներ են՝ նախատեսված ինչ-որ բան որսալու համար: ... Ավելի կարևոր իմաստով մենք կարող ենք ցանցը ներկայացնել որպես մի բան, որը հրապուրում կամ խանգարում է կենդանի Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի կանչին հետևել:

Այդ առումով ցանցերը կարող են լինել մեր աշխատանքը, մեր նախասիրությունները, մեր հաճույքները, իսկ ամեն ինչից առավել՝ մեր գայթակղություններն ու մեղքերը: Այսինքն, ցանց կարող է լինել այն ամենը, ինչը մեզ հեռացնում է մեր Երկնային Հոր կամ Նրա վերականգնած Եկեղեցու հետ ունեցած մեր կապից: ...

Անհնար է թվարկել բոլոր հնարավոր ցանցերը, որոնք կարող են ծուղակը գցել մեզ և ետ պահել Փրկչին հետևելուց: Բայց եթե մենք անկեղծ ենք Նրան հետևելու մեր ցանկության մեջ, մենք պետք է անմիջապես հեռանանք աշխարհի խճճող ցանցերից և հետևենք Նրան:

... Մեր կյանքն այնքան հեշտությամբ է լցվում ժամադրություններով, հանդիպումներով և հանձնարարություններով: Այնքան հեշտ է բռնվել բազմաթիվ ցանցերի կողմից, որ Երբեմն անգամ դրանցից մեկից ազատվելու առաջարկությունը մեզ համար կարող է ահաբեկող կամ անգամ վախեցնող լինել:

Երբեմն թվում է, որքան զբաղված ենք մենք, այնքան կարևոր ենք, կարծես, թե մեր զբաղվածությունն է որոշում մեր արժեքը: Եղբայրներ և քույրեր, մենք կարող ենք վատնել մեր կյանքը տենդագին վազքում, կատարելով գործեր, որոնք ի վերջո իրականում կարևոր չեն:

Շատ գործեր կատարելը գուցե այնքան էլ կարևոր չլինի: Երբ մենք մեր մտքի, մեր սրտի և մեր հոգու ուժը կենտրոնացնում ենք հավերժական կարևորություն ունեցող բաների վրա, դա է կարևոր» ("Follow Me," *Ensign*, May 2002, 15–16):

- Եթե ձկնորսների թողած ձուկը, ցանցերը և նավակները ներկայացնում են նրանց աշխարհիկ խնդիրները, ի՞նչ Փրկիչը կպահանջի ձեզանից մի կողմ թողնել Իրեն հետևելու համար:
- Ինչո՞ւ է երբեմն դժվար նյութական հոգսերը մի կողմ դնելը:
- Ինչպե՞ս կարող է անհատը հասկանալ, արդյոք ինքն ընկել է Երեց Վիրթլինի նշած խճճող որևէ ցանցի մեջ:

Խնդրեք ուսանողներին պատմել իրենց կյանքի այն պահերի մասին, երբ արձագանքել են Իրեն հետևելու Փրկչի կանչին (գուցե ետևում են թողել հին սովորույթները կամ ընդունել են Եկեղեցական կոչումը): Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս է այդ կանչին արձագանքելն օրհնել ձեր կյանքը:

Գրատախտակին ցուցադրեք կամ գրեք սուրբ գրությունների հետևյալ հատվածները և հարցերը.

Ղուկաս 9.57-62—Ի՞նչը կարող է խանգարել մեզ հետևել Փրկչին:

Ղուկաս 14.25-27, 33—Ի՞նչ է Փրկիչը պահանջում Իր աշակերտներից:

Ղուկաս 14.28-32—Ինչպե՞ս է ավարտել բատը վերաբերում աշակերտ լինելու պահանջներին:

Դասարանը բաժանեք երեք խմբի, և յուրաքանչյուր խմբին տվեք այդ հատվածներից մեկը և համապատասխան հարցը: Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, խնդրեք ուսանողներին կիսվել, ինչպես է այն հատվածը, որ կարդացին, պատասխանում իրենց հարցին: Այդ երեք հատվածները քննարկելուց հետո, հարցրեք.

- Աշակերտ լինելու ի՞նչ պահանջ է ներկայացվում Փրկչի համանմանություններով: (Երբ ուսանողները կքննարկեն այս հարցը, օգնեք նրանց հասկանալ հետևյալ ճշմարտությունը. **Աշակերտ լինելը պահանջում է ամեն ինչ թողնելու և Հիսուս Քրիստոսին հետևելու մեր հաստատուն պատրաստակամությունը:**)

Բացատրեք, որ չնայած աշակերտ լինելը ենթադրում է անշեղորեն խորացնել Փրկչին հետևելու մեր նվիրվածությունն ու պարտավորվածությունը, Նա չի պահանջում, որ վազենք ավելի արագ, քան մեր ուժը կբավարարի (տես Մոսիա 4.27):

Ուսանողներին բաժանեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դիտեր Ֆ. Ուլտորֆի հետևյալ խոսքերի օրինակը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Աշակերտ լինելու ուղու վրա առաջին քայլը, ի ուրախություն մեզ, սկսվում է այնտեղից, որտեղ մենք գտնվում ենք: Առաջին քայլը կատարելու համար կարիք չկա, որպեսզի նախապես որակվենք: Նշանակություն չունի մենք հարուստ ենք, թե աղքատ: Կարիք չկա լինել կրթված, պերճախոս կամ մտավորական: Կարիք չկա լինել կատարյալ, պերճախոս կամ անգամ ունենալ բարեկիրթ վարվելաձև:

Այսօր ես և դուք կարող ենք աշակերտ լինելու ուղով քայլել: Եկեք լինենք խոնարհ, եկեք մեր ողջ սրտով աղոթենք մեր Երկնային Հորը, հայտնենք Նրան մոտենալու և Նրանից սովորելու մեր ցանկությունը:

Հավատք ունեցեք: Փնտրեք և դուք կգտնեք: Թակեք և դուռը կբացվի (տես Մատթեոս 7.7): Ծառայեք Աստծուն՝ ծառայելով ուրիշներին: Դարձեք ակտիվ մասնակից ձեր ծխում կամ ճյուղում: Ամրացրեք ձեր ընտանիքը՝ պարտավորվելով ապրել ավետարանի սկզբունքներով: Ձեր ամուսնության մեջ և ընտանիքում եղեք մեկ սրտի և մեկ մտքի:

Այժմ է պահը ձեր կյանքը շտկելու, որպեսզի կարողանաք տաճարի երաշխավորագիր ունենալ և օգտագործել այն: Այժմ է պահը անցկացնելու իմաստալից ընտանեկան երեկոներ, կարդալու Աստծո խոսքը և անկեղծ աղոթքով խոսելու մեր Երկնային Հոր հետ: Այժմ է պահը ձեր սրտերը երախտագիտությամբ լցնելու: Նրա Եկեղեցու Վերականգնման, ապրող մարգարեների, Մորմոնի Գրքի և քահանայության գործության համար, որ օրհնում է մեր կյանքը: Այժմ է պահը ընդունելու Հիսուս Քրիստոսի ավետարանը, դառնալու Նրա աշակերտը և քայլելու Նրա ճանապարհով» («Աշակերտի ուղին», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2009, 77):

- Ըստ Նախագահ Ուլտորֆի, որտեղի՞ց է աշակերտ լինելու ուղին սկսվում:
- Ըստ Նախագահ Ուլտորֆի, ե՞րբ պետք է սկսել աշակերտի ուղով քայլել:

Գրատախտակի վրա գրեք հետևյալը.

Այժմ է պահը, որ ես ...

Խնդրեք ուսանողներին մտածել և լրացնել այս նախադասությունը՝ նշելով, թե ինչ կանեին Հիսուս Քրիստոսի աշակերտը լինելու համար: Խրախուսեք նրանց գործել՝ անմիջապես հետևելով իրենց մոտ ծագած մտքին, քանի որ այդ միտքն, ամենայն հավանականությամբ, Սուրբ Հոգուց եկած հուշում էր: Վկայեք, որ երբ նրանք կատարեն այդ առաջին քայլը, Տերը կօգնի նրանց լինել Իր աշակերտները:

Ուսանողի ընթերցարան

- Հովհաննես 1.35-47, 2 Նեփի 26.33, Ալմա 5.33-34; Մատթեոս 4.18-22; Ղուկաս 5.11; 9.57-62; 14.25-33:
- Դիտեր Ֆ. Ուլտորֆ, «Աշակերտի ուղին», *Ensign* կամ *Lighthouse*, մայիս 2009, 75-78:

Հիսուս Թրիստոսը ման եկավ բարիք գործելով

Նախաբան

«Կենդանի Թրիստոսը. Առաքյալների վկայությունը» ուսուցանում է, որ «[Հիսուսը] «ման եկավ բարի անելով» (Գործք 10.38), թեև արհամարիվեց դրա համար» (*Ensign* կամ *L'Espresso*, ապր. 2000, 2): Որպես Հիսուս Թրիստոսի աշակերտներ, մենք պետք է հետևենք բարիք գործելու Նրա օրինակին, չնայած հնարավոր է մեզ հալածեն: Այս դասին ուսանողները կքննարկեն, թե ինչու պետք է մեր

համոզմունքների պատճառով մեզ վատ վերաբերվողների հանդեպ ցուցաբերենք այն նույն սերն ու հարգանքը, ինչը Հիսուսն էր դրսևորում Իրեն հալածողների հանդեպ: Հետևելով Փրկչի օրինակին, մենք կօրհնվենք մեր հավատքով ապրելու և այն պաշտպանելու քաջությամբ, և մենք կկարողանանք օգնել մյուսներին էլ ավելի մոտենալ Տիրոջը:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Դավիթ Հ. Օուրս, «Միրել ուրիշներին և ապրել տարբերություններով հանդերձ», *Ensign* կամ *L'Espresso*, նոյ. 2014, 25–28:
- Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Աշակերտ լինելու գինը և օրհնությունները» *Ensign* կամ *L'Espresso*, մայիս 2014, 6–9:
- Ռոբերտ Դ. Հեյլս, «Թրիստոնեական քաջություն՝ աշակերտ լինելու գինը», *Ensign* կամ *L'Espresso*, նոյեմբեր 2008, 72–75:

Ուսուցանման առաջարկներ

Մատթեոս 5.43–47; 9.9–13; 12.22–30; Մարկոս 3.1–6; 11.15–19; Հովհաննես 11.43–53

Հիսուս Թրիստոսը հալածվում էր բարիք գործելու համար

Սկսեք դասը՝ ուսանողներին ուղղելով հետևյալ հարցը.

- Մտածելով Փրկչի օրինակելի կյանքի մասին, մահկանացու կյանքում Նրա կատարած բոլոր բարի գործերից ո՞րն է առանձնանում ձեզ համար:

Երբ ուսանողները պատասխանեն, կարդացեք (կամ ձեր խոսքերով ներկայացրեք) Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի կողմից ներկայացված երկու քույր միսիոներների մասին հետևյալ պատմությունը.



«Հիացմունքով և խրախուսանքով յուրաքանչյուրի հանդեպ, ով կարիք կունենա անսասան մնալու այս վերջին օրերին, ես ասում եմ բոլորին և հատկապես Եկեղեցու երիտասարդությանը, որ եթե դուք դեռ չեք կանչվել, դուք մի օր կկանչվեք՝ պաշտպանելու ձեր հավատքը կամ հավանաբար նույնիսկ դիմանալու անձնական անարգանքի, պարզապես այն բանի

համար, որ դուք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ եք: Նման պահերը կպահանջեն ձեզանից թե քաջություն և թե բարեկրթություն:

Օրինակ՝ մի քույր միսիոներ վերջերս գրել էր ինձ. «Ընկերակիցս և ես տեսանք քաղաքի հրապարակում նստարանին նստած մի մարդու, ով ուտում էր իր նախաճաշը: Երբ մոտեցանք, նա աչքերը բարձրացրեց և տեսավ մեր միսիոներական կրծքանշանները: Աչքերում տակալի հայացքով, նա վեր ցատկեց և բարձրացրեց ձեռքը, որ ինձ հարվածեր: Ես ճիշտ պահին խույս տվեցի, նա հասցրեց միայն իր ուտելիքը թքել ամբողջապես ինձ վրա և սկսեց հայհոյել մեզ ամենատակալի բառերով: Մենք հեռացանք առանց որևէ բան ասելու: Ես փորձում էի սրբել ուտելիքը երեսիցս, երբ զգացի կարտոֆիլի այուրեն հարվածեց գլխիս ետևի մասից: Երբեմն դժվար է լինել միսիոներ, որովհետև հենց այդ պահին ես ցանկացա ետ գնալ, բռնել այդ փոքրամարմին մարդուն և ասել՝ «ՆԵՐԻՐ ԻՆՁ»: Բայց ես չարեցի» («Աշակերտ լինելու գինը և օրհնությունները», *Ensign* կամ *L'haishna*, մայիս 2014, 6):

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Մատթեոս 5.43-47 հատվածները, ուշադրություն դարձնելով այն սկզբունքի վրա, որը Հիսուսն ուսուցանել էր Լեռան Իր քարոզում, որն այդ երկու քույր միսիոներները կիրառեցին: (Կարող եք առաջարկել, որ կարդալիս ուսանողները կիրառեն սուրբգրություններն ուսումնասիրելու անվանափոխության հմտությունը, որը կօգնի անձնավորել այդ հատվածներում տրված ուղերձը: Այդ հմտությունը կիրառելիս ուսանողները պետք է իրենց անունով փոխարինեն *դուք* և *ձեր* դերանունները):

- Ի՞նչ սկզբունք է ուսուցանում Հիսուսն այդ հատվածներում:
(Ուսանողները կարող են տարբեր բառերով պատասխանել, սակայն նրանք պետք է ներկայացնեն հետևյալ սկզբունքը. **Հիսուս Քրիստոսի ուսմունքներին հետևելու համար, մենք պետք է սովորենք սիրել մեր թշնամիներին և բարյացակամորեն վերաբերվել մեզ հալածողներին:**)
- Ի՞նչն է դժվարացնում այդ ավետարանական սկզբունքով ապրելը:

Գրատախտակին ցուցադրեք հետևյալ նախադասությունը.

«[Հիսուսը] «ման եկավ բարի անելով» (Գործք 10.38), թեև արհամարհվեց դրա համար» («Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Ensign* կամ *L'haishna*, *սայր.* 2000, 2):

Բացատրեք, որ թեպետ Փրկիչը ընդունվել էր շատերի կողմից Գալիլեայում և Հրեաստանում, և շատերը Նրա բարի գործերը համարում էին Նրա աստվածայնության վկայություն, մյուսները արհամարում և հալածում էին Նրան Իր բարի գործերի համար:

Գրատախտակին՝ «[Հիսուսը] «ման եկավ բարի անելով» նախադասության տակ գրեք հետևյալ սուրբ գրությունների հղումները.

Մատթեոս 9.9-13
Մատթեոս 12.22-30
Մարկոս 3.1-6
Մարկոս 11.15-19
Հովհաննես 11.43-53

Դասարանը բաժանեք փոքր խմբերի, և յուրաքանչյուր խմբին տվեք գրատախտակին գրված հատվածներից մեկը: Հանձնարարեք ուսանողներին ներկայացնել յուրաքանչյուր հատվածում Հիսուսի կատարած բարի գործը և այն, թե ինչպես էին մարդիկ արձագանքում դրան: Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք ներկայացնել ինչ են իրենք հայտնաբերել: Նշեք, որ այդ հատվածների շարքը բացահայտում է Տիրոջ կյանքի օրինակը, որից մենք կարող ենք սովորել: Տվեք հետևյալ հարցը.

- Ըստ ձեր դիտարկման, ինչպե՞ս Փրկիչն արձագանքեց Իր հանդեպ դրսևորած հալածանքին:

Խրախուսեք ուսանողներին մտքում պատկերացնել իրենց հանձնարարված սուրբգրքյան հատվածում նկարագրված իրադարձությունը: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ մտքեր կամ զգացողություններ կունենայիք, եթե այդ պահին տեսնեիք Հիսուսին:
- Ձեր կարծիքով, ի՞նչ կուզենար Հիսուսը, որ դուք սովորեիք այդ ժամանակ արտասանած Իր խոսքերից կամ կատարած գործերից: (Ուսանողները կարող են ներկայացնել հետևյալ սկզբունքը. **Երբ ձգտում ենք հետևել բարիք գործելու Փրկչի օրինակին, մենք երբեմն պետք է համբերատար կրենք հալածանքը:**)

Մատթեոս 5.9-12, 21-24, 38-41; 6.14-15; 7.1-5, 12

Ինչպես արձագանքել հալածանքին

Ասեք ուսանողներին, որ Լեռան Իր քարոզում Հիսուս Քրիստոսն Իր աշակերտներին խորհուրդ տվեց՝ ինչպես արձագանքել, երբ իրենց հալածում են: Գրատախտակին գրեք հետևյալ արտահայտությունը և սուրբ գրությունների վկայակոչումները, և յուրաքանչյուր ուսանողի հանձնարարեք կարդալ առնվազն մեկ հատված: Խնդրեք ուսանողներին իրենց կարդացած հատվածում գտնել Հիսուսի ուսուցանած մեկ սկզբունք, որը ուղեցույց կլինի մյուսների հետ իրենց փոխհարաբերություններում:

Ինչպես արձագանքել հալածանքին
Մատթեոս 5.9-12

Մատթեոս 5.21-24 (տես նաև 3 Նեփի 12.22)

Մատթեոս 5.38-41; 7.12

Մատթեոս 6.14-15 (տես նաև ՎՍՈՒ 64.9-10)

Մատթեոս 7.1-5

Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, խնդրեք ուսանողներին բացատրել իրենց գտած սկզբունքները և ինչպես են իրենք դրանք կիրառում մյուսների հետ իրենց փոխհարաբերություններում: Երբ ուսանողները ներկայացնեն սկզբունքները, որ գտել են Մատթեոս 5.21-24-ում, կարող եք նշել, որ 3 Նեփի 12.22 և Ջոզեֆ Սմիթ Թարգմանության Մատթեոս 5 հատվածներում բաց է թողնված «զուր տեղը» բառերը (Մատթեոս 5.22; տես նաև Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Մատթեոս 5.24 [in Մատթեոս 5.22, ծանթագրություն ք]): (Երբ ուսանողները պատասխանում են, շեշտեք հետևյալ ճշմարտությունը. **Երկնային Հայրն ակնկալում է, որ մենք հետևենք Հիսուս Քրիստոսի օրինակին, երբ մեզ հալածում են մեր համոզմունքների համար:**)

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի և Երեց Դավիթ Հ. Օուքսի հետևյալ խոսքերը.



«Պաշտպանեք ձեր համոզմունքները բարեկրթորեն և կարեկցանքով, բայց պաշտպանեք դրանք» (Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Աշակերտ լինելու գինը և օրհնությունները», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 9):



«Քրիստոսի հետևորդները պետք է լինեն քաղաքավարության օրինակներ: Մենք պետք է սիրենք բոլոր մարդկանց, լինենք լավ լսողներ և մտահոգություն ցուցաբերենք նրանց անկեղծ համոզմունքների հանդեպ: Չնայած որ մենք կարող ենք չհամաձայնվել, մենք չպետք է լինենք անբարյացակամ: Մեր դիրքորոշումները և հաղորդակցությունը վիճահարույց թեմաների շուրջ չպետք է հակառակություն առաջ բերեն: Մենք պետք է իմաստուն լինենք մեր դիրքորոշումները բացատրելիս, դրանց հետևելիս և մեր ազդեցությունը գործադրելիս: ...

Երբ մեր դիրքորոշումները չեն ընդունվում, մենք պետք է ընդունենք ոչ դրական արդյունքները բարեհոգաբար և քաղաքակիրթ վերաբերմունք ցուցաբերենք մեր հակառակորդների հանդեպ» (Դավիթ Հ. Օուքս, «Սիրել ուրիշներին և ապրել տարբերություններով հանդերձ», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2014, 27):

Ուսանողների հետ քննարկեք Երեց Հոլլանդի և Երեց Օուքսի խորհրդին հետևելու դժվարություններն ու օրհնությունները: Այնուհետև հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մատթեոս 5.9-12 հատվածները:

- Ըստ այդ հատվածների, ի՞նչ խոստումներ տվեց Հիսուսը, որոնք կօգնեն մեզ Քրիստոսանման վերաբերմունք որդեգրել, երբ հավածվում ենք մեր կրոնական համոզմունքների համար:

Խնդրեք ուսանողներին խորհել, թե ինչպես կկիրառեին Լեռան քարոզում տրված Փրկչի ուսմունքներից մեկը իրենց ներկայիս հարաբերության մեջ կամ ինչպես այն կկիրառեին անցյալում իրենց որևէ հարաբերության մեջ: Խնդրեք ուսանողներին ցանկության դեպքում կիսվել իրենց մտքերով դասարանի հետ:

Յուրաքանչյուր ուսանողի տրամադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի հետևյալ խոսքերի օրինակը.



«Ոմանք սխալմամբ կարծում են այնպիսի պատասխանները, ինչպիսիք են՝ լռությունը, հեզությունը, ներումը և խոնարի վկայություն բերելը, պասսիվ են կամ թույլ: Սակայն, հավատ, ուժ և, ամենակարևորը, Քրիստոնեական քաջություն է պահանջվում, որ «սիրենք մեր թշնամիներին, օրհնենք մեզ անիծողներին, բարի անենք մեզ ատողներին, և աղոթք անենք մեզ չարչարողների և հալածողների համար» (Մատթեոս 5.44): ...

Երբ չենք հակադարձում, երբ դարձում ենք մեր մյուս այտը և դիմադրում գայրության, մենք ևս կանգնում ենք Փրկչի կողքին: Մենք Նրա սերն ենք դրսևորում, որը միակ ուժն է, որը կարող է հպատակեցնել հակառակորդին և պատասխանել մեզ մեղադրողներին, միևնույն ժամանակ չմեղադրելով նրանց: Դա թուլություն չէ: Դա Քրիստոնեական քաջություն է: ...

Ուրիշներին պատասխանելիս տարբեր իրավիճակներ կլինեն: Բարեբախտաբար, Տերը գիտե մեզ մեղադրողների սիրտը, և թե ինչպես մենք կարող ենք առավել արդյունավետ ձևով պատասխանել նրանց: Երբ ճշմարիտ աշակերտներն առաջնորդություն են փնտրում՝ Հոգուց, նրանք յուրաքանչյուր դեպքի համար համապատասխան ոգեշնչում են ստանում: Եվ յուրաքանչյուր դեպքում ճշմարիտ աշակերտները պատասխանում են այնպես, որ հրավիրում են Տիրոջ Հոգին: ...

Որպես ճշմարիտ աշակերտներ, մեր սկզբնական մտահոգությունը պետք է լինի մյուսների բարեկեցությունը, ոչ թե մեր անձնական արդարացումը: Հարցերն ու քննադատությունը մեզ հնարավորություն են տալիս հասանելի լինել մյուսներին և ցույց տալ, որ նրանք կարևոր են մեր երկնային Հոր և մեզ համար: Մեր նպատակը պետք է լինի՝ օգնել նրանց հասկանալ ճշմարտությունը, չպաշտպանել մեր եսը կամ միավորներ շահել աստվածաբանական քննարկումներում: Մեր սրտաբուխ վկայություններն ամենահզոր պատասխանն են, որ մենք կարող ենք տալ մեզ մեղադրողներին» («Քրիստոնեական քաջություն՝ աշակերտ լինելու գինը» *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2008, 72, 73–74):

Ուսանողներին ժամանակ հատկացրեք, որպեսզի կարդան և նշեն Երեց Հեյլսի կողմից ուսուցանվող սկզբունքները: Խնդրեք նրանց կիսվել իրենց սովորածով: Անհրաժեշտության դեպքում քննարկեք հետևյալ հարցերից մի քանիսը կամ բոլորը.

- Ինչպե՞ս կարող է մյուսների հանդեպ մեր վերաբերմունքը ազդել Աստծո հետ նրանց փոխհարաբերության վրա: (Օգնեք ուսանողներին ներկայացնել հետևյալ սկզբունքը. **Հետևելով Քրիստոսի օրինակին և սիրով ու բարությանմբ վերաբերվելով մեր դեմ տրամադրված մարդկանց, մենք կարող ենք ամրացնել ոչ միայն նրանց, այլև մեր կապն Աստծո հետ:**

- Ինչպե՞ս է մյուսների հետ նման կերպ վերաբերվելը Երկնային Հոր հետ կապած մկրտության ուխտի մասը հանդիսանում: (Դա նաև նշանակում է կանգնել որպես Աստծո վկաներ՝ բոլոր ժամանակներում, բոլոր բաներում և բոլոր վայրերում [տես Մոսիա 18.9]:)

Հարցրեք ուսանողներին, թե արդյոք ունեցել են փորձ, երբ Փրկչի օրինակին և ուսմունքներին հետևելով կարողացել են օգնել ինչ-որ մեկին էլ ավելի մոտենալ Տիրոջը: Մի քանի ուսանողների խնդրեք կիսվել իրենց փորձով:

Քաջալերեք ուսանողներին քննել մյուսների հետ իրենց հարաբերությունները, գտնել մեկը, որ կարելի է բարելավել, և գրի առնել, թե ինչպես այդ հարաբերության համար կկիրառեն այսօր քննարկված սկզբունքները:

Ուսանողի ընթերցարան

- Գործք 10.38, Սատթեոս 5.9-12, 21-24, 38-41, 43-47; 6.14-15; 7.1-5:
- Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Աշակերտ լինելու գինը և օրհնությունները» *Ensign* կամ *Liahon*, մայիս 2014, 6-9:

Հրաշքներ Պաղեստինյան ճանապարհներին

Նախաբան

«Նա քայլեց Պաղեստինի ճանապարհներով, բուժելով հիվանդներին, տեսողություն շնորհելով կույրերին, կենդանացնելով մահացածներին» («Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Ensign* կամ *Լիսինա*, ապր. 2000, 2): Փրկչի գթասիրտ մահկանացու ծառայության մեջ կարևոր մասն էին կազմում

հրաշքները, որոնք նաև ապացույցն էին հանդիսանում Նրա գործության և իշխանության, արժանահավատ դարձնելով Նրա պնդումը, որ Ինքը Մեսիան էր: Առ Հիսուս Քրիստոս հավատք գործադրելով՝ մենք նաև կարող ենք վկայել կամ զգալ Փրկչի սերը, գթությունը և գործությունը հրաշքների տեսքով:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Dallin H. Oaks, “Miracles,” *Ensign*, June 2001, 6–17.
- Sydney S. Reynolds, “A God of Miracles,” *Ensign*, May 2001, 12–13.

Ուսուցանման առաջարկներ

Մարկոս 1.39–42; 2.1–12; 5.1–8, 19, 22–43; 8.1–9; Դուկաս 7.11–15; 3 Նեփի 17.5–9

Փրկիչը հրաշքներ գործեց Իր մահկանացու ծառայության ընթացքում

Գրեք հետևյալ արտահայտությունները գրատախտակին. *հանդարտեցրեց ծովը, կենդանացրեց մահացածներին և հանեց պիղծ ոգիներ:* Հարցրեք ուսանողներին, թե իրենց կարծիքով Փրկչի կողմից գործված այդ երեք հրաշքներից ո՞րն է մեծագույնը: Երբ ուսանողները կպատասխանեն, գրատախտակին գրված ցուցակին ավելացրեք՝ *արարեց Երկիրը և հարցրեք՝ ո՞րն է մեծագույնը:* Կրկնեք վարժությունը՝ ավելացնելով *դարձի քերեց հոգիներ և վերջապես՝ տառապեց և մահացավ մեր մեղքերի համար:*

Խնդրեք ուսանողներին բնորոշել *հրաշք* բառը: Երբ ուսանողները կպատասխանեն, ցուցադրեք հետևյալ բնորոշումը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

«[Հրաշքն] Աստծո գործությամբ կատարված արտասովոր իրադարձություն է: Հիսուս Քրիստոսի գործում հրաշքները կարևոր տարրեր են: Դրանց թվում են՝ բժշկումները, մահացածների վերակենդանացումը և հարությունը: Հրաշքները Հիսուս Քրիստոսի ավետարանի մասն են: Հրաշքներ տեսնելու համար հավատք է հարկավոր» (Սուրբ գրքերի ուղեցույց, «Հրաշքներ», scriptures.lds.org):

- Որո՞նք են հանդիսանում Իր մահկանացու ծառայության ընթացքում Հիսուսի գործած հրաշքների հավելյալ օրինակներ: (Ուսանողները պատասխանները գրեք գրատախտակին:)

- Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, թե որքան հեռահար է Փրկչի գործությունը:

Գրատախտակին գրեք հետևյալ սուրբ գրությունների հատվածները և հանձնարարեք ուսանողներին ընտրել մեկը և ուսումնասիրել այն.
Մարկոս 1.40–42, Մարկոս 5.1–8, 19, Մարկոս 8.1–9, Ղուկաս 7.11–15, և 3 Նեփի 17.5–9: Հանձնարարեք ուսանողներին ներկայացնել յուրաքանչյուր հատվածում Փրկչի գործած հրաշքը և ինչ է դա ասում Նրա գործության մասին: Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ հրաշքի մասին կարդացիք դուք և ինչպես է այն ներկայացնում Փրկչի գործությունը:
- Ինչպե՞ս է հրաշքեր գործելու Փրկչի գործությունը հասկանալն օգնում ձեզ հավատք ունենալ առ Նա: (Երբ ուսանողները պատասխանում են, կարող եք նշել, որ Փրկչի ծնվելուց դարեր առաջ, մարգարեները կանխատեսել էին, որ Նա հրաշքներ էր գործելու Իր երկրային ծառայության ընթացքում [տես 1 Նեփի 11.31; Մոսիա 3.5–6]: Այս գիտելիքն օգնեց նրանց, ովքեր սպրել էին Նրա ծննդից առաջ, ավելի մեծ հավատք ունենալ առ Նա:)

Հանձնարարեք ուսանողներին կրկին կարդալ իրենց ուսումնասիրած հատվածը և գտնել տրված պատճառը, թե ինչու Հիսուսը հրաշք գործեց: Քննարկեք հետևյալ հարցերը.

- Ո՞րն էր պատճառը, որ Փրկիչը հրաշք գործեց, որի մասին դուք կարդացիք: (Թող մի քանի ուսանողներ պատասխանեն: Փրկչի գթասրտությունը հիշատակվում է բոլոր օրինակներում: Ուսանողներին ասացեք, որ այսպես սովորելով սուրբ գրություններում բացահայտել օրինակներ և թեմաներ, նրանք կխորացնեն սուրբ գրությունների իրենց գիտելիքը:)
- Ինչպե՞ս են այդ հրաշքները ներկայացնում Փրկչի գթասրտությունը:
- Ի՞նչ փոփոխություն է բերում գիտելիքը, որ Փրկիչը երբեմն հրաշքներ է գործել Իր մեծ գթասրտության շնորհիվ: (Երբ ուսանողները կպատասխանեն, շեշտեք, որ **առ Հիսուս Քրիստոս հավատք գործադրելով մենք կարող ենք ստանալ Նրա հզոր ուժից և զգալ մեր հանդեպ Նրա գթասրտությունը:**)

Ավարտեք դասի այս մասը, հանձնարարելով որևէ ուսանողի կարգալ Գործք 10.38, իսկ դասարանի մյուս մասը թող հետևի նրան: Այնուհետև հարցրեք ուսանողներին.

- Ի՞նչ է նշանակում, որ Հիսուսը բժշկում էր «սատանայիցը բոլոր հարստահարվածներին»: (Այս արտահայտությունը վերաբերում է դևերին դուրս հանելու Հիսուսի գործած հրաշքներին, ինչպես նաև բոլոր հրաշքներից մեծագույնին՝ հոգևոր բժշկությանը, որ Հիսուսը պարզեց մեղքով բեռնվածներին: Նշեք, որ թեպետ ֆիզիկական բժշկությունը Փրկչի ծառայության կարևոր մասն էր, դրա հետևանքները ժամանակավոր էին: Հոգևոր բժշկության օրհնությունը եղել է և կա հավիտենական:)

Մարկոս 2.1–12; 5.22–43

Առ Հիսուս Քրիստոս հավատքը հրաշքներ է բերում մեր կյանք

Ուսանողներին ասեք, որ կարևոր է իմանալ, որ Հիսուսը հրաշքներ գործեց, երբ «Նա քայլում էր Պաղեստինի ճանապարհներով» («Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը», 2), սակայն առավել կարևոր է իմանալ, որ Նա շարունակում է հրաշքներ գործել այսօր: Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Եթեր 12.12, 18 հատվածները, և ապա գրի առնել ինչ ավետարանական սկզբունք են սովորում այդ հատվածներից: Հանձնարարեք մի քանի ուսանողների դասարանի հետ կիսվել իրենց գրածով: (Պատասխանները պետք է ներառեն հետևյալ ճշմարտությունը. **Առ Հիսուս Քրիստոս հավատք գործադրելով մենք կարող ենք ստանալ Նրա հրաշագործ ուժից մեր կյանքում:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին բացահայտել այս ճշմարտությունը, գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները. *Մարկոս 2.1–12, Մարկոս 5.22–24, 35–43, և Մարկոս 5.25–34:* (Նշում. Կարող եք մատնանշել, որ այդ հատվածները պարունակում են սուրբ գրություններում օրինաչափության կամ թեմայի մեկ այլ լուսաբանում:) Դասարանը բաժանեք երեք խմբի: Յուրաքանչյուր խմբին հանձնարարեք կարդալ այդ հատվածներից մեկը և գտնել ինչպես էր դրսևորվում հավատքն առ Հիսուս Քրիստոս: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, հարցրեք.

- Առ Հիսուս Քրիստոս հավատքի ի՞նչ ապացույց դուք գտաք:



Յուրաքանչյուր ուսանողի տվեք «Հիվանդների բժշկում» թերթիկի մեկական օրինակ:

Հիվանդների բժշկում

Տասներկու Առաքյալների Քվիրոմից Երեց Դավիթն Ն. Օուքսն ուսուցանել է, որ հավատքը կարևոր է, որպեսզի հրաշքներ կատարվեն:



«Հավատքը կարևոր դեր ունի երկնային գործությունների օգնությամբ բժշկվելու գործում: Մորմոնի Գիրքն անգամ ուսուցանում է, որ «Եթե հավատք չլիսի մարդկանց զավակների մեջ, Աստված չի կարող հրաշք գործել նրանց մեջ» (Եթեր 12.12) [տես նաև 1 Նեփի 7.12; Վևու 35.9]: Հիվանդներին սպասավորելու վերաբերյալ իր հիշարժան ելույթում Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է. «Հավատքի

անհրաժեշտությունը հաճախ թերագնահատվում է: Հիվանդը և նրա ընտանիքը հաճախ, կարծես, լիովին ապավինում են քահանայության գործությանը և հույս ունենում, որ սպասավորող եղբայրները կունենան բժշկության պարզը, մինչդեռ մեծ պատասխանատվություն է կրում օրհնություն ստացողը: ... Գլխավոր գործոնն անհատի հավատքն է, երբ մարդը գիտակից է և պատասխանատվության տարիքի: «Քո հավատքը քեզ ապրեցրեց» [Մատթեոս 9.22] խոսքն այնքան հաճախ էր կրկնում Վարդապետը, որ այն գրեթե կրկներգ էր դարձել» [“President Kimball Speaks Out on

Administration to the Sick," *New Era*, Oct. 1981, 47]" («Հիվանդների բժշկությունը», *Ensign* կամ *L'ahhna*, մայիս 2010, 49):

Երեց Դավիթ Ն. Օուքսը նաև հիշեցրել է մեզ, որ հավատք ունենալու համար կարևոր դեր ունի Աստծո կամքն ընդունելու պատրաստակամությունը.



«Երբ գործադրում ենք Աստծո քահանայության անառարկելի իշխանությունը և թանկ ենք գնահատում Նրա խոստումը, որ Նա կլսի և կպատասխանի հավատքի աղոթքին, մենք պետք է միշտ հիշենք, որ հավատքը և քահանայության բուժիչ գործությունը չեն կարող հանգեցնել մի արդյունքի, որը հակառակ է կամքին Նրա, ում քահանայությունը մենք կրում ենք: Այս սկզբունքն ուսուցանվում է այն հայտնության մեջ, որը թելադրում է, որ Եկեղեցու երեցները պետք է իրենց ձեռքերը դնեն հիվանդների վրա: Տիրոջ խոստումն է, որ «նա, ով բժշկվելու հավատք ունի առ ինձ և *Նշանակված չէ մահվան*, պիտի բժշկվի» (Վևու 42.48; շեշտադրումն ավելացված է): Նմանապես, մեկ այլ ժամանակակից հայտնության մեջ Տերը հայտարարում է, որ երբ նա, ով «խնդրում է համաձայն Աստծո կամքի ... կատարվում է, ճիշտ ինչպես նա խնդրում է» (Վևու 46.30) [տես նաև Ա Նովիանեն 5.14; շեղման 10.5]:

Այդ ամենից մենք սովորում ենք, որ անգամ Տիրոջ ծառաները, որոնք գործածում են Նրա աստվածային գործությունը այնպիսի պայմաններում, երբ բավականաչափ հավատք կա բժշկվելու, չեն կարող այնպիսի քահանայության օրհնություն տալ, որը կբժշկի մարդուն, եթե այդ բժշկումը Տիրոջ կամքը չէ:

Որպես Աստծո գավակներ, իմանալով Նրա մեծ սիրո և Նրա անսահման գիտելիքի մասին, թե որն է լավագույնը մեր հավերժական բարօրության համար, մենք ապավինում ենք Նրան: Ավետարանի առաջին սկզբունքը հավատքն է առ Տեր Հիսուս Քրիստոսը, իսկ հավատքը նշանակում է վստահություն: Ես զգացել եմ այդ վստահությունը, երբ հորեղբորս որդին ելույթ ունեցավ մի դեռահաս աղջկա թաղմանը, ով մահացել էր ծանր հիվանդությունից: Նա ասաց այս խոսքերը, որոնք սկզբում ապշեցրին, իսկ հետո ուսուցանեցին ինձ. «Ես գիտեմ, որ Տիրոջ կամքով էր, որ նա մահացավ: Նրան լավ բժշկական օգնություն էր տրամադրվել: Նրան քահանայության օրհնություններ էին տրվել: Նրա անունը տաճարի օրհնությունների ցուցակում էր: Հազարավոր մարդիկ աղոթում էին, որ նրա առողջությունը վերականգնվեր: Եվ ես գիտեմ, որ այս ընտանիքում բավականաչափ հավատք կար, որ նա բժշկվեր, եթե միայն այժմ նրան տուն տանելը Տիրոջ կամքը չլիներ»: Ես զգացել եմ այդ նույն վստահությունը քաղցկեղից մահացած մեկ այլ ընտրյալ աղջնակի հոր խոսքերում: Նա հայտարարեց. «Մեր ընտանիքի հավատքն առ Հիսուս Քրիստոս է, և այն կախված չէ արդյունքից»: Այդ ուսմունքները ճշմարտանման են հիշում ինձ համար: Հարազատի բժշկության համար մենք անում ենք այն ամենն, ինչ կարող ենք, իսկ հետո վերջնական արդյունքի համար ապավինում ենք Տիրոջը» («Հիվանդների բժշկությունը», *Ensign* կամ *L'ahhna*, մայիս 2010, 50):

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, որ հավատքը պարտադիր գործոն է հրաշքների կատարման համար, հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ թերթիկի սկզբում տրված Տասներկու

Առաքյալների Քվորումից Երեց Դավիթն Հ. Օուքսի առաջին հայտարարությունը: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ կարևոր ճշմարտություններ է ուսուցանում Երեց Օուքսը հավատքի մասին:

Երեց Օուքսից լրացուցիչ մտքեր կարող եք գտնել, կարդալով կամ ձեր բառերով ներկայացնելով թերթիկի երկրորդ հայտարարությունը: Կարող եք նշել, որ Երեց Օուքսն այդ դիտողություններն ուղղել է քահանայություն կրողներին: Քննարկեք հետևյալ հարցերը.

- Ըստ Երեց Օուքսի, ի՞նչ է պահանջվում մեզանից, երբ մենք հավատքով աղոթում ենք, որպեսզի հրաշք տեղի ունենա:
- Ինչո՞ւ է կարևոր հիշել, որ այն, ինչ մենք ցանկանում ենք, պետք է լինի նաև Երկնային Հոր կամքը:

Վկայեք, որ հրաշքներ դեռևս տեղի են ունենում այսօր: Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթն Հ. Օուքսի հետևյալ խոսքերը.



«Հրաշքներ տեղի են ունենում ամեն օր մեր Եկեղեցու աշխատանքում և մեր անդամների կյանքում: Ձեզանից շատերն ականատես են եղել, հավանաբար, ավելի շատ հրաշքների, քան գիտակցում են» (“Miracles,” *Ensign*, June 2001, 6):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ մենք ոչ միշտ ենք ընկալում մեր կյանքում տեղի ունեցող հրաշքները: (Երբ ուսանողները կպատասխանեն, կարող եք նշել, որ մի քանի հրաշքներ են արտահայտում Տիրոջ գործության ազդեցիկ դրսևորումը: Բազմաթիվ հրաշքներ համեմատաբար փոքր են և անձնական բնույթ են կրում: [Տես Sydney S. Reynolds, “A God of Miracles,” *Ensign*, May 2001, 12–13:])
- Ի՞նչ են այդ փոքր, անձնական հրաշքները բացահայտում այն մասին, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը հետաքրքրված են մեզանով:
- «Փոքր» կամ «ամենօրյա» հրաշքների ի՞նչ օրինակներ կարող եք հիշել: (Եթե չկան պատասխաններ, կարող եք նշել օրինակները, որ Երեխաների Միության գերագույն նախագահությունից Քույր Սիդնի Ս. Ռեյնոլդսը հիշատակել է իր ելույթում՝ “A God of Miracles” [*Ensign*, May 2001, 12–13:])

Ուսանողներին հանձնարարեք գրելով պատասխանել հետևյալ հարցին.

- Ի՞նչ կարող եք անել ձեր կյանքում Տիրոջ գործած թե՛ մեծ և թե՛ փոքր հրաշքներն ավելի խորը հասկանալու և դրանց համար ավելի մեծ երախտագիտություն ձեռք բերելու համար:

Հորդորեք ուսանողներին աղոթքով խորհել, թե ինչպես կարող են ի կատար ածել իրենց գրած պատասխանը: Դասն ավարտեք հարցնելով,

Թե ուսանողներից ով կցանկանար կիսվել իր վկայությամբ՝ Փրկչի և այն սիրո մասին, որ զգացել են Նրանից և Նրա հանդեպ:

Ուսանողի ընթերցարան

- Մարկոս 1.39–42; 2.1–12; 5.1–8, 19, 22–43; 8.1–9; Դուկաս 7.11–15; 1 Նեփի 11.31; Մոսիա 3.5–6; 3 Նեփի 17.5–9:
- Sydney S. Reynolds, “A God of Miracles,” *Ensign*, May 2001, 12–13.

Հիսուս Քրիստոսը կանչեց Տասներկու Առաքյալներին

Նախաբան

Իր մահկանացու ծառայության ընթացքում Փրկիչը կանչեց, կարգեց և լիազորեց Տասներկու Առաքյալներին: Նա նրանց շնորհեց քահանայության բանալիները, և նրանք վկայություն ստացան Նրա աստվածային բնույթի մասին: Փրկիչի ուղղորդմամբ Առաքյալներն օգնեցին

ղեկավարել Եկեղեցու աշխատանքը և պատրաստվեցին այն ժամանակի համար, երբ Նա այլևս Երկրի վրա չէր լինելու: Այս դասը նվիրված է Փրկիչի քահանայության իշխանությանը և ինչպես Նա պատրաստեց Առաքյալներին Եկեղեցին ղեկավարելուն:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Բոյդ Կ. Փաբեր, «Տասներկուսը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2008, 83–87:
- Edward J. Brandt, “And He Gave Some, Apostles,” *Liahona*, Sept. 2001, 32–39.


Ուսուցանման առաջարկներ

Մատթեոս 10.1–8; 16.15–19; 17.1–8; Հովհաննես 15.16

Հիսուս Քրիստոսը շնորհում է քահայանության բանալիները Իր Առաքյալներին
Սկսեք դասը՝ ուղղելով հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս ենք մենք ճանաչում անհատներին, ովքեր իշխանություն ունեն ղեկավարելու մեր համայնքը:
- Ինչպե՞ս էր Հիսուս Քրիստոսի ժամանակներում ապրող մարդը ճանաչում Նրա իշխանությունը: (Հնարավոր պատասխաններն են՝ Նրա զորությունը, հրաշքները և ուսմունքները:)

Խնդրեք դասարանին դիտարկել հետևյալ հարցը. «Ինչպե՞ս, ե՞րբ և ո՞ւմ կողմից Փրկիչը ստացավ Մելքիսեդեկյան Քահանայությունը»: Այնուհետև կիսվեք Յոթանասուրհից Երեց Բ. Հ. Ռոբերտսի (1857–1933) և Տասներկու Առաքյալների Քվորումից Բրուս Ռ. Մակքոնկիի (1915–1985) հետևյալ խոսքերով.



«Այս հատվածը [ՎնՈւ 107.2-4] հստակորեն հաստատում է այն փաստը, որ Մելքիսեդեկյան Քահանայությունը գոյություն է ունեցել Մելքիսեդեկ մեծ Քահանայապետից առաջ, բայց այն գոյություն է ունեցել այլ անվամբ, *այն է՝* «Սուրբ Քահանայություն Աստծո Որդու կարգով»: Այսինքն, դա այն նույն քահանայությունն էր, քահանայության նույն կարգը, որ Աստծո Որդին էր կրում: Բայց դա Մելքիսեդեկի օրերից առաջ էր, Աբրահամից առաջ, և ուստի աշխարհում Քրիստոսի ծննդից հարյուրավոր տարիներ առաջ: ... Այն ժամանակ Հիսուսը կրում էր այն, ինչ մենք այժմ կոչում ենք Մելքիսեդեկյան Քահանայություն, նախքան այս աշխարհում հայտնվելը և անկասկած նախքան աշխարհի կազմավորվելը, ... բայց «ինչպես, որտեղ և ում կողմից» նա ստացավ այն, ոչ ոք չգիտի, բացառությամբ թերևս

վերջինից, *այսինքն*՝ «ում կողմից»: Անշուշտ, Նա ստացել է դա Աստծուց» (B. H. Roberts, *Improvement Era*, May, 1908, 557):



«Իսկ ինչ վերաբերում է նրա մահկանացու ծառայությանը, Քրիստոսը ... ստացավ Մելքիսեդեկյան Քահանայությունն այստեղ երկրի վրա և կարգվեց քահանայապետի պաշտոնին այստեղ, այդպիսով օրինակ ծառայելով մյուսների համար և ամեն ինչում լինելով փրկության Նախատիպը» (Bruce R. McConkie, *Doctrinal New Testament Commentary*, vol. 3 [1973], 157):

Ցուցադրեք կամ գրեք հետևյալ հարցերը գրատախտակին, և խնդրեք ուսանողներին պատասխանները գտնել՝ Մատթեոս 10.1–8 և Հովհաննեսս 15.16 հատվածներում:

- Ի՞նչ իշխանություն շնորհեց Հիսուս Քրիստոսն Իր Առաքյալներին:
- Այդ իշխանության շնորհիվ ի՞նչ կարող էին նրանք անել:

Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, խնդրեք ուսանողներին գույգեր կազմել դասարանի մեկ այլ անդամի հետ՝ իրենց մտքերով կիսվելու համար: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց պատասխանով դասարանի հետ: Օգնեք ուսանողներին հասկանալ, որ **Հիսուս Քրիստոսն Իր Առաքյալներին շնորհեց քահանայության իշխանությունը, որի շնորհիվ նրանք կարող էին կատարել նույն գործերը, որ տեսել էին Նրան անելիս:**

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մատթեոս 16.15-19 հատվածը: Հարցրեք.

- Ինչպե՞ս Պետրոսն ճանաչեց Հիսուսի իշխանությունը: (Հայտնությամբ, նույնկերպ, ինչպես ժամանակակից աշակերտներն են ճանաչում Նրա իշխանությունը:)
- Ի՞նչ Հիսուսը խոստացավ տալ Պետրոսին:

Հանձնարարեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մատթեոս 17.1-8: Այնուհետև հարցրեք.

- Ինչո՞ւ Սովսեսը և Եղիան հայտնվեցին Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին:

Որպեսզի օգնեք ուսանողներին պատասխանել այս հարցին, ցուցադրեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի (1805–1844) և Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի (1838–1918) հետևյալ խոսքերը.



«Փրկիչը, Մովսեսը և Եղիան լեռան վրա բանալիները շնորհեցին Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին, երբ նրանք փոխակերպվեցին նրա առաջ»
(Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 105):



«Ընդհանրապես Քահանայությունը իշխանություն է, որը տրվում է մարդուն՝ գործելու Աստծո համար: Այս իշխանությունը տրվում է յուրաքանչյուր տղամարդու, որը կարգված է Քահանայության որևէ աստիճանի:

Սակայն անհրաժեշտ է, որ այս իշխանության ներքո կատարված յուրաքանչյուր գործողություն կատարվի պատշաճ ժամանակին և տեղում, պատշաճ ձևով և կարգով: Այդ գործերն ուղղորդող գործությունը կազմում է Քահանայության բանալիները» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Տ. Սմիթ [1998], 141):

Նշեք, որ Վարդապետություն և Ուխտեր 110 բաժնում սովորում ենք, որ Մովսեսը և Եղիան նաև հայտնվեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուտերին՝ Կիրթլենդի տաճարում և նրանց շնորհեցին քահանայության բանալիները: Վարդապետություն և Ուխտերի այս պատմությունն օգնում է մեզ հասկանալ, թե ինչ տեղի ունեցավ Փոխակերպման սարի վրա: Կարող եք առաջարկել ուսանողներին գրել *Վարդապետություն և Ուխտեր 110.13-16* որպես խաչածն վկայակոչում Մատթեոս 17.1-8-ի կողքին՝ լուսանցքում:

Շարունակեք՝ ուղղելով հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ է կարևոր Հիսուսի Առաքյալների համար քահանայության բանալիներն ունենալը: (Ուսանողները կարող են տարբեր բառեր օգտագործել, սակայն նրանք պետք է ներկայացնեն հետևյալ ճշմարտությունը. **Հիսուսը քահանայության բանալիները շնորհեց Իր Առաքյալներին, որպեսզի նրանք իշխանություն ունենան ղեկավարելու Եկեղեցին, թե՛ Նրա մահից առաջ և թե՛ հետո:** Կարող եք շեշտել, որ **հավերժական տեսանկյունից բանալիները կարևոր նշանակություն ունեն Տիրոջ Եկեղեցում կարգուկանոն հաստատելու և պահպանելու համար, այդպիսով օգնելով իրագործել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը:**)
- Փոխակերպման սարի վրա Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի փորձառությունն ինչպե՞ս օգնեց նրանց պատրաստվել Փրկչի մահից հետո Եկեղեցին ղեկավարելուն:

Կարող եք բացատրել, որ Մատթեոս 18.18-19 հատվածում մենք սովորում ենք, որ քահանայության բանալիները շնորհվեցին Հիսուսի բոլոր Առաքյալներին:

**Մատթեոս 18.21–22; 26.51–56; Մարկոս 4.35–41; 5.25–43; 9.25–29;
Ղուկաս 9.51–56; 24.44–48; Հովհաննես 13.4–17; 21.15–17**

Հիսուս Քրիստոսը պատրաստեց Իր Առաքյալներին, որ ղեկավարեն Եկեղեցին
Գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունը.

*Իր մահից առաջ, Հիսուս Քրիստոսը պատրաստեց Իր Առաքյալներին
Եկեղեցին, որ ղեկավարեն Եկեղեցին:*

Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ պետք է սովորեին Հիսուսի Առաքյալները Եկեղեցին ղեկավարելու համար:

Գրատախտակին գրեք սուրբ գրությունների այս ցանկը կամ դրանցից մի քանիսը.

Մատթեոս 18.21–22
Մատթեոս 26.51–56
Մարկոս 4.35–41
Մարկոս 5.25–34
Մարկոս 5.35–43
Մարկոս 9.25–29
Ղուկաս 9.51–56
Ղուկաս 24.44–48
Հովհաննես 13.4–17
Հովհաննես 21.15–17

Հանձնարարեք ուսանողներին աշխատել զույգերով ուսումնասիրելով այդ հատվածներից մեկը կամ երկուսը և դիտարկել, թե ինչ սկզբունքներ սովորեցին Առաքյալները Փրկչի հետ իրենց շփումների արդյունքում: Այնուհետև հրավիրեք ուսանողներին դասարանի հետ կիսվել իրենց քննարկած մտքերով: Կարող եք նրանց պատասխանները գրել գրատախտակին: Այնուհետև ուղղեք հետևյալ լրացուցիչ հարցերը.

- Այդ սկզբունքները սովորելը ինչո՞ւ էր կարևոր Առաքյալների համար:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս է Փրկիչը պատրաստել մեր օրերի Առաքյալներին ծառայությանը:
- Ինչպե՞ս է գիտելիքը, որ Հիսուս Քրիստոսն ուղղորդում է Իր Առաքյալներին, օգնում ձեզ վստահել նրանց խորհրդին:

Գործք 1.8, 21–22; Վարդապետություն և Ուխտեր 107.23

Մեր օրերի Առաքյալները ճշմարիտ վկայություն են բերում Հիսուս Քրիստոսի մասին

Ուսանողներին ասեք, որ Գործք 1 գլուխը պարունակում է Փրկչի հարությունից հետո Հուդա Իսկարիովտացու փոխարեն Առաքյալների ընտրության պատմությունը: Հանձնարարեք ուսանողներին կարդալ Գործք 1.21-22 հատվածը և գտնել, թե ինչ պահանջ պետք է բավարարել նոր Առաքյալը:

- Որո՞նք էին նոր Առաքյալի արժանիքները: (Նա «[նրանց] հետ էր եղել այն բոլոր ժամանակը» և «վկա էր եղել ... [Փրկչի] հարությանը»):
- Համաձայն հատված 22-ի, ի՞նչ պետք է նոր Առաքյալը կարգվեր անելու: (Հանձնարարեք ուսանողներին կարդալ Գործք 1.8 հատվածը ցույց տալու նրանց, որ դա պարտականություն էր, որ Հիսուսը տվեց Իր բոլոր Առաքյալներին:)

Խնդրեք ուսանողներին վերանայել հետևյալ հատվածները և գտնել, թե ինչ ընդհանրություն ունեն դրանք. Գործք 2.22–24, 32; Գործք 3.12–16; Գործք 4.31–33; և Գործք 5.29–32: Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք քննարկել՝ ինչ են իրենք հայտնաբերել: (Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են, որ Առաքյալները կատարեցին Հիսուս Քրիստոսի մասին վկայություն բերելու իրենց պարտականությունը:)

Հանձնարարեք ուսանողներին մտածել, թե ինչպես է մեր օրերի Առաքյալների պարտականությունը նման վաղ օրերի Առաքյալների պարտականությանը: Ուսանողներից որևէ մեկին հանձնարարեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 107.23 հատվածը: Սյնուհետև հարցրեք դասարանին.

- Ի՞նչ վարդապետություն է ուսուցանվում այս հատվածում: (Ուսանողները պետք է հասկանան, որ Առաքյալները լիազորված են լինել Քրիստոսի անվան հատուկ վկաներն աշխարհում:)
- Ըստ ձեր դիտարկման, ինչպե՞ս են մեր օրերի Առաքյալները կատարում իրենց պարտականությունը:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Կ. Փաքերի հետևյալ խոսքերը.



«Իմ ապրած բոլոր տարիներից հետո, երբ սովորել և ծառայել եմ, ողջ աշխարհով միլիոնավոր մոլոններ ճամփորդել, իմ ձեռք բերած ողջ փորձառությունից հետո, կա մեկ մեծ ճշմարտություն, որով կուզենայի կիսվել: Դա Մեր Հիսուս Քրիստոսի մասին իմ վկայությունն է: ...

Ես բերում եմ իմ վկայությունը, որ Փրկիչն ապրում է: Ես *ճանաչում* եմ Տիրոջը: Ես Նրա վկան եմ: Ես գիտեմ Երկնային շոր բոլոր զավակների համար Նրա կատարած մեծ զոհաբերության և Նրա տաժած հավերժական սիրո մասին: Ամենայն հեզությամբ, սակայն անկաշկանդ վստահությամբ ես բերում եմ իմ հատուկ վկայությունը» («Վկայություն», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 97):

- Ե՞րբ եք զգացել Հիսուս Քրիստոսի մասին Առաքյալի վկայության գործությունը, և ինչպե՞ս է այն ազդել ձեր վկայության վրա:
- Ինչպե՞ս կարող եք իմանալ, որ մեր օրերի Առաքյալների կողմից բերված Հիսուս Քրիստոսի մասին վկայությունը ճշմարիտ է:
(Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալ ճշմարտությունը. **Սուրբ Հոգու շնորհիվ ես կարող եմ իմանալ, որ կենդանի Առաքյալների կողմից բերված Հիսուս Քրիստոսի մասին վկայությունը ճշմարիտ է:**)

Հորդորեք ուսանողներին ընտրել մեր օրերի մեկ Առաքյալի կողմից տրված Քրիստոսի մասին մեկ վկայություն և աղոթքով գտնել նրան, ում հետ կարող են կիսվել դրանով: Խրախուսեք նրանց անձնապես վկայել, որ Առաքյալի ուղերձը ճշմարիտ է:

Ուսանողի ընթերցարան

- Մատթեոս 10.1–8; 16.15–19; 17.1–8; Գործք 1.21–22; 2.22–24, 32; 3.12–16; 4.31–33; 5.29–32; Վարդապետություն և Ուխտեր 107.23:
- Բոյդ Ա. Փաքեր, «Վկայություն», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2008, 83–87:

Հիսուս Քրիստոսը Մեսիան է

Նախաբան

Հին Կտակարանի մարգարեները վկայել են Մեսիայի գալստյան մասին, ով Դավիթ թագավորի հետևորդն էր և պետք է ազատեր Իր ժողովրդին: Հիսուս Քրիստոսը «Հին Կտակարանի Մեծ Եհովան էր, Նոր կտակարանի՝ Մեսիան» («Կենդանի Քրիստոսը՝ Առաքյալների վկայությունը», *Ensign* կամ *Liahona*, ապր. 2000, 2): Այս

դասի ընթացքում ուսանողները կուսումնասիրեն Հիսուս Քրիստոսի մասին Հին Կտակարանի մարգարեությունները և կբացահայտեն, ինչպես են որոշ անհատներ արձագանքել՝ կանգնելով Հիսուս Քրիստոսին որպես Մեսիա ընդունելու կամ մերժելու հարցի առաջ:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- G. Homer Durham, “Jesus the Christ: The Words and Their Meaning,” *Ensign*, May 1984, 14–16.
- “The Divine Mission of Jesus Christ: Messiah,” *Ensign* or *Liahona*, Aug. 2014, 7.

Ուսուցանման առաջարկներ

Եսայիա 61.1–2; Ղուկաս 4.16–24

Հիսուսը հայտարարում է, որ Ինքը Մեսիան է

Հարցրեք ուսանողներին, թե երբևէ ունեցել են երկար սպասված հայտարարությունը լսելու կամ երկար սպասված ընկերոջ կամ ընտանիքի անդամի ժամանումը տեսնելու փորձ: Ուսանողներին տեղեկացրեք, որ այսօրվա դասը բացահայտում է հնում Հրեաների մեջ տեղի ունեցած նմանատիպ փորձառությունը: Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Եսայիա 61.1–2 հատվածը: Այնուհետև հարցրեք.

- Ո՞ւմ մասին է այս մարգարեությունը:



Ցուցադրեք “Jesus Declares He Is the Messiah” (3:24) տեսանյութը՝ *Հիսուս Քրիստոսի կյանքը Աստվածաշնչյան տեսաշարից*: (Դասից առաջ ներբեռնեք և դիտեք տեսանյութը): Խնդրեք ուսանողներին տեսանյութը դիտելու ընթացքում անցնել Ղուկաս 4.16–21 հատվածի վրայով:

Դիտումից հետո հարցրեք.

- Ինչպե՞ս կամփոփեիք այդ օրը Նազարեթում հղած Փրկչի ուղերձը: (Երբ ուսանողները կպատասխանեն, հավաստիացե՛ք, որ քննարկումը կենտրոնանում է 18-րդ հատվածի և 21-րդ հատվածի վրա:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ են նշանակում՝ «օծեց ինձ» և «այսօր այս գիրքը կատարուեցավ ձեր ականջներումը» արտահայտությունները: (Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ, որ *Մեսիա* և *Քրիստոս*

բառերը երկուսն էլ նշանակում են «Օծյալ», հանձնարարեք նրանց կարդալ Սուրբ գրքերի ուղեցույցում տրված «Մեսիա»-ի բացատրությունը (տես scriptures.lds.org):

- Ինչպե՞ս Հիսուսն իրագործեց Եսայիայի մարգարեությունը, որտեղից Նա մեջբերեց (տես 18-19 հատվածը):

Մատթեոս 21.1-11

Հիսուս Քրիստոսը եկավ որպես Մեսիա

Գրատախտակի վրա ցուցադրեք կամ գրեք սուրբ գրքերի հետևյալ հղումները և հանձնարարեք ուսանողներին ուսումնասիրելու համար ընտրել մեկ կամ երկու հատված: Երբ ուսանողները համեմատեն կամ հակադրեն իրենց ընտրած հատվածները, խնդրեք նրանց մտածել, թե ինչու են այդ հատվածները խմբավորվել միասին և ինչ են դրանք ուսուցանում Հիսուս Քրիստոսի մասին:

Եսայիա 7.14; Մատթեոս 1.21–23
Միքիա 5.2; Ղուկաս 2.4–7
Չաքարիա 9.9; Մատթեոս 21.6–11; Հովհաննես 12.12–15
Մարկոս 22.16, 18; Մատթեոս 27.35
Եսայիա 53.9; Մատթեոս 27.59–60; Հովհաննես 19.18, 38–42

Խնդրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց գրածով: (Տարբեր բառեր օգտագործելու հետ մեկտեղ ուսանողները պետք է հասկանան, որ **Հիսուս Քրիստոսը եկավ, ապրեց և մահացավ՝ կատարելով մեսիական մարգարեությունները:**) Ընդգծեք, որ այս ճշմարտությունը հայտարարեց Փրկիչը Նազարեթում: Բարձրաձայն կարդացեք Ղուկաս 4.28–29 հատվածը: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս Նազարեթի ժողովարանում մարդիկ արձագանքեցին Հիսուսի հայտարարությանը:

Ասացեք ուսանողներին, որ մի քանի տարի անց Երուսաղեմում մի քանի մարդիկ այլ կերպ արձագանքեցին Հիսուսին: Հանձնարարեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մատթեոս 21.1–11: Նախքան ուսանողները կկարդան, հորդորեք դասարանին պատկերացնել, որ ներկա են գտնվում այդ հատվածում նկարագրված իրադարձությանը: Ուսանողներին բացատրեք, որ երբ սովորեն պատկերացնել այն, ինչ տեղի է ունենում սուրբ գրքերում, նրանք Սուրբ Հոգուն իրենց ուսուցանելու լրացուցիչ հնարավորություններ կտան:

- Ինչո՞ւ Երուսաղեմի ժողովուրդն այդպես արձագանքեց: (Նրանք Հիսուսի մեջ տեսան երկար սպասված Մեսիային:)
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս դուք կարձագանքեիք:

Ուշադրությունը հրավիրեք *Ովսաննա* բառի վրա հատված 9-ում, ապա տվեք հետևյալ բացատրությունը.

«[Ովսաննա] Եբրայերեն բառ է և նշանակում է «խնդրում ենք փրկիր մեզ» և օգտագործվում է գովքի և աղաչանքի ժամանակ:

... Երուսաղեմ Տիրոջ հաղթական մուտքի ժամանակ բազմություններն աղաղակում էին «Ովսաննա» և դափնու ճյուղեր նետում Հիսուսի ոտքերի առաջ, այդպիսով ցույց տալով, որ հասկանում են, որ Հիսուսը այն Նույն Տերն էր, ով հնում ազատել էր Իսրայելին (Սաղ. 118.25-26, Մատթ. 21.91 15, Մարկոս 11.9-10, Հովհաննես 12.13): Այդ մարդիկ Քրիստոսի մեջ տեսնում էին երկար սպասված Մեսիային: *Ովսաննա* բառը դարձել է բոլոր դարերում Մեսիային մեծարելու խոսք (1 Նե. 11.6, 3 Նե. 11.14-17): Ովսաննա բացակաչությունը օգտագործվել է Կիրթլենդի Տաճարի նվիրագործման ժամանակ (ՎևՈւ 109.79) և այժմ կիրառվում է նաև ժամանակակից տաճարների նվիրագործման ժամանակ» (Սուրբ գրքերի ուղեցույց, «Ովսաննա», scriptures.lds.org):

Կարող եք ցուցադրել մեսիական մարգարեությունների հետևյալ նպատակները (adapted from Bruce R. McConkie, *The Promised Messiah: The First Coming of Christ* [1978], 28–32).

1. Մեսիական մարգարեությունների օգնությամբ Հիսուս Քրիստոսի ծննդից առաջ ապրողները կարողացան հավատալ Նրան և դրա շնորհիվ փրկություն ձեռք բերել (տես 1 Նեփի 10.4-6; 2 Նեփի 25.18-20, 26; Մոսիա 3.13):
2. Մեսիական մարգարեությունների շնորհիվ Քրիստոսի օրերին ապրողները հասկացան, որ Նա ի կատար ածեց այդ մարգարեությունները, որն էլ օգնեց նրանց փրկություն ձեռք բերել (տես Հովհաննես 4.25, 29):
3. Մեսիական մարգարեությունները Հիսուս Քրիստոսի երկրային ծառայությունից հետո ապրողներին օգնում են իմանալ, որ Նա ի կատար ածեց մարգարեությունները, այսպիսով՝ օգնելով նրանց փրկություն ձեռք բերել (տես Գործք 3.12–18; 26.22–23):

- Այդ երեք նպատակները դիտարկելով, ինչպե՞ս դա ձեզ կօգնի սովորել սուրբ գրություններում բացահայտել մեսիական մարգարեությունները և տեսնել Քրիստոսին որպես այդ նպատակներն իրագործող:

Հովհաննես 6.5-69

Նետնել Հիսուս Քրիստոսին որպես Մեսիա

Կրկնեք, որ Նոր Կտակարանի ժամանակներում Հրեաները հավատում էին, որ մի օր Դավթի տոհմից գալու էր Մեսիան և փրկելու է Իր ժողովրդին: Շատերը հավատում էին, որ Նա ազատելու էր իրենց Հռոմեական գերությունից, ինչպես Եհովան էր ազատել Իսրայելցիներին Եգիպտոսից:

Խնդրեք ուսանողներին թռուցիկ կերպով արագ կարդալ Հովհաննես 6.5-15 հատվածում տրված պատմությունը: Հարցրեք.

- Այս պատմության մեջ ի՞նչ հրաշք գործեց Հիսուսը:
- Ինչպե՞ս կնկարագրեիք մարդկանց արձագանքը հատված 14–15-ում:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ նրանք այդպես արձագանքեցին:

Կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրուս Ռ. Մակքոնկիի (1915–1985) հետևյալ մտքերով.



«Ռաբբիների կողմից ուսուցանվող և հասարակական մտքի մեջ խորը արմատավորված մի ավանդույթ կար, որ երբ Մեսսիան գար, իրենց կերակրելու էր երկնքից իջած հացով» (*The Mortal Messiah*, 4 vols. [1979–81], 2:367):

Բացատրեք, որ ինչպես երբ Եհովան մանանայով կերակրեց Իսրայելի զավակներին (տես Ելից 16), այնպես էլ երբ Հիսուսը կերակրեց բազմությանը հինգ գարու հացով և երկու ձկով, շատերը Նրա գործած հրաշքը ընդունեցին որպես նշան, որ Նա էր Մեսիան:

Հանձնարարեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Հովհաննես 6.31–32, 49–53, 60, 66: Դասարանին խնդրեք հետևել նրանց և ուշադրություն դարձնել, թե ինչպես էին մարդիկ արձագանքում Հիսուսին հաջորդ օրը և ինչպես էր Նա արձագանքում նրանց:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ այդ օրը շատերը մերժեցին Հիսուսին:
- Ի՞նչ նրանք չկարողացան հասկանալ: (Հիսուսը հոգևոր կյանքի աղբյուրն էր. Նա Կյանքի Հացն էր:)

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Հովհաննես 6.67–69 հատվածը: Այնուհետև հարցրեք դասարանին.

- Ի՞նչ հաստատեց Պետրոսի վկայությունը հատված 69-ում:
- Փրկչի մասին Պետրոսի վկայությունն ինչպե՞ս ազդեց նրա կյանքի վրա:

Գրատախտակի վրա գրեք հետևյալ անավարտ նախադասությունը և խնդրեք ուսանողներին բացատրել, ինչպես իրենք կավարտեին այն. **Եթե մենք Հիսուս Քրիստոսին ընդունենք որպես Մեսիա, այդ դեպքում**

Մի քանի պատասխաններ լսելուց հետո, հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյի (1873–1970) հետևյալ հայտարարությունը.



«Այն, ինչ ձեր սրտում անկեղծորեն մտածում եք Քրիստոսի մասին, կորոշի ով եք դուք, որն էլ մեծապես կորոշի ինչպիսին կլինեն ձեր գործերը: Ոչ ոք չի կարող ուսումնասիրել այս աստվածային անձնավորությանը, ընդունել Նրա ուսմունքները և միևնույն ժամանակ չգիտակցել ներքուստ իր վրա թողած վեհացնող և մաքրագործող ազդեցությունը» (*Teachings of Presidents of the Church: David O. McKay* [2003], 7):

Ուսանողներին ժամանակ հատկացրեք, որպեսզի գրի առնեն՝ ինչ են իրենք մտածում Քրիստոսի մասին: Խնդրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց գրածով:

Ուսանողներին հորդորեք մտածել, թե ինչ կարող են իրենք անել այս շաբաթ՝ առ Հիսուս Քրիստոս իրենց հավատքը դրսևորելու համար:

Ուսանողի ընթերցարան

- Մատթեոս 21.1–11; Ղուկաս 4.16–24; Հովհաննես 6.5–15, 31–32, 49–53, 66–69:
- G. Homer Durham, “Jesus the Christ: The Words and Their Meaning,” *Ensign*, May 1984, 14–16.

Հիսուս Զրիստոսը հաստատեց հաղորդությունը

Նախաբան

«Կենդանի Զրիստոսը. Առաքյալների վկայությունը» հռչակագրում կարդում ենք. «[Հիսուս Զրիստոսը] հիմնեց հաղորդությունը՝ որպես հիշեցում Իր մեծ քավող գոհաբերության» (*Ensign or Liahona*, Apr. 2000, 2): ճաշակելով հաղորդությունը մենք հիշում ենք, որ Փրկիչն

արյունահոսեց իր յուրաքանչյուր ծակոտիկից և մահացավ մեզ համար. մենք սան նորացնում ենք մեր ուխտերը Տիրոջ հետ:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Դավիթ Հ. Օուքս, «Հաղորդության ժողով և Հաղորդություն», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2008, 17–20:
- Jeffrey R. Holland, “This Do in Remembrance of Me,” *Ensign*, Nov. 1995, 67–69.

Ուսուցանման առաջարկներ

Մատթեոս 26.26-28; Ղուկաս 22.15


Հիսուս Զրիստոսը նոր ուխտ հիմնեց

Ցուցադրեք տրված նկարը կամ Վերջին Ընթրիքը պատկերող մեկ այլ նկար, և խնդրեք ուսանողներից մեկին բացատրել, թե ինչ իրադարձություն է պատկերված այդ նկարում.

Հարցրեք ուսանողներին.

- Ինչպե՞ս կզգայիք, եթե Փրկիչն Ինքը պատրաստեր, օրհներ և ձեզ մատուցեր հաղորդությունը:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ղուկաս 22.15 հատվածը: Դասարանին խրախուսեք դասի ընթացքում դիտարկել, թե ինչու Փրկիչը ցանկացավ Ջատիկն անցկացնել Իր Առաքյալների հետ:




Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մատթեոս 26.26-28 հատվածը, մինչ դասարանը կհետևի նրան: Մահմանեք *վկայություն* բառը՝ բացատրելով, որ այն հունարեն «ուխտ» բառի թարգմանությունն է (կարող եք առաջարկել, որ ուսանողները գրեն այդ սահմանումն իրենց սուրբ գրությունների լուսանցքում): Քննարկեք հետևյալ հարցը.

- Եթե Հիսուսը նոր վկայություն կամ ուխտ էր հաստատում, ո՞ր ուխտին այն պետք է փոխարիներ:

Հետևյալ տեղեկությունը կօգնի ձեզ քննարկում ծավալել. Հնում երբ Եհովան Իր ուխտը կապեց Իսրայելի զավակների հետ, Մովսեսն ուսուցանեց Եհովայի խոսքերը և մարդիկ ուխտեցին հնազանդվել այդ խոսքերին: Երբ Մովսեսը կենդանի գոհաբերեց, վերցրեց կենդանու արյունը և ցողեց մարդկանց վրա ասելով. «Ահա այն ուխտի արյունը, որ Եհովան արավ ձեզ հետ այս բոլոր խոսքերի համեմատ»: (Տես Ելից 24.3-8): Հիսուսը վկայակոչեց Մովսեսի խոսքերը, երբ ուսուցանեց, որ Ինքը հաստատում էր նոր ուխտ Աստծո զավակների հետ՝ հեղելով Իր արյունը (ճիշտ ինչպես կենդանիների արյունը ցողելը խորհրդանշում էր Իսրայելի զավակների Եհովայի հետ հին ուխտի մեջ մտնելը): Հիսուսն Իր Առաքյալներին ներկայացնելով գինու բաժակը՝ ազդարարեց հին ուխտի ավարտը և նոր ուխտի հաստատումը (տես Եբրայեցիս 9.12-15): Մովսեսի օրենքը (հին ուխտը), բազմաթիվ առումներով, մեծ մարգարեություն էր Մեսիայի մասին: Հիսուս Քրիստոսն իրագործում էր այդ մարգարեության (տես 2 Նեփի 11.4; Հակոբ 4.5; Ալմա 34.13-14), մասնավորապես այն առումով, որ Իր քավող գոհաբերությամբ Նա իրագործեց այդ օրենքի վերջնական նպատակը:

- Ինչի՞ վրա է մեր ուշադրությունը կենտրոնացնում արյան մատուցումը հին և նոր ուխտերում: (Հիսուս Քրիստոսի Քավությունը և Նրա արյունը թափելը մեր մեղքերի թողության համար:)

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթն Հ. Օուքսի հետևյալ միտքը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Հաղորդությունը արարողություն է, որը փոխարինում է արյուն թափելով կատարվող գոհաբերություններին և ողջակեզներին՝ Մոսիայի օրենքով, որի հետ միասին եկավ Փրկչի խոստումը. «Եվ ով որ գալիս է ինձ մոտ կտրված սրտով և փշրված հոգով, նրան ես կմկրտեմ կրակով և Սուրբ Հոգով» (3 Նեփի 9.20)» (“Sacrament Meeting and the Sacrament,” *Ensign or Liahona*, Nov. 2008, 19):

- Ինչպե՞ս կամփոփելիք Վերջին Ընթրիքի մասին մինչ այժմ քննարկված ճշմարտությունները: (Երբ ուսանողները պատասխանեն, շեշտեք, որ **Հիսուս Քրիստոսը իրագործեց հին ուխտը, և հաղորդության միջոցով հաստատեց նոր ուխտը:**)

Ղուկաս 22.14-20; 3 Նեփի 18.7, 11

Հաղորդությունն օգնում է մեզ հիշել Փրկչին

Դասարանը բաժանեք զույգերի: Հանձնարարեք յուրաքանչյուր զույգին կարդալ Ղուկաս 22.19–20 և 3 Նեփի 18.7, 11: Խնդրեք նրանց գտնել մեկ այլ պատճառ (նոր ուխտը հաստատելուց բացի), թե ինչու Փրկիչը հաստատեց հաղորդությունը: Քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ պատճառ բերեց Փրկիչը հաղորդությունը հաստատելու համար: (Ուսանողները պետք է բացահայեն հետևյալ ճշմարտությունը. **Հաղորդությունը ճաշակելիս մենք պետք է հիշենք Փրկչին:**)
- Ինչո՞ւ է կարևոր, որ հաղորդությունն ընդունելիս մենք ջանքեր գործադրենք հիշելու Փրկչին:
- Եթե մենք չենք հիշում Փրկչին և այն ինչ Նա արել է մեզ համար, ի՞նչ իմաստ ունի հաղորդությունը:



Կարող եք յուրաքանչյուր ուսանողի տալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի ելույթից հատվածներ պարունակող թերթիկ: Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ այն: Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ խորհուրդ կտաք մեկին, ով ջանք է թափում հաղորդության սպասավորման ընթացքում կենտրոնանալ Փրկչի և Նրա զոհաբերության վրա: (Երբ ուսանողները պատասխանեն, կարող եք նշել, որ երբ շաբաթվա ընթացքում ամեն ամիս օգտագործենք խորհելու համար Փրկչի կյանքի և ծառայության մասին, մեզ համար հեշտ կլինի կենտրոնանալ Նրա վրա կիրակի օրը հաղորդության ընթացքում:)
- Ի՞նչ օրհնություններ եք զգացել, երբ փորձել եք հաղորդության ժամանակ հիշել Փրկչին և Նրա Քավությունը:

Ա Կորնթացիս 11.27–30; 3 Նեփի 18.28–29; 20.8–9

Արժանիորեն հաղորդությունը ճաշակելը նորոգում է մեր ուխտերը

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ և համեմատել Ա Կորնթացիս 11.27–30 և 3 Նեփի 18.28–29; 20.8–9 հատվածները: Հանձնարարեք նրանց բացահայտել հաղորդության վերաբերյալ տրված զգուշացումը: Այնուհետև հարցրեք.

- Ինչո՞ւ է անխոհեմ համարվում հաղորդությունից անարժանորեն ճաշակելը:

Օգտակար կլինի կիսվել Յոթանասունից Երեց Ջոն Հ. Գրոբերգի հետևյալ խոսքերով, ով բացատրում է, թե ինչ է նշանակում արժանիորեն ճաշակել հաղորդությունից.



«Եթե մենք ցանկանում ենք բարելավվել (որն է՝ ապաշխարել) և չենք գտնվում քահանայության սահմանափակման ներքո, ապա, իմ կարծիքով, մենք արժանի ենք: Սակայն եթե մենք մենք բարելավվելու ցանկություն չունենք, եթե Հոգու առաջնորդությանը հետևելու մտադրություն չունենք, պետք է հարցնենք. Արդյո՞ք արժանի ենք հաղորդությունը ճաշակելու, թե ծաղրում ենք հաղորդության բուն նպատակը, որը պետք է հանդես գա որպես կատալիզատոր անձնական ապաշխարության և կատարելագործման համար: ("The Beauty and Importance of the Sacrament," *Ensign*, May 1989, 38):

- Որո՞նք են հաղորդությունն արժանիորեն ճաշակողների օրհնությունները: (տես 3 Նեփի 20.8-9): (Հավաստիացե՛ք, որ ուսանողները հասկանում են, որ **եթե մենք հաղորդությունն ընդունում ենք աղոթքով և ապաշխարող հոգով, մենք կարող ենք մեղքերի թողություն ստանալ, ինչպես մենք ստացանք դա մկրտվելիս:**)

Ցուցադրե՛ք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Հ. Օուքսի հետևյալ միտքը և հանձնարարե՛ք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Մեր մկրտությունից հետո հետագա մաքրման համար առանց որոշակի նախապատրաստության մեզանից յուրաքանչյուրը կորած կլինի հոգևոր բաների համար: Մենք չենք կարող ունենալ Սուրբ Հոգու ընկերակցությունը և վերջին դտաստանի օրը մենք անխուսափելիորեն «կվտարվենք հավիտյանս» (1 Նե. 10.21): Որքա՞ն Երախտապարտ ենք մենք, որ Տերը Իր Եկեղեցու յուրաքանչյուր մկրտված անդամի համար մի գործընթաց է ապահովել, ըստ որի մենք կարող ենք պարբերաբար մաքրվել հողի մեղքից: Հաղորդությունն այդ գործընթացի կարևոր մասն է» ("The Aaronic Priesthood and the Sacrament," *Ensign*, Nov. 1998, 38):

- Ըստ Երեց Օուքսի, ինչո՞ւ է հաղորդությունն ավետարանական այդքան կարևոր արարողություն հանդիսանում:

Կիսվե՛ք Երեց Օուքսի այս խոսքերով ևս.



«Մեզ պատվիրված է ապաշխարել մեր մեղքերից և գալ դեպի Տերը կոտրված սրտով և փշրված հոգով և ճաշակել հաղորդությունը համապատասխան դրա ուխտերի: Երբ մենք այս եղանակով վերանորոգում ենք մեր մկրտության ուխտերը, Տերը վերանորոգում է մեր մկրտության մաքրագործող ազդեցությունը: Այսպես մենք մաքրվում ենք և կարող ենք Նրա Հոգին միշտ մեզ հետ ունենալ: Դրա կարևորությունն ակնհայտ է Տիրոջ պատվիրանում, որ մենք ամեն շաբաթ ընդունում ենք հաղորդությունը» (տես ՎեՌՆ 59.8–9)» ("The Aaronic Priesthood and the Sacrament," *Ensign*, Nov. 1998, 38):

Կարող ե՛ք բացատրել, որ երբ մենք արժանիորեն ընդունում ենք հաղորդությունը, մենք «նորացնում ենք Տիրոջ հետ կապած *բոլոր ուխտերը*» (Delbert L. Stapley, in Conference Report, Oct. 1965, 14; italics added;

see also L. Tom Perry, “As Now We Take the Sacrament,” *Ensign* or *Liahona*, May 2006, 41):

Հանձնարարեք ուսանողներին վերնայել Ղուկաս 22.15-ը: Այնուհետև հարցրեք.

- Եթե ինչ-որ մեկը հարցներ ձեզ, թե ձեր կարծիքով, ինչու էր Հիսուսն այդքան շատ ցանկանում Ջատիկն անցկացնել Իր Առաքյալների հետ, ինչպե՞ս կպատասխանեիք: Ի՞նչ վկայություն կբերեիք:

Վկայեք, որ հիշելով Հիսուս Քրիստոսին և Նրա քավող գոհաբերությունը, և արժանիորեն ընդունելով հաղորդությունը, մենք նորացնում ենք Աստծո հետ կապած մեր ուխտերը: Խրախուսեք ուսանողներին մտածել, թե ինչպես կարող են հաղորդությունն ընդունելիս անհատապես «կոտրված սիրտ ու փշրված հոգի» մատուցել: Քաջալերեք նրանց հաղորդության ձեռք դարձնել կանոնավոր հոգևոր փորձառություն:

Ուսանողի ընթերցարան

- Մատթեոս 26.26–28; Ղուկաս 22.17–20; Ա Կորնթացիս 11.27–30; 3 Նեփի 18.1–11, 28–29; 20.8–9; Վարդապետություն և Ուխտեր 20.75–79:
- Դավիթ Հ. Օուքս, «Հաղորդության ժողով և Հաղորդություն», *Ensign* կամ *Լիստինա*, նոյ. 2008, 17–20:

Ջեֆրի Ռ. Հոլլանդի ընտրանի, «Սա արեք ի հիշատակ ինձ»



«Եթե հիշելը մեր սկզբունքային գործողությունն է, ապա ի՞նչ պետք է անսփռապես հիշենք, երբ մեզ են մատուցվում այդ պարզ և արժեքավոր խորհրդանիշները:

Կարող ենք հիշել Փրկչի նախամահկանացու կյանքը և այն ամենը, ինչ նա արել է որպես մեծ Եհովա, արարիչ Երկնքի, Երկրի և այն ամենի, ինչ կա նրանցում: Մենք կարող ենք հիշել, որ անգամ Երկնքի Մեծ Խորհրդում նա սիրեց մեզ և այնքան մեծ ուժ ունեւր, որ Քրիստոսի գործությամբ և առ Գառի արյունը մեր հավատքով հաղթեց անգամ այնտեղ (տես Հայտ. 12.10-11):

Կարող ենք հիշել նրա ծննդյան անպաճույճ շքեղությունը: ...

Կարող ենք հիշել Քրիստոսի գործած հրաշքները, նրա ուսմունքները, նրա բժշկումներն ու նրա օգնությունը: Կարող ենք հիշել, որ նա կույրին տեսողություն շնորհեց և բժշկեց խուլին, ոտքի կանգնացրեց կաղին, խեղվածին և տկարին: Ապա այն օրերին, երբ զգում ենք, որ մեր առաջընթացը դադարել է կամ մեր ուրախություններն ու տեսակետները խամրել են, մենք կարող ենք Քրիստոսի հանդեպ հաստատակամությամբ առաջ մղվել: ...

Մենք կարող ենք հիշել, որ անգամ իրեն տրված նման լուրջ առաքելությամբ, Փրկիչն ուրախություն էր գտնում կյանքում, նա սիրում էր մարդկանց և իր աշակերտներին պատվիրում էր ուրախ լինել: Նա ասել է, որ մենք պետք է ոգևորվենք ավետարանով կարծես մի մեծ գանձ ենք գտել, իսկական թանկագին մարգարիտ, հենց մեր շեմին դրված: ...

Կարող ենք հիշել, որ Քրիստոսն իր աշակերտներին ընկերներ կոչեց: ...

Կարող ենք և պետք է հիշենք այն հրաշալի բաները, որ եկել են մեր կյանք, և որ «բոլոր բաները, որոնք բարի են, գալիս են Քրիստոսից» (Մորո. 7.24): ...

Երբեմն առիթ կլինի հիշելու դաժան վերաբերմունքը, որ նրա հանդեպ դրսևորվեց, որ նա մերժվեց և անարդարությունը, օ~, այն անարդարությունը, որ նա կրեց: Երբ մենք ևս դիմակայում ենք այդ ամենին մեր կյանքում, կարող ենք հիշել, որ Քրիստոսը ևս կրեց ամեն նեղություն, սակայն չճնշվեց, վրդովվեց, սակայն չհուսահատվեց, հալածվեց, բայց երեսից չընկավ, վայր ընկավ, բայց չկործանվեց (տես Բ Կոր. 4.8–9):

Երբ մեր կյանքում նման դժվար պահեր են լինում, մենք կարող ենք հիշել, որ Հիսուսն իջավ ամեն ինչից վար, նախքան կբարձրանար ամեն ինչից վեր, և որ նա կրեց ցավեր, չարչարանքներ և ամեն տեսակի գայթակղություններ, որպեսզի լցվեր ողորմածությամբ և իմանար, ինչպես նեցուկ լինել իր ժողովրդին իրենց տկարություններում (տես Վևու 88.6; Ալմա 7.11–12):

Ովքեր երերում կամ սայթաքում են, նա պատրաստ է հաստատել և ամրացնել: Ի վերջո, նա պատրաստ է փրկել մեզ և այդ ամենի համար նա տվեց իր կյանքը: ...

... Այդ ամենը մենք կարող ենք հիշել, երբ ծնկի իջած երիտասարդ քահանան մեզ կոչ է անում միշտ հիշել Քրիստոսին» (*Ensign*, Nov. 1995, 67–69):

Փրկիչը քավեց ողջ մարդկության մեղքերը

Նախաբան

«[Հիսուս Քրիստոսը] զոհեց Իր կյանքը քավելով ողջ մարդկության մեղքերը: Նա մեծ փրկագնող պարգև էր հոգուտ բոլոր նրանց, ովքեր երբևէ ապրելու էին Երկրի երեսին» («Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Ensign* կամ *Lhahonua*, ապր. 2000, 2): Տասներկու Առաքյալներից Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ուսուցանել է, որ «Քավությունն մեր Երկնային Հոր երջանկության ծրագրիեական բաղադրիչն է, առանց որի

այդ ծրագիրը չէր կարող գործել» («Ապրում է Նա: փառք Իր անվան», *Ensign* կամ *Lhahonua*, մայիս 2010, 76): Այս դասը կկենտրոնանա Փրկչի ծանր տառապանքների վրա, որոնք սկսվեցին Գեթսեմանում և զագթնակետին հասան խաչի վրա, և կնկարագրի, ինչպես Հիսուս Քրիստոսը կարող է օգնել մեզ հաղթահարել մեր մեղքերը և ամրացնել մեզ մեր առօրյա կյանքում՝ Իր Քավության միջոցով:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- David A. Bednar, “The Atonement and the Journey of Mortality,” *Ensign*, Apr. 2012, 40–47.
- Jeffrey R. Holland, “This Do in Remembrance of Me,” *Ensign*, Nov. 2008, 32–38.

Ուսուցանման առաջարկներ

Մարկոս 14.33–36; Ղուկաս 22.39–44; 2 Նեփի 9.21

Հիսուս Քրիստոսը կանոնի կրեց Քավության հոգևարքը

Կարող եք դասը սկսել խնդրելով ուսանողներին երգել «Մնում եմ զարմացած» (*Hymns*, no. 193) կամ Փրկչի մասին մեկ այլ օրհներգ: Այնուհետև դասը սկսելով, հարցրեք՝

- Ինչպե՞ս է «Մնում եմ զարմացած» օրհներգը (կամ Փրկչի մասին մեկ այլ երգ) երգելը պատրաստում ձեզ Հիսուս Քրիստոսի Քավությունն ուսումնասիրելուն:

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Մարկոս 14.33–36 հատվածը, գտնելով արտահայտություններ, որոնք նկարագրում են Գեթսեմանում Փրկչի կրած տառապանքը: Գրատախտակին թվարկեք ուսանողների գտած արտահայտությունները:


- Ի՞նչ իմաստ են փոխանցում ձեզ այդ արտահայտությունները:

Հանձնարարեք ուսանողներին ուսումնասիրել Ղուկաս 22.39–44, 2 Նեփի 9.21, և Մոսիա 3.7 հատվածները, գտնելով լրացուցիչ մանրամասներ Իր քավող զոհաբերության ընթացքում Փրկչի կրած տառապանքների մասին: Կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն այդ հատվածներն իրենց սուրբ գրություններում:

- Ի՞նչ կարևոր ճշմարտություններ են այդ հատվածներն ուսուցանում մեզ համար Հիսուսի կրած տառապանքների մասին:

(Պատասխանները պետք է ներառեն հետևյալ ճշմարտությունը.
**Գեթսեմանում Հիսուս Քրիստոսը տառապելիս արյունահոսեց
 յուրաքանչյուր ծակոտիից։)**

Ուսանողների համար շեշտեք, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը ներառեց մեր մեղքերի համար Նրա տառապանքը Գեթսեմանում և խաչի վրա, Իր արյունը հեղելը, Խաչի վրա մահանալը և գերեզմանից Հարություն ամենելը: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրյուս Ռ. Մակքոնկիի հետևյալ խոսքերը.



«Մենք չգիտենք, մենք չենք կարող ասել, ոչ մի մահկանացու միտք չի կարող լիովին ընկալել այն, ինչ Քրիստոսն արեց Գեթսեմանում:

Մենք գիտենք, որ Նրա յուրաքանչյուր ծակոտիից արյուն էր հոսում, երբ Նա խնում էր այդ դառը բաժակից, որը Նրան տվել էր Իր Հայրը:

Մենք գիտենք, որ Նա տառապեց թե մարմնով և թե հոգով, ավելի քան հնարավոր էր մարդու համար կենդանի վիճակում: ...

Մենք գիտենք, որ Նա ուժասպառ ընկած էր գետնին, երբ ցավի և տանջանքների անսահման ծանրության տակ Նա դողում էր և ցանկանում էր չսմել այդ դառը բաժակը»
 (“The Purifying Power of Gethsemane,” *Ensign*, Apr. 2011, 57):

- Ի՞նչ ապրումներ եք ունենում լսելով Գեթսեմանում և խաչի վրա Հիսուս Քրիստոսի կրած տառապանքների մասին:

Հովհաննես 15.13; Ա Պետրոս 3.18; Վարդապետություն և Ուխտեր 19.15–19

Հիսուսը տառապեց, որպեսզի մենք Նրա պես չտառապենք

Տվեք հետևյալ հարցը.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր Հիսուսը պատրաստ մեզ համար տառապել այդքան շատ:

Հանձնարարեք ուսանողներին մտքում ուսումնասիրել Հովհաննես 15.13; Ա Պետրոս 3.18; և Վարդապետություն և Ուխտեր 19.15–19 հատվածները, փնտրելով պատճառները, թե ինչու Հիսուս Քրիստոսը պատրաստակամորեն կրեց Քավության տառապանքները: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, խնդրեք ուսանողներին ներկայացնել իրենց հայտնաբերածը: Երբ ուսանողները պատասխանում են, կարող եք գրատախտակին ամփոփել նրանց պատասխանները հետևյալ կերպ.

Ցույց տար Իր մեծ սերը մեր հանդեպ:

Կանխե՛ր մեր տառապանքը մեր բոլոր մեղքերի համար:

Մեզ հնարավորություն տա մեր մեղքերի համար սպաշխարել և ներվել:

Փառավորի Հորը:

Հնարավորություն տա վերադառնալ Աստծո մոտ:

Հնարավորություն տա վերադառնալ Աստծո մոտ:

Հետևյալ հարցերն ուղղելիս, ուսանողներին բավարար ժամանակ տվեք պատասխանների վրա մտածելու համար, նախքան նրանց կխնդրեք պատասխանել: (Հիշեցրեք ուսանողներին, որ երբ նրանք սովորում են խորհել սուրբ գրություններում իրենց հայտնաբերածի շուրջ, Հոգին հաճախ կհայտնի լրացուցիչ ճշմարտություններ իրենց:)

- Հիսուս Քրիստոսի տառապելու համար պատճառներն ի՞նչ են ուսուցանում ձեզ Նրա մասին:
- Ինչպե՞ս են այդ պատճառները վերաբերում ձեզ անձամբ:

Շեշտեք ուսանողների համար, որ Քավության շնորհիվ Հիսուս Քրիստոսը դարձավ մեր Փոխարինողը՝ Նա գրավեց մեր տեղը, Նա ստանձնեց մեր բեռը, Նա տառապեց մեր մեղքերի համար: Պողոս Առաքյալն այսպես է ձևակերպել. «Որովհետև նա [Հայր Աստվածը] նրան [Քրիստոս Որդուն], որ մեղք չգիտեր [այսինքն՝ Հիսուսը մեղք չգիտեր], մեզ համար մեղք արավ. որ մենք Աստուծոյ արդարությունը լինենք նորանում» (Բ Կորնթացիս 5.21): Այսինքն՝ կարծես մեր Տերը և Փրկիչը հետևյալ կոչն էր արել մեզ բոլորիս. «Տվեք ինձ մոտ: Ես կվերցնեմ ձեր մեղքը, և ես կտամ ձեզ իմ արդարակեցությունը»:

Վկայեք, որ քանի որ Հիսուս Քրիստոսը կատարեց Քավությունը, մենք կներվենք մեր մեղքերից, եթե ապաշխարենք: Նրա կատարած զոհաբերության շնորհիվ մեզ համար ուղի պատրաստվեց վերադառնալ ապրելու մեր Երկնային Հոր հետ հավերժական ընտանիքով: Հիսուս Քրիստոսը հպատակվեց Քավությանը՝ Երկնային Հոր և մեր հանդեպ տածած Իր մեծ սիրո շնորհիվ: Հորդորեք ուսանողներին մտածել, թե ինչպես կարող են իրենց կյանքում առավել արդյունավետորեն փնտրել և վայելել Քավության օրհնությունները:

Ավճառ 7.11-13

Հիսուս Քրիստոսի Քավությունը մեզ համար հասու է դարձնում Նրա շնորհը կամ ամենակարող զորությունը

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Երբ հոգևարքի զագաթնակետն էր, անգամ Նա իր յուրահատուկ բանականությամբ երբևէ չէր պատկերացրել դրա ողջ սարսափազդու ուժգնությունը: ...

Ողջ մարդկային մեղքի ծանրությունը, անցյալ, ներկա և ապագա, ճնշել էր այդ կատարյալ, անմեղ և զգայուն Հոգին: Մեր բոլոր թուլություններն ու տկարություններն ինչ-որ կերպ Քավության սոսկալի թվաբանության մաս են կազմել: (Տես Ավմա 7.11–12; Ես. 53.3–5; Մատթ. 8.17:) ...

... Նրա տառապանքը, ինչպես որ այն եղել է, *իր հրեշավորությամբ* բազմապատկված *անսահմանությամբ*, - հարուցեց ավելի ուշ խաչի վրա Նրա հոգու աղաղակը, իսկ դա լքված լինելու աղաղակ էր: (Տես Մատթ. 27.46:)» (“Willing to Submit,” *Ensign*, May 1985, 72–73):

- Չեր կարծիքով, ի՞նչ ի նկատի ունեւ Երեց Մաքսվելը «սոսկալի թվաբանություն» ասելով:
- Մեր մեղքերից բացի, ըստ երեց Մաքսվելի է՞լ ինչը նպաստեց Փրկչի տառապանքներին:

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Ավմա 7.11-13 հատվածը: Մյուս ուսանողներին խնդրեք հետևել նրան և բացահայտել մահկանացու կյանքի մյուս պայմանները, որոնց համար Փրկիչը տառապեց: Խնդրեք ուսանողներին ներկայացնել իրենց բացահայտումները, և գրատախտակին թվարկեք նրանց պատասխանները: (Պատասխանները պետք է ներառեն՝ ցավեր, չարչարանքներ, գայթակղություններ, հիվանդություններ, թուլություններ և մահ:) Քննարկեք այդ պայմանների նշանակությունը և թե ինչպես Հիսուս Քրիստոսը կարող է օրհնել մեզ Սուրբ Հոգու միջոցով, երբ մենք կրում ենք դրանք:

Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքերը.



«Փրկիչը տառապեց ոչ միայն մեր անօրինությունների, այլև անհավասարության, անարդարության, ցավի, տառապանքի և էնոցիոնալ անհանգստության համար, որոնք այնքան հաճախ շրջապատում են մեզ: Չկա ֆիզիկական ցավ, հոգու տառապանք, հոգու ցավ, թուլություն կամ տկարություն, որ դուք և ես երբևէ ունենանք մեր մահկանացու ճամփորդության ընթացքում, որը Փրկիչը առաջինը կրած չլինի: Թուլության պահին դուք և ես գուցե աղաղակենք. «Ոչ ոք չի հասկանում: Ոչ ոք չգիտի»: Ոչ մի մարդկային գուցե չգիտի: Սակայն Աստծո Որդին կատարելապես գիտի և հասկանում է, քանզի Նա զգացել և կրել է մեր բեռը, նախքան մենք երբևէ կկրեինք: Եվ քանի որ Նա վճարել է առավելագույն գինը և կրել մեր բեռը, Նա ունի կատարյալ կարեկցանք և կարող է մեկնել մեզ Իր ողորմության բազուկը մեր կյանքի տարբեր փուլերում: Նա կարող է հասնել, դիպչել, սատարել ... և ամրացնել մեզ, առավել քան երբևէ մենք կարող ենք լինել, օգնել մեզ անել այն, ինչ երբևէ չենք կարող անել մեր իսկ ուժին ապավինելով» (“The Atonement and the Journey of Mortality,” *Ensign*, Apr. 2012, 47):

Հարցրեք ուսանողներին, թե ինչպես ամփոփեին Երեց Բեդնարի ուսուցումը: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս են Քավության շնորհիվ հասանելի օրհնություններն ուղի պատրաստում մեզ համար Երկնային Հոր ներկայություն վերադառնալու համար: (Երբ ուսանողները պատասխանեն, շեշտեք, որ **Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք կարող ենք Սուրբ Հոգու միջոցով սփոփանք և ուժ ստանալ՝ կրելու «ցավեր և չարչարանքներ, և փորձություններ ամեն տեսակի» [Ալմա 7.11]:**)


Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ Փրկչի ամենակարող գործությունը կամ շնորհը, հանձնարարեք, որ յուրաքանչյուրն ուսումնասիրի տրված սուրբ գրության հատվածներից մեկը և պատրաստվի կիսվել իր սովորածով: (Կարող եք այդ վկայակոչումները գրել գրատախտակին:)

Բ Կորնթացիս 12.7-10:
Մոսիս 3.19
Մոսիս 24.10-15
Ալմա 31.24-25, 31-33, 38
Եթեր 12.27

Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, հարցրեք.

- Հաշվի առեք ինչպես էին այդ սուրբ գրության հատվածներում նկարագրված մարդիկ զորացվել Հիսուս Քրիստոսի Քավությամբ: Ե՞րբ եք դուք կամ ձեր ծանոթներից որևէ մեկը նման կերպով զորացվել:
- Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ մեզ հասու է Հիսուս Քրիստոսի ամենակարող գործությունը:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Մքոթի հետևյալ խոսքերը, և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Մեզանից յուրաքանչյուրի համար ծայրահեղ կարևոր է ամրացնել մեր հասկացողությունը Հիսուս Քրիստոսի Քավության նշանակալիության մասին, այնպես որ այն դառնա անսասան հիմք, որի վրա մենք կկառուցենք մեր կյանքը: ...

Ես մեծապես խրախուսում եմ ձեզ ստեղծել անձնական ուսումնասիրության ծրագիր ավելի լավ հասկանալու և գնահատելու որպես մեր Փրկիչ և Քավիչ Հիսուս Քրիստոսի աստվածային կոչման կատարյալ իրականացման անզուգական, հավերժական, անսահման հետևանքները» («Ապրում է Նա փառք Իր անվան», *Ensign* կամ *Լիստինգ*, մայիս 2010, 77):

Դասը ամփոփելիս, խրախուսեք ուսանողներին ստեղծել Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության մասին անձնական ուսումնասիրության ծրագիր:

Ուսանողի ընթերցարան

- Մարկոս 14.33–36; Ղուկաս 22.39–46; Հովհաննես 15.13; Ա Պետրոս 3.18; 2 Նեփի 9.21; Մոսիա 3.7; Ալմա 7.11–13; Վարդապետություն և Ուխտեր 19.15–20:
- David A. Bednar, “The Atonement and the Journey of Mortality,” *Ensign*, Apr. 2012, 40–47.

Փրկիչը տառապեց և մահացավ Գազաթի խաչի վրա

Նախաբան

Երբ Փրկչի մահկանացու ծառայությունն իր ավարտին մոտեցավ, «Նա ձերբակալվեց ու դատապարտվեց կեղծ մեղադրանքներով, մեղավոր ճանաչվեց ամբոխին բավարարելու համար և մահվան դատապարտվեց Գազաթի խաչի վրա» (“The Living Christ: The Testimony of

the Apostles,” *Ensign or Liahona*, Apr. 2000, 2): Այս դասում մենք շեշտում ենք կարևոր ճշմարտությունը, որ Հիսուս Քրիստոսը *հանդուրժեց*, որ մյուսների ձեռքով Ինքը տառապի և մահանա. ոչ ոք Իրենից չիլեց Իր կյանքը:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Jeffrey R. Holland, “None Were with Him,” *Ensign or Liahona*, May 2009, 86–88.

Ուսուցանման առաջարկներ

Մատթեոս 27.26–54; Հովհաննես 10.11–18; 19.10–11; 1 Նեփի 19.9

Հիսուս Քրիստոսն Իր կյանքը դնելու գորություն ունեն

Ցույց տվեք Խաչելությունն նկարը (*Ավետարանի նկարների գիրք* [2009], հմր. 57; տես նաև LDS.org):

Խնդրեք ուսանողներին պատկերացնել, որ իրենք նկարում պատկերված ներկա գտնվող հավատացյալներն են, երբ դուք բարձրաձայն կկարդաք Մատթեոս 27.26-54 հատվածը: Խրախուսեք ուսանողներին հետևել ձեզ և մտածել, թե ինչ ապրումներ կունենային, եթե լինեին այդ անձր և Հիսուս Քրիստոսի Խաչելության ակամատես լինեին: Կարդալն ավարտելուց հետո, ուսանողներին խնդրեք նկարագրել իրենց պատկերացնմամբ ինչ մտքեր և զգացմունքներ ունեին այդ անձիք: Մի քանի պատասխաններ լսելուց հետո հարցրեք դասարանին.



- Ինչպիսի՞ զգացմունքներ եք տածում Փրկչի հանդեպ այս պատմությունը կարդալուց և քննարկելուց հետո:

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Հովհաննես 10.11, 17-18 հատվածները: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, հարցրեք.

- Ի՞նչ են այս հատվածները սովորեցնում Հիսուս Քրիստոսի խաչելության և մահվան մասին: (Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են, որ **Հիսուս Քրիստոսը Իր կյանքը դնելու և կրկի վերցնելու գործություն էր ստացել Հորից:**)

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեյմս Ի. Թալմիջի (1862–1933) հետևյալ ուսուցումը և խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«[Հիսուսի], որպես անմահ Հորից երկրի վրա ծնված Որդու, անմահ ծագման բնական ազդեցությունը կայանում էր նրանում, որ Նա ապահովագրված էր մահից, բացի միայն եթե Նա ինքնակամ չհանձնվեր դրան: Հիսուս Քրիստոսի կյանքը չէր կարող վերցվել, եթե Նա չցանկանար և թույլ չտար: Իր կյանքը դնելու գործությունը ներհատուկ էր Իրեն, ինչպես Իր սպանված մարմինն անմահ դարձնելու գործությունը» (*Jesus the Christ*, 3rd ed. [1916], 418):

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մատթեոս 26.53-54 հատվածները, իսկ մեկ այլ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ Հովհաննես 19.10-11 հատվածները: Ուսանողներին խնդրեք հետևել նրան, այդ երկու արտահայտությունները համեմատելով և հակադրելով:

- Մատթեոսում տրված պատմության համաձայն, ի՞նչ օգնություն էր Հիսուս Քրիստոսին հասու:
- Ի՞նչ էք դուք սովորում Հովհաննեսի հատվածից: (Ուսանողները կարող են տարբեր բառերով պատասխանել, սակայն նրանք պետք է արտահայտեն հետևյալ վարդապետությունը. **Ոչ ոք չէր կարող վերցնել Հիսուս Քրիստոսի կյանքը. Նա կամովին մահացավ:**)
- Եթե Հիսուսը կարող էր հրեշտակների գորագնդեր օգնության կանչել, ձեր կարծիքով ինչո՞ւ Նա թույլ տվեց, որ Իրեն խաչեին:

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ 1 Նեփի 19.9 հատվածը: Խնդրեք դասարանին բնորոշել *կտանկի* բառը: (Ինչպես օգտագործվում է այստեղ, *տանկի* նշանակում է թույլ տալ: Կարող եք առաջարկել, որ ուսանողները «թույլ տալ» արտահայտությունը գրեն իրենց սուրբ գրությունների լուսանցքում՝ 1 Նեփի 19.19–ի կողքին:)

- Ինչո՞ւ Փրկիչը թույլ տվեց, որ Իրեն խաչեին:

Ցուցադրեք Յոթանասունից Երեց Ալեքսանդր Բ. Մորիսոնի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն:



«Աստծո բոլոր զավակների հանդեպ տաժաժ սերն էր, որ Իր անմեղ կատարելության մեջ եզակի Հիսուսին դրդեց կամովին առաջարկել Իրեն որպես փրկագին ուրիշների մեղքերի համար: ... Այդ ժամանակ դա էր այն բացառիկ պատճառը, որը Հիսուսին բերեց երկիր, որպեսզի «առաապեր, արյունահոսեր և մահանար մարդու համար» [“’Tis Sweet to Sing the Matchless Love,” *Hymns*, no. 176]: Նա եկավ ... որ քավի մեր մեղքերը, որ Նա

խաչը բարձրացվելով, Իր մոտ բերեր բոլոր մարդկանց (տես 3 Նե. 27.14)» (“For This Cause Came I into the World,” *Ensign*, Nov. 1999, 26):

Նշեք, որ Հիսուսը խաչի վրա տառապեց՝ Իր Հոր և մեր հանդեպ տաժած Իր մեծ սիրո շնորհիվ: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս կարող է օգնել ձեզ համբերել կյանքի դժվարություններին այն գիտելիքը, որ Փրկիչը կամովին հանձնվեց խաչվելու Իր Հոր և մեր հանդեպ տաժած սիրո շնորհիվ:

Մատթեոս 27.46; Ղուկաս 23.34–46; Հովհաննես 19.26–30

Հիսուս Քրիստոսն ավարտեց Իր մահկանացու առաքելությունը

Օգնելու համար ուսանողներին ավելի լավ հասկանալ ինչպիսին էր խաչելության մահը, կիսվեք հետևյալով.

«Խաչելությամբ մահն ասես ընդգրկում է ողջ ցավը և մահը *կարող է սարսազդու լինել*, - գլխապտույտ, ջղաձգում, ծարավ, քաղց, անքնություն, տենդ, փայտացում, հրապարակային ամոթ, տանջանքների երկարաձգում, սպասման սարսափ, արյունահոսող վերքեր, այդ ամենն ահագնանում է մինչև այն կետը, երբ այլևս դա չի կարող շարունակվել, սակայն այդ ամենը չի հասնում այն պահին, երբ տառապյալը կարող էր անգիտակցության գիրկն ընկնել: Անբնական դիրքի պատճառով ամեն շարժում ցավալի էր, ծվատված երակները և ջարդրտված ջլերն անվերջանալի ցավով էին տրոփում, արյունահոսող վերքերն աստիճանափար բորբոքվում էին, զարկերակները, հատկապես գլխի և ստամոքսի, ուռել և արյունով էին լցվում, և մինչ ցավն ու տառապանքն աստիճանաբար ուժգնանում էր, դրան ավելացավ մի անտանելի այրող և մոլեգնող ծարավ. և այդ բոլոր ֆիզիկական տառապանքները ներքին հուզմունքի և անհանգստության պատճառ դարձան, երբ մոտալուտ մահվան, այդ սոսկալի անհայտ թշնամու գալուստյան հետ, որի ժամանակ մարդը սովորաբար մեծ ցնցում է ապրում, գալիս է քաղցր և սքանչելի ազատման շունչը:

Այսպիսի մահվան էր դատապարտվել Քրիստոսը» (Frederic W. Farrar, *The Life of Christ* [1964], 641):

Ուսանողներին ասեք, որ Հիսուս Քրիստոսը խաչի վրա վեց արտահայտություններ արտաբերեց: Գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները (մի ընդգրկեք փակագծերի մեջ գրված բառերը), և հանձնարարեք յուրաքանչյուր ուսանողի գտնել դրանցից մի քանիսը և գտնել, թե ինչ էր ասում Հիսուսը.

Ղուկաս 23.34 («Հայր, թողի՛ր դրոսնց. որովհետև չգիտեն թե՛ ինչ են անում:»)

Ղուկաս 23.43 («Չընարի՛ս ասում եմ քեզ, Դու այսօր ինձ հետ դրախտումը կլինիս:»)

Հովհաննես 19.26-27 («Ու՛վ կի՛ն, ահա քո որդին: ... Ահա քո մայրը:»)

Մատթեոս 27.46 («Բա՛ Մատուած՝ իմ Մատուած, ինչո՞ւ թողեցիր ինձ:»)

Հովհաննես 19.28 («Ծարսալ եմ»):

Հովհաննես 19.30 («Կատարուած է»):

Ղուկաս 23.46 («Հայր, հոգիս քո ձեռն եմ ավանդում»):

Երբ ուսանողները ներկայացնեն իրենց գտածը, հակիրճ գրեք այդ արտահայտությունները գրատախտակին՝ համապատասխան հղումների կողքին: Հարցրեք ուսանողներին.

- Ի՞նչ են այդ խոսքերը բացահայտում Փրկչի մասին և ինչ էր Նա զգում խաչի վրա:
- Ի՞նչ ի նկատի ուներ Հիսուսը, երբ արտասանեց. «Կատարուած է»: (Նա ավարտեց Քավոթյամբ պայմանավորված անսահման տառապանքը: Կարող էք ուսանողների համար նշել, որ Ջոզեֆ Մփիթ Թարգմանություն, Մատթեոս 27.54-ում կարդում ենք. «Հիսուսը, երբ կրկին բարձրաձայն աղաղակեց, ասելով՝ Հայր, կատարուած է, քո կամքը լինի, ավանդեց հոգին» [տես նաև Մատթեոս 27.50, տողատակի ծանոթագրություն 3]: Հիսուսը մահացավ միայն այն ժամանակ, երբ իմացավ, որ իրագործել էր այն ամենը, ինչ Հայրը ցանկացել էր, որ Ինքը կատարեր:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը.



«Երբ ամենավերջին նաքարակիրը վճարված էր, հավատարիմ մնալու Քրիստոսի վճռակալությունը և բացարձակ անպարտելիությունն ակնհայտ դարձավ, ապա ի վերջո ողորմաժողովամբ այն «կատարված» էր [տես Հովհաննես 19.30]: Չնայած անհավանականությանը և լինելով առանց օգնության ու սատարման, Հիսուսը, կենդանի Աստծո կենդանի Որդին, վերականգնեց ֆիզիկական կյանքն այնտեղ, որտեղ մահն իշխանություն ուներ, և բերեց ուրախալի, հոգևոր փրկագնումը մեղքից, դժոխային խավարից ու հուսահատությունից: Հավատքով առ Աստված, *իմասալով*, որ Նա այնտեղ էր, Նա կարողացավ հաղթականորեն ասել. «Հայր, հոգիս քո ձեռքն եմ ավանդում» [Ղուկաս 23.46] («None Were with Him,” *Ensign or Liahona*, May 2009, 88):

Հանձնարարեք մեկ այլ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ Հեյլսի հետևյալ խոսքերը.



«Հիսուսն ընտրեց չազատվել այս աշխարհից, մինչև չհամբերեր մինչև վերջ և չավարտեր այն առաքելությունը, որի համար Նա ուղարկվել էր կատարելու մարդկության համար: Գազաթի խաչի վրա, Հիսուսն ավանդեց Իր հոգին Իր Հորը արտասանելով այս պարզ խոսքը. «Կատարուած է» (Հովհաննէս 19.30): Մինչև վերջ համբերելով Նա ազատվեց մահկանացու կյանքից:

Մենք ևս պետք է համբերենք մինչև վերջ» ("The Covenant of Baptism: To Be in the Kingdom and of the Kingdom," *Ensign*, Nov. 2000, 6):

- Ի՞նչ են այս երկու Առաքյալներն օգնում մեզ հասկանալ, ինչ ի նկատի ունենր Հիսուսը, երբ արտասանեց. «Կատարուած է»: (Ուսանողների պատասխաններից հետո, գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. **Հիսուս Քրիստոսը հավատարմորեն կատարեց այն ամենը, ինչ Երկնային Հայրը պատվիրեց Իրեն անել մահկանացու կյանքում:**)
- Մեզ համար դժվար պահերին ինչպէս դա կօգնի հիշել, թե ինչ Փրկիչը կրեց և հավատարմորեն համբերեց, որպեսզի կատարի Իր մահկանացու առաքելությունը:
- Ինչպէ՞ս կարող է Հիսուսի օրինակը հիշելն օգնել ձեզ կատարել այն, ինչ ծնվել էք կատարելու:
- Ինչպէ՞ս կարող ենք երախտապարտ լինել մեզ համար Փրկչի կրած տառապանքների համար: (Ուսանողները կարող են տարբեր բառերով պատասխանել, սակայն նրանք պետք է արտահայտեն հետևյալ սկզբունքը. **Մենք խաչի վրա Փրկչի կրած տառապանքների համար մեր երախտագիտությունը հայտնում ենք՝ հետևելով հավատարմորեն մինչև վերջ համբերելու Նրա օրինակին:**)

Հանձնարարեք ուսանողներին սոցիալական կայքերում կիսվել Փրկչի հանդէպ ունեցած իրենց զգացմունքներով և ինչ պետք է անեն այդ զգացմունքները պահպանելու համար:

Ուսանողի ընթերցարան

- Մատթեոս 27.26–54; Ղուկաս 23.34–46; Հովհաննէս 10.11–18; 19.10–11, 19–37; 1 Նեփի 19.9:
- Jeffrey R. Holland, "None Were with Him," *Ensign* or *Liahona*, May 2009, 86–88.

Փրկիչը ծառայեց հոգևոր աշխարհում

Նախաբան

Խոսելով Փրկչի մասին, մեր օրերի Առաքյալները վկայել են. «Նա մեծ փրկագնող պարզև էր հօգուտ բոլոր նրանց, ովքեր երբևէ ապրելու էին Երկրի Երեսին» («Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Ensign* կամ *Լիսինա*, ապր. 2000, 2): Փրկչի քավող գոհաբերության և հոգևոր աշխարհում Նրա ծառայության շնորհիվ Երկրի

վրա երբևէ ապրած Աստծո բոլոր զավակները ավետարանն ընդունելու կամ մերժելու հնարավորությունը կունենան: Այս դատում ուսանողները կսովորեն հոգևոր աշխարհում ունեցած Փրկչի դերի և մահացածներին փրկելու գործում ունեցած մեր դերի մասին:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Spencer J. Condie, “The Savior’s Visit to the Spirit World,” *Ensign*, July 2003, 32–36.
- Ռիչարդ Գ. Սքոթ, «Մահացածներին փրկագնելու ուրախությունը», *Ensign* կամ *Լիսինա*, նոյ. 2012, 93-95:

Ուսուցանման առաջարկներ

Ղուկաս 23.39-43; Վարդապետություն և Ուխտեր 138.11-24

Հիսուս Քրիստոսն այցելեց հոգիների աշխարհ

Կարող եք ցուցադրել Հիսուսի թաղումը (*Ավետարանի նկարների գիրք* [2009], հ. 58; տես նաև LDS.org) և Մարիամը և Հարությունն առած Հիսուս Քրիստոսը նկարները (*Gospel Art Book*, հ. 59):

Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Յոթանասունից Երեց Մայենսեր Ջ. Քոնդիի հետևյալ խոսքերը.



«Հիսուսի մահվան և Հարության փաստերը Քրիստոսյա դավանանքներին հարողները գնահատել են որպես հիմնարար սկզբունքներ: Ինչևէ, Իր մահից հետո մինչև Իր Հարությունն ընկած ժամանակահատվածում այն, ինչ արեց Հիսուսի անմահ հոգին առեղծված էր բոլորի, սակայն ոչ Վերջին Օրերի Սրբերի համար: Եվ այդ ժամերի ընթացքում Նրա կատարած գործի նշանակալիությունը վարդապետական հիմք է ապահովում Երկրի վրա տաճարներ կառուցելու համար: Ավելին, Նրա կատարած գործի մասին վկայությունը կարող է մեծապես սփոփել նրանց, ովքեր սգում են սիրելիի մահը» (“The Savior’s Visit to the Spirit World,” *Ensign*, July 2003, 32):

Անդրադարձեք նկարներին և հարցրեք դասարանին.


- Ի՞նչ արեց Հիսուսը Իր թաղումից մինչև Իր Հարությունը ընկած ժամանակահատվածում:

Որպեսզի ուսանողները որոշ պատկերացում կազմեն, հանձնարարեք նրանց կարդալ Ղուկաս 23.39-43:

- Ի՞նչ ասաց Փրկիչը խաչին գամված չարագործին: (Նշեք, որ Նախագահ Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ Փրկչի արտասանած ավելի ստույգ խոսքերն են եղել. «Դու այսօր ինձ հետ հոգիների աշխարհում կլինես» [in *History of the Church*, 5:424–25]: Շատ Քրիստոնյաներ չեն հասկացվում չարագործին ուղղված Փրկչի խոսքերն այն առումով, որ մարդը կարող է ապաշխարել լուրջ մեղքերից իր կյանքի վերջում: Ինչևէ, սուրբ գրություններն ուսուցանում են, որ մենք չպետք է հետաձգենք մեր ապաշխարիությունը:)
- Ըստ այդ խոսքերի, ի՞նչ գործ էր կատարում Փրկիչը մինչև Նրա մարմինը թաղված էր: Տես նաև Ա Պետրոս 4.6:)

Ուսանողներին ասեք, որ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը հայտնություն է ստացել, որը նկարագրում է Հիսուս Քրիստոսի այցը հոգիների աշխարհ: Որպեսզի ուսանողները հասկանան այդ հայտնության ենթատեքստը, ամփոփ ներկայացրեք Վարդապետություն և Ուխտեր 138 բաժնի ներածությունը և առաջին 10 հատվածները: Այնուհետև խնդրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 138.11–12, 15–16, 18–19, 23–24: Քննարկեք հետևյալ հարցերը.

- Ըստ այդ տեսիլքի, ի՞նչ արեց Փրկիչը Իր թաղումից մինչև Իր Հարությունը ընկած ժամանակահատվածում: (Ուսանողները պետք է հստակ ասեն, որ **մինչ Իր մարմինը գտնվում էր գերեզմանում Հիսուսն այցելեց արդար հոգիներին հոգևոր աշխարհում:**)



Քրիստոսի թաղումը, Քարլ Շելերիս Բլոխի: Օգտագործվել է Ֆրիդրիխսդորֆի Ազգային Պատմության թանգարանի թույլտվությամբ, Հիլրոդ, Դակոա: Չպատճենահանել



Ինչո՞ւ ես լաց լինում. © 2015 by Simon Dewey. Օգտագործվել է Altus Fine Art-ի թույլտվությամբ, www.altusfineart.com

- Ինչո՞ւ էին այդ արդար հոգիները լցված ուրախությամբ և ցնծությամբ: (Երբ ուսանողները պատասխանեն, շեշտեք հետևյալ ճշմարտությունը. **Ըստ Աստծո ծրագրի, ննջեցյալները, ովքեր մահկանացու կյանքում եղել են հավատարիմ, կարող են մահից փրկագնվել Հիսուս Քրիստոսի Հարությունից հետո:** Կարող եք նշել, որ մինչև Փրկչի մահը և Հարությունը միսիոներներ չեն ուղարկվել հոգևոր աշխարհի քարոզելու Ղուկաս 16.19-31; Մովսես 7.36-39):

Վարդապետություն և Ուխտեր 138.20-37

Աստծո բոլոր զավակներն ավետարանը լսելու հնարավորություն կունենան

Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 138.20-21, 25-28 հատվածները և ներկայացնել, թե ինչ հարցի շուրջ էր խորհում Նախագահ Սմիթը: (*Նշում.* Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ սուրբ գրություններն ուսումնասիրելիս լավ հարցեր տալու և պատասխաններ փնտրելու կարևորությունը, նշեք, որ սուրբ գրություններում գրանցված բազմաթիվ հայտնություններ տրվել են անկեղծ են տրված հարցի արդյունքում:): Երբ ուսանողները պատասխանեն, խնդրեք նրանց կարդալ Վարդապետություն և Ուխտեր 138.29-30, և գտնել, թե ինչպես էին հոգիները բանտում լսելու ավետարանը: Հարցրեք.

- Ի՞նչ արեց Փրկիչն արդարների մեջ, երբ այցելեց հոգիների աշխարհ: (Հավաստիացեք, որ ուսանողները բացահայտում են հետևյալ ճշմարտությունը. **Հոգիների աշխարհում Հիսուսը կազմակերպեց մահացածների փրկության աշխատանքը:**)

Ուսանողներին բաժանեք զույգերի: Խնդրեք նրանց ուսումնասիրել Վարդապետություն և Ուխտեր 138.30-37 հատվածը և քննարկել բոլոր բառի կարևորությունը, որը օգտագործվում է 30, 31 և 37 հատվածներում: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, հարցրեք.

- Ո՞րն էր հոգիների աշխարհում Փրկչի ծառայության նպատակը: (Ուսանողները պետք է հստակ ներկայացնեն հետևյալ ճշմարտությունը. **Փրկիչն ուղի բացեց Աստծո բոլոր զավակների համար ավետարանը լսելու և լիակատար ուրախություն ձեռք բերելու համար:**)
- Ինչո՞ւ պետք է ավետարանը քարոզվի Աստծո բոլոր զավակներին: (Տես ՎևՈւ 138.33-34, Ա Պետրոս 3.18-20:)
- Ի՞նչ է սա ուսուցանում մեզ Հիսուս Քրիստոսի կատարած քավության հետևանքների մասին: (Քավության հետևանքները հասնում են հոգիների աշխարհ:)

Կարող եք կիսվել Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի (1876–1972) հետևյալ խոսքերով.



«Իսկ ի՞նչ է սպասվում անթիվ մարդկանց, ովքեր մահացել են և երբեք չեն լսել Քրիստոսի մասին, երբեք չեն ունեցել ապաշխարության և իրենց մեղքերի թողության հնարավորությունը, երբեք չեն հասնում իշխանություն կրող Եկեղեցու երեցի: Մեր բարի քրիստոնյա հարևանները կասեն ձեզ, որ իրենք հավետ կորած են: ...»

Դա արդա՞ր է: Դա արդարացի՞ է: Ոչ: *Տերն ամեն մարդու տալու է լսելու և հավերժական կյանք կամ իր արքայությունում մի տեղ ստանալու հնարավորություն»* (*Doctrines of Salvation*, ed. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 2:132):

- Ինչո՞ւ են հոգիների աշխարհի մասին այդ ճշմարտությունները կարևոր: Իմանալով հոգիների աշխարհի վերաբերյալ այդ ճշմարտությունները, ի՞նչը կփոխվի ձեր կյանքում:
- Հոգիների աշխարհում Փրկչի ծառայության մասին գիտելիքը ինչպե՞ս կարող է սփոփանք լինել ձեզ համար:

Մենք կարող ենք օգնել մահացածների փրկության գործում



Յուրաքանչյուր ուսանողի տվեք «Վերջին Օրերի աշխատանքը մահացածների համար» թերթիկի մեկական օրինակ: Դասարանը բաժանեք փոքր խմբերի կամ զույգերի: Հանձնարարեք նրանց կարդալ թերթիկի վրա գրվածը, գտնելով և քննարկելով այն օրհնությունները, որոնք խոստացվել են նրանց, ովքեր մասնակցում են մահացածների փրկագնման աշխատանքին:

Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս է տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքում մեր մասնակցությունն օգնում մահացներին հասու լինել այն օրհնություններին, որոնք գալիս են Հիսուս Քրիստոսի քավող զոհաբերության շնորհիվ:
- Մահացածների համար փոխարինող արարողություններին մասնակցելը ինչպե՞ս է օգնում մեզ էլ ավելի նմանվել Փրկչին: (Երբ ուսանողները պատասխանեն, շեշտեք հետևյալ սկզբունքը.
Մասնակցելով մեր ազգականների համար կատարվող տաճարային արարողություններին մենք նպաստում ենք նրանց փրկության գործին և ամրանում հակառակորդի դեմ:)

Կարող եք կիսվել Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի (1910–2008) հետևյալ բացատրությամբ, թե ինչպես է մահացածների համար կատարվող փոխարինող աշխատանքը զուգորդվում Փրկչի փրկագնող աշխատանքի հետ.



«Այն ինչ կատարվում է Տիրոջ Տանը, ... մոտ է Տիրոջ զոհաբերության ոգուն ավելի, քան ինձ ծանոթ որևէ այլ գործ: Ինչո՞ւ: Որովհետև դա կատարվում է նրանց կողմից, ովքեր կամովին տրամադրում են իրենց ժամանակից և ունեցվածքից, առանց որևէ շնորհակալություն կամ վարձք ակնկալելու, անելով մյուսների համար այն, ինչ նրանք չեն կարող անել իրենց համար»
 (“A Century of Family History Service,” *Ensign*, Mar. 1995, 62–63; see also

Obadiah 1:21):

Ուսանողների ուշադրությունը կրկին հրավիրեք թերթիկի վրա և հարցրեք.

- Ե՞րբ եք տեսել կամ զգացել այն օրհնությունները, որոնք խոստացվել են նրանց, ովքեր մասնակցում են մահացածների փրկագնման աշխատանքին:

Հանձնարարեք ուսանողներին լուռ խորհել հետևյալ հարցի շուրջ.

- Այդ խոստումներից որո՞նք կցանկանայիք ունենալ ձեր կյանքում այժմ, և ինչ եք ցանկանում անել դրանք ձեռք բերելու համար:

Ուսանողներին խրախուսեք հանդիպել իրենց ծխի ընտանիքի պատմության խորհրդատուին և ավելի սովորել իրենց մահացած նախնիների համար աշխատանք կատարելու մասին: Բարձրաձայն կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 128.22, և վկայեք Հիսուս Քրիստոսի հավերժական ծառայության և մահացածների համար կատարվող սուրբ աշխատանքի մասին, որը հաստատվել էր աշխարհի հիմնադրումից առաջ:

Ուսանողի ընթերցարան

- Դուկաս 23.39–43; Ա Պետրոս 3.18–20; 4.6; Վարդապետություն և Ուխտեր 128.15, 22; 138.1–37:
- Spencer J. Condie, “The Savior’s Visit to the Spirit World,” *Ensign*, July 2003, 32–36.

Վերջին օրերի աշխատանքը մահացածների համար

Տասներկու Առաքյալների Զվորումից Երեց Ջոն Ա. Վիդսոն (1872–1952) ուսուցանել է հետևյալը Աստծո որդիներին և դուստրերին փրկելու մեր կանխորոշված առաքելության մասին.



«Մեր նախաերկրային կյանքում՝ մեծ խորհրդի օրը մենք որոշակի պայմանագիր ենք կապել Ամենազորի հետ: Տերն իր կողմից հղացած մի ծրագիր է առաջարկել: Մենք ընդունել ենք այն: Քանի որ այդ ծրագիրը նախատեսված էր բոլոր մարդկանց համար, այդ ծրագրի ներքո մենք դառնում ենք յուրաքանչյուր անձի փրկության մասնակիցը: Մենք տեղում համաձայնել ենք լինել ոչ միայն մեր

փրկիչները, այլև ... փրկիչները՝ ողջ մարդկային ընտանիքի: Մենք Տիրոջ հետ գործընկերության մեջ ենք մտել: Այն ժամանակ այդ ծրագրի գործարկումը դարձավ ոչ միայն Հոր աշխատանքը, և Փրկչի աշխատանքը, այլև մեր աշխատանքը: Մեզանից ամենափոքրը, ամենախոնարհը, գործակցում է Ամենագործի հետ, փրկության հավերժական ծրագրի նպատակն իրագործելու համար» (*"The Worth of Souls," Utah Genealogical and Historical Magazine, Oct. 1934, 189"*) (in *Doctrine and Covenants and Church History: Gospel Doctrine Teacher's Manual* [1999], 173):

Տասներկու Առաքյալների Զվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթը խրախուսել է Եկեղեցու երիտասարդներին տաճարային աշխատանք կատարել իրենց նախնիների համար.



Տաճարում կատարված ցանկացած աշխատանք ժամանակի լավ տնօրինում է, սակայն որպես փոխանորդ ձեր իսկ նախնիների համար ծեսեր ստանալը տաճարում անցկացրած այդ ժամանակը էլ ավելի սրբազան է դարձնում և բերում էլ ավելի մեծ օրհնություններ: ...

Երիտասարդներ, դուք ուզո՞ւմ եք ապահով ուղի՝ ձեր կյանքում թշնամու ազդեցությունը նվազեցնելու համար: Ընկղմվեք ձեր նախնիների հետազոտության մեջ, պատրաստեք նրանց անունները փոխարինողների միջոցով տաճարում մատչելի սրբազան ծեսերի համար, ապա գնացեք տաճար և փոխարինող դարձեք նրանց համար, ստանալով մկրտության ուխտերը և Սուրբ Հոգու պարգևը: ... Ես չգիտեմ ձեր կյանքում թշնամու ազդեցությունից պաշտպանվելու ավելի մեծ պաշտպանություն» («Մահացածներին փրկագնելու ուրախությունը», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2012, 93–94):

Տասներկու Առաքյալների Զվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը բացատրել է այդ այլաբանության իմաստը.



«Ես հրավիրում եմ Եկեղեցու երիտասարդներին սովորել Եղիայի Հոգու մասին և զգալ այն: Ես խրախուսում եմ ձեզ սովորել, փնտրել ձեր նախնիներին և պատրաստել ձեր անձերը՝ լինելու փոխանորդ և կատարելու մկրտություններ Տիրոջ տանը *ձեր* մահացած ազգականների համար (տես ՎեՐՈՒ 124.28–36): Եվ ես հորդորում եմ ձեզ օգնել այլ մարդկանց իմանալ իրենց ընտանիքի

պատմությունները:

Եթե դուք հավատքով արձագանքեք այս հրավերին, ձեր սրտերը կդառնան դեպի հայրերը: Աբրահամին, Իսահակին և Հակոբին տրված խոստումները կարժանատիվորեն ձեր սրտերում: Ձեր հայրապետական օրհնությունները, բացահայտելով ձեր տոհմաբանական գիծը, կկապեն ձեզ այս հայրերի հետ և ավելի իմաստալից կդառնան ձեր համար: Ձեր սերն ու երախտագիտությունը ձեր նախնիների հանդեպ կմեծանան: Փրկչի մասին ձեր վկայությունը և դարձի ընթացքը կդառնան ավելի խորը ու հաստատուն: Եվ ես խոստանում եմ, որ դուք պաշտպանված կլինեք թշնամու սաստկացող ազդեցությունից: Մինչ դուք մասնակցեք այս սուրբ աշխատանքին և սիրեք այն, դուք պաշտպանված կլինեք ձեր

Երիտասարդության տարիներին և ձեր ողջ կյանքի ընթացքում» («Զավակների սրտերը պետք է դառնան», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2011, 26–27):

Նա հարություն առավ

Նախաբան

«[Հիսուս Քրիստոսը] վեր բարձրացավ գերեզմանից, «իևրը ննջածների առաջնեկ լինելու» համար (Ա Կորնթացիս 15.20): Որպես Հարություն առած Տեր, Նա այցելեց նրանց, ում սիրում էր կյանքում» («Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Ensign* կամ *Լիսինա*, ապր. 2000, 3): Այս դասում ուսուցանվում է

Հիսուս Քրիստոսի Հարության հետ կապված վարդապետությունը և իրադարձությունները: Երբ ուսանողները խորացնում են մասին իրենց հասկացողությունն ու վկայությունը, նրանք հեռանկար և հույս են ձեռք բերում մահկանացու կյանքի դժվարությունների հանդիպելիս:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Հիսուս Քրիստոսի Հարությունը», *Ensign* կամ *Լիսինա*, մայիս 2014, 111-14:
- Dallin H. Oaks, “Resurrection,” *Ensign*, May 2000, 14–16.

Ուսուցանման առաջարկներ

Ա Կորնթացիս 15.12-29

Հիսուս Քրիստոսի Հարությունը

Ցուցադրեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի (1805–1844) հետևյալ խոսքերը և խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ այն.



«Մեր կրոնի հիմնական սկզբունքներն են Առաքյալների և Մարգարեների վկայությունը Հիսուս Քրիստոսի մասին, որ Նա մահացավ, թաղվեց և բարձրացավ երրորդ օրը և համբարձվեց երկինք, իսկ բոլոր մյուս բաները, որոնք կապված են մեր կրոնի հետ, միայն դրա հավելումներն են» (*Teachings of Presidents of the Church: Joseph Smith 2007*, 49):

Ուսանողների հետ քննարկեք հետևյալ հարցը.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են ավետարաի մյուս սկզբունքները Հիսուս Քրիստոսի մահվան, թաղման և Հարության «հավելումները» հանդիսանում:

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Եսայիա 25.8, Մոսիա 16.7–8, և Ալմա 33.22 հատվածները և գտնել, թե ինչ մարգարեացան հնագույն մարգարեները Հիսուս Քրիստոսի Հարության մասին: Հանձնարարեք նրանց կիսվել իրենց գտածով:

Գրատախտակին գրեք հետևյալ ցանկը.

Որովհետև Հիսուսը հարություն առավ մահացածներից, ...	Եթե Հիսուսը հարություն չառներ մահացածներից, ապա ...
Ա Կորնթացիս 15.20-28 Արմա 11.43-45	Ա Կորնթացիս 15.12-19, 29 2 Նեփի 9.8-10

Դասարանի մի կեսին հանձնարարեք ուսումնասիրել աղյուսակի ձախ սյունակում տրված սուրբ գրությունները և գտնել օրհնությունները, որ մենք ստանում ենք Հիսուս Քրիստոսի Հարության արդյունքում: Դասարանի մյուս կեսին հանձնարարեք ուսումնասիրել այդ սյունակում տրված սուրբ գրությունները և գտնել, թե ինչ տեղի կունենար, եթե Հիսուսը հարություն չառներ մահացածներից: Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, հարցրեք ով կցանկանա ներկայացնել իր սովորածը: Օգնեք ուսանողներին սահմանել այդ հատվածներում ուսուցանվող վարդապետությունը՝ տալով հետևյալ հարցերը.

- Ըստ Ա Կորնթացիս 15.20-ի, Պողոս Առաքյալը հայտարարել է, որ Հիսուսը «ննջածների առաջնեկ եղավ»: Ի՞նչ է այդ արտահայտությունը նշանակում: (Հիսուսն առաջինն էր, որ հարություն առավ:)

Խնդրեք ուսանողներին կրկին կարդալ Ա Կորնթացիս 15.22 հատվածը: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս կամփոփեիք այն համընդհանուր օրհնությունը, որ մենք ստանում ենք Հիսուս Քրիստոսի հարության շնորհիվ: (Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալ վարդապետությունը. **Հիսուս Քրիստոսի Քավության և Հարության շնորհիվ ողջ մարդկությունը հարություն կառնի:**)

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Հովարդ Վ. Հանթերի (1907–1995) և Նախագահ Մերիոն Ջ. Ռոմնիի (1897–1988) հետևյալ խոսքերը.



«Առանց Հարության Հիսուս Քրիստոսի ավետարանը դառնում է իմաստուն ասացվածքների և կարծես թե անբացատրելի հրաշքների մի շարք, բայց ասացվածքներն ու հրաշքները չունեն վերջնական հաղթանակ: Ոչ, վերջնական հաղթանակը վերջնական հրաշքի մեջ է. որովհետև առաջին անգամ մարդկության պատմության մեջ նա, որ մահացավ, բարձրացավ դեպի կենդանի անմահություն: Նա Աստծո Որդին էր, մեր անմահ Որկնային Հոր Որդին, և ֆիզիկական և հոգևոր մահվան դեմ նրա հաղթանակն այն բարի լուրն է, որ ամեն Քրիստոսյա լեզու պետք է արտասանի» (Howard W. Hunter, "An Apostle's Witness of the Resurrection," *Ensign*, May 1986, 16):



«Նա հարություն առավ, այստեղ չէ»: (Մարկոս 16.6:) Իրենց պարզությամբ պերճախոս այս խոսքերը հայտարարեցին պատմության մեջ գրանցված ամենանշանակալի իրադարձությունը» (Marion G. Romney, "The Resurrection of Jesus," *Ensign*, May 1982, 6):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսի Հարությունը համարվում «պատմության մեջ գրանցված ամենանշանակալի իրադարձությունը»:
- Ի՞նչ մտքեր և զգացմունքներ եք ունենում իմանալով, որ Հիսուս Քրիստոսի Հարության շնորհիվ երկրի վրա ծնված Երկնային Հոր բոլոր զավակները հարություն կառնեն:

Բացատրեք, որ Հարությունը փրկագնում է մեզ ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր մահից: Եթե չլիներ հարություն, ապա բոլոր մարդիկ ի վերջո կդառնային դևի պես (տես 2 Նեփի 9.6–9):

Վկայեք, որ Հիսուս Քրիստոսի Հարությունն ավարտեց Քավությունը և Աստծո զավակների համար հնարավոր դարձրեց Նրա ներկայություն վերադարձը:

Մատթեոս 28; Մարկոս 16; Ղուկաս 24; Հովհաննես 20

Հարություն առած Հիսուս Քրիստոսի վկաները



Ուսանողներին որպես թերթիկ տվեք հետևյալ աղյուսակը.

Հարություն առած Հիսուս Քրիստոսի հայտնությունները Նոր Կտակարանում

Հղում	Այցելություն	Օր կամ ժամ	Գտնվելու վայրը	Ինչ տեղի ունեցավ
Հովհաննես 20.11–18; Մարկոս 16.9				
Մատթեոս 28.1-10				
Ղուկաս 24.34; Ա Կորնթացիս 15.5				
Մարկոս 16.12; Ղուկաս 24.13-32				
Մարկոս 16.14; Ղուկաս 24.33, 36–49; Հովհաննես 20.19–23				
Հովհաննես 20.26-29				
Հովհաննես 21.4-23				
Մատթեոս 28.16–20; Մարկոս 16.15–18				

Հղում	Այցելություն	Օր կամ ժամ	Գտնվելու վայրը	Ինչ տեղի ունեցավ
Մարկոս 16.19-20; Դուկաս 24.50-53; Գործք 1.9-11				
Ա Կորնթացիս 15.6				
Ա Կորնթացիս 15.7:				
Գործք 7.55-56				
Գործք 9.4–6; Ա Կորնթացիս 9.1; 15.8				
Հայտնություն 1.13-18				

Յուրաքանչյուր ուսանողի հանձնարարեք աղյուսակից մեկ կամ երկու տող: Խնդրեք նրանց ուսումնասիրել իրենց հանձնարարված տողերի հատվածները և գտնել, ում այցելեց հարություն առած Փրկիչը: Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք ներկայացնել՝ ինչ են իրենք հայտնաբերել: Ժամանակի սղության պատճառով խրախուսեք ուսանողներին հակիրճ ներկայացնել իրենց խոսքը: Այնուհետև քննարկեք հետևյալ հարցերը.

- Այս վարժության ընթացքում ի՞նչ սովորեցիք հարություն առած Փրկչի բազում հայտնությունների մասին և յուրաքանչյուրն ի՞նչ զգացողություններ ունեցավ:
- Սուրբ գրություններում այս հատվածներից բացի ուրիշ ի՞նչ վկայություններ կան հարություն առած Հիսուս Քրիստոսի մասին: (Ուսանողները կարող են հիշատակել Նեփիացիների կամ Մարգարե Ջոզեֆ Միլթի մասին վկայությունները:)
- Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ շատ վկայություններ են եղել հարություն առած Փրկչի մասին: (Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են հետևյալ ճշմարտությունը. **Քանի որ բազմաթիվ մարդիկ հարություն առած Հիսուս Քրիստոսի ականտեսն են եղել, մենք կարող ենք վստահ լինել, որ Նա ապրում է, և որ մահանալուց հետո մենք ևս կրկին կապրենք:**)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ Փրկչի Հարության մասին վարդապետական եզրակացությունները և ինչու, ինչպես Ջոզեֆ Միլթն է ուսուցանել, մյուս բոլոր սկզբունքները հավելումներն են հանդիսանում Հիսուս Քրիստոսի մահվան և Հարության, յուրաքանչյուր ուսանողի տվեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թող Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերի օրինակը: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ նրա խոսքերը:



«Եթե Հիսուսն, իրոք, բառացիորեն հարություն է առել, ապա դրա ակնհայտ հետևությունն այն է, որ Նա աստվածային էակ է: Ոչ մի հասարակ մահկանացու իր մեջ զորություն չունի, որպեսզի մահանալուց հետո կրկին կենդանանա: Քանի որ Նա հարություն էր առել, Հիսուսը չէր կարող միայն հյուսն, ուսուցիչ, ռաբբի կամ մարգարե լինել: Քանի որ Նա հարություն էր առել, Հիսուսը պետք է որ Աստված լիներ, այսինքն՝ Հոր Միածին Որդին:

Հետևաբար, այն ամենն, ինչ Նա ուսուցանել է, ճշմարիտ է. Աստված չի կարող ստել [տես Ենովս 1.6]:

Հետևաբար, Նա երկրի Արարիչն է, ինչպես որ Ինքն է ասել [տես օրինակ՝ 3 Նեփի 9.15]:

Հետևաբար, երկինքն ու դժոխքն իրական են, ինչպես որ Նա ուսուցանել է [տես օրինակ՝ Վևու 76]:

Հետևաբար, գոյություն ունի հոգիների աշխարհ, որտեղ Նա այցելեց Իր մահից հետո [տես Վևու 138]:

Հետևաբար, Նա կրկին կգա, ինչպես հրեշտակներն են ասել [տես Գործք 1.10–11], և «անձամբ կթագավորի երկրի վրա» [Հավատո Հանգանակ 1.10; տես նաև Topical Guide, “Jesus Christ, Millennial Reign”]:

Ուստի, բոլորի համար կա Հարություն և վերջին դատաստան [տես օրինակ, 2 Նեփի 9.15]:

Քրիստոսի Հարության իրողության շնորհիվ Հայր Աստծո ամենազոր, ամենազեղ և ամենաբարի լինելու մասին կասկածներն անհիմն են, Նա, ով տվեց Իր Միածին Որդուն աշխարհի փրկության համար: Կյանքի իմաստի ու նպատակի մասին կասկածները հիմնավորված չեն: Հիսուս Քրիստոսն է իրականում այն միակ անունը կամ ճանապարհը, որի շնորհիվ փրկությունը կարող է գալ մարդկությանը: Քրիստոսի շնորհն իրական է՝ ապաշխարություն փնտրող մեղավորին տալով և՛ ներում, և՛ մաքրագործում: Հավատքն իսկապես ավելին է, քան երևակայություն կամ մտացածին երևույթ: Կա մի հիմնական ու համընդհանուր ճշմարտություն, և կան իրական ու անփոփոխ բարոյական չափանիշներ, ինչպես որ ուսուցանվել է Նրա կողմից:

Նրա օրենքի ու պատվիրանների ցանկացած խախտման դեպքում ապաշխարության անհրաժեշտությունը հրատապ է: Փրկչի հրաշքներն իրական են, ինչպես որ Իր աշակերտներին տված խոստումներն են իրական, որ նրանք կգործեն նույնը, նույնիսկ ավելի մեծ բաներ [տես Հովհաննես 14.12]: ... Քրիստոսի Հարության շնորհիվ մահը մեր վախճանը չէ և չնայած մեր «մորթն այսպես թափվելուց հետո, այն ժամանակ մեր մարմնից կտեսնենք Աստծուն» [Հոբ 19.26]» («Հիսուս Քրիստոսի Հարությունը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 113, 114):

- Ինչպե՞ս են Երեց Քրիստոսֆերսոնի խոսքերը լուսաբանում Փրկչի Հարության կենտրոնական դերը վերականգնված ավետարանի վարդապետության մեջ:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ ինչպես կարող է Հարության իրականությունն անձնապես ազդել իրենց վրա, ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթն Հ. Օուքսի հետևյալ միտքը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Հարության պարզևած «կենդանի հույսը» մեր համոզմունքն է, որ մահը ոչ թե մեր ինքնության ավարտն է, այլ մահկանացու կյանքից դեպի անմահություն կանխորոշված անցում կատարելու մեջ անհրաժեշտ մի քայլ: Այս հույսը փոխում է մահկանացու կյանքի ողջ հեռանկարը: ...

Հարության հավաստիացումը մեզ ուժ և հեռանկար է տալիս համբերելու մեր և մեր սիրելիների դեմ ծառայած մահկանացու մարտահրավերներին, ինչպիսիք են՝ ֆիզիկական, մտավոր կամ էնոցիոնալ տկարությունները, որ մեզ հետ են ի ծնե կամ ձեռք ենք բերում մահկանացու կյանքի ընթացքում: Հարության շնորհիվ մենք գիտենք, որ այդ մահկանացու տկարությունները ժամանակավոր են:

Հարության հավաստիացումը նաև մեզ հզոր խթան է հանդիսանում մահկանացու կյանքում Աստուծո պատվիրանները պահելու համար» (*“Resurrection,” Ensign, May 2000, 15*):

- Ինչո՞ւ է կարևոր, որ մեզանից յուրաքանչյուրը վկայություն զարգացնի Հարության իրականության մասին: (Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալ սկզբունքը. **Կյանքի դժվարություններին և փորձություններին դիմակայելիս մենք կարող ենք հույս և հավերժական հեռանկար ունենալ Հիսուս Քրիստոսի հարության շնորհիվ:**)
- Ինչպե՞ս է Հարության հասկացողությունը հույս կամ ուրախություն բերել ձեզ կամ մեկին, ում դուք ճանաչում եք:

Կիսվեք Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյի (1873-1970) հետևյալ խոսքերով.



«Երկուսուկես տարի [Առաքյալները] զորացել և ոգեշնչվել էին Քրիստոսի ներկայությամբ: Բայց այժմ նա հեռացել էր: Նրանք մնացել էին մենակ, և ասես շփոթված և անզնական էին: ...

Ի՞նչը հանկարծ փոխեց այդ աշակերտներին՝ դարձնելով նրանց Հիսուս Քրիստոսի ավետարանի վստահ, անվախ, խիզախ քարոզիչներ: Դա հայտնությունն էր, որ Քրիստոսը վեր էր բարձրացել գերեզմանից» (*Teachings of Presidents of the Church: David O. McKay [2003], 62*):

Խնդրեք ուսանողներին մտածել, իրենց ծանոթներից ով կամրանա Հարության մասին ուղերձը լսելով: Խրախուսեք ուսանողներին մոտ ապագայում ժամանակ գտնել և այդ անձնավորության հետ կիսվել իրենց զգացմունքներով և վկայությամբ:

Ուսանողի ընթերցարան

- Դուկաս 24.1–48; Հովհաննես 20; Ա Կորնթացիս 15.1–29, 54–58:
- Dallin H. Oaks, “Resurrection,” *Ensign*, May 2000, 14–16.

Փրկիչը ծառայեց Իր «ուրիշ ոչխարներին»

Նախաբան

«Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը» հայտարարում է Փրկիչը «ծառայեց հնադարյան Ամերիկայի Իր «ուրիշ ոչխարներին» (Հովհաննես 10.16)» (Ensign կամ *Lhahhna*, ապր. 2000, 3, տես նաև 3 Նեփի

11.1–17): Մորմնի Գրքում ուսումնասիրելով Փրկչի ծառայության մասին, մենք սովորում ենք ինչպես է Նա ծառայում Իր աշակերտներին ամեն ազգի մեջ ձգտելով բարձրացնել և պաշտպանել նրանց մեկ առ մեկ:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Ronald A. Rasband, “One by One,” *Ensign*, Nov. 2000, 29–30.

Ուսուցանման առաջարկներ

Հովհաննես 10.14–16; 3 Նեփի 15.16–21; 16.1–3

Հիսուս Քրիստոսն ուսուցանեց Հրեաներին Իր «ուրիշ ոչխարներին» մասին

Ցուցադրեք գլոբուս կամ աշխարհի քարտեզ, և խնդրեք մի ուսանողի ցույց տալ, որտեղ է Հիսուս Քրիստոսն անցկացրել Իր ծառայությունը Հրեաների մեջ (որը մեր օրերի Իսրայելի պետությունն է Միջին Արևելքում): Խնդրեք ուսանողներին բացել Հովհաննես 10 գլուխը, արագ անցնել մի քանի հատվածներով, և գտնել ինչ ուսուցանեց Հիսուսն Իր և Իր հետևորդների հետ Իր հարաբերության մասին: Հանձնարարեք նրանց ներկայացնել իրենց գտածը: (Ուսանողները պետք է ներկայացնեն, որ Նա Բարի Հովիվն է, Նա ճանաչում է Իր ոչխարներին, նրանք ճանաչում են Նրա ձայնը, Նա հավաքում է նրանց Իր փարախը և այլն): Այնուհետև խնդրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Հովհաննես 10.14-16 հատվածը, իսկ դասարանին խնդրեք հետևել նրան: Հարցրեք ուսանողներին.



- Ի՞նչ ասաց Փրկիչը Իր «ուրիշ ոչխարներին» մասին:
- Ուվքե՞ր էին «ուրիշ ոչխարները», որոնց մասին ակնարկեց Հիսուսը:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ 3 Նեփի 15.16-21-ը: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ կարևոր ճշմարտություններ հայտնեց Հիսուսը Նեփիացիներին Իր «ուրիշ ոչխարներին» մասին: (Ճշմարտություններից մեկն այն է, որ **երբ Հիսուսը խոսեց Հրեաների հետ «ուրիշ ոչխարներին» մասին, Նա ի**

նկատի ունենալ մյուս մարդկանց, ովքեր հետևել էին Իրեն, այդ թվում՝ Ամերիկայի մայրցամաքում ապրող Լեքիի հետևորդներին։)

- Ինչո՞ւ Երուսաղեմի Հրեաները չգիտեին Նրա «ուրիշ ոչխարների» մասին:

Քարեզի վրա ցույց տվեք Ամերիկաները, և ապա հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ 3 Նեփի 16.1-3 և Սուսիա 27.30: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, հարցրեք.

- Ուրիշ որտե՞ղ Փրկիչն ասաց, որ կհայտնվի Իր ժողովրդին:
- Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ Փրկիչն այցելելու էր Իր «ոչխարներին» այլ ազգերի մեջ: (Պարզաբանեք, որ թեպետ Փրկիչն անձնապես այցելել է այլ ժողովրդի կամ ազգերի, հաճախ Փրկիչը հայտնվում է Սուրբ Հոգու ծառայությամբ: Ուսանողների համար շեշտեք, որ Իր ոչխարներին ծառայելով Հիսուսը օգնում էր իրագործել նրանց հավաքելու և Նրա ներկայությունն վերադարձնելու Իր Հոր ուխտը:)

Վկայեք, որ Հիսուս Քրիստոսը սիրում է մեզ բոլորիս և կհայտնվի բոլոր նրանց, ովքեր կհամարվեն Իր ոչխարների թվին: Նա ձգտում է հավաքել Երկնային Հոր բոլոր զավակներին, որտեղ էլ նրանք գտնվեն, և վերադարձնել Հոր ներկայություն:

3 Նեփի 11.8–17

Հիսուս Քրիստոսն անհատապես ծառայում է Իր հետևորդներին

Բարձրաձայն կարդացեք 3 Նեփի 11.8–17 և խնդրեք ուսանողներին հետևել ձեզ և պատկերացնել իբր գտնվում են Բաունթիֆուլ երկրի տաճարում: Կարդալուց հետո, հարցրեք ուսանողներին, թե ինչն է առավել տպավորվածություն գործել նրանց վրա այդ հատվածում տրված Փրկչի խոսքերի և գործերի վերաբերյալ: Անհրաժեշտության դեպքում ուղղեք հետևյալ հարցերից մի քանիսը կամ բոլորը.

- Ձեր կարծիքով, ի՞նչ կուզենար Հիսուս Քրիստոսը, որ այդ օրը տաճարում հավաքված բազմությունը սովորեր Իր մասին: (Մյուս ճշմարտությունների թվում ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալը. **Փրկիչը ծառայում է Իր հետևորդներին «մեկ առ մեկ»** [3 Նեփի 11.15; տես նաև 3 Նեփի 17.21]:)

Հաշվի առնելով որ բազմության մեջ 2 500 մարդ կար (տես 3 Նեփի 17.25), այն փաստը, որ Փրկիչը յուրաքանչյուրին թույլ տվեց շոշափել Իր կողերի, ձեռքերի և ոտքերի վերքերը, ի՞նչ է մեզ սովորեցնում մեր հանդեպ Նրա հոգատարության մասին:

- Ինչպե՞ս է 3 Նեփի 11.14 հատվածում տրված Հիսուս Քրիստոսի հրավերը վերաբերում մեզանից յուրաքանչյուրին այսօր:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս ձեզ վրա կազդեր այն, որ դուք կարողանայիք տեսնել և շոշափել Փրկչի վերքերը:

Որպեսզի պատկերավոր կերպով ցույց տաք, որ Տերը հետաքրքրված է մեզանից յուրաքանչյուրով, կարող եք կիսվել Յոթանասունի

Նախագահությունից Երեց Ռոնալդ Ա. Ռասբանդի կողմից պատմած հետևյալ փորձառությունը:



«Մեր միսիայի վերջին ամիսներին, ... մենք մի փորձառություն ունեցանք, որը մեկ անգամ ևս ուսուցանեց այն հիմնարար սկզբունքը, որ Աստված ճանաչում և սիրում է մեզանից յուրաքանչյուրին:

Երեց Նիլ Ա. Մաքսվելը Եկեղեցու ինչ-որ գործով գալիս էր Նյու Յորք Սիթի, և մեզ ասացին, որ նա նաև ցանկանում էր միսիայի համաժողով անցկացնել:

Մենք անչափ ուրախ էինք, որ հնարավորություն ունեինք լսելու Տիրոջ ընտրյալ ծառաներից մեկին: Ինձ խնդրեցին ժողովի բացման աղոթքն ասելու համար ընտրել մեր միսիոներներից մեկին: Ես կարող էի ուղղակի հանձնարարել միսիոներներից մեկին աղոթքն ասել, սակայն զգացի, որ պետք է մտածել և աղոթքով ընտրելի նրան, ում Տերը կհուշեր ինձ: Միսիոներների ցուցակն աչքի անցկացնելիս մի անուն առանձնացավ՝ Երեց Ջոզեֆ Ապիա Ակրայից, Գանա: Զգացի, որ Տերը ցանկանում էր, որ նա ասեր ժողովի աղոթքը:

Միսիայի համաժողովից առաջ Երեց Ապիայի հետ հերթական հարցազրույցն անցկացնելիս ես նրան ասացի, որ հուշում եմ ստացել, որ նա պետք է աղոթքն ասեր: Նրա աչքերը զարմանք և խոնարհություն էին արտահայտում, և նա սկսեց հոնգուր-հոնգուր արտասվել: Նրա պահվածքից զարմացած ես սկսեցի նրան հանգստացնել, որ ամեն ինչ կարգին է, եթե չի ցանկանում, կարող է չաղոթել, բայց նա ասաց, որ ուզում է աղոթել, և հուզմունքի պատճառով սերն է, որ տաժում է Երեց Մաքսվելի հանդեպ: Նա ինձ պատմեց, որ այդ Առաքյալը շատ հատուկ նշանակություն ունի Գանայի Սրբերի և իր ընտանիքի համար: Երեց Մաքսվելը կանչել էր իր հորը որպես շրջանի նախագահ Ակրայում և կնքել իր հորը և մորը Սուլթ Լեյքի Տաճարում:

Ես տեղյակ չեի այն ամենից, ինչ պատմեցի այդ միսիոների կամ նրա ընտանիքի մասին, սակայն Տերը գիտեր և ոգեշնչել էր այդ միսիայի նախագահին *մեկ* միսիոների համար ապահովել հիշողություն և վկայություն կերտող փորձառություն ողջ կյանքի համար» (*“One by One,” Ensign, Nov. 2000, 29–30*):

Ուսանողներին տվեք մի քանի ընթացք, որ վերանայեն 3 Նեփի 11.15–17-ը: Այնուհետև հարցրեք.

- Ե՞րբ եք դուք զգացել, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսն անձնապես ճանաչում են ձեզ:
- Ի՞նչ արեց բազմությունը տաճարում Փրկչի աստվածային բնույթի մասին անձնական, անհատական վկայություն ստանալուց հետո:

Հարցրեք ուսանողներին, նրանցից ով կցանկանա վկայություն բերել Փրկչի և այն սիրո մասին, որ զգացել են Նրանից: Վկայեք, որ թեպետ մենք ինքներս չենք դիպչել Փրկչի ձեռքերին և ոտքերին, Նա դեռևս ծառայում է մեզ անձնապես: Հորդորեք ուսանողներին մտածել, թե ինչպես կարող են շնորհակալություն հայտնել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին այն սիրո համար, որ անձնապես զգացել են Նրանց հանդեպ:

3 Նեփի 11-28

Փրկիչը ծառայեց Նեփիացիների մեջ

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ Փրկչի ծառայության այլ կարևոր կողմերը, նրանց մի քանի ընթացք տվեք որպեսզի աչքի

անցկացնեն գլխագրերը 3 Նեփի 11-28-ի համար: Խնդրեք դասարանին բացահայտել և գրի առնել Նեփիացիների մեջ Փրկչի կատարած ծառայության կարևոր տարրերը: Երբ ուսանողներն աշխատում են, շրջեք սենյակում և ստուգեք ինչ են կարողանում գտնել: Եթե ոմանք պատասխանը չեն գտնում, խրախուսեք նրանց նայել հետևյալ հատվածները (փակագծերում գրվածը միայն ուսուցչի օգտագործման համար է).

3 Նեփի 11.19-27 (քահանայության իշխանությունը շնորհեց Իր աշակերտներին)

3 Նեփի 11.31-40 (հայտարարեց Իր վարդապետությունը)

3 Նեփի 12-14 (ուսուցանեց Նոր Կտակարանի Իր նմանատիպ Լեռան քարոզը)

3 Նեփի 17.5-25 (բժշկեց շատերին և ծառայեց երեխաներին)

3 Նեփի 18.1-12 (սպասավորեց հաղորդությունը)

3 Նեփի 19.19-29 (աղոթեց Նեփիացի տասներկու աշակերտների համար)

3 Նեփի 20.24-29 (ուսուցանեց Իսրայելը հավաքելու Հոր ուխտի մասին)

3 Նեփի 23 (պատվիրեց, որ որոշակի սուրբ գրություններ ավելացվեն Նեփիացիների հիշատակարաններին)

3 Նեփի 27.1-10 (պատվիրեց, որ Եկեղեցին կոչվի Իր անունով)

Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, խնդրեք ուսանողներին կիսվել ինչ են գտել իրենց սուրբ գրություններում: Երբ ուսանողները բացատրում են իրենց բացահայտած Փրկչի ծառայության տարրերը, կարող եք հետևյալ հարցերն օգտագործելով դասարանային քննարկում ծավալել.

- Ի՞նչ ազդեցություն կարող էր թողնել Փրկչի այդ ծառայությունը մարդկանց վրա:
- Ինչո՞ւ է կարևոր հասկանալ և ուսումնասիրել, թե ինչ արեց Հիսուս Քրիստոսը որպես ղեկավար կամ ուսուցիչ:

Խնդրեք ուսանողներին մտածել հետևյալ հարցի շուրջ և գրի առնել իրենց մտքերը.

- Հաշվի առնելով այսօրվա դասի ընթացքում սովորածը, ձեր կարծիքով, ի՞նչ կցանկանար Երկնային Հայրը, որ դուք անեիք և Հիսուս Քրիստոսի օրինակին հետևելով ծառայեիք ձեր շուրջը գտնվողներին, այդ թվում՝ օտարներին, ընտանիքին, ընկերներին կամ նրանց, ում ծառայում եք ձեր Եկեղեցու կոչման բերումով:

Ավարտեք դասը՝ բերելով ձեր վկայությունը այսօրվա դասի ընթացքում ուսուցանված ճշմարտությունների վերաբերյալ:

Ուսանողի ընթերցարան

- Հովհաննես 10.11-16; 3 Նեփի 11.1-17; 15.16-21; 16.1-3:

- Ronald A. Rasband, “One by One,” *Ensign*, Nov. 2000, 29–30.

Հիսուս Զրիստոսը կազմակերպեց Իր Եկեղեցին

Նախաբան

Իր մահկանացու ծառայության երեք տարիների ընթացքում Հիսուս Զրիստոսը քահանայության բանալիներ շնորհեց Իր Տասներկու Առաքյալներին: Այդ բանալիներով Հիսուս Զրիստոսի Եկեղեցին «կառուցվեց առաքյալների և մարգարեների հիմքի վրա» (Եփեսացիս

2:20:) Այս դասը քննարկում է ինչպես, Իր Հարությունից հետո Փրկիչը շարունակեց առաջնորդել և ղեկավարել Իր Առաքյալներին և Իր Եկեղեցին Սուրբ Հոգու ծառայությամբ, որպեսզի նրանք օգնեն իրագործել ցրված Իսրայելը հավաքելու Աբրահամյան ուխտը:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Jeffrey R. Holland, “Prophets, Seers, and Revelators,” *Ensign or Liahona*, Nov. 2004, 6–9.

Ուսուցանման առաջարկներ

Մատթեոս 10.1–4; 16.19; 17.3–7; 18.18; Եփեսացիս 2.19–20; 4.11–14

Հիսուս Զրիստոսը կազմակերպեց Իր Եկեղեցին առաքյալների և մարգարեների հիմքի վրա

Ուսանողներին ցույց տվեք բանալի կամ բանալիների խումբ, և հարցրեք, ինչ ի նկատի ունենք, երբ ավետարանի ենթատեքստում օգտագործում ենք *բանալիներ* բառը: Հանձնարարեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ հետևյալ սուրբ գրությունների շղթայի հատվածները: Դասարանին հորդորեք հետևել նրան և բացահայտել այն հիմնական իրադարձությունը, որ յուրաքանչյուր հատված նկարագրում կամ վկայակոչում է:

Մատթեոս 10.1-4 (Առաքյալներ կանչվեցին և ձեռնադրվեցին)

Մատթեոս 16.19 (Քահանայության բանալիները խոստացվեցին Պետրոսին [տես Սուրբ գրքերի ուղեցույց, «Քահանայության բանալիները»; scriptures.lds.org]:)

Մատթեոս 17.3–7 («Փրկիչը, Մովսեսը և Եղիան լեռան վրա բանալիները շնորհեցին Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին, երբ նրանք փոխակերպվեցին նրա առաջ») [Եկեղեցու Նախագահների ուսմունքները. *Ջոզեֆ Սմիթ* [2007], 105]:)


Մատթեոս 18.18 (Երկրի վրա և երկնքում կապելու և արձակելու մասին վկայակոչումն ակնարկում է, որ քահանայության բանալիները խոստացվել են այլ Առաքյալներին):

(տես Boyd K. Packer, *The Holy Temple* [1980], 81–87):

Հարցրեք ուսանողներին.

- Ի՞նչ է նշանակում քահանայության բանալիներ:
- Ինչո՞ւ է կարևոր, որ Առաքյալները քահանայության բանալիներ կրեն:

Խնդրեք ուսանողներից մեկին կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթի 4. Օուփսի հետևյալ խոսքերը.



«Քահանայության բանալիները Աստծո կողմից քահանայություն [կրողներին] տրված իշխանություն է՝ առաջնորդելու, վերահսկելու և ղեկավարելու Երկրի վրա Իր քահանայության կիրառումը» [Handbook 2: Administering the Church [2010], 2.1.1]: Եկեղեցում կատարվող ամեն գործողություն կամ արարողություն կատարվում է ուղղակի կամ անուղղակի լիազորության ներքո նրա, ով կրում է տվյալ ֆունկցիայի բանալիները:

Ինչպես Երեց Մ. Ռասսել Բալլարդն է բացատրել. «Ովքեր ունեն քահանայության բանալիները ... բառացիորեն դա հնարավոր են դարձնում բոլոր նրանց համար, ովքեր հավատարմորեն ծառայում են իրենց ղեկավարության ներքո գործադրելով քահանայության իշխանությունը և հասու լինելով քահանայության գործությանը» "Men and Women in the Work of the Lord," *New Era*, Apr. 2014, 4; *Liahona*, Apr. 2014, 48] ("The Keys and Authority of the Priesthood," *Ensign or Liahona*, May 2014, 49):

- Ինչպե՞ս են քահանայության բանալիներն օրհնում Եկեղեցու անհատ անդամներին:

Հանձնարարեք մեկ ուսանողի բարձրաձայն կարդալ Եփեսացիս 2.19-20 հատվածը: Այնուհետև հարցրեք դասարանին.

- Ի՞նչ ենք սովորում այդ հատվածից Փրկչի Եկեղեցու հիմքի մասին: (Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալ ճշմարտությունը. **Հիսուս Քրիստոսը, ով հիմնական անկյունաքարն է, կազմակերպեց Իր Եկեղեցին առաքյալների և մարգարեների հիմքի վրա:**)
- Ի՞նչ դեր են կատարում հիմքը և անկյունաքարը շինության համար: (Հիմքը ամրություն և դիմացկունություն է ապահովում շինության համար: Հիմքում դրվող առաջին քարը՝ անկյունաքարը կողմնորոշիչ կետն է հանդիսանում հիմքի մյուս բոլոր քարերի տեղադրման համար և որոշում է ողջ կառույցի դիրքը: Այն նաև օգնում է պատերը ճիշտ տեղում կանգնեցնել:)

Հրավիրեք ուսանողներին իրենց կողքին նստած հարևանի հետ քննարկել հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս է Հիսուսը Քրիստոսը հանդիսանում Եկեղեցու «հիմնական անկյունաքարը»:
- Ի՞նչ է այս սուրբ գրությունն ուսուցանում մեզ Փրկչի (անկյունաքարի) և առաքյալների ու մարգարեների (հիմքի) միջև հարաբերության մասին:

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Եփեսացիս 4.11-14 հատվածը: Դասարանին խնդրեք հետևել նրան և ուշադրություն դարձնել այն պատճառներին, որ նշում է Պողոսը, թե ինչու մենք Սրբերին

առաջնորդող առաքյալների, մարգարեների և Եկեղեցու այլ ղեկավարների կարիքն ունենք:

Յուզադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Որպեսզի հիմնվեր այնպիսի մի Եկեղեցի, որը կարող էր շարունակել գործել Իր ղեկավարությամբ, անգամ երբ Նա հեռանար երկրից, Հիսուսը «ելավ սարը աղոթք անելու, և բոլոր գիշերն անցրեց աղոթք անելով դեպի Աստուած:

Եվ երբոր առավոտ եղավ, կանչեց իր աշակերտները, և ընտրեց նորանցից տասներկուսին, որոնց առաքյալ էլ անուանեց» [Դուկաս 6.12–13]:

Ավելի ուշ Պողոսը սովորեցնում է, որ Փրկիչը, իմանալով իր մահվան անխուսափելիության մասին, արեց սա տալով Եկեղեցուն «առաքյալների և մարգարեների հիմք»: [տես Եփեսացիս 2.19-20]: Եկեղեցու այդ եղբայրները և այլ պաշտոնյաներ ծառայում են հարություն առած Քրիստոսի ղեկավարությամբ:

Ինչո՞ւ: Այլ պատճառների թվում, «որ այլևս երեխայ չլինենք երերուած և տատանուած վարդապետության ամեն քամուցը մարդկանց խաբեբայությունովը որ մոլորեցնեն խաբեբայության խորամանկությունովը» [Եփեսացիս 4.14] («Prophets, Seers, and Revelators,” *Ensign or Liahona*, Nov. 2004, 6–7):

- Ինչպե՞ս են մեր օրերի առաքյալները և մարգարեները հիմնարար ուժ ու կայունություն ապահովելու Եկեղեցու համար:

Գործք 2.1–6, 14–26; 4.1–13, 18–21; Գործք 10.9–20, 25–28, 34–35, 44–48; Գործք 15.1–20

Հիսուս Քրիստոսը ղեկավարեց Առաքյալներին Սուրբ Հոգու միջոցով

Խնդրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Գործք 1.1-2 հատվածները: Այնուհետև հարցրեք դասարանին.

- Ըստ Դուկասի խոսքերի, ինչպե՞ս է հարություն առած Հիսուս Քրիստոսը երկինք համբարձվելուց հետո շարունակել ղեկավարել Իր Առաքյալներին: (Նա պատվիրաններ և հրահանգներ էր տալիս Սուրբ Հոգու միջոցով:)

Վկայեք, որ Իր Հարությունից և երկինք համբարձվելուց հետո Հիսուս Քրիստոսն առաջնորդում էր Առաքյալներին Սուրբ Հոգու ծառայության միջոցով: Որպեսզի օգնեք ուսանողներին տեսնել այդ առաջնորդության օրինակները, բաժանեք դասարանը չորս խմբի և տվեք նրանց հետևյալ առաջադրանքները.

- Ուսումնասիրեք Գործք 2.1–6, 14–26, և գտնեք ինչպես էր Սուրբ Հոգին օգնում Պետրոսին և Առաքյալներին Պենտեկոստի օրերին:
- Ուսումնասիրեք Գործք 4.1-13, 18-21, և գտնեք ինչպես էր Սուրբ Հոգին օգնում Պետրոսին պատասխանել Հրեա կառավարիչներին:

- Ուսումնասիրեք Գործք 10.9-20, 25-28, 34-35, 44-48, և գտեք ինչպես Եկեղեցում կարևոր փոփոխությունը հայտնվեց Պետրոսին:
- Ուսումնասիրեք Գործք 15.1-20, և գտեք ինչպես Սուրբ Հոգու միջոցով Հիսուս Քրիստոսի կողմից տրված հին հայտնությունն ազդեց Պետրոսի որոշման և այն աջակցության վրա, որ Եկեղեցու մյուս ղեկավարները ցուցաբերեցին Երուսաղեմի համաժողովին:

Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, յուրաքանչյուր խմբի անդամներին խնդրեք ամփոփել իրենց կարդացածը և բացատրել ինչպես Հիսուս Քրիստոսն առաջնորդեց Եկեղեցու ղեկավարներին Սուրբ Հոգու ծառայության միջոցով: Բացատրեք, որ Սուրբ Հոգին կատարում է Իր պարտականությունները Փրկչի ղեկավարությամբ (տես Հովհաննես 16.13-14):

Կարող եք օգտագործել 3 Նեփի 19.7-9, 19-20, որպեսզի ցույց տաք, որ Եկեղեցու ղեկավարները, որոնց մասին կարդում ենք Սորմոնի Գրքում, ևս ստացել են Սուրբ Հոգու օգնությունը իրենց ծառայության մեջ:

Ուսանողների հետ քննարկեք հետևյալ հարցը.

- Ինչպե՞ս կբացատրեիք ինչ-որ մեկին, ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ Իր մահից հետո Հիսուս Քրիստոսը շարունակեց առաջնորդել Իր Առաքյալներին:

Հիսուս Քրիստոսն այսօր ղեկավարում է Եկեղեցու ղեկավարներին Սուրբ Հոգու միջոցով

Ցուցադրեք Առաջին Նախագահությունից Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի և Նախագահ Հենրի Բ. Այրինգի հետևյալ խոսքերը (կամ բաժանեք դրանք դասարանին), և որևէ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ դրանք.



«Ես վկայում եմ ... որ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսն այս Եկեղեցու գլուխն է, որը կրում է Նրա անունը: Ես գիտեմ, որ այս կյանքի ամենաքաղցր զգացողությունը Նրա հուշումները զգալն է, երբ Նա ուղղորդում է մեզ Իր գործն առաջ տանելիս» (Thomas S. Monson, "Looking Back and Moving Forward," *Ensign or Liahona*, May 2008, 88):



«Հայտնությունը և ոգեշնչումը տրվեցին [Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին] իմ ներկայությամբ, ինչն ապացուցում է ինձ, որ Աստված պատվում է [քահանայության բանալիները, որ մարգարեն է կրում]: Ես ականատես եմ» (Henry B. Eyring, «Ճշմարիտ և կենդանի Եկեղեցի» *Ensign* կամ *Liahona*, մայիս 2008, 24):

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս են այդ խոսքերը պարզաբանում Նոր Կտակարանի Եկեղեցու և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միջև կապը: (Օգնեք ուսանողներին հասկանալ հետևյալ ճշմարտությունը. **Ճիշտ ինչպես Հիսուս Քրիստոսն էր ղեկավարում Իր Առաքյալներին Նոր Կտակարանի ժամանակներում, Նա ղեկավարում**

Է Եկեղեցու ղեկավարներին այսօր տարբեր միջոցներով, ներառյալ Սուրբ Հոգու սպասավորումը:)

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ խոսքերը: Դասարանին խնդրեք լսել և մտածել, թե ինչու պետք է Եկեղեցու ղեկավարները ղեկավարվեն Փրկչի կողմից:



«Եկեղեցու առաքելական և մարգարեական հիմքը պետք է օրհնի բոլոր ժամանակներում, սակայն *հատկապես* դժվարության կամ վտանգի պահերին, երբ մենք մեզ երեխաների պես ենք զգում, շփոթված և մոլորված, միգուցե մի փոքր վախեցած, երբ մարդկանց մեղսավոր ձեռքերը կամ դևի խորամանկությունները փորձում են շեղել, անհանգստացնել կամ խաբել: Այդպիսի ժամանակների համար է, ինչպիսին են նաև մեր օրերը, Առաջին Նախագահությունը և Տասներկուսի Քվորումը կանչված Աստծո կողմից և հաստատված ձեռք կողմից որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ, Եկեղեցու Նախագահի հետ, որը հաստատվում է *որպես* մարգարե, տեսանող և հայտնող, *ավագ* Առաքյալ, և միակ մարդը, որը լիազորված է օգտագործել Եկեղեցու հայտնության և վարչական բոլոր բանալիները: Նոր Կտակարանի ժամանակներում, Մորմոնի Գրքի ժամանակներում և մեր օրերում այդ պաշտոնյաները կազմում են ճշմարիտ Եկեղեցու հիմնաքարերը, որոնք տեղադրված են գլխավոր անկյունաքարի շուրջը և իրենց ուժը ստանում են նրանից, որն է՝ «մեր Թավիչ Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու վեմը» [Հելաման 5.12] («Մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2004, 7):

Շարունակեք՝ ուսանողներին ուղղելով հետևյալ հարցերը կամ դրանցից մի քանիսը.

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում, որ Եկեղեցու նախագահող պաշտոնյաները «տեղադրված են շուրջը» և ուժ են ստանում գլխավոր անկյունաքարից՝ Հիսուս Քրիստոսից:
- Ի՞նչ փաստեր եք տեսել կամ երբ եք զգացել, որ Փրկիչն ուղղորդում է նրանց, ովքեր նախագահում են Եկեղեցում այսօր:
- Ինչպե՞ս է գերագույն համաժողովին մասնակցելն օգնել ձեզ մոտենալ Քրիստոսին և կառուցել առաքյալների և մարգարեների հիմքի վրա:

Ցուցադրեք կամ գրատախտակին գրեք հետևյալ հարցերը: Հանձնարարեք ուսանողներին մտածել հետևյալ հարցերի շուրջ և ապա իրենց անձնական կամ սուրբ գրությունների ուսումնասիրման օրագրերում այդ ոլորտները բարելավելու ծրագիր կազմել:

Ի՞նչ կարող եմ անել Փրկչի մեր օրերի Առաքյալների մասին իմ վկայությունն ամրացնելու համար:

Ինչպե՞ս կարող եմ ավելի լավ ապավինել մեր օրերի մարգարեներին, որպեսզի հիմ նվեն Հիսուս Քրիստոսի վրա:

Ուսանողի ընթերցարան

- Մատթեոս 10.1–4; 16.19; 17.3–7; 18.18; Գործք 2.1–6, 14–26; 4.1–13, 18–21; Գործք 10.9–20, 25–28, 34–35, 44–48; Գործք 15.1–11, 13–19; Եփեսացիս 2.19–20; 4.11–14:
- Jeffrey R. Holland, “Prophets, Seers, and Revelators,” *Ensign or Liahona*, Nov. 2004, 6–9.

Հայրը և Որդին հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին

Նախաբան

«Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը» հոշակագիրը հայտարարում է. «Ներկայիս աշխարհում [Հիսուս Քրիստոսը] և Նրա Հայրը հայտնվեցին պատանի Ջոզեֆ Սմիթին՝ վաղուց խոստացված «Ժամանակների լիության տնտեսության» սկիզբը դնելով (Եփեսացիս 1.10)» (*Ensign* կամ *Liahona*, ապր. 2000, 3): Այս դասում

կքննարկվի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու վարդապետության մեջ Առաջին Տեսիլքի և այդ տեսիլքում Փրկչի կենտրոնական դերի վրա: Այս դասը նաև կշեշտի, որ Առաջին Տեսիլքն ուսումնասիրելը կամրացնի մեր հավատքն առ Հայր Աստված և Հիսուս Քրիստոս:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Gordon B. Hinckley, “The Marvelous Foundation of Our Faith,” *Ensign or Liahona*, Nov. 2002, 78–81.
- Dieter F. Uchtdorf, “The Fruits of the First Vision,” *Ensign or Liahona*, May 2005, 36–38.
- Neil L. Andersen, “Joseph Smith,” *Ensign or Liahona*, Nov. 2014, 28–31.

Ուսուցանման առաջարկներ

Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.14-17

Ջոզեֆ Սմիթը տեսնում է Հայր Աստծուն և Նրա Որդի Հիսուս Քրիստոսին

Հաստատեք այս դասի համատեքստը՝ արագ վերանայելով Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.5-12-ը: Այնուհետև խնդրեք ուսանողներին նմանեցնել այս հատվածը մեր օրերին՝ մատնանշելով Ջոզեֆ Սմիթի ճշմարտությունը փնտրելու փորձառության և մեր օրերում ճշմարտությունը փնտրողների փորձառությունների միջև նմանությունները: (Պատասխանները պետք է ընդգրկեն հետևյալը. Շատ վիճաբանություն կար տարբեր եկեղեցիների մեջ: Ջոզեֆ Սմիթը տրամաբանությամբ կամ բանականությամբ չէր կարողանում իմանալ, թե որ եկեղեցին էր ճշմարիտ: Կրոնական դեկավարները սուրբ գրությունների նույն հատվածները տարբեր կերպ էին մեկնաբանում:)

Հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.14-15 հատվածները: Այնուհետև հարցրեք դասարանին.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր Սատանան փորձում խանգարել Ջոզեֆ Սմիթի աղոթքին: (Պատասխանները կարող են ընդգրկել հետևյալը. Սատանան ճանաչում էր Ջոզեֆ Սմիթին դեռ նախաերկրային աշխարհից և գիտեր, որ Ջոզեֆի նախակարգված առաքելությունն էր՝

օգնել վերականգնել ճշմարտությունը երկրի վրա: Մատանան փորձում էր կանխարգելել դա:)

Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Ջոզեֆ Սմիթ— Պատմություն 1.16-17 հատվածը և գրի առնել Ջոզեֆ Սմիթի վկայությունից բխող վարդապետությունները: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, հանձնարարեք ուսանողներին կիսվել իրենց բացահայտած վարդապետություններով:

Կարող եք ցուցադրել Յոթանասունից Երեց Քրիստոֆել Գոլդենի հետևյալ խոսքերը.




«Մարգարեն գրել է. «Ես տեսա երկու Անձնավորություն, ինձնից վեր` օդի մեջ կանգնած, որոնց պայծառությունն ու փառքն ամեն նկարագրությունից վեր էր: Նրանցից մեկը խոսեց ինձ հետ, դիմելով ինձ անունով, և ասաց` մատնացույց անելով մյուսին. *Սա է Իմ Սիրելի Որդին: Լսի՛ր Նրան:* [Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.17]:

Պատանի Ջոզեֆի այս փորձառությունը, որին հետևեցին շատ ուրիշ տեսիլքներ և հայտնություններ, բացահայտում է, որ Աստված իրականում գոյություն ունի. Հայրը և Իր Որդին՝ Հիսուս Քրիստոսը, երկու առանձին և տարբեր էակներ են. մարդը ստեղծվել է Աստծո պատկերով. մեր Երկնային Հայրը բառացիորեն Հիսուս Քրիստոսի հայրն է. Աստված շարունակում է Իրեն հայտնի դարձնել մարդուն; Աստված միշտ մոտ է և հետքերը վաժմ է մեզանով. Նա պատասխանում է մեր աղոթքներին» (Հայրը և Որդին», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2013, 100):

- Ինչպե՞ս կնկարագրեիք Ջոզեֆ Սմիթի Առաջին տեսիլքի կարևորությունը Վերջին Օրերի Սրբերի աստվածաբանության մեջ: (Երբ ուսանողները պատասխանեն, շեշտեք հետևյալը. **Հոր և Որդու մասին Ջոզեֆ Սմիթի տեսիլքը շատ կարևոր ճշմարտություններ վերականգնեց Երկրի վրա:**)
- Ինչպե՞ս կնկարագրեիք Ջոզեֆ Սմիթի Առաջին տեսիլքի ամենախոնարհությունն այսօր ճշմարտություն փնտրողների հետ:

Ցուցադրեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի (1910–2008) հետևյալ խոսքերը, և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, մեր ողջ կարգավիճակը հիմնված է փառահեղ Առաջին Տեսիլքի վավերականության վրա: ... Այն, ինչի վրա հիմնում ենք մեր վարդապետությունը, այն, ինչ ուսուցանում ենք, այն, ինչով մենք ապրում ենք, ավելի շատ կարևորություն չունի, որքան այդ սկզբնական հայտարարությունը: Ես հաստատում եմ, որ Եթե Ջոզեֆ Սմիթը խոսել է Հայր Աստծո և Նրա սիրելի Որդու հետ, ապա մնացած բաները, որ նա ասել է, ճշմարիտ է: Դա այն սղնիսն է, որի վրա հիմնվում է այն դարպասը, որը տանում է դեպի փրկության ուղին և հավերժական կյանքը» («Ի՛նչ են մարդիկ հարցնում մեր մասին» *Ensign*, Nov. 1998, 71):

- Ինչո՞ւ է «որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, մեր ողջ կարգավիճակը» հիմնված փառահեղ Առաջին

Տեսիլքի վավերականության վրա: (Ուսանողները պետք է հասկանան, որ եթե Ջոզեֆ Սմիթի պատմությունը սուտ է, ուրեմն Հիսուս Քրիստոսի Եկեղեցու Վերականգնում տեղի չի ունեցել, իսկ, **եթե Ջոզեֆ Սմիթի պատմությունը ճիշտ է, ապա Վերականգնում տեղի է ունեցել և վերականգնված ավետարանը ճիշտ է:**)

- Ինչպե՞ս եք դուք Առաջին Տեսիլքի ճշմարտացիության մասին վկայություն ստացել:

Խնդրեք ուսանողներին մտածել, թե ինչ կարող են անել Առաջին Տեսիլքի ճշմարտացիության մասին նորոգված հաստատում փնտրելու համար: Կարող եք կիսվել Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ խոսքերով.



«Երիտասարդներին, ովքեր լսում են ինձ այսօր կամ հետագայում կկարդան այս խոսքերը, ես հատուկ կոչ եմ անում Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին անձնական վկայություն ձեռք բերել: ... Թանկագին Մարգարիտում կարդացեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի վկայությունը: ... Դա Ջոզեֆի վկայությունն է այն մասին, ինչ իրականում տեղի է ունեցել: Հաճախ կարդացեք այն: Կարող եք ձեր ձայնով ձայնագրել Ջոզեֆ Սմիթի վկայությունը, պարբերաբար լսել այն և կիսվել դրանով ընկերների հետ: Մարգարեի վկայությունը ձեր ձայնով լսելը կօգնի բերել վկայությունը, որ դուք փնտրում եք» («Ջոզեֆ Սմիթ», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2014, 30):

Նախքան շարունակելը, բացատրեք ուսանողներին, որ այս տնտեսության մեջ Փրկիչը միայն Առաջին Տեսիլքի ժամանակ չի հայտնվել Ջոզեֆ Սմիթին և մյուսներին: Օրինակ, Վերականգնման վաղ օրերին Հիսուս Քրիստոսը մի քանի անգամ հայտնվեց Ջոզեֆ Սմիթին և Եկեղեցու այլ ղեկավարներին (օրինակ, տես ՎեՌ 76.22-24, 110.1-10):

Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.17-20

«Սա է իմ Սիրելի Որդին: Լսի՛ր Նրան»:

Ուսանողներին հանձնարարեք վերանայել Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.17, և հարցրեք նրանց, թե ինչ արեց Երկնային Հայրը, երբ հայտնվեց Ջոզեֆ Սմիթին: (Նա ներկայացրեց Իր Որդուն:) Կարող եք նաև հարցնել ուսանողներին, թե արդյոք մտածել են ինչու է կարևոր Առաջին Տեսիլքի այս առանձնահատուկ մասը: Ձեր ուսանողների համար կարդացեք Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի (1876–1972) հետևյալ միտքը.



«Անկումից ի վեր ողջ հայտնությունը եկել է Հիսուս Քրիստոսի միջոցով: ... Անկումից ի վեր Հայրը երբեք մարդու հետ անմիջականորեն և անձնապես չի շփվել, և նա հայտնվել է միայն Որդուն ներկայացնելիս և Նրա մասին վկայելիս» (*Doctrines of Salvation*, comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 1:27):

Երբ Ադամը Եդեմի պարտեզում էր, նա մեր Հավերժական Հայր Աստծո ներկայության մեջ էր գտնվում: Անկումից հետո նա արտաքսվեց Հոր ներկայությունից: ... Այնուհետև, սուրբ գրությունների համաձայն, Հիսուս Քրիստոսը դարձավ Ադամի և Նրա

գավակների Բարեխոսը [տես Ա Նովիանսեն 2.1; Վևու 29.5; 110.4], և Նաս Նրանց Միջնորդը [Ա Տիմոթեոս 2.5; Եբրայեցիս 9.15] կանգնելով մարդկանց և Հավերժական Հոր միջև, աղերսելով մեզ համար: Այդ պահից ի վեր Հիսուս Քրիստոսն առաջնորդեց իր ծառաներին Երկրի վրա և մարգարեների հայտնություն ու առաջնորդություն տվեց: Եթե Ջոզեֆ Սմիթը խաբեբա լիներ ... Երբեք չէր հայտարարի, որ Հայրը ներկայացրեց Որդուն, և խնդրեց նրան իր հարցն ուղղել Որդուն, և Որդին էր, որ պատասխանեց» (*Answers to Gospel Questions*, comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. [1957–66], 3:58):

- Առաջին տեսիլքում, երբ Ջոզեֆ Սմիթը հարցրեց, թե որ աղանդն էր ճշմարիտ, այդ Անձնավորություններից ո՞ր մեկը պատասխանեց նրա հարցին:
- Ըստ Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի, ինչո՞ւ Ջոզեֆ Սմիթը կարևոր համարեց արձանագրել, որ Երկնային Հայրը ներկայացրեց Հիսուս Քրիստոսին և այդ ժամանակ Հիսուս Քրիստոսը պատասխանեց Ջոզեֆի հարցերին: (Ուսանողները պետք է հասկանան հետևյալ ճշմարտությունը. **Ադամի և Եվայի անկումից ի վեր, բոլոր հայտնությունները եկել են Հիսուս Քրիստոսի միջոցով:**)
- Ինչպե՞ս է հայտնության այս եղանակը հասկանալն օգնում ձեզ վստահել Մարգարեի տեսիլքի մասին պատմության ճշմարտացիությանը:

Առաջին տեսիլքն օգնում է մեզ առ Հիսուս Քրիստոս հավատք զարգացնել:

Հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուիլդորֆի հետևյալ խոսքերը.



«Այսպես է Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքն օրհնում մեր անձնական կյանքը, մեր ընտանիքի կյանքը և, ի վերջո, ողջ մարդկային ընտանիքը, և մենք սկսում ենք հավատալ Հիսուս Քրիստոսին՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթի վկայության շնորհիվ: Մարդկության պատմության ընթացքում մարգարեներն ու առաքյալները Ջոզեֆի նման աստվածային հայտնություններ են ունեցել: ...

... Բոլոր այդ հին ու նոր հայտնությունները, ամեն արդարակեցության և հույսի աստվածային աղբյուրին հավատացողներին տանում են դեպի Աստված՝ մեր Երկնային Հայրը, և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը: ...

Մարգարե Ջոզեֆի անձնական վկայության և Առաջին Տեսիլքի իրականության հանդեպ մեր հավատքի, խորը և անկեղծ ուսումնասիրության և աղոթքի միջոցով մենք կօրհնվենք հաստատուն հավատքով առ աշխարհի Փրկիչը, ով խոսեց Ջոզեֆի հետ «հազար ութ հարյուրքսան թվականի վաղ գարնան գեղեցիկ ու պարզ օրվա մի առավոտ» (Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.14) («The Fruits of the First Vision,” *Ensign or Liahona*, May 2005, 38):

- Ըստ Նախագահ Ուիլդորֆի, ի՞նչ օրհնություն է գալիս Առաջին Տեսիլքի մասին իմանալու արդյունքում: (Թեպետ ուսանողները կարող են տարբեր բառերով պատասխանել, նրանք պետք է ներկայացնեն հետևյալ սկզբունքը. **Առաջին Տեսիլքի մասին իմանալով մենք ավելի**

**մեծ հավատք ենք զարգացնում առ Հայր Աստվածը և Նրա Որդին՝
Հիսուս Քրիստոսը։)**

- Ինչպե՞ս է Ջոզեֆ Մմիթին կատարած Հոր և Որդու այցելության մասին սովորելը խորացնում Նրանց հանդեպ մեր հավատքը:
(Պատասխանները կարող են ընդգրկել հետևյալը՝ Առաջին տեսիլքը ևս մեկ վկայություն է, որ Նրանք ապրում են. դա կրկին անգամ հավաստիացնում է մեզ, որ Նրանք հետաքրքրված են մարդու գործերով. դա ապացուցում է, որ Նրանք լսում և պատասխանում են աղոթքներին։)
- Ի՞նչ դեր է խաղում Առաջին տեսիլքը Վերականգնման մասին ձեր վկայության մեջ:
- Ի՞նչ կարող եք անել առաջիկա շաբաթվա ընթացքում, որպեսզի Առաջին Տեսիլքի վերաբերյալ ձեր վկայությունն ամրացնեք կամ հաստատեք:

Ուսանողներին հորդորեք առաջիկա օրերին որոշ ժամանակ հատկացնել՝ խորհելով և աղոթելով Առաջին տեսիլքի մասին: Հանձնարարեք նրանց գրի առնել Ջոզեֆ Մմիթի սուրբ փորձառության մասին իրենց մտքերն ու զգացմունքները:

Ուսանողի ընթերցարան

- Ջոզեֆ Մմիթ-Պատմություն 1.5-26:
- Dieter F. Uchtdorf, “The Fruits of the First Vision,” *Ensign or Liahona*, May 2005, 36–38.

Փրկիչը վերականգնեց Իր Զահանայությունը, Եկեղեցին և Ավետարանը

Նախաբան

Մեր օրերի մարգարեները վկայել են. «Մենք ամենայն լրջությամբ վկայում ենք, որ [Հիսուս Քրիստոսի] քահանայությունը և Նրա Եկեղեցին վերականգնվել են Երկրի Երեսին» («Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Ensign* կամ *Liahona*, ապր. 2000, 3): Այս դասն ուսուցանելիս օգնեք ուսանողներին հասկանալ, որ

որպես Իր հավերժական ծառայության մաս Փրկիչը ղեկավարեց ավետարանի և Իր Եկեղեցու Վերականգնումը Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Վարդապետություն և Ուխտերի ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հիսուս Քրիստոսը ղեկավարում է Աստծո արքայությունը Երկրի վրա:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- James E. Faust, “The Restoration of All Things,” *Ensign or Liahona*, May 2006, 61–62, 67–68.
- Tad R. Callister, “What Is the Blueprint of Christ’s Church?” [Church Educational System devotional for young adults, Jan. 12, 2014]; LDS.org):

Ուսուցանման առաջարկներ

Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.18-20

Հիսուս Քրիստոսը վերականգնեց Իր Եկեղեցին Վերջին Օրերին

Սկսեք դասը խնդրելով ուսանողներին թվարկել կարևոր հարցեր, որ մարդը կարող է ուղղել Երկնային Հորը: Մի քանի պատասխաններից հետո, հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.18-19 հատվածը: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ հարցրեց Ջոզեֆ Սմիթը Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին:
- Ինչպե՞ս պատասխանեց Հիսուս Քրիստոսը: (Կարող եք նշել, որ հատված 20-ում գրված է, որ Փրկիչը կրկին հաստատեց Իր պատասխանը. «Նա կրկին արգելեց ինձ միանալ դրանցից որևէ մեկին»:)
- Եթե բոլոր եկեղեցիները «սխալ» էին, ի՞նչ պետք է տեղի ունենար, որպեսզի Տիրոջ Եկեղեցին լիներ Երկրի վրա: (Պետք է լիներ Տիրոջ Նոր Կտակարանի Եկեղեցու վերականգնումը:

Ցուցադրեք Առաջին Նախագահությունից Նախագահ Ջեյմս Է. Ֆաուստի (1920-2007) հետևյալ խոսքերը, և որևէ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ այն.



«Մենք հավատում ենք, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին այն սկզբնական եկեղեցու վերականգնումն է, որը հիմնվել է Հիսուս Քրիստոսի կողմից և կառուցվել «առաքյալների և մարգարեների հիմքի վրա, Հիսուս Քրիստոսը լինելով դրա հիմնական անկյունաքարը» [Եփեսացիս 2.20]: Այն չի ժխտում ոչ մի այլ եկեղեցի» (“The Restoration of All Things,” *Ensign or Liahona*, May 2006, 68):

- Ի՞նչ է նշանակում, երբ ասում ենք, որ **Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին վերականգնված Փրկչի Եկեղեցին է, որ հիմնվել էր Նոր Կտակարանի ժամանակներում:**

Ուսանողներին ասեք, որ ժամանակը չի բավարարում դասարանում համեմատելու Տիրոջ նախնական (այսինքն՝ նախատիպ) Եկեղեցու յուրաքանչյուր տարրը վերականգնված Եկեղեցու հետ: Ինչևէ, ցանկության դեպքում խնդրեք ուսանողներին վերանայել Ղուկաս 6.13; 10.1; Գործք 14.23; Եփեսացիս 4.11; Փիլիպպեցիս 1.1; և Տիտոս 1.5 հատվածները և գտեք նախնական Եկեղեցու կազմակերպչական տարրերը, որոնք նաև գոյություն ունեն Եկեղեցում այսօր: (Լրացուցիչ օրինակների համար՝ խրախուսեք ուսանողներին կարդալ Կիրակնօրյա դպրոցի գերագույն նախագահ Եղբայր Թադ Ռ. Քալիսթերի “What Is the Blueprint of Christ’s Church?” ելույթը, որը տրված է այս դասի Ուսանողի ընթերցարան բաժնում:) Ցուցադրեք Եղբայր Քալիսթերի հետևյալ խոսքերը, և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Եթե մեկը ցանկանա համեմատել Քրիստոսի սկզբնական Եկեղեցին ... այսօր աշխարհում գոյություն ունեցող եկեղեցիների հետ, նա կգտնի, որ իր բոլոր կետերով, կազմակերպություններով, ուսմունքներով, արարողություններով, պտուղներով և հատկություններով այն միայն համընկնում է մեկի՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հետ» (“What Is the Blueprint of Christ’s Church?” [Church Educational System devotional for young adults, Jan. 12, 2014]; LDS.org):

- Ինչո՞ւ է կարևոր վկայություն ունենալ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Փրկչի նախատիպ Եկեղեցու վերականգնումն է: (Նման վկայությունն օգնում է մեզ հասկանալ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Տիրոջ ճշմարիտ Եկեղեցին է Երկրի վրա այսօր: Քանի որ Տերը նույնն է երեկ, այսօր և հավիտյան, մենք պետք է ակնկալենք, որ Նրա Եկեղեցին պետք է պարունակի նույն տարրերը բոլոր տնտեսություններում:)

Վարդապետություն և Ուխտեր 1.17, 38; 18.34–35

Հիսուս Քրիստոսը ղեկավարում է Վերականգնման աշխատանքը

Ուսանողներին հանձնարարեք վերանայել Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.17 հատվածը, և գտնել, թե Երկնային Հայրը ինչ պատվիրեց Ջոզեֆ Սմիթին (լսել Իր Որդուն): Այնուհետև բարձրաձայն կարդացեք Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի (1876–1972) հետևյալ խոսքերը.



«Անկումից ի վեր բոլոր հայտնությունները եկել են Հիսուս Քրիստոսի միջոցով» (*Doctrines of Salvation*, comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 1:27):

Այդ ճշմարտությունը լուսաբանելու համար հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 1.17, 38, 18.34–35 մտքում ունենալով հետևյալ հարցը. Ինչպե՞ս են այդ հատվածներն օգնում մեզ ավելի լավ հասկանալ ճշմարտությունը, որ **Հիսուս Քրիստոսն առաջնորդում և ղեկավարում է Իր Եկեղեցին հայտնության միջոցով**: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով:

Ցուցադրեք Յոթանասունից Երեց Գերի Ջ. Քոլմանի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Վարդապետություն և Ուխտերը Հիսուս Քրիստոսի ծառայության մասին մարգարեների և Աստծո ծառաների միջոցով Աստծո բոլոր զավակներին տրված վերջին օրերի վկայությունն է, որը լուսաբանում է այսօր Եկեղեցուն և նրա անդամներին ուղղորդող հայտնության աստվածային օրինակը» (“You Shall Have My Word: The Personal Ministry of Jesus Christ in the Restoration,” in *You Shall Have My Word: Exploring the Text of the Doctrine and Covenants*, ed. Scott C. Esplin, Richard O. Cowan, and Rachel Cope, The 41st Annual Brigham Young University Sidney B. Sperry Symposium [2012], 3):

- Ըստ Երեց Քոլմանի, ինչո՞ւ է Վարդապետություն և Ուխտերը կարևոր Եկեղեցու համար այսօր: (Դա Հիսուսի ծառայության մասին վերջին օրերի մի վկայություն է, որը ցույց է տալիս, թե ինչպե՞ս է հայտնությունն առաջնորդում Եկեղեցին այսօր:)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր, որ Երկնային Հոր զավակները հասկանան Երեց Քոլմանի ուսուցանած ճշմարտությունը:



Վկայեք, որ Վերականգնման ընթացքում Փրկչի երևումները, հայտնությունները և քահանայության գորությունների և բանալիների շնորհումը Նրա հավերժական ծառայության էական մասն են կազմում: Որպեսզի օգնեք ուսանողներին առավել հստակ տեսնել, թե ինչպե՞ս էր վերջին օրերին Փրկիչը ղեկավարում հավիտենական ավետարանի և Իր Եկեղեցու Վերականգնումը, ցուցադրեք հետևյալ աղյուսակը կամ թերթիկի տեսքով այն բաժանեք ուսանողներին (մի ներառեք փակագծերում գրված արտահայտությունները).

Փրկիչը ղեկավարում է վերականգնման աշխատանքը

Եկեղեցու վարդապետություններ	Եկեղեցու արարողություններ	Եկեղեցու ղեկավարություն
Վարդապետություն և Ուխտեր 76 բաժնի խորագիր և ամփոփում (փառքի թագավորություններ, կյանք մահից հետո)	Վարդապետություն և Ուխտեր 20.37, 72-74 (Մկրտության համար պահանջները և ճիշտ ձևը)	Վարդապետություն և Ուխտեր 20.38-59 (Քահանայության պաշտոնների պարտականությունները)
Վարդապետություն և Ուխտեր 84.33-39 (Քահանայության երդում և ուխտ)	Վարդապետություն և Ուխտեր 20.70 (Երեխաների օրհնություն)	Վարդապետություն և Ուխտեր 20.61-62 (Եկեղեցու համաժողովների կանոնավոր անցկացումը)
Վարդապետություն և Ուխտեր 128.1, 15, 18 (Փոխանորդների միջոցով մկրտություն մահացածների համար)	Վարդապետություն և Ուխտեր 20.75-77, 79 (Հաղորդության սպասավորումը)	Վարդապետություն և Ուխտեր 26.2 (Ընդհանուր համաձայնություն)
Վարդապետություն և Ուխտեր 131.1-4 (Սելեստիալ ամուսնության անհրաժեշտությունը վեհացման համար)	Վարդապետություն և Ուխտեր 124.33-39 (Տաճարային արարողություններ)	Վարդապետություն և Ուխտեր 107.22-27, 33-35, 64-67, 85-91 (Եկեղեցու ղեկավարների պարտականությունները)
Վարդապետություն և Ուխտեր 137.6-10; 138.29-35 (Ովքեր մահանում են առանց ճշմարտության մասին գիտելիքի, փրկագնավելու հնարավորություն կունենան)	Վարդապետություն և Ուխտեր 132.7, 15-20 (Հավերժական ամուսնություն)	

Դասարանը բաժանեք երեք խմբի և յուրաքանչյուրին ուսումնասիրելու համար տվեք մեկ սյունակ: Յուրաքանչյուր ուսանողի հանձնարարեք կարդալ իր տրված սյունակից երեք կամ չորս հատված և պատրաստվել պատասխանելու հետևյալ հարցերին.

- Ի՞նչ Փրկիչը վերականգնեց Երկրի վրա Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով:
- Ինչո՞ւ են կարևոր ձեր հայտնաբերած սկզբունքները կամ գործելակերպերը:

Մի քանի բույս տրամադրելուց հետո, խնդրեք ուսանողներին կիսվել իրենց գտածով: Երբ նրանք կկիսվեն իրենց մտքերով, շեշտեք, որ **Հիսուս Քրիստոսը ղեկավարում է Վերականգնման աշխատանքը:** Անհրաժեշտության դեպքում, ուղղեք հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ Հիսուսը շարունակում է ղեկավարել Իր Եկեղեցու աշխատանքը և նրա ղեկավարներին:
- Ի՞նչ փորձառություններ են օգնել ձեզ իմանալ, որ այս Եկեղեցին Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է:

Եթե ժամանակը թույլ է տալիս, որևէ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 1.30-ը: Այնուհետև հարցրեք դասարանին.

- Հաշվի առնելով այն, ինչ մենք քննարկեցինք այսօր, ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցին «միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին ողջ երկրի երեսին»: (Որովհետև երկրի վրա սա միակ եկեղեցին է, որ աստվածային իշխանություն ունի ուսուցանելու Հիսուս Քրիստոսի ճշմարիտ ավետարանը, սպասավորու փրկության անհրաժեշտ արարողությունները և ստանալու շարունակական հայտնություն Տիրոջ կողմից նշանակված ծառաների միջոցով:)

Ավարտելով դասը խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 76.40–42 հատվածը, իսկ դասարանը թող հետևի նրան: Վկայեք, որ այդ հատվածները Փրկչի հավերժական ծառայության ամփոփումն են: Հորդորեք ուսանողներին մտածել, թե ինչ կարող են անել, որպեսզի պատվեն Հիսուս Քրիստոսին, ով Քավություն կատարեց, որպեսզի մենք կարողանանք սրբագործվել, մաքրագործվել և փրկվել Հոր թագավորությունում:

Ուսանողի ընթերցարան

- Վարդապետություն և Ուխտեր 1.17, 38; 18:33–35; Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17–20:
- Tad R. Callister, “What Is the Blueprint of Christ’s Church?” [Church Educational System devotional for young adults, Jan. 12, 2014]; LDS.org):

Նա ապրում է

Նախաբան

Փրկիչ Հիսուս Քրիստոսի մասին Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտարարել է. «Եվ արդ, բազմաթիվ վկայություններից հետո, որ տրվել են նրա մասին, սա է վկայությունը, ամենավերջինը, որ մենք տալիս ենք նրա մասին. Որ, նա ապրո՛ւմ է»: (ՎևՈւ 76.22): Այս դասի նպատակն է օգնել ուսանողներին հասկանալ, որ Փրկիչն ապրում է այսօր, որ


Նա մեր Բարեխոսն է Հոր առաջ, և որ առ Նա հավատքով մենք կարող ենք դառնալ «ծնված որդիներն ու դուստրերն Աստծո» (ՎևՈւ 76.24; տես նաև Գաղատացիս 3.26):

Ուսուցանման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտեր 25.1; 76.19–24; 110.1–4

Հիսուս Քրիստոսն ապրում է այսօր

Բարձրաձայն կարդացեք Նախագահ Լորենցո Մնոուի (1814–1901) հետ տեղի ունեցած իրադարձության մասին հետևյալ պատմությունը, որը պատմել է նրա թոռնուհին՝ Էլիս Փոնդը.



«Մեծ միջանցքում, որը տանում էր դեպի սելեստիալ սենյակ, ես քայլում էի պապիկից մի քանի քայլ առաջ, երբ նա կանգ առավ և ասաց. «Մի թույն սպասիր, Ալլի, ես ուզում եմ մի բան պատմել քեզ: Սա հենց այն տեղն է, որտեղ Տեր Հիսուս Քրիստոսը հայտնվեց ինձ, երբ մահացել էր Նախագահ Վուդրուֆը: Նա պատվիրեց ինձ անմիջապես գնալ և ընդունել Եկեղեցու Առաջին Նախագահությունը և ոչ թե սպասել, ինչպես արվել էր նախորդ Նախագահների մահվան ժամանակ, և որ ես պետք է հաջորդեի Նախագահ Վուդրուֆին»:

Հետո պապիկը մի քայլ էլ մոտեցավ և, իր ձախ ձեռքը պարզելով, ասաց. «Նա կանգնած էր հենց այստեղ, հատակից մոտ երեք ոտնաչափ վերև: Կարծես Նա կանգնած էր մաքուր ոսկե տախտակի վրա»:

Պապիկը պատմեց ինձ, թե ինչ փառահեղ անձնավորություն է Փրկիչը և նկարագրեց Նրա ձեռքերը, ոտքերը, դեմքի արտահայտությունը և գեղեցիկ ճերմակ թիկնոց ը, որից այնպիսի փառավոր ճերմակության և պայծառության լույս էր ճառագում, որ նա հազիվ էր կարողանում նայել Նրան:

Այնուհետև [պապիկը] մեկ քայլ էլ մոտեցավ և դրեց իր աջ ձեռքը իմ գլխին ու ասաց.

«Ուրեմն, թոռնիկս, ես կամենում եմ, որ դու հիշես, որ սա քո պապիկի վկայությունն է, որը նա պատմել է քեզ իր սեփական շուրթերով, որ նա իսկապես տեսել է Փրկչին, այստեղ Տաճարում, և խոսել է նրա հետ դեմ առ դեմ» [Alice Pond, in LeRoi C. Snow, "An Experience of My Father's," *Improvement Era*, Sept. 1933, 677]" (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. *Լորենցո Սնու* [2012], 238–39):

- Ի՞նչ մտքեր եք ունենում այս պատմությունը լսելիս:

Ուսանողներին ասեք, որ Վարդապետություն և Ուխտերը պարունակում է վերջին օրերին մարդկանց Փրկչի հայտնվելու մասին երկու պատմություն՝ մեկը Նրա հայտնվելն էր Ջոզեֆ Սմիթին և Միդնի Ռիգբունին Հայրամում, Օհայո (տես ՎևՈւ 76), իսկ մյուսը Նրա հայտնվելն

Էր Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քատլերիին Կիրթլանդի Տաճարում (տես ՎեՆՈ 110): Գրատախտակին գրեք հետևյալ երեք հարցերը.

Ի՞նչ նրանք տեսան: Ի՞նչ նրանք լսեցին: Ի՞նչ նրանք իմացան:

Դասարանին խնդրեք սուրբ գրություններում գտնել այդ հարցերի պատասխանները: Դասարանի մի կեսին հանձնարարեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 76.19–24 հատվածը, իսկ մյուս կեսին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 110.1-4: Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք ներկայացնել իրենց գտածը: Նրանց պատասխանները գրեք գրատախտակին՝ համապատասխան հարցի տակ: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ են այս հատվածներն ուսուցանում Հիսուս Քրիստոսի մասին: (Ուսանողները կարող են ներկայացնել տարբեր վարդապետություններ, այդ թվում հետևյալը. **Հիսուս Քրիստոսը կենդանի, փառավորված էակ է. մեր Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը առանձին անձնավորություններ են. առ Հիսուս Քրիստոս հավատքի և Նրա ավետարանն ընդունելու շնորհիվ մենք դառնում ենք ծնված որդիներն ու դուստրերն Աստծո. և Հիսուսը Քրիստոսը մեր Բարեխոսն է Հոր առաջ:**)

Ուսանողներին հնարավորություն տվեք կիսվել այդ վարդապետությունների մասին իրենց վկայություններով՝ ուղղելով հետևյալ հարցերը.

- Այդ ճշմարտություններից որո՞նք են հատկապես նշանակալից ձեզ համար: Ինչո՞ւ:

Ուսանողներին ասեք, որ դասի մնացած մասը կկենտրոնանա երկու վարդապետությունների վրա, որոնք գտնվում են այն հատվածներում, որ իրենք կարդացին. «Հիսուս Քրիստոսը մեր Բարեխոսն է Հոր առաջ» և «Առ Հիսուս Քրիստոս հավատքի և Նրա ավետարանն ընդունելու շնորհիվ մենք դառնում ենք ծնված որդիներն ու դուստրերն Աստծո»:

Վարդապետություն և Ուխտեր 29.5; 38.4; 45.3–5; Ալմա 33.3–11

Հիսուս Քրիստոսը մեր Բարեխոսն է Հոր առաջ

Գրատախտակին գրեք *բարեխոս* բառը և ուսանողներին հարցրեք, թե արդյոք գիտեն ինչ է նշանակում այն: (Անհրաժեշտության դեպքում սահմանեք *բարեխոս* բառը, բացատրելով, որ դա այն մարդն է, ով խոսում կամ խնդրում է հոգուտ ինչ-որ մեկի: Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 110.4 հատվածը: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս է Փրկիչը ծառայում որպես բարեխոս: (Երբ ուսանողները կիսվեն իրենց մտքերով, առիթն օգտագործեք վկայելու համար, որ **Հիսուս Քրիստոսը մեր Բարեխոսն է Հոր առաջ:**)

Ցուցադրեք կամ գրատախտակին գրեք հետևյալ հարցերը.

Ի՞նչն է Հիսուս Քրիստոսին որակում լինելու մեր Բարեխոսը:

Ինչի՞ վրա է Հիսուսն ուղղում Հոր ուշադրությունը, երբ Նա աղերսում է մեզ համար:

Խնդրեք ուսանողներին աշխատել զույգերով և հարցերի պատասխանները գտնել Եբրայեցիս 4.15; Վարդապետություն և Ուխտեր 29.5; 38.4; և 45.3–5 հատվածներում: Երբ ուսանողները կարդան այդ հատվածները և քննարկեն գրատախտակի վրա գրված հարցերը, մի քանի կամավորների խնդրեք դասարանի հետ կիսվել իրենց պատասխաններով:

Երբ ուսանողները բացատրեն, ինչ են սովորել, հավաստիացեք, որ նրանք հասկանում են հետևյալը. **Հիսուս Քրիստոսն արժանացել է խնդրելու մեզ համար Հոր առաջ, քանի որ Նա կատարելապես արդար է և այդպիսով կարող է բավարարել արդարադատության պահանջները մեր մեղքերի համար: Նա արժանացել է աղերսելու մեզ համար Իր արժանիքների, Իր կատարյալ կյանքի և մեզ համար հեղած Իր արյան շնորհիվ: Մենք չունենք արժանիքներ, որոնք թույլ կտան, որ մենք աղերսենք մեզ համար (տես Ալմա 22.14):**

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 45.3-5, իսկ դասարանին խնդրեք հետևել նրան: Բացատրեք, որ Երկնային Հոր աշխատանք և փառքը Նրա զավակների վեհացումն է: Ուստի, երբ Հիսուս բարեխոսում է նրանց համար, ովքեր հավատում են Իրեն, Նա օգնում է իրագործել Հոր աշխատանքը միևնույն ժամանակ փառք տալով Հորը (տես նաև Մատթեոս 10.32):


Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ որպես մեր Բարեխոս Հիսուս Քրիստոսի աշխատանքը, խնդրեք նրանց կարդալ Ալմա 33.3-10-ում տրված Ձեռնոսի խոսքերը: Խնդրեք նրանց գտնել արտահայտությունները, որ Ձեռնոսը կրկնում էր («Դու ողորմած էիր» և «Դու լսեցիր ինձ» արտահայտությունների տարբերակները): Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ սովորեց Ձեռնոսը Աստծո մասին անկեղծ աղոթքների շնորհիվ:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ալմա 33.11 հատվածը: Այնուհետև հարցրեք դասարանին.

- Ո՞ւմ էր Ձեռնոսը երախտիքի խոսք ասում Երկնային Հոր առատաձեռն ողորմածության համար:
- Ինչո՞ւ է Հայր Աստվածը Իր դատաստանները մեկդի դարձնում մեզանից:
- Ինչպե՞ս են Ձեռնոսի ուսմունքներն օգնում ձեզ ավելի խորը հասկանալ և գնահատել Փրկչի դերը որպես Բարեխոս ձեր անձնական կյանքում:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թող Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Ինձ համար մեծ կարևորություն ունի այն, որ ես, ցանկացած պահի և ցանկացած իրավիճակում, կարող եմ աղոթքի միջոցով մոտենալ շնորհի գահին, որ իմ Երկնային Հայրը կլսի իմ խնդրանքը, որ իմ Բարեխոսը, ես, ով չի մեղանշել, ում արյունն է հեղվել, կպաշտպանի իմ դատը: (Տես ՎեՆՈՒ 45.3-5:» (“I Know in Whom I Have Trusted,” *Ensign*, May 1993, 83):

Խնդրեք որևէ ուսանողի իր խոսքերով բացատրել Երեց Քրիստոֆերսոնի կողմից ուսուցանվող սկզբունքը: Այնուհետև հարցրեք.

- Ինչպե՞ս կարող է այդ ուսուցման մասին անձնական վկայությունն օգնել ձեզ նեղության պահերին:

Մոսիա 5.5–15

Առ Հիտուս Քրիստոս հավատքի և Նրա ավետարանն ընդունելու շնորհիվ մենք դառնում ենք ծնված որդիներն ու դուստրերն Աստծո

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 76.24 և խնդրեք դասարանին հետևել նրան: Մատնանշեք հետևյալ խոսքերը, որ՝ «Նրանով, նրա միջոցով, և նրանից է ... որ [մենք] ծնված որդիներն ու դուստրերն ենք Աստծո»:

Հարցրեք ուսանողներին.

- Ի՞նչ է նշանակում լինել «ծնված որդիներն ու դուստրերն Աստծո»:
(ՎեՆՈՒ 76.24; տես նաև ՎեՆՈՒ 25.1):

Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են, որ թեպետ բոլորս էլ Երկնային Հոր հոգևոր զավակներն ենք, «ծնված որդիներն ու դուստրերն Աստծո» արտահայտությունը հատկապես վերաբերում է «վերստին ծնվածներին»: Ուսանողներին ասեք, որ Մորմոնի Գիրքը լուսաբանում է վերստին ծնվելու գործընթացը:


Ցուցադրեք կամ գրատախտակին գրեք հետևյալ աղյուսակը (մի ընդգրկեք փակագծերում գրված նյութը):

Ի՞նչ էին ցանկանում անել Բենիամին թագավորի ժողովուրդը:	Ի՞նչ եղավ արդյունքում:
<i>(Աստծո բոլոր պատվիրաններին հնազանդվելու ուխտի մեջ մտան)</i>	<i>(Նրանք սրտերը փոխվեցին)</i>
<i>(Իրենց վրա վերցրեցին Քրիստոսի անունը)</i>	<i>(Նրանք ծնվեցին Քրիստոսից)</i>
<i>(Հավատք գործադրեցին առ Քրիստոս)</i>	<i>(Քրիստոսը դարձավ նրանց ուխտյալ Հայրը)</i>

Հակիրճ ամփոփեք Բենիամին թագավորի ուղերձը՝ տրված Մոսիա 2–4-ում: Այնուհետև բացատրեք, որ Բենիամին թագավորի խոսքերն աննախադեպ ազդեցություն գործեցին նրա ժողովրդի վրա, և Տիրոջ Հոգին «գորեղ փոփոխություն» առաջացրեց նրանց սրտերում (տես Մոսիա 5.2): Խնդրեք ուսանողներին գույգերով կարդալ Մոսիա 5.2-8, 15 փնտրելով աղյուսակում տրված հարցերի պատասխանները: Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք կիսվել իրենց գտածով: Այնուհետև հարցրեք.

- Բենիամին թագավորի ժողովրդի մասին ձեր սովորածի համաձայն, ինչպե՞ս էք դառնում ծնված որդին կամ դուստրը Քրիստոսի: (Ուսանողները պետք է ներկայացնեն հետևյալ սկզբունքը. **Ընդունելով Հիսուս Քրիստոսին և Աստծո պատվիրաններին հնազանդվելու ուխտեր կապելով ու պահելով՝ մենք դառնում ենք ծնված որդիներն ու դուստրերը Քրիստոսի:**)

Երբ ուսանողները քննարկեն այդ հատվածները, նրանք օգնության կարիք կունենան, որ հասկանան այն վարդապետությունը, որ մենք դառնում ենք Քրիստոսի զավակներ: Բարձրաձայն կարդացեք Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի (1876–1972) հետևյալ ուսուցումը.



«Փրկիչը դառնում է մեր Հայրը ... քանի որ Նա մեզ կյանք է առաջարկում, հավերժական կյանք, քավության շնորհիվ, որը նա կատարեց մեզ համար: ...

Մենք դառնում ենք Հիսուս Քրիստոսի զավակները՝ որդիները և դուստրերը, նրան տրված մեր հնազանդության ուխտերի շնորհիվ» (*Doctrines of Salvation*, comp. Bruce R. McConkie, 3 vols. 1954–56, 1:29):

- Ըստ Մոսիա 5.15-ի, ի՞նչ օրհնություններ կարող ենք ստանալ որպես Հիսուս Քրիստոսի որդիներ և դուստրեր:
- Ի՞նչ մտքեր և զգացումներ եք ունենում Հիսուս Քրիստոսի որդին կամ դուստրը լինելու առումով:

Դասն ավարտելով, խրախուսեք ուսանողներին մտածել, թե ինչպես է իրենց կյանքն օրհնում գիտելիքը, որ Փրկիչն ապրում է, որ Նա ծառայում է որպես մեր Բարեխոս Հոր առաջ, և որ մենք կարող ենք լինել Քրիստոսի ուխտյալ որդիներն ու դուստրերը:

Ուսանողի ընթերցարան

- Մոսիա 5.1–15; Վարդապետություն և Ուխտեր 45.3–5; 76.19–24; 110.1–4:

Հիսուս Քրիստոսը մի օր կվերադառնա

Նախաբան

Սերունդներ ի վեր մարգարեները մարգարեացել են, որ Հիսուս Քրիստոսը կրկին կվերադառնա Երկիր: Եսայիան գրել է. «Եվ պիտի հայտնուի Տիրոջ փառքը, և ամեն մարմին միասին պիտի տեսնեն» (Եսայիա 40.5): Այս մարգարեություններն օգնում են Հիսուս Քրիստոսի

աշակերտներին պատրաստվել և պատրաստել մյուսներին այս եզակի իրադարձությանը և հույս ունենալ, իմանալով, որ Երկնային Հայրը կանխատեսում է ապագան և պատրաստում է աշխարհն Իր Որդու փառահեղ վերադարձին:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Dallin H. Oaks, "Preparation for the Second Coming," *Ensign or Liahona*, May 2004, 7–10.

Ուսուցանման առաջարկներ

Փրկիչը կգա զորությամբ և փառքով

Ուսանողներին ուղղեք հետևյալ հարցերը և գրատախտակին ամփոփեք նրանց պատասխանները.

- Ձեր կարծիքով, նշված է արդյոք՝ երբ է լինելու Երկրորդ Գալուստը:
- Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն կլինի Երկրորդ Գալուստը:

Ուսանողներից որևէ մեկին հանձնարարեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 29.11 հատվածը: Այնուհետև հարցրեք դասարանին.

- Ի՞նչ էք սովորում այս հատվածից Երկրորդ Գալուստի մասին: (Երբ ուսանողները պատասխանում են, շեշտեք հետևյալ ճշմարտությունը. **Երբ Փրկիչը կրկին գա, Նա կգա զորությամբ և փառքով՝ երկնքի բոլոր զորքերի հետ:**) Գրեք այդ ճշմարտությունը գրատախտակին:)



Ուսանողներին բացատրեք, որ կան Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստի վերաբերյալ տարբեր ասպեկտներ, որոնք կարելի է ուսումնասիրել սուրբ գրություններում, օրինակ՝ նշանները, որոնք կնախորդեն Նրա գալստին, և ամբարիշտների կործանումը՝ Նրա գալստյան ժամանակ: Այս դասը կկենտրոնանա Փրկչի, Նրա զորությամբ ու փառքով գալու վրա, և թե ինչպես կարող ենք մենք պատրաստվել այդ մեծ իրադարձությանը: Յուրաքանչյուր ուսանողի տվեք «Մարգարեություններ Երկրորդ Գալուստի մասին» աղյուսակի մեկական օրինակ: Ուսանողներին խնդրեք աշխատել զույգերով և յուրաքանչյուր զույգին հանձնարարեք ուսումնասիրել սուրբ գրությունների երկու կամ երեք տող (հավաստիացեք, որ յուրաքանչյուր տողը հանձնարարված է): Յուրաքանչյուր զույգին խնդրեք աղյուսակում գրել, ինչ են իրենց հանձնարարված հատվածներն ուսուցանում Հիսուս Քրիստոսի Երկրորդ

Գալստի մասին: Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, ուսանողներին խնդրեք ներկայացնել՝ ինչ են իրենք հայտնաբերել:

Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը

Մարգարեություններ Երկրորդ Գալստի վերաբերյալ	Ինչ ենք մենք սովորում Երկրորդ Գալստի վերաբերյալ
Վարդապետություն և Ուլստեր 49.6-7; Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս 1.40	
Եսայիա 40.5; Մատթեոս 16.27	
Եսայիա 52.10; Վարդապետություն և Ուլստեր 133.3	
Զաքարիա 13.6; 14.4; Վարդապետություն և Ուլստեր 45.48, 51-53	
Եսայիա 63.2; Հայտնություն 19.11-13; Վարդապետություն և Ուլստեր 133.46-48	
Գործք 1.9-11; Ա թեսաղոնիկեցի 4.16	
Ա թեսաղոնիկեցի 4.17; Վարդապետություն և Ուլստեր 88.96-98	
Հայտնություն 16.20; Վարդապետություն և Ուլստեր 133.21-24	
Վարդապետություն և Ուլստեր 5.19; 101.24-25; 133.41	
Բ Պետրոս 3.10; Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս 1.46-48	

Շարունակեք՝ ուղղելով հետևյալ հարցերը.

- Ըստ ձեր ուսումնասիրության, ինչպե՞ս Հիսուս Քրիստոսի գործությունն ու փառքը կհայտնվի Նրա գալստյան ժամանակ:
- Երկրորդ Գալստյան մասին ո՞ր մարգարեություններն առանձնացան ձեզ համար: Ինչո՞ւ:

(Նշում. Նախքան առաջ շարժվելը կարող եք կրկին անդրադառնալ աղյուսակին և հարցնել ուսանողներին, թե ինչ նշանակություն ունի սուրբ գրություններն այս եղանակով ուսումնասիրելը՝ փնտրելով կապեր, օրինակներ և թեմաներ:)

Վարդապետություն և Ուլստեր 1.12; 34.5-6; 39.20; 88.81-86, 92; 133.4-5, 10

Մարգարեները մեզ նախապատրաստում են Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստին

Ցուցադրեք Յոթանասունից Երեք Սթերլինգ Վ. Սթիլի (1903-1994) հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Քրիստոսի Երկրորդ գալուստը Հին Կտակարանում հիշատակվում է ավելի քան 1500 անգամ, իսկ Նոր Կտակարանում՝ 300 անգամ: Եթե մտոված այս թեման այդքան կարևոր է համարել, նա ամենայն հավանականությամբ ցանկացել է, որ մենք ինչ-որ բան անենք այդ ուղղությամբ» (in Conference Report, Apr. 1966, 19:)

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր, որ սուրբ գրություններն այդքան շատ մարգարեություններ ունենան Երկրորդ Գալստի վերաբերյալ:

Ցուցադրեք կամ գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հատվածները: Խնդրեք ուսանողներին մտքում համեմատել և հակադրել հետևյալ հատվածները՝ փնտրելով ինչպիսի երկու տարբեր եղանակներով պետք է պատրաստվենք Երկրորդ Գալստին:

ՎևՈւ 1.12; 88.92; 133.4–5, 10
 ՎևՈւ 34.5–6; 39.20; 88.81–84

Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, քննարկեք հետևյալ հարցերից մի քանիսը կամ բոլորը.

- Ինչպե՞ս մեկ նախադասությամբ կամ փոփոխելիք այդ հատվածներում ուսուցանված ճշմարտությունները: (Հավաստիացե՛ք, որ ուսանողները ամփոփում են հետևյալ կերպ. **Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստի վերաբերյալ մարգարեությունները տրվել և գրի են առնվել սուրբ գրություններում, որպեսզի մենք կարողանանք պատրաստվել և պատրաստել մյուսներին այդ օրվան:**)
- Ինչո՞ւ պետք է մենք պատրաստվելու հետ միասին պատրաստենք ման մյուսներին Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստին:
- Ինչպե՞ս կարող ենք օգնել մյուսներին պատրաստվել Տիրոջ վերադարձին:
- Ձեր կարծիքով, Երկրորդ Գալստին մյուսներին պատրաստվելիս օգնելը նպաստում ձեր նախապատրաստությանը:

Խնդրեք որևէ ուսանողի կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթն Հ. Օուքսի հետևյալ խոսքերը.



«Թեպետ մենք անգոր ենք փոխելու Երկրորդ Գալստի փաստը և չենք կարող իմանալ ճշգրիտ օրը, մենք կարող ենք արագացնել մեր անձնական նախապատրաստությունը և փորձել ազդել մեր շրջապատում գտնվողների նախապատրաստության վրա: ...

Ի՞նչ կլիներ, եթե Նրա գալու օրը վաղը լիներ: Եթե իմանայինք, որ վաղը հանդիպելու ենք Տիրոջը, վաղաժամ մահվան կամ Նրա անսպասելի գալստի արդյունքում, ի՞նչ կանեինք այսօր: Ինչպիսի՞ խոստովանություններ կանեինք: Ի՞նչ

սովորություններ կդադարեցնեինք: Ի՞նչ անհամաձայնություններ կլուծեինք: Ինչպիսի՞ ներում կպարզեինք: Ի՞նչ վկայություններ կբերեինք:

Եթե այս բաները կանեինք այդ դեպքում, ինչո՞ւ չանենք հիմա: Ինչո՞ւ խաղաղություն չկենքենք, քանի դեռ դա հնարավոր է: Եթե մեր նախապատրաստության լամպերը հանգչել են, եկեք սկսենք անմիջապես կրկին լցնել դրանք» (“Preparation for the Second Coming,” *Ensign or Liahona*, May 2004, 8, 9):

- Ի՞նչ կարող է մարդն անել, որպեսզի արագացնի Երկրորդ Գալստի համար իր նախապատրաստությունը:
- Ի՞նչ վտանգ կա մեր նախապատրաստությունը հետաձգելու մեջ:

Մատթեոս 25.1-13

Պատրաստվել Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստին

Բացատրեք ուսանողներին, որ Հիսուս Քրիստոսի մահից մի քանի օր առաջ Նրա աշակերտները հետաքրքրվեցին Նրա Երկրորդ Գալստին նախորդող նշանների վերաբերյալ (տես Մատթեոս 24.3; Ջոզեֆ Մվիթ—Մատթեոս 1.4): Փրկչի պատասխանը տրված է Մատթեոս 24-25-ում: Հանձնարարեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ Մատթեոս 25.1-13, իսկ դասարանին խնդրեք հետևել նրանց: Այնուհետև ուսանողներին ուղղորդեք քննարկելու տաս կույսերի առակը՝ օգտագործելով տրված մի քանի կամ բոլոր հարցերը և մեջբերումները.

- Ի՞նչն էք համարում հիմարություն այդ հինգ կույսերի գործողությունների մեջ: (Հիմար կույսերը չէին անում այն, ինչ անհրաժեշտ էր Փրկչի գալստին պատրաստվելու համար: Երբ ձգտում ենք պատրաստվել Փրկչի գալստին և անում ենք այն, ինչ ճիշտ է, մեծ օրհնություններ են գալիս, ներառյալ՝ պատրաստ լինել միանալու Փրկչին, երբ Նա գա:)
- Ի՞նչ նշանակություն կա «դուրս եկեք նրան դիմավորելու» արտահայտության մեջ: (հատված 6): Ինչո՞ւ համբերատար չսպասել, որ Նա գա ձեզ մոտ: (Տես նաև ՎեՌ 133.5, 10, 14, 19:)
- Ինչո՞ւ իմաստուն կույսերը չէին կարող իրենց ձեռքից բաժին հանել հիմար կույսերի համար:
- Ի՞նչ է այս առակն ուսուցանում ձեզ Փրկչին հանդիպելուն պատրաստվելու մասին: (Թեպետ ուսանողները կարող են օգտագործել տարբեր բառեր, նրանք պետք է ներկայացնեն հետևյալ սկզբունքը. **Աստծո պատվիրաններին հնազանդվելով մենք կարող ենք պատրաստվել Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստին:** Տես նաև ՎեՌ 45.56-57:)

Քննարկումը համարեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ Օուքսի և Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ մտքերով.



«[Տաս կույսերի առակի] մասին խոսելով Տերը ասել է. «Եվ այն օրը, երբ ես կգամ իմ փառքով, կկատարվի առակը, որը ես խոսեցի տասը կույսերի վերաբերյալ» (ՎևՈւ 45.56):

Մատթեոսի 25-րդ գլխում տրված այս առակը հակադրում է հինգ հիմար և հինգ իմաստուն կույսերին: Բոլոր տաս կույսերը հրավիրված էին հարսանիքի, բայց միայն նրանց կենս էր պատրաստ և իրենց լապտերներում ձեռք ունեին, երբ փնտացուն եկավ: Հինգը, ովքեր պատրաստվել էին, մտան հարսանիքի խնջույքին և դռները փակվեցին: Հինգը, ովքեր ուշացրել էին իրենց նախապատրաստությունը, եկան ուշացած: Դուռը փակվել էր, և Տերը նրանց թույլ չտվեց ներս մտնել, ասելով. «Ես չեմ ճանաչում ձեզ» [Մատթեոս 25.12]: «Արդ արթուն կացե՛ք, - եզրափակում է Փրկիչը, - որովհետև չգիտեք ոչ օրը և ոչ ժամը, որ նորանում մարդիկ Որդին կգա» [Մատթեոս 25.13]:

Այս առակի թվաբանությունը վախեցնող է: Ակնհայտ է, որ տաս կույսերը ներկայացնում են Եկեղեցու անդամներին, քանի որ բոլորը հրավիրված էին հարսանիքի խնջույքին, և բոլորը գիտեին, թե ինչ էր պահանջվում ներս մտնելու համար, երբ որ փնտացուն գար: Բայց միայն նրանց կենս էր պատրաստ, երբ նա եկավ» (Dallin H. Oaks, "Preparation for the Second Coming," *Ensign or Liahona*, May 2004, 8):



«Արդյո՞ք հինգ իմաստուն կույսերը եսասեր էին և չկամեցան յուրով կիսվել, թե՛ նրանք ճիշտ ձևով ցույց են տալիս, որ դարձի յուրը հնարավոր չէ պարտք տալ: Կարո՞ղ է արդյոք մեկ ուրիշին տրվել այն հոգևոր ուժը, որ առաջ է գալիս պատվիրանները մշտապես պահելու արդյունքում: Կարո՞ղ է արդյոք ջանասեր ուսումնասիրելու և սուրբ գրությունների շուրջ խորհրդածելու արդյունքում ձեռք բերված գիտելիքը փոխանցվել կարիքի մեջ գտնվողին: Կարո՞ղ է արդյոք ավետարանի միջոցով հավատարիմ Վերջին Օրերի Սրբին հասու խաղաղությունը փոխանցվել դժբախտություն կամ մեծ դժվարություններ կրող անհատին: Այս հարցերից յուրաքանչյուրի հստակ պատասխանն է՝ ոչ:

Ինչպես իմաստուն կույսերը հստակ նշեցին, մեզանից յուրաքանչյուրը պետք է «գնի իր համար»: Այդ ոգեշնչված կանայք բիզնես գործարք չէին նկարագրում, այլ նրանք շեշտում էին մեր անհատական պատասխանատվությունը՝ վառ պահել մեր վկայության լամպերը և ձեռք բերել դարձի յուրի բավականաչափ պաշար: Այդ թանկարժեք յուրը ձեռք է բերվում կաթիլ առ կաթիլ՝ «տող առ տող [և] ցուցում առ ցուցում» (2 Նեփի 28.30), համբերությամբ և հաստատակամությամբ: Մենք չենք կարող ընտրել կարճ ճանապարհ և վերջին րոպեին հապճեպ պատրաստություն տեսնել» (Դեյվիդ Ա. Բեդնար, «Դարձ դեպի Տերը», *Ensign* կամ *Լիահոնա*, նոյ. 2012, 109):

- Ինչո՞ւ մենք չպետք է հետաձգենք Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստին մեր նախապատրաստվելը:

Գրատախտակին գրեք հետևյալ անավարտ նախադասությունը և խնդրեք ուսանողներին մտածել և ապա գրել ինչպես կավարտեին այն.

Քրիստոսի Երկրորդ Գալստին իմ նախապատրաստությունն արագացնելու համար ես _____:

Խրախուսեք ուսանողներին մտածել, թե ինչ հատուկ եղանակներով կարող են օգնել ընտանիքին, ընկերներին կամ մյուսներին հասկանալ Հիսուս Քրիստոսի վերադարձին պատրաստվելու կարևորությունը: Խրախուսեք ուսանողներին խոստանալ Տիրոջը, որ կհետևեն բոլոր հուշումներին, որ իրենք կստանան:

Ուսանողի ընթերցարան

- Մատթեոս 25.1–13; Վարդապետություն և Ուխտեր 133.3–19:
- Dallin H. Oaks, “Preparation for the Second Coming,” *Ensign or Liahona*, May 2004, 7–10.

Հիսուս Քրիստոսը կկառավարի որպես Թագավորների Թագավոր և աշխարհի Դատավոր

Նախաբան

Հազարամյակի ընթացքում Հիսուս Քրիստոսը «կկառավարի որպես Թագավորների Թագավոր և կթագավորի որպես Տերերի Տեր, և ամեն ծունկ պիտի ծավլի ու ամեն լեզու խոստովանի դա Նրա առջև՝ երկրպագությամբ: Մեզանից յուրաքանչյուրը պետք է կանգնի դատվելու Նրա կողմից՝ համաձայն մեր գործերի

ու մեր սրտի ցանկությունների» («Կենդանի Քրիստոսը՝ Առաքյալների վկայությունը», *Ensign* կամ *Lhahhna*, ապր. 2000, 3): Այս դասը կօգնի ուսանողներին հասկանալ, որ կարիք չկա սպասել մինչև Հազարամյակ՝ դրա որոշ օրհնություններ վայելելու համար:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Գլուխ 45, «Հազարամյակ», *Ավետարանի սկզբունքները* [2009], 263–267:
- Գլուխ 46, «Վերջին դատասանը», *Ավետարանի սկզբունքները* [2009], 268–274:
- Եթե առկա է՝ գլուխ 37, “The Millennium and the Glorification of the Earth,” *Doctrines of the Gospel Student Manual*, 2nd ed. (Church Educational System manual, 2010), 104–6.

Ուսուցանման առաջարկներ

Վարդապետություն և Ուխտեր 65.1-6

Հիսուս Քրիստոսն անձամբ կթագավորի Երկրի վրա

Խնդրեք ուսանողներին թղթի վրա թվարկել ինչի համար կամ ինչի մասին են իրենք կանոնավոր աղոթում: Հորդորեք մի քանի ուսանողների կիսվել իրենց գրածով, եթե ցանկանում են անել դա:


Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 65 բաժնի նախաբանը: (Եթե ուսանողները չունեն սուրբ գրությունների 2013թ. հրատակությունը, բացատրեք, որ այդ բաժինը աղոթքի վերաբերյալ հայտնություն է՝ տրված Մարգարե Ջոզեֆ Սմիթին:): Բացատրեք, որ այդ հայտնության մեջ Տերն ասում է, թե ինչի համար մենք պետք է աղոթենք, հատկապես, երբ ականատեսն ենք լինում այնպիսի իրադարձությունների, որոնց մասին մարգարեություններ են եղել, որ պետք է կատարվեին վերջին օրերին:

Հանձնարարեք երկու ուսանողի հերթով բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 65.1-2: Դասարանին խնդրեք հետևել և

գտնել ավետարանը տարածելու մասին Տիրոջ նկարագրությունը: Այնուհետև հարցրեք.

- Մինչև ո՞ր պետք է տարածվի Հիսուս Քրիստոսի ավետարանը: (Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալ վարդապետությունը. **Հիսուս Քրիստոսի ավետարանն առաջ կգնա դեպի երկրի ծայրերը:** Գրեք այս վարդապետությունը գրատախտակին:)
- Ըստ հատված 2-ի, ո՞րն է այն քարը, որ կտրվել է սարից՝ առանց ձեռքի:

Երբ ուսանողները կպատասխանեն, կարդացեք Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի (1895–1985) հետևյալ խոսքերը.



«Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ... արքայությունն է, հիմնված երկնքի Աստծո կողմից, որը երբեք չի կործանվի կամ փոխարինվի: ... Տասնիններորդ դարի սկզբին եկավ ... Եկեղեցին կազմավորվելու օրը: Այն փոքր էր, վեց անդամից բաղկացած, նման առանց ձեռքի սարից կտրված քարի, որը մասնատելու էր պետությունները և գլորվելով լցներ ողջ երկիրը: ... Այսօր այդ քարն առաջ գլորվելով լցնում է երկիրը» (“The Stone Cut without Hands,” *Ensign*, May 1976, 8, 9):

- Ի՞նչ է նշանակում ձեզ համար լինել Աստծո արքայության մասը Երկրի վրա:

Մի ուսանողի հանձնարարեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 65.3-4 հատվածները: Մեկ այլ ուսանողի հանձնարարեք բարձրաձայն կարդալ 5-6 հատվածները: Դասարանին հանձնարարեք հետևել նրան, և գտնել ըստ Տիրոջ խորհրդի ինչի համար պետք է մենք աղոթենք: Այնուհետև քննարկեք հետևյալ հարցերը.

- Ըստ այդ հատվածների, ինչի՞ համար մենք պետք է աղոթենք Երկրորդ Գալատին պատրաստվելիս: (Երբ ուսանողները պատասխանեն այս հարցին, կարող եք հանձնարարել նրանց համեմատել հատված 6-ը Մատթեոս 6.10-ում տրված Տիրոջ աղոթքի խոսքերի հետ:)
- Ի՞նչ երկու արքայությունների մասին է խոսվում հատված 6-ում: («Աստծո արքայությունը» երկրի վրա [կամ Եկեղեցին] և «երկնքի արքայությունը»:)
- Ի՞նչ է պատվիրել Տերը, որ «Աստծո արքայությունն» անի երկրի վրա: (Երբ ուսանողները պատասխանեն, շեշտեք հետևյալ վարդապետությունը. **Երկրի վրա Աստծո արքայությունը կամ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին կտարածվի ողջ աշխարհում և երկրի բնակիչներին կպատրաստի Քրիստոսի հազարամյա կառավարմանը:**)

(Նշում. Կարող եք շեշտել, որ Հազարամյակի ընթացքում Հիսուս Քրիստոսը քաղաքական և եկեղեցական արդարադատություն կգործադրի ողջ Երկրում: [Եթե անկա է, տես՝ *Doctrine and Covenants Student Manual*, 2nd ed. (Church Educational System manual, 2001), 139–40.]



Գրատախտակին գրեք հետևյալ ցանկը կամ բաժանեք ուսանողներին որպես թերթիկ (մի ընդգրկեք փակագծերում գրված նյութը)։

Հիսուս Քրիստոսը և Հազարամյակը		
Ի՞նչ կանի Քրիստոսը Հազարամյակի ընթացքում:	Եսայիա 9.6–7; 33.22; Հայտնություն 11.15; 1 Նեփի 22.24	(Նա կկառավարի Աստծո թագավորությունը երկրի վրա: Նա կգործի որպես դատավոր և օրենսդիր, և կփրկի մեզ:)
Որտե՞ղ կլինի Քրիստոսը Հազարամյակի ընթացքում:	Սոփոնիա 3.15–17, Վարդապետություն և Ուլստեր 29.11, 45.59	(Նա կբնակվի երկրի վրա Իր ժողովրդի հետ:)
Ինչպե՞ս Քրիստոսը կթագավորի Հազարամյակի ընթացքում:	Հայտնություն 19.15; Վարդապետություն և Ուլստեր 38.21–22	(Քրիստոսը կլինի թագավորը և օրենսդիրը:)
Ի՞նչ ազդեցություն կունենա Քրիստոսի կառավարումը:	Եսայիա 2.2–4; 1 Նեփի 22.25–28; 2 Նեփի 30.10–18	(Խաղաղություն, միաբանություն և արդարակեցություն կհաստատվի երկրի վրա: Սատանան իշխանություն չի ունենա մարդկանց սրտերի վրա:)

(Նշում. Կարող եք բացարել, որ այդ վարժությունը կլուսաբանի սուրբ գրությունների թեմատիկ ուսումնասիրության նշանակությունը: Երբ մենք թեմատիկորեն ենք ուսումնասիրում սուրբ գրությունները, կարող ենք առավել հստակ տեսնել մանրամասները, այսինքն՝ օրինաչափությունները և թեմաները:)

Դասարանը բաժանեք չորս ուսանողից բաղկացած խմբերի: Խնդրեք յուրաքանչյուր խմբից մեկ ուսանողի ուսումնասիրել սուրբ գրությունների հատվածները և պատասխանել ցանկի առաջին տողի հարցին: Խմբից մեկ այլ ուսանողի խնդրեք նույնը կատարել երկրորդ տողի համար և այդպես շարունակ: Ուսանողներին սովորեցրեք հատուկ ուշադրություն դարձնել այն խոսքերին և արտահայտություններին, որոնք օգնում են պատասխանել իրենց հանձնարարված հարցերին: Կարող եք առաջարկել, որ ուսանողները նշեն իրենց գտածը: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, հանձնարարեք ուսանողներին իրենց խմբի մյուս անդամների հետ քննարկել իրենց սովորածը:

(Նշում. Առկայության դեպքում դասին պատրաստվելիս 1 Նեփի 22.26-ի վերաբերյալ մեկնաբանությունների համար օգտվեք հետևյալ ձեռնարկից. *Book of Mormon Student Manual* [Church Educational System manual, 2009], 48:)

Այնուհետև տվեք հետևյալ հարցերը.

- Ըստ ձեր քննարկածի, ինչի՞ն էք ամենաշատն անհամբեր սպասում Հազարամյակից: (Երբ ուսանողները կպատասխանեն,

գրատախտակին գրեք հետևյալ վարդապետությունը. **Փրկիչն անձնապես կթագավորի Երկրի վրա Հազարամյակի ընթացքում:**)

- Ինչպե՞ս կարող ենք թույլ տալ, որ Փրկիչն անձամբ թագավորի մեր կյանքում հենց հիմա:
- Ինչպե՞ս կփոխվեր մեր կյանքը, եթե թույլ տայինք, որ Քրիստոսը թագավորեր մեր կյանքում:

Բարձրաձայն կարդացեք Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի հետևյալ խոսքերը.



«Երբ սատանան կապված է որևէ տան մեջ, երբ սատանան կապված է որևէ մեկի կյանքում, Հազարամյակն արդեն իսկ սկսվել է այդ տանը, այդ կյանքում» (*The Teachings of Spencer W. Kimball*, ed. Edward L. Kimball [1982], 172):

Ուսանողներին ժամանակ տրամադրեք մտածել, թե ինչ կանեին, որպեսզի հրավիրեին Փրկիչն անձամբ թագավորել իրենց կյանքում և ընտանիքում:

Հովհաննես 5.22; Մատթեոս 12.36–37; Հայտնություն 20.12–13; Մոսիա 4.30; Վարդապետություն և Ուխտեր 137.9

Հիսուս Քրիստոսը կլիկի մեր դատավորը

Ցուցադրեք կամ գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հատվածները.

Հովհաննես 5.22

Մատթեոս 12.36-37

Հայտնություն 20.12-13

Մոսիա 4.30

Վարդապետություն և Ուխտեր 137.9

Խնդրեք ուսանողներին մտածել, թե ինչպես կպատասխանեն, եթե իրենց ընկերը հետևյալ հարցը տա. «Դատաստանի օրը ո՞վ կլիկի մեր դատավորը» և «Ինչի՞ հիման վրա մենք կդատվենք»: Մի քանի ընկեր հատկացրեք ուսանողներին, որպեսզի ուսումնասիրեն գրատախտակին գրված հատվածները և ձևակերպեն հետևյալ հարցի պատասխանը: Մի քանի ընկեր հետո խնդրեք ուսանողներին քննարկել իրենց պատասխանները իրենց կողքին նստած անձնավորության հետ: Այնուհետև հարցրեք դասարանին.

- Ի՞նչ սովորեցիք Դատաստանի օրվա վերաբերյալ: (Ուսանողները պետք է բացահայտեն հետևյալ վարդապետությունը. **Հիսուս Քրիստոսը կլինի մեր դատավորը:**)
- Ի՞նչ հիմքով կդատի մեզ Փրկիչը: (Պատասխանները պետք է ներառեն հետևյալ վարդապետությունը. **Փրկիչը կդատի մեզ ըստ մեր խոսքերի, մտքերի, գործերի և մեր սրտերի ցանկությունների:**)

Բարձրաձայն կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթի հետևյալ խոսքերը.



«Մեր Տերն ապրեց կատարյալ, անմեղ կյանքով և այդ պատճառով ազատ էր արդարադատության պահանջներից: Նա կատարյալ էր բոլոր հատկանիշներով, ներառյալ՝ սերը, կարեկցանքը, համբերությունը, հնազանդությունը, ներողամտությունը և խոնարհությունը: ...

Ես վկայում եմ, որ աներևակայելի տառապանքի և հոգևոր անհավանական մեծ գնով Փրկիչը վաստակեց մեր Քավիչը, մեր Միջնորդը, մեր Վերջնական Դատավորը լինելու Իր իրավունքը» (“The Atonement Can Secure Your Peace and Happiness,” *Ensign or Liahona*, Nov. 2006, 42):

- Ինչպե՞ս է Վերջին Դատաստանի վերաբերյալ ձեր ընկալման վրա ազդում գիտելիքը, որ Հիսուս Քրիստոսը կլինի մեր «Վերջին Դատավորը»:

Խրախուսեք ուսանողներին քարտի կամ թղթի վրա գրել հետևյալ հարցը և կախել աչքի ընկնող տեղում. Ինչպե՞ս կարող եմ թույլ տալ, որ Հիսուս Քրիստոսը կառավարի իմ կյանքն այսօր:

Ուսանողի ընթերցարան

- Մատթեոս 25.31–46:
- Գլուխ 45, «Հազարամյակ», *Ավետարանի սկզբունքները* [2009], 263–267:
- Գլուխ 46, «Վերջին դատասանը», *Ավետարանի սկզբունքները* [2009], 268–274:

Հիսուս Զրիստոսը լույսն է, կյանքը և հույսն աշխարհի

Նախաբան

Հիսուս Զրիստոսը «լույսն է, կյանքը և հույսն աշխարհի» («Կենդանի Զրիստոսը՝ Առաքյալների վկայությունը», *Ensign* կամ *L'haishnaw*, ապր. 2000, 3): Այս դասը կօգնի ուսանողներին հասկանալ, որ երբ նրանք գան Զրիստոսի

մոտ, նրանք կստանան հավերժական կյանքի ավելի մեծ հույս և ավելի վճռականորեն կհամբերեն կյանքի փորձություններին:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- Դիտեր Ֆ. Ուլտորֆ, «Աստծո լույսի հույսը», *Ensign* կամ *L'haishnaw*, մայիս 2013, 70, 75–77:
- Դիտեր Ֆ. Ուլտորֆ, «հույսի անասհման ուժը», *Ensign* կամ *L'haishnaw*, նոյ. 2008, 21-24:

Ուսուցանման առաջարկներ

Հովհաննես 1.1–9; Վարդապետություն և Ուխտեր 88.6–13

Հիսուս Զրիստոսն աշխարհի լույսն է

Բարձրաձայն կարդացեք Առաջին Նախագահությունից Նախագահ Դիտեր Ֆ. Ուլտորֆի հետևյալ խոսքերը: Խնդրեք դասարանին լսել, թե ինչպիսի հանգամանքներում մարդն իրեն կարող է զգալ ասես խավարով շրջապատված:



«Իմ գրասենյակում ես ունեմ մի սիրելի նկար, որի անվանումն է *Լուսավորության մուտքը*: Դա իմ ընկերոջ՝ դանիացի նկարիչ Ջոն Բենթլիի գործն է, ով Դանիայում Կոպենհագենի առաջին ցցի նախագահն է եղել:

Նկարում պատկերված է մի մուգ սենյակ, որի դուռը բաց է, որտեղից էլ լույս է շողում: Ինձ համար հետաքրքրականն այն է, որ դռնից եկող լույսը չի լուսավորում ողջ սենյակը, այլ միայն անմիջապես դռան դիմացի հատվածը:

Ինձ համար այս նկարի խավարը և լույսը կյանքի փոխաբերություններն են խորհրդանշում: Որպես մահկանացու էակներ մեր երկրյան մի մասն է կազմում երբեմն զգալը, կարծես թե մենք շրջապատված ենք խավարով: Միզուց մենք կորցրել ենք սիրամ էակին, երեխան շեղվել է ճիշտ ուղուց, միզուց ստացել ենք անհանգստացնող բժշկական ախտորոշում, միզուց ունենք աշխատանքի հետ կապված խնդիրներ և բեռնված ենք կասկածներով ու վախերով, կարող ենք միայնակ կամ չսիրված զգալ:

Թեև մենք կարող ենք մեզ մոլորված զգալ մեր ներկա պայմաններում, Աստված խոստանում է Իր լույսի հույսը՝ Իր խոստումները՝ լուսավորելու մեր առջև ճանապարհը և ցույց տալու մեզ խավարից դուրս գալու ուղին» («Աստծո լույսի հույսը», *Ensign* կամ *L'haishnaw*, մայիս 2013, 70):

- Ինչպիսի՞ հանգամանքների պատճառով մարդը կարող է իրեն խավարով շրջապատված զգալ:
- Ըստ Նախագահ Ուիլյամսի, ի՞նչ կարող է Աստված անել, երբ մենք այդպես ենք մեզ զգում:

Երբ ուսանողները պատասխանեն, բացատրեք, որ այս դասը կկենտրոնանա՝ ինչպես կարող ենք լույս և հույս ստանալ Աստծուց, ինչպիսիք էլ լինեն մեր հանգամանքները:

Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Հովհաննես 1.1-5 հատվածը: Դասարանին հանձնարարեք հետևել նրան, փնտրելով այն բառերն ու արտահայտությունները, որոնք Հովհաննեսն օգտագործել է Փրկչին նկարագրելու համար: Երբ ուսանողները կհավեն իրենց մտքերով, գրատախտակին գրեք հետևյալ վարդապետությունը. **Հիսուս Քրիստոսն աշխարհի լույսն է:**

Որպեսզի օգնեք ուսանողներին առավել խորը հասկանալ այս վարդապետությունը, խնդրեք նրանց մտքում կարդալ Հովհաննես 1.6-9 հատվածը: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ են այդ հատվածներն ուսուցանում, որպես աշխարհի Լույս, Հիսուս Քրիստոսի դերի մասին:
- Ինչպե՞ս են հատված 9-ի համար տողատակի ծանոթագրություններն օգնում ձեզ հասկանալ, ինչպես Հիսուսը կարող է լինել Աշխարհի Լույսը բոլոր մարդկանց համար:

Ուսանողներին ասեք, որ սուրբ գրություններում լույսը, «որ ամեն մարդի լուսավորում է» (Հովհաննես 1.9) կամ Քրիստոսի Լույսը, «երբեմն անվանում են Տիրոջ Հոգի, Աստծո Հոգի, Քրիստոսի Հոգի կամ Կյանքի Լույս» (*True to the Faith: A Gospel Reference* [2004], 96): Քրիստոսի Լույսը նկարագրվում է Վարդապետություն և Ուխտեր 88-ում:

Հանձնարարեք ուսանողներին աշխատել զույգերով: Խնդրեք նրանց ուսումնասիրել Վարդապետություն և Ուխտեր 88.6-13 հատվածը, և բացահայտել ինչպես է Հիսուս Քրիստոսը լույսի և կյանքի աղբյուր հանդիսանում: Բավականաչափ ժամանակ հատկացնելուց հետո, տվեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս է Քրիստոսի Լույսն ազդում Երկնային Հոր բոլոր արարչագործությունների վրա:
- Ըստ այդ հատվածներում գրված ճշմարտությունների, Քրիստոսի Լույսը ի՞նչ է ի գորու անել անհատի համար:
- Ինչո՞ւ է օգտակար հասկանալ, որ տիեզերքը կառավարող այդ լույսն այն «նույն լույսն է, որը կենդանացնում է ձեր հասկացողությունը»: (ՎևՈւ 88.11):

Ցուցադրեք Նախագահ Դիտեր Ֆ. Ուիլյամսի հետևյալ խոսքերը, և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Աստծո լույսն իրական է: Այն հասանելի է բոլորին: Այն կյանք է պարզևում ամեն ինչին [տես Վևու 88.11-13]: Այն գործություն ունի մեղմելու ամենախորը վերքի ցավը: Այն կարող է ապաքինող բալասան լինել մեր հոգիների միայնակության և հիվանդության համար: Հուսահատության ակոսներում այն կարող է պայծառ հույսի սերմեր դնել: Այն կարող է լուսավորել մեր միտքը նույնիսկ ամենախորը վշտի ժամանակ: Այն կարող է լուսավորել մեր ուղին և առաջնորդել մեզ ամենախավար գիշերով դեպի նոր լուսաբացի խոստումը:

Սա է «Հիսուս Քրիստոսի Հոգին», որ «լույս է տալիս աշխարհ եկող ամեն մարդու» [Վևու 84.45–46]» («Աստծո լույսի հույսը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2013, 75):

Ձեր դասարանի հետ քննարկեք հետևյալ հարցերը.

- Ըստ Նախագահ Ուիլյամսի, ի՞նչ օրհնություններ են գալիս լույսից, որ Երկնային Հայրը տալիս է մեզ Հիսուս Քրիստոսի միջոցով:
- Ե՞րբ եք դուք զգացել օրհնությունները, որոնց մասին խոսում է Նախագահ Ուիլյամսը:

Գրատախտակի վրա գրեք հետևյալ անավարտ նախադասությունը.

Աշխարհի լույսը տալիս է ...

Հանձնարարեք ուսանողներին կրկին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 88.13 հատվածը, և գտնել այն արտահայտությունը, որ ավարտում է գրատախտակին գրված միտքը: Հարցրեք.

- Որպես Աշխարհի Լույս Փրկչի դերը ինչպե՞ս է կապված որպես Աշխարհի Կյանք Նրա դերի հետ:
- Ինչպե՞ս է լույսը զուգորդվում կյանքի հետ: (Կարող եք շեշտել, որ Հիսուսը «*կյանքն է աշխարհի, որովհետև նրա հարությունն ու քավությունը փրկում են մեզ և ֆիզիկական և հոգևոր մահից*» [Dallin H. Oaks, “The Light and Life of the World,” *Ensign*, Nov. 1987, 65]:)
- Ինչպիսի՞ն կլինեն, եթե Փրկչի լույսն ու գործությունը դադարեն պահպանել ամեն բան: (Այլևս կյանք չէր լինի:)

Բացատրեք, որ սուրբ գրություններում օրհնակներ են տրված, որոնց ցույց են տալիս ինչպես է Հիսուսը բառացիորեն հանդիսանում աշխարհի Լույսը: Երբ Փրկչը մահացավ, երեք օր խավար էր տիրում, խորհրդանշելով, որ աշխարհի Լույսը հեռացավ աշխարհից (տես 3 Նեփի 8.20–23): Մյուս կողմից Փրկչի ծնունդն ուղեկցվեց աստղով և երկնային մեծ լույսերով, և երեք օր անդադար լույս էր (տես Հելաման 14.3–5; 3 Նեփի 1.15, 21):

Սաղմոս 146.5; Հռովմայեցիս 5.3–5; 15.13; Եթեր 12.4, 32; Սորոնի 7.3, 40–41

Հիսուս Քրիստոսն աշխարհի հույսն է

Բացատրեք ուսանողներին, որ *հույս* տերմինը կարող է բազմաթիվ նշանակություններ ունենալ: Հիսուս Քրիստոսի ավետարանի համատեքստում, հույսը «արդարության դիմաց խոստացված օրհնությունների վատահ սպասում ու փափագ» է (Սուրբ գրքերի ուղեցույց, «Հույս»; scriptures.lds.org): Երբեմն Փրկչին անվանում են «աշխարհի հույսը», քանի որ Նրա միջոցով ենք մենք ստանում արդարակեցության համար խոստացված օրհնությունները («Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Ensign* կամ *Լիսինգս*, ապր. 2000, 3):

Ցուցադրեք կամ գրատախտակին գրեք հետևյալ հարցերը և սուրբ գրությունների հատվածները.

Ինչի՞ միջև է կենտրոնանում ճշմարիտ հույսը: (Եթեր 12.4, 32; Սորոնի 7.3, 40–41)

Ի՞նչ կանի այս կյանքում մեզ համար հույսը: (Սաղմոս 146.5; Հռովմայեցիս 5.3–5; 15.13)

Դասարանը բաժանեք փոքր խմբերի: Հանձնարարեք խմբերին ուսումնասիրել սուրբ գրության յուրաքանչյուր հատվածը, գտնել հույսի մասին կարևոր խոսքեր և արտահայտություններ, և քննարկել հարցերին տված իրենց պատասխանները: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, խնդրեք խմբերին ձևակերպել վարդապետության կամ սկզբունքի մեկ կամ երկու սահմանում, ամփոփելով հույսի վարդապետության մասին իրենց սովորածը: Խնդրեք մի քանի ուսանողների դասարանի հետ կիսվել իրենց ձևակերպումներով: Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են, որ **հույսը վստահությունն է, որ Հիսուս Քրիստոսի Քավության և պատվիրաններին հնազանդվելու շնորհիվ մենք կստանանք Աստծո խոստացված օրհնությունները, ներառյալ՝ հավերժական կյանք:** Եթե ժամանակը թույլ է տալիս, կարող եք քննարկել հետևյալ հարցերը.

- Ի՞նչ է *անկասկած* բառը ձեզ ասում «կարող է անկասկած հուսալ ավելի լավ աշխարհի համար» (Եթեր 12.4): (Հավաստիացում, վստահություն կամ համոզվածություն: Կարող եք խորհուրդ տալ, որ ուսանողները գրեն այս բնորոշումը իրենց սուրբ գրությունների լուսանցքում Եթեր 12.4–ի կողքին:)
- Ինչպե՞ս կարող է հույսը, ինչպես նկարագրված է այդ հատվածներում, լինել «խարիսխ մարդկանց հոգիների համար» և օգնել մեզ լինել «կայուն և հաստատուն, միշտ հարստացնելով բարի գործերով» (Եթեր 12.4):

Ցուցադրեք հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

«Երբ հույս ունենք, մենք վստահում ենք Աստծո խոստումներին: Մենք հանգիստ համոզվածություն ունենք, որ եթե «արդարության գործեր» ենք կատարում, մենք «պիտի ստանանք [մեր] վարձքը, այսինքն՝ խաղաղություն այս աշխարհում և հավերժական կյանք գալիք աշխարհում» (Վևու 59.23): Մորմունն ուսուցանել է, որ նման հույսը գալիս է միայն Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով [տես Մորոնի 7.41]» (*Հավատքին Հավատարիմ. Ավետարանական Վկայակոչում* [2004], 85):

- Ինչպե՞ս է առ Հիսուս Քրիստոս և Նրա Քավություն մեր հավատքն էական դեր խաղում իսկական հույս զարգացնելու համար: Ինչպե՞ս է դա օգնում ձեզ հասկանալ, թե ինչու է Հիսուս Քրիստոսն աշխարհի հույսը: (Երբ հույս ունենք առ Հիսուս Քրիստոս, մենք կարող ենք նայել մահկանացու դժվարություններից ու նեղություններից այն կողմ, և կենտրոնանալ Նրա Քավության շնորհիվ մատչելի օրհնությունների վրա, որոնք են՝ հարությունը և հավերժական կյանքը:)
- Ի՞նչ կարող եք անել այս կյանքում ավելի մեծ հույսով ապրելու համար:

Մուրբ Հոգուց ոգեշնչված կարող եք խնդրել ուսանողներին պատմել այն ժամանակի մասին, երբ Հիսուս Քրիստոսի շնորհիվ հարության և հավերժական կյանքի հանդեպ իրենց հույսն օրհնություն է եղել իրենց կամ մյուսների համար:

Ուսանողի ընթերցարան

- Մաղմոս 146.5; Հովհաննես 8.12; Հռովմայեցիս 5.3–5; 15.13; Ա Պետրոս 1.3; Եթեր 12.4, 32; Մորոնի 7.3, 40–41; Վարդապետություն և Ուխտեր 88.6–13; 138.14:
- Դիտեր Ֆ. Ուլստրոֆ, «Աստծո լույսի հույսը», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2013, 70, 75–77:

Անձնական վկայություն Հիսուս Քրիստոսի մասին

Նախաբան

Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը հայտարարել են. «Մենք վկայում ենք, որպես Նրա պատշաճ կերպով կարգված Առաքյալներ, որ Հիսուսը կենդանի Քրիստոսն է՝ Աստծո անմահ Որդին» («Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Ensign* կամ *Liahon*, ապր. 2000, 3): Այս դասընթացի

ընթացքում մենք ուսումնասիրեցինք Հիսուս Քրիստոսի հավերժական ծառայությունը և Նրա մասին մարգարեների վկայությունները: Սուրբ Հոգու միջոցով ձեռք բերելով անձնական վկայություն, որ Հիսուսը Կենդանի Քրիստոսն է, մենք պատրաստ ենք մյուսների հետ կիսվել մեր անձնական վկայությամբ:

Ընթերցանության օժանդակ նյութեր

- D. Todd Christofferson, “Becoming a Witness of Christ,” *Ensign*, Mar. 2008, 58–63.

Ուսուցանման առաջարկներ

2 Նեփի 25.26; Մոսիա 18.8–11

Լինել Քրիստոսի վկա


Հարցրեք ուսանողներին, արդյոք նրանցից որևէ մեկը հայտնվել է այնպիսի իրավիճակում, երբ ինքը Եկեղեցու միակ անդամն է եղել կամ միակ մարդն է եղել, ով կամեցել է ներկայացնել Եկեղեցու չափանիշները: Հանձնարարեք նրանց պատասխանել հետևյալ հարցերին.

- Ինչպե՞ս էիք զգում, երբ այդ իրավիճակում արձագանքեցիք որպես Հիսուս Քրիստոսի հետևորդ:
- Ի՞նչն էր ձեր փորձառության մեջ իրենից կարևորություն կամ դժվարություն ներկայացնում:

Ուսանողներին հիշեցրեք Մորմոնի Գրքում Ալմայի պատմության մասին, ով դարձի եկավ Աբինադի մարգարեի ուսուցման շնորհիվ: Իր դարձից հետո Ալման նույնպես սկսեց քարոզել ավետարանը: Մոսիա 18-ում մենք կարդում ենք մկրտության ուխտի մասին նրա ուսմունքները: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Մոսիա 18.8-11 հատվածը: Խնդրեք ուսանողներին հետևել նրան և բացահայտել, թե որ հատկանիշներն ու գործողություններն են ցույց տալիս, որ տվյալ անձը պատրաստ է մկրտության ուխտ կապել և պահել: Երբ ուսանողները պատասխանեն, նշեք «կանգնել որպես Աստծո վկաներ՝ բոլոր ժամանակներում, բոլոր բաներում և բոլոր վայրերում» արտահայտությունը հատված 9-ում: Այնուհետև հարցրեք.

- Ի՞նչ է նշանակում կանգնել որպես Հայր Աստծո և Հիսուս Քրիստոսի վկա «բոլոր ժամանակներում, բոլոր բաներում և բոլոր վայրերում»: (Մոսիա 18.9):

Յուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթ Ն. Օուքսի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



«Առաքյալները կոչված և կարգված են լինելու Քրիստոսի անվան հատուկ վկաները ողջ աշխարհում (տես Վնու 107.23), սակայն Քրիստոսի մասին վկայելու պարտականությունը կրում է Եկեղեցու յուրաքանչյուր անդամ, ով ստացել է Սուրբ Հոգու վկայությունը» (“Witnesses of Christ,” *Ensign*, Nov. 1990, 30):

- Ըստ Երեց Օուքսի, ո՞վ է կրում Հիսուս Քրիստոսի մասին վկայություն բերելու պատասխանատվությունը: (Հավաստիացեք, որ ուսանողները հասկանում են հետևյալ ճշմարտությունը. **Եկեղեցու բոլոր անդամները ուխտել են կանգնել որպես Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի վկաներ:**)
- Մեր համոզմունքներով և վկայությամբ կիսվելուց բացի, ուրիշ ինչպե՞ս կարող ենք մենք որպես Քրիստոսի վկա կանգնել: (Որպեսզի օգնեք ուսանողներին պատասխանել այս հարցին, հորդորեք նրանց ուսումնասիրել՝ Մատթեոս 5.14-16 և 3 Նեփի 18.24:)

Յուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը, և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



Արևմտյան կիսագնդում Իր ծառայության ընթացքում Փրկիչը տվեց այս պատվիրանը. «Ուստի, բարձր պահեք ձեր լույսը, որպեսզի այն լույս տա աշխարհին: Սիա, ե՛ս եմ լույսը, որը դուք պետք է բարձր պահեք, ա՛յն, ինչ դուք տեսաք ինձ անելիս» (3 Նեփի 18.24): Մարդիկ պետք է մեր մեջ տեսնեն Հիսուս Քրիստոսից ինչ-որ բան: Մեր վարքը, խոսքը, տեսքը և անգամ մտածելակերպը պետք է արտացոլի Նրան և Նրա ուղիները» (“Becoming a Witness of Christ,” *Ensign or Liahona*, Mar. 2008, 60):

- Նկատել էք ինչպես են մյուսների գործերը, խոսելաճը կամ տեսքն արտացոլել իրենց հավատքն առ Հիսուս Քրիստոս:
- Հիսուս Քրիստոսի վկան լինելու դժկամությունը կամ վախը հաղթահարելու համար ի՞նչ խորհուրդ կտայիք մյուսներին:

Գրատախտակին գրեք հետևյալ արտահայտությունները.

Խոսել Քրիստոսի մասին

Հրճվել Քրիստոսով

Քարոզել Քրիստոսի մասին

Մարգարեանալ Քրիստոսի մասին

Գրե՛լ Քրիստոսի մասին

Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ 2 Նեփի 25.26 հատվածը, և խնդրեք նրանց բացատրել, ինչպես կարող է որևէ մեկը կիսվել Հիսուս Քրիստոսի մասին իր վկայությամբ գրատախտակի վրա ամփոփված եղանակներով: Որպեսզի օգնեք դասարանին քննարկման ընթացքում, անհրաժեշտության դեպքում օգտագործեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թող Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը.



«Նեփիի արտահայտությունը՝ «մենք խոսում ենք Քրիստոսի մասին» [2 Նեփի 25.26] հուշում է, որ մենք դժկամությամբ չխոսենք Փրկչի վերաբերյալ մեր զգացումների մասին զրույցների կամ ոչ պաշտոնական հանդիպումների ժամանակ: Հաճախ դրանք դեմառդեմ զրույցներ են, երբ բաց և ընկերական ձևով մենք կարող ենք քննարկել, թե ով է Նա և ինչ Նա արեց և սովորեցրեց, խրախուսելով ուրիշներին ևս սիրել և հետևել Նրան:

«Մենք հրճվում ենք Քրիստոսով» արտահայտությունը նշանակում է, որ մենք, ընդհանուր առմամբ, ապրում ենք երջանիկ տեսքով, որն արտացոլում է մեր հավատքն առ Քրիստոս: Մենք գիտենք, որ «Նրա շնորհքը» բավական է մահից և մեղքից փրկագնվելու և Նրանում կատարելագործվելու համար (տես Մորոնի 10.32–33): Մինչ դիմակայում ենք հուսախաբությունների և նույնիսկ ողբերգությունների, մենք գիտենք, որ Նրա շնորհիվ մեր հավերժական երջանկությունն ապահովագրված է: Երբ մեր հավատքն առ Հիսուս Քրիստոս լուսաշող փայլում է, մենք ցույց ենք տալիս ուրիշներին, ովքեր «վաստակած են և բեռնավորված», ինչպես հանգիստ գտնել Նրանում (տես Մատթեոս 11.28–30):

«Մենք քարոզում ենք Քրիստոսին» իհարկե վերաբերում է լիաժամկետ և անդամների միսիոներական աշխատանքին, բայց ներառում է նաև այն, ինչ մենք անում ենք պաշտամունքի ծառայությունների ժամանակ, Կիրակնօրյա Դպրոցի դասերին և նմանատիպ իրադրություններում, որտեղ Նա է ուսումնասիրության և ուսուցման առարկան: Որպես ուսուցիչներ և ուսանողներ՝ մենք մասնակցում ենք Նրա մասին մեր վկայությունը բերելով: ...

«Մենք մարգարեանում ենք Քրիստոսի մասին» նշանակում է, որ մենք հայտնում ենք մեր վկայությունը Նրա մասին՝ Հոգու զորությամբ (տես Ա Կորնթացիս 12.3): «Հիսուսի վկայությունը մարգարեության հոգին է» (Հայտնություն 19.10): Ինչպես նրանք, ովքեր հնում մարգարեացան Նրա առաջին գալստի մասին, մենք ևս խոսքով և գործով հաստատում ենք Նրա Երկրորդ Գալստյան մարգարեությունները: ...

«Եվ մենք գրում ենք համաձայն մեր մարգարեությունների» ենթադրում է Քրիստոսի մասին մեր վկայության մշտական արձանագրություն կատարելու խելամտությունը: Մենք հասկանում ենք, որ վկայությունները, որոնք մենք բերում ենք, «արձանագրվել են երկնքում, հրեշտակների համար, որ կարդան. և նրանք ցնծում են [մեզ] համար» (Վևու 62.3): Մեր իսկ հետևորդները և ուրիշները կարող են նայել Քրիստոսի մասին մեր վկայությանը և ցնծալ դրանով, որ գրվել կամ արձանագրվել է հօգուտ իրենց» (“Becoming a Witness of Christ,” *Ensign*, Mar. 2008, 62–63):


Դասի այս մասը ավարտեք՝ խրախուսելով ուսանողներին ընտրել գրատախտակին նշված մեկ ոլորտ և նպատակ դնել, թե ինչ կարող են անել Հիսուս Քրիստոսի ավելի ամուր վկա դառնալու համար:

Վկայել Հիսուս Քրիստոսի մասին

Խնդրեք ուսանողներին վերհիշել այս կիսամյակի դասընթացը և նշել Հիսուս Քրիստոսի որոշ դերեր և Նրա վերաբերյալ որոշ թեմաներ, որոնք քննարկվել են դասարանում: Ուսանողների պատասխաններն ամփոփ գրեք գրատախտակին: (Դերերն են՝ Բարեխոս, Փրկիչ, Քավիչ, Առաջնեկ, Միածին, Եհովա, Մեսիա, Արարիչ: Թեմաները կարող են լինել՝ Աստծո ծրագրում Հիսուս Քրիստոսի կենտրոնական դերը; Նրա նախամահկացառու ծառայությունը; Իրողությունը, որ Նա ապրում է; Նրա ետմահկանացու ծառայությունը; Երկրորդ Գալուստը; Նրա Հազարամյա կառավարումը; Նրա ավետարանի վերականգնումը, Նրա Եկեղեցու ղեկավարումը, և ինչպես է Նա հանդիսանում աշխարհի Լույսը և Կյանքը:)



Բեռնեք և ցուցադրեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի (1910–2008) հետևյալ ելույթի տեսագրությունը, որտեղ նա կիսվում է Հիսուս Քրիստոսի մասին իր վկայությամբ: Եթե տեսանյութն առկա չէ ձեր լեզվով, խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ նրա խոսքերը:



«Հիսուսն իմ ընկերն է: Ոչ ոք ինձ այդքան շատ բան չի տվել: «Ոչ ով նորանից անելի մեծ սեր չունի, որ մեկն իր անձը դնէ իր բարեկամների համար» (Հովհաննես 15.13): Նա տվեց Իր կյանքն ինձ համար: Նա բացեց հավիտենական կյանք տանող ուղին: Միայն Աստված կարող էր դա անել: Հուսով եմ, ես արժանացել եմ Նրա ընկերը լինելուն:

Նա իմ օրինակն է: Նրա կենսակերպը, Նրա միանգամայն անձնուրաց վարքը, կարիքավորների հանդեպ Նրա վերաբերմունքը, Նրա վերջնական գոհաբերությունը,- այդ ամենն օրինակ է հանդիսանում ինձ համար: ...

Նա իմ ուսուցիչն է: Ոչ մի ուրիշ ձայն երբևէ այդքան զարմանահարաշ լեզվով չի խոսել: ...

Նա իմ բժիշկն է: Ես ակնաժանրով կանգնած եմ Նրա հիասքանչ հրաշքների առաջ: ...

Նա իմ առաջնորդն է: Ինձ համար մեծ պատիվ է լինել այն երկար շարասյան մեջ նրանց, ովքեր սիրում են Նրան և ովքեր հետևել են Նրան երկու հազարամյակի ընթացքում, որ անցել է Նրա ծննդից ի վեր: ...

Նա իմ Փրկիչը և իմ Քավիչն է: Իր կյանքը տալով ցավով և անասելի տառապանքով, Նա իջավ, որ մահվանը հաջորդող հավերժական խավարի անդունդից բարձրացնի ինձ և մեզանից յուրաքանչյուրին և Աստծո բոլոր որդիներին և դուստրերին: ... Իմ երախտագիտությունն անսահման է: Իմ Տիրոջ հանդեպ շնորհակալությունն ավազտ չունի:

Նա է իմ Աստվածը և իմ Թագավորը: Հավիտյանս հավիտենից Նա կթագավորի և կկառավարի որպես թագավորների Թագավոր և Տերերի Տեր: Նրա տիրապետությանը վերջ չի լինելու: Նրա փառքը չի խավարելու» ("My Testimony," *Ensign*, May 2000, 71):

Ձեր ուսանողներին ներկայացրեք հետևյալ սցենարը. Եթե մեկը հարցնի ձեզ, թե ինչին եք հավատում Հիսուս Քրիստոսի վերաբերյալ, հիմնականում ի՞նչ երեք կամ չորս մտքեր կուզենայիք շեշտել: Ժամանակ տվեք ուսանողներին իրենց մտքերը գրի առնելու համար: Այնուհետև խնդրեք ուսանողներին զույգեր կազմել և միմյանց հետ կիսվել իրենց պատասխաններով: Խորախոսեք նրանց քննարկել, թե ինչու իրենք ընտրեցին դա և ինչպիսի փորձառություններ են ունեցել, որոնք ամրացրել են Փրկչի մասին իրենց հասկացողությունը և Նրա հանդեպ իրենց սեր: Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո խնդրեք

ուսանողներին ցանկության դեպքում դասարանի հետ կիսվել Հիսուս Քրիստոսի մասին իրենց վկայությամբ:

Ավարտեք դասը բերելով ձեր անձնական վկայությունը Կենդանի Քրիստոսի հավերժական ծառայության մասին: Կարող եք ձեր երախտագիտությունը հայտնել ժամանակի ընթացքում Տեր Հիսուս Քրիստոսի կատարած բազմաթիվ կարևոր դերերի համար: Այնուհետև ուսանողներին քաջալերեք. Ավարտելով այս դասընթացը, մտածեք ձեր ծանոթներից ով կամրանար լսելով Փրկչի մասին ձեր վկայությունը: Առաջիկա շաբաթվա ընթացքում և հետագայում որոշեք, թե ում վրա կներգործեք և ինչպես կկիսվեք ձեր վկայությամբ:

Ուսանողի ընթերցարան

- Մատթեոս 5.14–16; 2 Նեփի 25.26; Մոսիա 18.8–11; 3 Նեփի 18.24:
- D. Todd Christofferson, “Becoming a Witness of Christ,” *Ensign*, Mar. 2008, 58–63.

թերթիկ

Հիսուս Քրիստոսին վերաբերող տեսակները, ստվերները և խորհրդանիշները

Հին Կտակարանում Հիսուս Քրիստոսին վերաբերող տեսակները, ստվերները և խորհրդանիշները	Իրականացում Քրիստոսի կյանքում
Ծննդոց 22.1-14	Հովհաննես 3.16; 19.16-18; Հակոբ 4.4-5
Ելից 3.7-8, 10-12	Մատթեոս 1.21; 2 Նեփի 6.17
Ելից 12.3, 5-7, 13-14, 46	Հովհաննես 1.29; 19.14, 31-36; Ա Պետրոս 1.18-19
Ելից 16.14-15, 18	Հովհաննես 6.14-15, 48-51
Ղևտացոց 8.15, 30; 17.11	Եբրայեցի 9.22; 13.12
Ղևտացոց 16.2-6, 17	Եբրայեցի 9.6-12; 10.11-12
Ղևտացոց 22.19-22	Եբրայեցի 9.14; Վարդապետություն և Ուխտեր 20.22
Թվոց 21.4-9	Հովհաննես 3.14-15; Հելաման 8.13-15
Հովկան 1.17; 2.10	Մատթեոս 12.38-40

Հիսուս Քրիստոսին վերաբերող տեսակները, ստվերները և խորհրդանիշները

Հին Կտակարանում Հիսուս Քրիստոսին վերաբերող տեսակները, ստվերները և խորհրդանիշները	Իրականացում Քրիստոսի կյանքում
Ծննդոց 22.1-14	Հովհաննես 3.16; 19.16-18; Հակոբ 4.4-5
Ելից 3.7-8, 10-12	Մատթեոս 1.21; 2 Նեփի 6.17
Ելից 12.3, 5-7, 13-14, 46	Հովհաննես 1.29; 19.14, 31-36; Ա Պետրոս 1.18-19
Ելից 16.14-15, 18	Հովհաննես 6.14-15, 48-51
Ղևտացոց 8.15, 30; 17.11	Եբրայեցի 9.22; 13.12
Ղևտացոց 16.2-6, 17	Եբրայեցի 9.6-12; 10.11-12
Ղևտացոց 22.19-22	Եբրայեցի 9.14; Վարդապետություն և Ուխտեր 20.22
Թվոց 21.4-9	Հովհաննես 3.14-15; Հելաման 8.13-15
Հովկան 1.17; 2.10	Մատթեոս 12.38-40

Հիվանդաների բժշկում



Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթն Ն. Օուզոն ուսուցանել է, որ հավատքը կարևոր է, որպեսզի հրաշքեր կատարվեն:

«Հավատքը կարևոր դեր ունի երկնային գործողությունների օգնությամբ բժշկվելու գործում: Մորմնի Գիրքն անգամ ուսուցանում է, որ «Եթե հավատք չլինի մարդկանց զավակների մեջ, Աստված չի կարող հրաշք գործել նրանց մեջ» (Եթեր 12.12) [տես նաև 1 Նեփի 7.12; Վևու 35.9]: Հիվանդներին սպասավորելու վերաբերյալ իր հիշարժան ելույթում Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է. «Հավատքի անհրաժեշտությունը հաճախ թերագնահատվում է: Հիվանդը և նրա ընտանիքը հաճախ, կարծես, լիովին ապավինում են քահանայության գործողանքը և հույս ունենում, որ սպասավորող եղբայրները կունենան բժշկության պարզը, մինչդեռ մեծ պատասխանատվություն է կրում օրհնություն ստացողը: .. Գլխավոր գործուն անհատի հավատքն է, երբ մարդը գիտակից է և պատասխանատվության տարիքի: «Քո հավատքը քեզ ապրեցրեց» [Մատթեոս 9.22] խոսքն այնքան հաճախ էր կրկնում Վարդապետը, որ այն գրեթե կրկներգ էր դարձել» [“President Kimball Speaks Out on Administration to the Sick,” *New Era*, Oct. 1981, 47]” («Հիվանդների բժշկությունը», *Ensign* կամ *Լիվինգսթոն*, մայիս 2010, 49):



Երեց Դավիթն Ն. Օուզոն նաև հիշեցրել է մեզ, որ հավատք ունենալու համար կարևոր դեր ունի Աստծո կամքն ընդունելու պատրաստակամությունը:

«Երբ գործադրում ենք Աստծո քահանայության անառարկելի իշխանությունը և թանկ ենք գնահատում Նրա խոստումը, որ Նա կլսի և կպատասխանի հավատքի աղոթքին, մենք պետք է միշտ հիշենք, որ հավատքը և քահանայության բուժիչ գործողությունը չեն կարող հանգեցնել մի արդյունքի, որը հակառակ է կամքին Նրա, ում քահանայությունը մենք կրում ենք: Այս սկզբունքն ուսուցանվում է այն հայտնության մեջ, որը թելադրում է, որ Եկեղեցու երեցները պետք է իրենց ձեռքերը դնեն հիվանդների վրա: Տիրոջ խոստումն է, որ «նա, ով բժշկվելու հավատք ունի առ ինձ և

նշանակված չէ մահվան, պիտի բժշկվի» (Վևու 42.48; շեշտադրումն ավելացված է): Նմանապես, մեկ այլ ժամանակակից հայտնության մեջ Տերը հայտարարում է, որ երբ նա, ով «խնդրում է համաձայն Աստծո կամքի .. կատարվում է, ճիշտ ինչպես նա խնդրում է» (Վևու 46.30) [տես նաև Ա Նովիաննես 5.14; Հելաման 10.5]:

Այդ ամենից մենք սովորում ենք, որ անգամ Տիրոջ ծառաները, որոնք գործածում են Նրա աստվածային գործողությունը այնպիսի պայմաններում, երբ բավականաչափ հավատք կա բժշկվելու, չեն կարող այնպիսի քահանայության օրհնություն տալ, որը կբժշկի մարդուն, եթե այդ բժշկումը Տիրոջ կամքը չէ:

Որպես Աստծո զավակներ, իմանալով Նրա մեծ սիրո և Նրա անսահման գիտելիքի մասին, թե որն է լավագույնը մեր հավերժական բարօրության համար, մենք ապավինում ենք Նրան: Ավետարանի առաջին սկզբունքը հավատքն է առ Տեր Հիսուս Քրիստոսը, իսկ հավատք նշանակում է վստահություն: Ես զգացել եմ այդ վստահությունը, երբ հորեղբորս որդին ելույթ ունեցավ մի դեռահաս աղջկա թաղմանը, ով մահացել էր ծանր հիվանդությունից: Նա ասաց այս խոսքերը, որոնք սկզբում ապշեցրին, իսկ հետո ուսուցանեցին ինձ. «Ես գիտեմ, որ Տիրոջ կամքով էր, որ նա մահացավ: Նրան լավ բժշկական օգնություն էր տրամադրվել: Նրան քահանայության օրհնություններ էին տրվել: Նրա անունը տաճարի օրհնությունների ցուցակում էր: Հազարավոր մարդիկ աղոթում էին, որ նրա առողջությունը վերականգնվեր: Եվ ես գիտեմ, որ այս ընտանիքում բավականաչափ հավատք կար, որ նա բժշկվեր, եթե միայն այժմ նրան տուն տանելը Տիրոջ կամքը չլիներ»: Ես զգացել եմ այդ նույն վստահությունը քաղցկեղից մահացած մեկ այլ ընտրյալ աղջնակի հոր խոսքերում: Նա հայտարարեց. «Մեր ընտանիքի հավատքն առ Հիսուս Քրիստոս է, և այն կախված չէ արդյունքից»: Այդ ուսմունքները ճշմարտանման են հնչում ինձ համար: Հարազատի բժշկության համար մենք անում ենք այն ամենն, ինչ կարող ենք, իսկ հետո վերջնական արդյունքի համար ապավինում ենք Տիրոջը» («Հիվանդների բժշկությունը», *Ensign* կամ *Լիվինգսթոն*, մայիս 2010, 50):

© 2015 BY INTELLECTUAL RESERVE, INC. ԲՆՈՒՐ ԿՐԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԵՐԱՄԱՀԱՍԻՍ ԵՆ

Ջեֆրի Ռ. Հոլլանդի ընտրանի, «Սա արեք ի հիշատակ ինձ»



«Եթե հիշելը մեր սկզբունքային գործողությունն է, ապա ի՞նչ պետք է անմիջապես հիշենք, երբ մեզ են մատուցվում այդ պարզ և արժեքավոր խորհրդանիշները:

Կարող ենք հիշել Փրկչի նախամահկանացու կյանքը և այն ամենը, ինչ նա արել է որպես մեծ Եհովա, արարիչ երկնքի, երկրի և այն ամենի, ինչ կա նրանցում: Մենք կարող ենք հիշել, որ անգամ երկնքի Մեծ Խորհրդում նա սիրեց մեզ և այնքան մեծ ուժ ուներ, որ Քրիստոսի զորությամբ և առ Գառի արյունը մեր հավատքով հաղթեց անգամ այնտեղ (տես Հայտ. 12.10-11):

Կարող ենք հիշել նրա ծննդյան անպաճույճ շքեղությունը: . . .

Կարող ենք հիշել Քրիստոսի գործած հրաշքները, նրա ուսմունքները, նրա բժշկումներն ու նրա օգնությունը: Կարող ենք հիշել, որ նա կույրին տեսողություն շնորհեց և բժշկեց խուլին, ոտքի կանգնացրեց կաղին, խեղվածին և տկարին: Ապա այն օրերին, երբ զգում ենք, որ մեր առաջընթացը դադարել է կամ մեր ուրախություններն ու տեսակետները խամրել են, մենք կարող ենք Քրիստոսի հանդեպ հաստատակամությամբ առաջ մղվել: . . .

Մենք կարող ենք հիշել, որ անգամ իրեն տրված նման լուրջ առաքելությամբ, Փրկիչն ուրախություն էր գտնում կյանքում, նա սիրում էր մարդկանց և իր աշակերտներին պատվիրում էր ուրախ լինել: Նա ասել է, որ մենք պետք է ոգևորվենք ավետարանով կարծես մի մեծ գանձ ենք գտել, իսկական թանկագին մարգարիտ, հենց մեր շենին դրված: . . .

Կարող ենք հիշել, որ Քրիստոսն իր աշակերտներին ընկերներ կոչեց: . . .

Կարող ենք և պետք է հիշենք այն հրաշալի բաները, որ եկել են մեր կյանք, և որ «բոլոր բաները, որոնք բարի են, գալիս են Քրիստոսից» (Մորո. 7.24): . . .

Երբեմն առիթ կլինի հիշելու դաժան վերաբերմունքը, որ նրա հանդեպ դրսևորվեց, որ նա մերժվեց և անարդարությունը, օ~, այն անարդարությունը, որ նա կրեց: Երբ մենք ևս դիմակայում ենք այդ ամենին մեր կյանքում, կարող ենք հիշել, որ Քրիստոսը ևս կրեց ամեն նեղություն, սակայն չճնշվեց, վրդովվեց, սակայն չհուսահատվեց, հալածվեց, բայց երեսից չընկավ, վայր ընկավ, բայց չկործանվեց (տես Բ Կոր. 4.8-9):

Երբ մեր կյանքում նման դժվար պահեր են լինում, մենք կարող ենք հիշել, որ Հիսուսն իջավ ամեն ինչից վար, նախքան կբարձրանար ամեն ինչից վեր, և որ նա կրեց ցավեր, չարչարանքներ և ամեն տեսակի գայթակղություններ, որպեսզի լցվեր ողորմաժողովությամբ և իմանար, ինչպես նեցուկ լինել իր ժողովրդին իրենց տկարություններում (տես ՎնՈւ 88.6; Ալմա 7.11-12):

Ովքեր երերում կամ սայթաքում են, նա պատրաստ է հաստատել և ամրացնել: Ի վերջո, նա պատրաստ է փրկել մեզ և այդ ամենի համար նա տվեց իր կյանքը: . . .

. . . Այդ ամենը մենք կարող ենք հիշել, երբ ծնկի իջած երիտասարդ քահանան մեզ կոչ է անում միշտ հիշել Քրիստոսին» (*Ensign*, Nov. 1995, 67-69):



Վերջին օրերի աշխատանքը մահացածների համար



Տասներկու Առաքյալների Զվորումից Երեց Ջոն Ա. Վիդսոն (1872–1952) ուսուցանել է հետևյալը Աստծո զորքիներին և դուստրերին փրկելու մեր կանխորոշված առաքելության մասին.

«Մեր նախաերկրային կյանքում՝ մեծ խորհրդի օրը մենք որոշակի պայմանագիր ենք կապել Ամենագործի հետ: Տերն իր կողմից հղացած մի ծրագիր է առաջարկել: Մենք ընդունել ենք այն: Քանի որ այդ ծրագիրը նախատեսված էր բոլոր մարդկանց համար, այդ ծրագրի ներքո մենք դառնում ենք յուրաքանչյուր անձի փրկության մասնակիցը: Մենք տեղում համաձայնել ենք լինել ոչ միայն մեր փրկիչները, այլև . . . փրկիչները՝ ողջ մարդկային ընտանիքի: Մենք Տիրոջ հետ գործընկերության մեջ ենք մտել: Այն ժամանակ այդ ծրագրի գործարկումը դարձավ ոչ միայն Հոր աշխատանքը, և Փրկչի աշխատանքը, այլև մեր աշխատանքը: Մեզանից ամենափոքրը, ամենախոնարհը, գործակցում է Ամենագործի հետ, փրկության հավերժական ծրագրի նպատակն իրագործելու համար» (*"The Worth of Souls," Utah Genealogical and Historical Magazine, Oct. 1934, 189"* (in *Doctrine and Covenants and Church History: Gospel Doctrine Teacher's Manual* [1999], 173):



Տասներկու Առաքյալների Զվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթը խրատում է Եկեղեցու Երիտասարդներին տաճարային աշխատանք կատարել իրենց նախնիների համար.

Տաճարում կատարված ցանկացած աշխատանք ժամանակի լավ տնօրինում է, սակայն որպես փոխանորդ ձեր իսկ նախնիների համար ծեսեր ստանալը տաճարում անցկացրած այդ ժամանակը էլ ավելի սրբազան է դարձնում և բերում էլ ավելի մեծ օրհնություններ: . . .

Երիտասարդներ, դուք ուզո՞ւմ եք ապահով ուղի՝ ձեր կյանքում թշնամու ազդեցությունը նվազեցնելու համար: Ընկղմվեք ձեր նախնիների հետագո-

տության մեջ, պատրաստեք նրանց անունները փոխարինողների միջոցով տաճարում մատչելի սրբազան ծեսերի համար, ապա գնացեք տաճար և փոխարինող դարձեք նրանց համար, ստանալով մկրտության ուխտերը և Սուրբ Հոգու պարգևը: . . . Ես չգիտեմ ձեր կյանքում թշնամու ազդեցությունից պաշտպանվելու ավելի մեծ պաշտպանություն» («Մահացածներին փրկագնելու ուրախությունը», *Ensign* կամ *Liahonua*, նոյ. 2012, 93–94):



Տասներկու Առաքյալների Զվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը բացատրել է այդ այլաբանության իմաստը.

«Ես հրավիրում եմ Եկեղեցու երիտասարդներին սովորել Եղիայի Հոգու մասին և զգալ այն: Ես խրատում եմ ձեզ սովորել, փնտրել ձեր նախնիներին և պատրաստել ձեր անձերը՝ լինելու փոխանորդ և կատարելու մկրտություններ Տիրոջ տանը ձեր մահացած ազգականների համար (տես Վևու 124.28–36): Եվ ես հորդորում եմ ձեզ օգնել այլ մարդկանց իմանալ իրենց ընտանիքի պատմությունները:

Եթե դուք հավատքով արձագանքեք այս հրավերին, ձեր սրտերը կդառնան դեպի հայրերը: Աբրահամին, Իսահակին և Հակոբին տրված խոստումները կարմատավորվեն ձեր սրտերում: Ձեր հայրապետական օրհնությունները, բացահայտված ձեր տոհմաբանական գիծը, կկապեն ձեզ այս հայրերի հետ և ավելի իմաստալից կդառնան ձեր համար: Ձեր սերն ու երախտագիտությունը ձեր նախնիների հանդեպ կմեծանան: Փրկչի մասին ձեր վկայությունը և դարձի ընթացքը կդառնան ավելի խորը ու հաստատուն: Եվ ես խոստանում եմ, որ դուք պաշտպանված կլինեք թշնամու սաստկացող ազդեցությունից: Մինչ դուք մասնակցեք այս սուրբ աշխատանքին և սիրեք այն, դուք պաշտպանված կլինեք ձեր երիտասարդության տարիներին և ձեր ողջ կյանքի ընթացքում» («Ջավակների սրտերը պետք է դառնան», *Ensign* կամ *Liahonua*, նոյ. 2011, 26–27):



Հարություն առած Հիսուս Քրիստոսի հայտնությունները Նոր Կտակարանում

Հղում	Այցելություն	Օր կամ ժամ	Գտնվելու վայրը	Ինչ տեղի ունեցավ
Հովհաննես 20.11–18; Մարկոս 16.9				
Մատթեոս 28 . 1-10				
Ղուկաս 24.34; Ա Կորնթացիս 15.5				
Մարկոս 16.12; Ղուկաս 24.13-32				
Մարկոս 16.14; Ղուկաս 24.33, 36–49; Հովհաննես 20.19–23				
Հովհաննես 20.26-29				
Հովհաննես 21 . 4-23				
Մատթեոս 28.16–20; Մարկոս 16.15–18				
Մարկոս 16.19-20; Ղուկաս 24.50-53; Գործք 1.9-11				
Ա Կորնթացիս 15.6				
Ա Կորնթացիս 15.7:				
Գործք 7.55-56				
Գործք 9.4–6; Ա Կորնթացիս 9.1; 15.8				
Հայտնություն 1.13-18				



Փրկիչը ղեկավարում է վերականգնման աշխատանքը

Եկեղեցու վարդապետություններ	Եկեղեցու արարողություններ	Եկեղեցու ղեկավարություն
Վարդապետություն և Ուխտեր 76 բաժնի խորագիր և ամփոփում (փառքի թագավորություններ, կյանք մահից հետո)	Վարդապետություն և Ուխտեր 20.37, 72–74 (Մկրտության համար պահանջները և ճիշտ ձևը)	Վարդապետություն և Ուխտեր 20.38–59 (Քահանայության պաշտոնների պարտականությունները)
Վարդապետություն և Ուխտեր 84.33–39 (Քահանայության երդում և ուխտ)	Վարդապետություն և Ուխտեր 20.70 (Երեխաների օրհնություն)	Վարդապետություն և Ուխտեր 20.61–62 (Եկեղեցու համաժողովների կանոնավոր անցկացումը)
Վարդապետություն և Ուխտեր 128.1, 15, 18 (Փոխանորդների միջոցով մկրտություն մահացածների համար)	Վարդապետություն և Ուխտեր 20.75–77, 79 (Հաղորդության սպասվորումը)	Վարդապետություն և Ուխտեր 26.2 (Ընդհանուր համաձայնություն)
Վարդապետություն և Ուխտեր 131.1–4 (Սելեստիալ ամուսնության անհրաժեշտությունը վեհացման համար)	Վարդապետություն և Ուխտեր 124.33–39 (Տաճարային արարողություններ)	Վարդապետություն և Ուխտեր 107.22–27, 33–35, 64–67, 85–91 (Եկեղեցու ղեկավարների պարտականությունները)
Վարդապետություն և Ուխտեր 137.6–10; 138.29–35 (Ուվբեր մահանում են առանց ճշմարտության մասին գիտելիքի, փրկագնվելու հնարավորություն կունենան)	Վարդապետություն և Ուխտեր 132.7, 15–20 (Հավերժական ամուսնություն)	

- Ի՞նչ Փրկիչը վերականգնեց Երկրի վրա Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով:
- Ինչո՞ւ են կարևոր ձեր հայտնաբերած սկզբունքները կամ գործելակերպերը:



Հիսուն Քրիստոսի Երկրորդ Գալուստը

Մարգարեություններ Երկրորդ Գալստի վերաբերյալ	Ինչ ենք մենք սովորում Երկրորդ Գալստի վերաբերյալ
Վարդապետություն և Ուխտեր 49.6–7; Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս 1.40	
Եսայիա 40.5; Մատթեոս 16.27	
Եսայիա 52.10; Վարդապետություն և Ուխտեր 133.3	
Զաքարիա 13.6; 14.4; Վարդապետություն և Ուխտեր 45.48, 51–53	
Եսայիա 63.2; Հայտնություն 19.11–13; Վարդապետություն և Ուխտեր 133.46–48	
Գործք 1.9–11; Ա Թեսաղոնիկեցի 4.16	
Ա Թեսաղոնիկեցի 4.17; Վարդապետություն և Ուխտեր 88.96–98	
Հայտնություն 16.20; Վարդապետություն և Ուխտեր 133.21-24	
Վարդապետություն և Ուխտեր 5.19; 101.24–25; 133.41	
Բ Պետրոս 3.10; Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս 1.46–48	



Հիսուս Թրիստոսը և Հազարամյակը

Ի՞նչ կանխ Թրիստոսը Հազարամյակի ընթացքում:	Եսայիա 9.6–7; 33.22; Հայտնություն 11.15; 1 Նեփի 22.24	(Նա կկառավարի Աստծո թագավորությունը Երկրի վրա: Նա կգործի որպես դատավոր և օրենսդիր, և կփրկի մեզ:)
Որտե՞ղ կլինի Թրիստոսը Հազարամյակի ընթացքում:	Սոփոնիա 3.15–17, Վարդապետություն և Ուխտեր 29.11, 45.59	(Նա կբնակվի Երկրի վրա Իր ժողովրդի հետ:)
Ինչպե՞ս Թրիստոսը կթագավորի Հազարամյակի ընթացքում:	Հայտնություն 19.15; Վարդապետություն և Ուխտեր 38.21–22	(Թրիստոսը կլինի թագավորը և օրենսդիրը:)
Ի՞նչ ազդեցություն կունենա Թրիստոսի կառավարումը:	Եսայիա 2.2–4; 1 Նեփի 22.25–28; 2 Նեփի 30.10–18	(Խաղաղություն, միաբանություն և արդարակեցություն կհաստատվի Երկրի վրա: Սատանան իշխանություն չի ունենա մարդկանց սրտերի վրա:)

Հիսուս Թրիստոսը և Հազարամյակը

Ի՞նչ կանխ Թրիստոսը Հազարամյակի ընթացքում:	Եսայիա 9.6–7; 33.22; Հայտնություն 11.15; 1 Նեփի 22.24	(Նա կկառավարի Աստծո թագավորությունը Երկրի վրա: Նա կգործի որպես դատավոր և օրենսդիր, և կփրկի մեզ:)
Որտե՞ղ կլինի Թրիստոսը Հազարամյակի ընթացքում:	Սոփոնիա 3.15–17, Վարդապետություն և Ուխտեր 29.11, 45.59	(Նա կբնակվի Երկրի վրա Իր ժողովրդի հետ:)
Ինչպե՞ս Թրիստոսը կթագավորի Հազարամյակի ընթացքում:	Հայտնություն 19.15; Վարդապետություն և Ուխտեր 38.21–22	(Թրիստոսը կլինի թագավորը և օրենսդիրը:)
Ի՞նչ ազդեցություն կունենա Թրիստոսի կառավարումը:	Եսայիա 2.2–4; 1 Նեփի 22.25–28; 2 Նեփի 30.10–18	(Խաղաղություն, միաբանություն և արդարակեցություն կհաստատվի Երկրի վրա: Սատանան իշխանություն չի ունենա մարդկանց սրտերի վրա:)





ՍԵՄԻՆԱՐԻԱՅԵՐ և
ԿՐՈՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՅԵՐ

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՁԻՆ ԳՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN



4 02125 54201 2
12554 201